3111

[illegible]

Ջ

[illegible] 1865 [illegible]
[illegible]

[illegible]
[illegible]
[illegible]
20/5/40

[illegible]

1839 [illegible]

[illegible]

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վարուց. Սքանչելեաց. և Դիպուածոց՝
Սրբոյն Յօհաննու Ոսկեբերան Հայ
րապետին Կոստանդնուպօլսոյ:
Թարգմանեցեալ 'ի Յունականէ 'ի Հայս՝ 'ի Գրի
գորէ Կաթողիկոսէ Վկայասէր կոչեցելոյ., շուրջ
՚ի Թուականութեանն Հայոց. 500:

Տպագրեցեալ էր աշխատասիրութեամբ Սարգսի
Արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլսեցւոյ
Յամի Տեառն 1752. 'ի Վենետիկ:

Վերստին փոխագրեալ եղև արդեամբ՝ և ծախիւք
Յարութիւն Օգնականեան ընտրողաց Թրոգնեւց:
Հարիւր երեսուն և եօթն երրորդի Հայ-
րապետութեան Տեառն Եփրեմի ամենայն
Հայոց կաթողիկոսի:

Աշխատասիրութեամբն Զրնելդամ Առէփ Խօջէ
ջանեան կոչեցելոյ:
'Ի Տպարանի Արէթ Զընթլումեանի:
Յամի Տեառն 1812:

# Ի ԿԱԼԿԱԹԱՅ:

## Նախերգան առ Բարեմիտ ընթերցօղս ։

Ստաուութք ընթեռնուլ յորդորեմ զքեզ ՚ի յառաջադիմութի քո ով քաղցրաբարոյ ընթերցասէր եղբայր իմ ՚ի գրքս զայս Համառօտագիծ վէպս պատմագրութե վարուց և սքանչելեաց՝ Գերահռչակ Առն Աստուծոյ Մեծի Յօհաննու Ոսկեբերանի, զոր արդէն ՚ի ձեռն երկանց աշխատասիրութե իմոյ ՚ի լոյս ածեալ, և բարեհաճ կամօք Քեզ ընծայեալ տեսանես յինէն ։ Եւ զի թէպէտ՝ ոչ կարեմ հաւաստի առնել զքեզ, թէ ՚ի մէջ այսքանեաց շարադրութեց, և թղթոց կարացեալ իցէ բովանդակել մանաւորաբար՝ բոլոր իսկ պատմութիւնն Հրեշտակային կենցաղավարութեան նորին, որով քաղաքավարէրն յերկրի աստ՝ գոլով ամ կերպիւ Գերաշխարհիկ, մինչև ցյետուն երկուերորդ ամն հասակի իւրոյ, յորում իսկ առ անձկալին իւր հանգեաւ երջանկութք . (Քանզի ըստ ասեն ժամանակագիրք ոմանք ծնեալ գոլն Յանտիոք, յամի կենարարին մերոյ. 355. և յետոյ վախճանեալ ՚ի Կոմանայ, ՚ի 407. ամի՝ նոյն թուահաշուութեան ։ ) Բայց սակայն խոստանամ քեզ, թէ այսքանեօք գրեցելովքս միայն, զորս եթէ ընթեռնուցուս աստ ծայրէ ՚ի ծայր, կարես իմանալ նաև զոչ գրեցեալս, և աղագաւ համառօտութե ՚ի պատմաբանէն զ՚ի բաց թողանեցեալս, եթէ կիրթ և փորձ իցես ՚ի Ճանաչման Առաքինական ներգործութեց, որոց յատանիլն միայն կատարելաբար, այլք բնաւք յա-

րա

րառոյեալք կամ ( ամէն գիտունք ) շարունակապէս, կամ
զոնեայ ունակաբար։

Այգա Թէ ոչ, ծանրագոյն աշխատանաց, և երկար ժամանակի կարօտանայր ոք, եթէ պատմագրել կամիցէր զմի ըստ միոջէն զանազան կատարելութեանն նորին. որ զԲարձրուին գերաՀրաշ իմաստութե, զՀանդէսն զանազան սքանչելեաց, զՀանգամանն Հոգևաշառնչ քաղցրութե, զՅարաշխատ գոլն 'ի բացատրութեան սրբ գրոց, զՆախանձայոյզ բորբոքումն վասն Աստուծոյ օրինաց, զՅաւակցական գութն դէպ 'ի մեղաւորս, զՄաքրութիւնն ներքին մարդոյն, և զՄահացուցումն արտաքին զգայութեանն։ Եւ 'ի վեր քան զամ, զՅօժարական տանելութիւն բազմադիմի Հակառակութեանց, նեղութեանց, Հալածանաց, աքսորանաց, և մարտիրոսութեանց. որովք սովոր է ած մաքրագործել զմաքուրս, և սրբագործել զսուրբս։ Ըստ որում ասեն վարդապետք. Թէ որպ Բոցն պարզէ զոսկին, Խարտոցն սրբէ զերկաթն, Կամնասայլն մաքրէ զցորեանն, Թութեայն պայծառացուցանէ զաչս, և Տօփիչն սպիտակացուցանէ զկտաւն. սոյն գունակ՝ տառապանք՝ տանջանք՝ և Հալածանք, մաքրեն՝ պարզեն՝ և պայծառացուցանեն զփրկելիսն այ. որպ ասէ սողոմոն 'ի յառակս. 17. 3։ Որպէս փորձի 'ի բովի արծաթ և ոսկի, նոյնպէս ընտրէ զսիրտս տր։ Ուստի երևելի անդամք եկեղեցւոյ սբյ Հանդերձ Ամենամաքուր Փրկչաւն մերով, կրեցին զաստ-կագոյն Հալածանս, և տակաւին բազումք և ս կրելոցեն Հետևապէս, ըստ ասելոյն Տն. յոՀ. 15. 20։ Եթէ զիս Հա

լա

լածեցին ; այլ և զձեզ հալածեսցեն : Վասն զի՝ որպէս յայտ է 'ի սբ գիրս. զի Աբէլ հալածեցաւ 'ի կայենէ, Սահակ յԻսմայելէ, Յակոբ յեսաւայ, Յովսէփ 'ի եղբարցն, Մովսէս 'ի փարաւոնէ, Դաւիթ 'ի սաւուղայ, Եղիա յեզաբելէ, Երեմիա 'ի պասքօրայ, Մուրթքէ 'ի համանայ, Յօհաննէս 'ի հերովդիադայ, Փրկիչն 'ի փարիսեցւոց, Առաքեալքն 'ի հրէից. և վերջապէս՝ Հայրապետքն 'ի հերետիկոսապետաց, և Առաքինիքն 'ի կեղծաւորաց: Քանզի որպէս փորձառապէս գիտեմք, զի չէ հնար գտանել ումեք յաշխարհի աստ՝ զայնպիսի բարեպաշտ ոք, որ ոչ ունիցի բնաւին հակառակ և խոչնդակ ինքեան՝ զանբարեպաշտ ոմն. վասն զի ըստ Աննայ՝ ունի ընդերհակ իւր Փեննանա: Այսպէս և սբն Յօհան Ոսկեբերան, (զորմէ խօսի ներկայ պատմութիւս) ունեցաւ զգլխաւոր թշնամի և հալածիչ ինքեան՝ Զևդոքսիա Թագուհին, պալատականօք նորին հանդերձ. և Թէոփիլոս պատրիարգն աղեքսանդրիոյ, յոգնաթիւ արբանեկօք նորին: Որոց ոմանք 'ի փառամոլութէ գոլորշեալք, և ոմանք 'ի նախանձու ամպացունեալք, յարուցանէին յեկեղեցւոջն Քի՝ զհողմունս երկպառակութե, զմրրիկս խռովութե, զալեկոծութիս հակառակութե, և զնաւաբեկութիս գայթակղութե: Զի 'ի ձեռն այսպիսեաց ամբոխմանց և յուզմանց՝ թերևս ընկլնուլ կարիցէին 'ի պատոյտս ջուրց, կամ 'ի յանդունդս խորոց՝ զբազմիմաստ ղեկավարն նաւու եկեղեցւոյ: Բայց զայս խորհեցան և խաբեցան, զի կուրացոյց զնոսա չարութի նոցա, և ըստ խորհրդոց իւրեանց ընկա

լան

լան զպատիժս ըստ գործոյն։ Ա՜յ զի՜նչ ամենևին անվրէպ և անսայթաք եկաց 'ի գծում ուղղութեան, հանգոյն հիւսիսանկատ Բևեռակէտի, որ 'ի մէջ սաստկածուփ ալէկոծութեանց, և ծովանուտ մրրկանաց՝ ուղղէ միշտ զմագնիսամած կողմն իւր 'ի Լիսուակէտն արջային, ընդ որ ունիլ ասեն

բնականք զհակումն իւրն բնականաբար։

Բայց պատկան վարկանիմ ինձ աստանօր 'ի բաց թողուլ զխօսելն յաղագս Սբյն, և 'ի գործ ածել խուն ինչ զպաշտօնն Նաւավարին այնորիկ, որ մատուցեալ զարթոյց զՅօնան զննջօղն 'ի խորշ մի նաւին՝ ասելով։ Զի՞նչ է այդ՝ Զի ննջես, Արի՝ կարդա առ Տէր. և այլն։ ( Յօնանու. I. 6։) Ուրեմն և ես ձեզ ասեմ ամենից, որք էք Խնամակալք, Այցելուք, Դէտք, Հոգաբարձուք, Առաջնորդք, Հովիւք, կառավարիչք, Եպիսկոպոսք, և Հայրապետք ժողովրդեանն Աստուծոյ. կցորդելով զիս ընդ Գերապայծառութեան ձերոյ՝ իբր զյետին աճելածու ծառայ ումն։ Զարթիցուք, Զարթիցուք, եղբարք Զարթիցուք, և բաւական լիցի մեզ ուրաքանչիւրոց՝ այսքան ընդ երկար խորդալն խորագոյն քնով 'ի խորշն Եկեղեցւոյ, որ 'ի պատճառս մեր կրէ միշտ զսաստկագոյն տատանումն։ և ալէկոծումն։ Ե՜ւ դիցուք՝ աղէ, միանգամ առաջի աչաց մերոց զայն Կենդանի Նշոյլ հայելիս վարուց, ընդ որ սևեռեալ զաչս իմացականութեան մերոյ, կարասցուք տեսանել զամենայն պակասութիւնս վարուց, և զբնաւ թիւրութիւնս ըղձից մերոց, զորս կիրառնումք 'ի

հովուեսն և 'ի կառավարելն զառաջնորդեալս մեր։

Քանզի

Քանզի՝ կարեմ ասել իսկութբ. թէ սա՛ եղեալ է վասն
մեր ամենայնից՝ Աստուածապաշտական վարուց օրինակ.
Քահանայական կացութեան նպատակ. Վարդապետական
իմաստից շաղաւակ. Եպիսկոպոսական հեղինակութե աղիւ-
սակ. Պատրիարգական ճոխութե եղանակ. Կղերիկոսական
պաշտամանց աշտանակ. Սրբ գրոց մեկնութե մատռուակ.
Հաւատոյ պաշտպանութե աշտարակ. 'ի կարգս ռաբու-
նապետաց արուսեակ, և Յերուսաղմ հայրապետաց լուսնթագ.
Այս զի՝ արդարև Քահանայ էր կարգաւ հանգոյն մեզ և
սա, բայց վարուք անարատ և գերամաքուր. Ունէր թէ-
պէտ զՎարդապետականն պատիւ. այլ ոչ նման մեզ անհա-
ւատ և երեսպաշտ. Փայլէր ևս Եպիսկոպոսական պաշ-
տօնիւ, բայց ոչ էր սնապարծ և ամբարտաւան. Ժառան-
գէր նաև զՊատրիարգութեն զգահ, այլ ոչ մախանօք և
յաչախանօք. Թէպէտ յանդիմանէր զանուղղայս, բայց ոչ
'ի կռուսիւ, այլ 'ի փրկութի: Բարոյական էր թէև քա-
ղաքավարութբ, բայց ոչ կեղծաւոր և սուտակատար:
Ուստի աքսորեցաւ երկիցս վս ճշմարտութե, հալածեցաւ
յաթոռոյն վս ուղղութե. դարձուցաւ վերստին վս անմե-
ղութե, սիրեցաւ յամենից վս առաքինութե, պսակեցաւ 'ի
Քսէ վս սրբութե, յարգեցաւ յեկեղեցւոյ վս իմաստութե,
և այժմ 'ի մէնջ պատուի վս բարեխօսութե:

Իսկ որքան առ բան տպագրութեան սորին՝ գիտել պար-
տիս. զի ունելով իմ սատ զմի միայն հնագոյն օրինակ ձե-
ռագիր, որոյ տառքն 'ի բազում ուրեք եղծեալք էին, և

բառքն

բառքն գրեթէ անհետացեալք. և ոմանք տեղիք ևս այն
պէս շփոթական սխալանօք լցեալք էին, որք իբր թէ՝
կարօտանային մարգարէանալոյ՝ թէ զինչ արդեօք կա-
միցին ասել, և կամ զօրպիսի իմացումն պարունեն յին-
քեանս: Եւ այս պակասութիւն՝ վշտալի առնէր ինձ զաշ-
խատութիւնն իմ առ գործն սրբագրութեան: Վասնորոյ
ուրեմն՝ որքան կարելի էր միով օրինակաւ, ջանացի
ուղղագրել ըստ տկարիմաց ենթադատման իմոյ՝ առանց
այլայլելոյ զբունն, որպէս յայտնի երևի այնոցիկ, որք
ունին առ ինքեանս զգրչագիր օրինակս, թէ և սակաւ
ուրեք գտանիլ կարեն:

Բայց թէ՝ արդեամբ և խնդրանօք որոյ, և կամ՝ որով
առթիւ տպագրեցեալ իցէ սոյն Գրքուկ, յայտ է հա-
մառօտաբար ՚ի Ճակատն նախկին: Քանզի նոյն նախա-
սացեալ Նունենց Պօղոսն՝ վասն յաճախ ջերմեռանդ սիրոյն,
որով կաթոգնիւր առ Ոսկեբերանն, ոչ խնայեաց ծախել
զդրամս իւր յաղագս ծախուց տպագրութեան սորին. հա
ճառալով թէ՝ այս հարկանել զարծաթ Տն ՚ի սեղանաւորս,
և գանձել զգանձս յերկինս, անկասկած ՚ի գողոց, և անմաշ
՚ի ցեցոց: Արդ թէպէտ խնդրօղն էր վերոյ յիշեցեալն. բայց
միջնորդն խնդրոյն, որոյ անսացող եղէ ես, էր Հա-
րազատ սիրելի ոմն ինձ ՚ի մանկական տիոց հետէ, և մանա
ւանդ երախտաւոր, որ կոչի իսկ՝ Տիրացու Յօհաննէս
Իգնատիոսեան. որոյ երկաքանչիւրոց Տր լիցի վարձահա
տոյց՝ աղօթիւք Սբյն Յոհաննու Ոսկեբերանի:

Վեր

Վերջապէս, և յինձ բազմամեղ ծառայի ձերոյ առ հոգևորս, որ մեծաւ աշխատութեամբ տքնիմ վասն օգտի ձերոյ՝ պանդխտակոչկոծ լեալ 'ի նժդեհութեան վայրի, Տէր այցելութիւն արասցէ բարեխօսութեամբ Սբյս, պաշտպանելով ի հոգևոր և 'ի մարմնաւոր դարանակալաց, նաև յաղօթէսաքարոյ մարդելուզաց, և խորամանկաց, յորոց ոչ զսակաւ վնաս կրեցաք, և կրեմք տակաւին:

Մնալով պատրաստական ծառայ
ձերում Ազնուութեան

Սարգիս Վարդապետ և Արք եպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի:

ԻՆՁ
ՅՈՅԺ ՄԵ
ԾԱՐՈՒՔ ԵՂԵՆ
ԲԱՐԵԿԱՄՔ ՔՈ ԱՍ
ՏՈՒԱԾ· ԵՒ ՅՈՅԺ
ԶՕՐԱՑԱՆ
ԻՇԽԱՆՔ
ՆՈՑԱ·

Սաղմ. 138. Համր. 17.



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան Կոստանդնուպօլսոյ Եպիսկոպոսին, և տիեզերաց լուսաւորչի՝ Ծննդեանն, և Գեղեցիկ քաղաքավարութեն։

ԱՄԵՆԵՒՔԵԱՆ ՈՐՔ 'Ի ՀՆՈՒՄՆ գրողք եղեն պատմութեց․ ոմանք 'ի նոցանէ 'ի նախ եղելոց իրաց սկիզբն արարեալ՝ ետուն մեզ զգլուխ գրոցն։ քանզի ընկալան զհօրին մեզ, որով զանցեալսն է [illegible]անալ, 'և զ․հանդերձեալոցն նախատես լինիլ։ և այլք 'ի [illegible]ելոյ, և կէսք ականատեսք եղեալ իրացն՝ գրեցին։ Այսպէս և մեծն 'ի մարգարէս մովսէս, զսկիզբն լինելութեան արարածոց, և զորս ըստ նման են հրաշա

գոր

գործեցանն յԱստուծոյ. խորհրդացեալ ՚ի հոգւոյն մեծ պատմեաց, զոր ոչ էր ՚ի նոցանէ ՚տեսեալ զգալի աչօք ։ Յետ այսորիկ գրեաց և այլ ևս կտակարանս. որ զելսն ազգատոհմին իւրոյ յեգիպտոսէ, և զազատութիւնն ՚ի դառն ծառայութենէ փարաւոնի ։ զոր մասնաւոր ինչ՝ որ նախքան զնա լեալէր յեգիպտոս գրէ, զոր լուաւ յազգացն եբրայեցւոց, և զ յոլովս՝ զոր աչօք իւրովք ետես ։ Եւ ապա ՚ի կարգի զայլ ևս զերիս գիրսն, որք վասն հրէիցն օրէնադրեցան յԱստուծոյ՝ գրէ մինչև յօր վախճանի իւրոյ ։

Դարձեալ՝ զկնի մովսէսի, զոր ինչ դիպուածք եղեն ՚ի ժամանակին յեսուայ որդւոյ նաւեայ, և զպատերազմն ընդ այլազգիսն յաւուրս դատաւորացն իսրայէլի՝ այլք գրեցին ։ Նոյնպէս՝ և զոր ՚ի չորս Թագաւորութեանց գիրս իրք գործեցան ։ և զարանց սրբոց մարգարէութիւնս, որպէս սաղմոսքն դաւթի, և իմաստութիւնն սողոմոնի ։ Նա և այլ ևս՝ զորս ՚ի պարսից և ՚ի մարաց, և ՚ի յունաց, և որ յետոյ ՚ի հռովմայեցւոց անցք անցին ընդ հրէայսն, զայս ամենայն ընդ զանազան ազգաց և ժամանակաց ՚ի հին պատմութիւն անդր պէսպէս տեսութեամբք գրեցան յոմանց ։ Ապա յորժամ յայտնեցաւ Տեառն մերոյ և Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի փառաւորեալ և սքանչելի գալուստն իբրև զգարուն ամենայն հոգևոր անուշահոտութեամբ, բացուստ ՚ի բաց առաքէր զքաղցրաբուխ բուրումն աստուածգիտութեան, և հալածեաց զմէգ և զմառախուղ դիւապաշտ մոլորութեան, և լուսաւո-

րեաց

րեաց զմիտս 'ի նա հաւատացելոցն 'ի ձեռն սրբոց Աւետարանաչացն և Առաքելոցն։ Յորոց ոմանք 'ի նոցանէ ականատես եղեալ սքանչելեաց, և այլք որք լուեալն յայնցանէ՝ որք սպասաւորք եղեն բանին, գրով աւանդեցին մեզ՝ զորս 'ի նոյն ինքն 'ի Քրիստոսէ, և 'ի նոցունց իսկ սրբոց առաքելոցն գործեցան։ Նաև վարք սրբոց ած-ազգեստ արանց, և Ճգնաւորաց ճգնութիւնք, և մարտիրոսաց նահատակութիւնք, որք յիւրաքանչիւր ժամանակս կատարեցան 'ի փառս այ գրով արձանացան 'ի նախանձ բարեպաշտից։

Եղեն իսկ և 'ի կաթուղիկէ եկեղեցւոյ գրօղք պատմութեանց. զորս յառաջ քան զնոսա յայլոց ընկալեալք, և զորս ըզկնի իւրեանց ստուգիւ զիրս՝ և ըզ կարգս ժամանակացն ետուն մեզ։ Վերաբուսան դարձեալ և առք հելլենացիք գրօղք պատմութեանց. որպէս իւրաքանչիւրումեք 'ի նոցանէ հաճոյ եղև գրեցին, որոց գրեանքն անթիւ բազմութեամբ յետ ժամանակաց ինչ անցելոց կորեան, և կիսոց կան մինչև ցայժմ։

Արդ զամենայն զայսոսիկ՝ զոր արարաք առ 'ի մէնջ յիշատակ, ոչ վայրապար և նանիր, այլ իբրև յարմարումն բանիս մերոյ՝ յորժամ կամեցաք առ 'ի յօգուտ հանդիպողաց առաջի դնել գրով՝ զվարս, և զսքանչելիս զամենագովելի և զերիցս երանեալ վարդապետին, և տիեզերաց լուսաւորչին Յովհաննու Ոսկեբերանին. որ 'ի ժամանակս Արկադեոսի, և Ոնորիոսի՝ ուղղեալ ունէր, և զարդարէր զաթոռս հայրապետութեն կոստանդնուպօլսի։

Ե՛

Եւ զորս պատմել կամիմ՝ ոչ եթէ յինէն ինչ զամենայն, այլ յայնցանէ որ նախ քան զմեզ գրեցին՝ որ մերձակայք էին նորա, և ես առաւել 'ի Պաղադիոսէ եպիսկոպոսէ, որ առ Թէոդորոս սարկաւագ հռովմայեցւոյ: Որ և սոյն իսկ այս եպիսկոպոսս մերձ էր 'ի կոստանդնուպօլիս, և ճշմարիտ զհետ երթեալ էր ամենայն եղելոց իրացն. որ և վասն գարշութեան՝ մերժեցաւ 'ի պատուոյն և 'ի քաղաքէն, և ոչ միաբանեցաւ ընդ դաւօղսն, որք դատապարտեցան հակառակ սրբոյն Յովհաննու. մանաւանդ եթէ հակառակ գլխոյն իւրեանց:

Արդ ոչ միայն 'ի նորին եկեղեցական դպրացն՝ որք ճշմարտութեամբ գրեցին. այլ և առեալ իմ և յայլոց դիմադրական գրողացն. նաև զորս 'ի հաւատարիմ քահանայից, և յաստուածասէր ժողովրդոց լուայ, և որք երդմամբ հաւատարմացուցին զմեզ: Զի այնպէս ամենեցուն ախորժելի էր այն, մինչ զի փափաքանօք ձգէր զամենեսեան՝ ասել և գրել զնորայն զառաքինութիւն: Իսկ մեք որ այժմ իւր հանդիպեցաք, ոչ պատշաճ համարեցաք թողուլ միայորդ ինչ, և կամ կաղակրկին հիւսել զնորայ զառաքինութիւնն, այլ քաջայարմար ընդելուզանել զպատմութիւնս իբրև զսանձս ոսկի առ իրեարս շարելով. որ թէպէտ և ամենայն իրօք որ կարանամք; առ 'ի նորայ առաքինութիւնն. որ համանման էր երանելի առաքելոյն Պօղոսի՝ մեկնօղ աստուածային գրոց, և յայտնօղ ծածկեալ բանիցն՝ որ 'ի նոսա: Սակայն

կային ըստ կարի մերում պատմեսցուք. այլ և դուք մը-
տադիւր ընկալարուք։ Արդ՝ սկիզբն արարից նորա աս-
տուածային վարուցն, և գեղեցիկ քաղաքավարութեն,
սկսանելով 'ի մանկութենէ նորայ. որպէս ընկալաք
յայնցանէ որ նախ քան զմեզ ամբարեցին զայս։

## Յաղագս ծննդեան, և մանկութեան սրբոյն։

Էր սա յանտիոք քաղաքէ. որդի առն ուրումն եր-
ևելոյ քաղաքին, որում անուն էր Սեկունդոս.
որ էր զօրապետ կարգեալ 'ի Թագաւորացն,
և փարթամութբ ևս առաւելեալ։ Նոյն պէս մայրն վայել-
չացեալ առաքինութբ ընդ անոռանն։ քանզի Անդուսա՛
կոչիւր, որ թարգմանի հայերէն ծաղիկ, և էր դուստր գլխա-
ւորաց քաղաքին։ Եւ էր Յովհաննէս 'ի փոքր հասակէ
իւրմէ սովորեցուեալ զինքն ցածուցանել զգնացս իւր առ
ամ խոնարհութե տեսակս, և ոչ երբէք տայր զինքն յար
համարհանս մանկութե. և այսպէս ընդ պատշաճի քաղա-
տոհմութե ծնողաց իւրոց սնանէր։ Եւ էին ծնօղք նորա
հելլենացիք. ընդ արտաքին իմաստութբ բարգաւաճեալ։
Իսկ երանելին Մելիտոս՝ որ յայնժամ ունէր զաթոռ
հայրապետութեն անտիոքայ, տեսեալ զՃշմարիտ հաւատս
նոցա. առեալ մկրտեաց նախ զերանելին Յօհաննէս, և

ապա

ապա զծնօղս նր։ Քանզի ոչ թողացուցանէր ած զայնպի-
սւոյ ըղ լուսաւորչի, և զեկեղեցւոյ վարդապետի ծնօղսն
պակասել 'ի հաւատոյ, և 'ի լուսոյ վերստին ծննդեանն։
Յետ այսորիկ երանելի մանուկն Յովհաննէս աճէր հա-
սակաւն և իմաստութեամբն 'ի լաւագոյնն ճանապարհոր-
դեալ. քանզի յայնմ հետէ ուշ դնէր ուսման գրոց սրբոց։
Եւ տուեալ եղև առ ոմն դպրապետ զի ուսուցէ նմա
զաստուածային գիրս. և էր ուսումնասէր և աջողակ քան
զբազում հասակակիցս իւր։ Եւ ոչ երբէք խառնէր
զինքն 'ի վարս մանկտւոյ. այլ խոկայր միշտ յերկիւղ Տն
ածոյ, և պարապէր յընթերցմունս ուսման իւրոյ միշտ
զցայգ և զցերեկ։ Եւ քանզի սիրէ բնութի մանկտւոյ՝
մանրահանդ որ 'ի փարթամութե են սնեալ՝ ար 'ի տե-
սութիւնս բազմաց պայծառ. և չքեղ երևիլ 'ի յաճխուե
նիս յայսմիկ. Հրամայեցին ծնօղքն նր ելանել 'ի վր երի
վարի, և հանդերձ մանկտւովք և դաստիարակօք եր-
թալ 'ի վարդապետանոցն։ Իսկ յովհաննէս արհամարհէր
զայս ամ՝ ամբարհաւաճութի վարկանելով, և հանա-
պազ յածութբ և խոնարհութեամբ հետիոտս երթայր
'ի վարդապետարանն։ Նա և զնախատինս ուսումնակցաց
իւրոց, որք բազում պատուով գային 'ի դպրանոցն, և
զնա 'ի նոյն յորդորէին՝ ոչինչ համարէր։ Այլ և ծառայ
քն որ բազում անգամ աղաչէին, և զհրամանս ծնողացն
պատմէին՝ և զիւրեանց տրտմութին, վասն այնր ոչ ինչ
գրէր, այլ հեզութբ պատասխանի տանէր՝ այսպէս ա

սէ

սելով։ Ոչ է պատշաճ առ աստուածային բանին բարձրութբ գալ, այլ խոնարհութեամբ, զի մի՝ միայն ՚ի բերան առնուցումք զաստուածային գիր. այլև զնոյն ինքն զշնորհս ուսմանն հաստատել և արմատացուցանել ՚ի սրտի խորում. զի այ շնորհացն և պտղաբեր լինելոյ, և ոչ բևեռել յանհեղաստացութիւն, և կամ յանօգուտս՝ յաչս մարդկան փառաւորիլ, որ անձահ է աստուածային իմաստութեն. քան զի ամբարտաւանութեանն մայր է անմտութի, և որ այսմ ոչ զգուշանայ, կոյր է ՚ի հանձարոյ։ Իսկ խոնարհութիւն ուղղէ զամ ճանապարհս իմաստութեան, և բարձրացուցանէ զայնոսիկ որ ստանան զնա։ Արդ զի՞նչ օգուտ բերիցէ ինձ ելանել ՚ի վր ջրեաց և երիվարաց, և բազում մանկտւով ընթանալ, և նմանիլ այնոցիկ՝ որոց ոչ գոյ իմաստութի. և ո՞վ իցէ ՚ի բարւոք խորհողաց, որ ոչ բամբասիցէ տեսանելով զիս այսպէս։ Արդ՝ ես ո՞չ զինամսկալութիւնդ ձեր, և զգորովալի գութ բարեմտութեդ ոչ ընդունիմ ՚ի ձէնջ, այլ եթէ որպէս վայելէ ինձ առ ածայինսն ճանապարհորդել՝ զայն առնել ընտրեմ։ Իսկ ծառայքն տեսանելով զանպղծելի միտս նր, և զանփոփոխելի բարսն՝ որ առ բարիսն ունէր, երթեալ ՚ի ծածուկ պատմեցին զամ ծնողաց նր։ Ոչ հոգայ (ասեն) նա զմեծութէ և զփառաց աշխարհիս այսորիկ, այլ սիրէ կեալ իբրև զմի յանարգ մարդկանէ։

Զայս իբրև լուան ծնօղքն նորա, կոչեն զՄանուկն

ա

առաջի իւրեանց՝ և առեն ցնա ։ Վասն որոյ պատճառի արհամարհեցեր զպատիւ իշխանութեանս մերոյ ով Որդեակ. ոչ գնալով որպէս վայելէ մեծութեան մերում և ըստ սովորութեան մեծանուն քաղաքիս . այլ անարգես զմեծութիւն մեր քոյին խոնարհութեամբդ ։ կամ թէ՝ ոչ գիտես թէ որպիսեաց ծնողաց որդի ես, 'ի բաց կաց այսուհետև յայդպիսի գնացից. և որպէս վայելէ մեզ այնպէս արա ։ Պատասխանի ետ իմաստունն Յովհաննէս հեզութեամբ և ասէ . ոչ երբէք ընթերցայք զաստուածային գիրս, թէ որպէս յարգեն և գովեն զայնոսիկ, որ խոնարհութեամբ կենցաղավարին, և գորովեն և արհամարհեն զայնոսիկ՝ որ ամբարհաւաճութեամբ և անառակութեամբ շրջին ։ Մի թէ լաւագոյն եմ՝ ես պատուով քան զԴանիէլ. և կամ քան զերիս մանկունս զայնոսիկ, որք զխոնարհութեան կեանս ընտրեցին 'ի գերութեան բաբելոնի ։ Վասն որոյ և ոմն 'ի գուբ արկել գազանաց, եխից զբերանս առիւծուց, և այլքն զհնոցն որ այնպէս բորբոքել և բարձրացել էր բոցով շիջուցին ։ Մի՞ թէ յաղագս անառակութեան և ամբարհաւաճութեան հանդիպեցան այնմ պատուոյն . ոչ այլ ժուժկալութեամբ և խոնարհութեամբ զայս ամենայն ուղղեցին ։ և այնպէս բարձրացան՝ մինչև մատակարարք ևս եղեն թագաւորական հրամանայն և ամենայն աշխարհին ։ Այնպիսեացն ցանկամ ես նմանող լինիլ, և ոչ այնոցիկ որոց ամենայն փառքն և մեծութիւն տկարագոյն են քան զսարդի ոստայն, և արագ անցանեն ։ Եւ ոչ միայն թէ չօգտին ինչ որ յայսպիսին հարեալ են.

այլ

այլև յոլովագոյն վնասին ՚ի պատրանացն և ՚ի հոգոյն՝ որ շուրջ զնովաւ պատեալ կան։ Լաւ է ինձ մանաւանդ առնել զի պատուիրանացն Այ և որպէս վայելէ բարեպաշտութե, և յուսալ ՚ի մեծապարգևն Ած, և բազմապատիկ առնուլ զվարձս՝ քան զերիվարս և զմանկունս, և զփառս և զպատիւս, և զբազմաց երանելի լինելն յերկիս յայտնիկ· զոր նա ինքն տայ առատապէս սիրողաց իւրոց, որպ և գրեալ է։ Ամենայն տուրք բարիք, և ամ պարգևք կատարեալք ՚ի վերուստ են ՚ի իջեալք ՚ի Հօրէն լուսոյ· ( Յակոբ I· 17։ ) և չկարէ ոք փառս հնարել անձին իւրոյ՝ եթէ ոչ տուեալ լինի նա յԱյ։ Զի ամ որ բարձրացուցանէ զանձն, խոնարհեսցի· և որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի· ( Ղուկաս· 18· 14։ ) Ուստի և անհնար իցէ ցանկացողաց հասանել առաքինի վարուց, և ուղղել զնա, եթէ ոչ յառաջագոյն զանձն խոնարհեցուցանիցէ· որպ և գրեալ է յերգս սաղմոսացն։ Բարի է ինձ· զի խոնարհ արարեր զիս· որպ յուսայց զարդարութիս քո· ( Սաղ· 118· 71։ ) Արդ՝ բարի է ինձ առ սուղ ինչ ժամանակ խոնարհեցուցանել զանձն իմ· զի ՚ի ժամանակսն որ ոչ անցանէ՝ ստուգապէս բարձրացայց յաստուծոյ։ Այսպէս և առաւել քան զսոյն խօսեցաւ իմաստունն Յովհաննէս ընդ ծնօղսն իւր· մինչև զարմանալ նոցա ՚ի վերայ բանից նորա, որ այնպէս անուշահամք էին աստուածային աղիճն համեմեալք։ Վասնորոյ հաւանեալ՝ թողացուցին նմա առնել որպ և հաճոյ թուէր ինքեան։ բայց միայն զայս

արա

արարելն • զի զմի ոք 'ի մանկտւոյն թողացուցէ երթալ զկնի իւր 'ի վարդապետարանն ։ Իսկ նորա հնազանդեալ՝ առնէր որպ և հրամայեցին ծնօղքն նր ։ Եւ այնպէս իմաստնացաւ յածային գիրս, մինչև սմ քաղաքին յայտնի եղև, և սքանչանային և ասէին՝ եթէ զինչ լինիցի մանուկն այն• և այնպէս սմ բարեսիրայն ցանկալի էր Յովհաննէս ։ Յետ սակաւ ինչ ժամանակի վախճանեցաւ հայրն նր, և եթող զնա որբ, և մնաց մայրն այրութբ 'ի մատաղ հասակի• որ թէպէտ և բազում մրրիկք և ձմեռն այրութն 'ի վր կայր • ք՝ մանկութն հասակն, և ցրումն ընչիցն, և տեսուի ծառայիցն, և հարկք թագաւորայն, սակայն ոչ կամեցաւ երկրորդ ամուսնանալ, այլ անձն էառ այրութբ հոգալ զհոգս տան • ըն առաքելական խրատուն ։ Բայց սակայն՝ զորդի իւր ազատաբար սնուցանէր, և ըզ տունն իւր բարւոք կարգաւորէր, ըստ արժանի ապնօրականութն իւրեանց ։ Եւ զի թէպէտ բազումք 'ի հասակակցացն յովհաննու յօժարեցուցանէին զնա երթալ ընդ նս 'ի թատերս և յընթացս ։ Իսկ նա սակաւ ինչ հոգալով այնմ• միում և եթ ուշ դնէր յանդ հանել զ լրումն ուսման իւրոյ, և ոչ երբէք 'ի բաց կայր յիւրոյ բարւոք կարգաւորութենէն ։ Եւ յորժամ աւարտեաց ըզ դպրութին որ ածային գիրս, կամեցաւ իմանալ և զարտաքին իմաստութին, վսյ աշակերտեցաւ Լիբանոսի իմաստասիրի, որ կատարեալ էր յամ արուեստս իմաստութն• Նաև ունկնդիր լինէր ագաղաթիոսի, որ էր ընկեր լիբիանոսի

անոսի. որք և 'ի ժամանակին յայնմիկ առաւել պայծառանայեին քան զամենայն իմաստունս Անտիոք քաղաքին: Եւ կատարեաց զայնոցիկ զաշակերտութիւն, և կամեցաւ գնալ յԱթէնս, զի և նոցա ևս իմաստութեան հմուտ լիցի:

## Յաղագս գնալոյն յԱթէնս, և ուսմանն:

Եւ այնչափ առաւելաւ անդ յիմաստութեան արտաքնոյն, մինչև բազմաց ևս նախանձիլ ընդ նորա առաւելութիւն. քանզի բազում գրեանս յառաջնոյն 'ի սակաւ ժամանակս 'ի բերան առնոյր, զոր այլք մեծ ջանիւ և բազում աշխատութեամբ, և ժամանակօք դուն ուրեք ուղղէին: Նաև յորժամ ընթեռնոյր ըզ գիրս արտաքնոյն, ոչ եթէ 'ի նոյն հաստատեալ էր իբրև 'ի ճշմարիտս, այլ ընտրեալ 'ի նոցանէ զպիտանիսն շտեմարանէր, և զանպիտանսն իբրև ըզ փուշս վնասակարս յարտաքս ընկենոյր, և առ աստուածային իմաստութիւն զհելլենացւոցն իբրև զառասպելս հեգնելով այպն առնէր: Եւ քանզի. աթենացիքն՝ ոչ կամէին զեկեալսն առ նոսա պայծառագոյնս լինել քան զիւրեանց իմաստունսն, վասն այնորիկ նախանձէին ընդ նմա:

Եւ էր այր մի յաթենացւոց՝ որոյ անունն էր Անթոմէոս, որ կարծիւր յամենեցունց որ յիմաստութեան դեգերէին՝ թէ հասեալ իցէ 'ի ծայրս ամենայն գիտութեան: Եւ վասն այր պատճառի անդրի կանգնէին նմա աթենացիքն և պատուէին. և այնչափ ցանկալի էր նոցա բանք նորա, մինչ զի յորժամ ընթանայր բազումք առաջոյ և զկնի երթային նմա. և

այսպէս

այսպէս բազում ամբարհաւաճութք բարձրացեալ պատ-
ւիւր յամ բնակչաց քաղաքին, 'ի ժողովրդենէն և յիշ-
խանացն: Իսկ իմաստունն յովհաննէս, ոչ թէ միայն
ունէր յինքեան 'ի կատարելութէ բովանդակ զ մարդկային
իմաստութին, այլ ածային գրոց հանճարովն լցեալ էր
շնորհօք հոգւոյն մէջ՝ որ բնակեալն էր 'ի նմա: Եւ սի-
րելի երևէր բազմաց. ոչ միայն քրիստոնէից, այլև ամ
անհաւատից, և առաւել արտաքին իմաստասիրացն, վս

չափաւոր բանից, և խոնարհ գնացից:

Իսկ յաւուր միում նշանաւոր՝ ժողովել ամ իմաստունքն
քաղաքին 'ի յայտնի տեղւոջ, այլ և եպարքոս քաղաքին.
քանզի և նա հելլենացի էր, և ամ քաղաքն անդր ժողո-
վեցան: Յայնժամ առաքեաց եպարքոսն երկվարս առ ե-
րանելին յովհաննէս, զի եկեալ 'ի վր նր եկեսցէ առ նա:
Իսկ նա հրաժարեալ յայնմանէ, և պատասխանի առնէր
առաքողացն ասելով. Թողութի արարէք, ոչ կարեմ գալ
այդպիսի կերպարանօք. զի եթէ 'ի քաղաքին իմում յոր-
ժամ հրաման առի 'ի ծնողացն իմոց մանկտւովք, և երկվա-
րօք ելթալ 'ի վարդապետարանն, ոչ առի յանձն. որչափ
ևս առաւել յօտար քաղաքի փառասիրութք և կառօք գալ
առ եպարքոսն: Անպատշաճ է ինձ, առէք տարէք զայդ
'ի բաց, և ես ոտ̃ սովորութի է իմ հետիոտս եկեալ՝ երկիր
պագից նմա. քանզի ծառայ եմ Քի, և 'ի նմանէ ուսեալ
չածել 'ի միտս իմ զգայթակղութիւնս ամբարտաւանութե,
և ոչ կարեմ արտաքոյ լինիլ նր ածային պատուիրանացն:

Իսկ

Իսկ սպասաւորքն գնացեալ առ եպարքոսն պատմեցին զայս ամ̅· և լուեալ եպարքոսն զարմանայր ը̅ իմաստութի̅ նր̅, և առաւել եւս փափաքանացն՝ այսր անդր հայէր՝ թէ ուր գտցէ· և յովհաննէս ոչ յապաղէր՝ այլ վաղվաղակի եկն 'ի հանդիսարանն։

Իսկ եպարքոսն ուրումն անուանն էր դիմոսթենէս, որ թարգմանի ժողովրդապետ· յորժամ ետես զնա, առժամայն յարուցեալ ինքն և ամ̅ մեծամեծքն, և իմաստունք քաղաքին աթենացւոց՝ գնացին ը̅ առաջ նր̅։ Եւ հեզն յովհաննէս խոնարհեցուցեալ զգլուխն իւր մինչև յերկիր, երկրպագ եպարքոսին, նմանապէս և այլոցն ամենեցուն։ Եւ յորժամ ետես եպարքոսն և այլ իմաստունքն՝ զնր̅ խոնարհութի̅, որ իբրև զմի յանարգաց այնպէս եկն առ նս̅, առաւել եւս զարմացան ը̅ իմաստութի̅ նր̅։ Եւ հրաման ետ եպարքոսն նստել ը̅ նս̅ 'ի հանդէսն, և նա երթեալ նստաւ ստորև քան զամենեսին։ Իսկ նա բռնադատեաց զնա նստել ընդ նմա 'ի մէջ հանդիսին· և հազիւ կարացին հաւանեցուցանել զսբ̅ն բազում աղաչանօք, որպ̅ զի արասցէ այնպէս։

Իսկ իմաստասէրն այն անթումէոս անուն՝ իբրև ետես ըզպատիւն որ տուաւ յովհաննու յեպարքոսէն, և յայլոցն ամենեցուն՝ որք ը̅ նմայն էին, և միտ եդեալ զի խօսէին ընդ միմեանս վս̅ իմաստութե̅ և խելամտութե̅ նր̅, լի եղև նախանձու և սրտմտութեամբ։ Պատասխանի ետ 'ի մէջ բազմութե̅ և ասէ· որպ̅ տեսանէք՝ աւերեցաւ սովորութի̅ քաղաքիս մերում, և եղեն 'ի սմա նոր օրէնք, զոր ոչ լուաք

յայն

յայնցանէ որ յառաջն էին քան զմեզ, և ոչ մեք տեսաք: Օտարաց ոմանք եկեալ աստ զաստիճանս որ յառաջ քան զինքեանս՝ յափշտակեցին, և պայծառք երևեցան քանզ բարձր իմաստունսն մեր 'ի դպրոցսն: Բայց ես ոչ ներեցից այդպիսի անօրէն կարգաց. զի յորժամ՝ գայցեն ամենեքեան 'ի վարդապետարանն, իւրաքանչիւրոք ըստ կարի իւրոյ ուսման և աշակերտութե՝ զիւր նստելոյ աստիճանն ճանաչիցէ, և մի՛ յառաջանայցէ քան զաստիճանն իւր, և մի՛ բարձրացեալ գերազանցեալ լիցի քան զայնոսիկ՝ որ յառաջ են քան զինքն գիտութեամբ և ուսմամբ: Արդ՝ զի ա՛րդ ըստ գալ յոլովաննու, փաղփաղակի զնախադասութի աթոռոյդ ետուք դմա, և ոչ պահեցիք զ վայելուչ սովորութ կարգիս մերոյ: Լուծաւ ստուգութիւն օրինաց մերոց, կոխան եղև պատիւ դպրոցիս մեր, արհամարհեցաւ վայելչութի աստիճանացս: Այսպիսի և որ սոցին նման են բազում բանս՝ անթոռնչոն այն վերադոչէր, և ոչ դունաքեայ պատիժս վարկանէր անձին իւրոյ. զի ոչ բաշխէին նմա զառաջագոյն պատիւն, ոչ եպարքոսն, և ոչ գլխաւորք այնմ քաղաքին: Այլ գիտացին՝ թէ ոչ որպէս աստիճանաց ինչ հոգայր, այլ դժուարին ունելով առ Յովհաննէս ասէ զայս: Պատասխանի ետ եպարքոսն և ասէ ցնա. պարտէ քեզ ո՛վ իմաստասէր՝ որպէս զիմաստասէր խօսիլ և գործել, և ոչ միայն զանունն միայն ունել, և զգործ իմաստասիրութե ոչ առնել, և չխորհել այդպէս և խօսել 'ի մէջ դամարձակաց ժողովրդեանն՝ որ ոչ է պատշաճ

շահ իմաստասիրի, և գիտեմ այլ ուսեալց. որ իբրև զվայրենաբնակս ոմանս գոչեն ՚ի մէջ դաշտի զկնի այնոցիկ զորս հալածեն և զհետ երթան, և կամ թէ որ յափշտակեալ յաւազակաց ոք լինիցի: Արդ՝ եթէ պատուհեցաւ իմաստունս այս յովհաննէս ՚ի մէնջ. այլ ոչ որպէս արժան էր և վայելէր սմա գործեցաք: Նախ՝ զի որդի լեալ է սա զօրապետի մեծի անտիոք քաղաքի, և վճիկ վայելէր մեզ պատուել ընձեռել սմա իշխանութեան: Եւ դարձեալ՝ զի իմաստուն և հանճարեղ երևեցաւ քան զբազումս, և ոչ թէ միայն քան զհասակակիցս իւր, այլ և քան զայնոսիկ որ առաջինք են քան զսա հասակաւ, և բազում ժամանակս դեգերէին առ ուսմունս մեր: Նաև՝ ոչ սա ինքն խորհեցաւ զայս առնել. այլ բռնադատեալ ՚ի մէնջ հարկեցաւ, յորժամ տեսաք ըզդորա զառաւել խոնարհամտութիւնն:

## Պատասխանի ոսկւոյն:

Իսկ իմաստունն յովհաննէս. ոչ ընդ նոցայ մեծարանսն բարձրամտեցաւ, և ոչ ընդ սոցայս բարկացաւ, այլ ըզհակառակն նոցին՝ հեզութեամբ պատասխանի ետ ցած ձայնիւ և ասէ ցնա: Ո՛վ անթիմէ. ամենայն իմաստութիւնդ քո յայտ գրեցաւ, մինչ սրտմտութեամբ պատուհասես զմեզ. թէպէտ և ոչ ինչ պարտաւորեալ քո ՚ի մէնջ: Եւ ես՝ ոչ եթէ հպարտութեան մտօք եկի ՚ի ժողովարանս յայս, այլ հրաման առի յեպարքոսէդ՝ և ապա եկի: Եւ զոյր

ուր

ուլուք արդեօք զաստիճան յափշտակեցաք՝ որպէս ասա
ցերդ. մի՞ թէ ինքնամուխ առ աթոռս գահոյից, զիս նստե
լով մատուցի. կամ թէ՝ ոսկւով և արծաթով եպարքոսդ
պատուՃեաց զիս, կամ թէ՝ զգեստուք զարդարելովք զգե
ցոյց զիս: Այսու հետև լուեա՛ 'ի նախանձուէդ, և մի
բարկանար 'ի անուտի կեանքնդ քո, քան զի ես աշակերտ եմ
Քրիստոսի և զհրամանս նր բարեմտութք 'ի մեզ բերել
պարտիք, որ հրամայէ պետութեց և իշխանութեանց
հնազանդիլ, յորժամ ոչինչ հրամայեն մեզ առ 'ի վնաս
ոգւոյ: Եւ վասն եկի այսր, զի զնոյն հնազանդութիւն
յօժարամիտ ունկն դրողաց ուսուցից, և ոչ եթէ աթո
ռոյ, կամ աստիճանաց ինչ ցանկացեալ, և փայելչանալ
'ի անուտիս: Արդ՝ զայսոսիկ և առաւել քան զսոյնս ասա
ցեալ իմաստնոյն յովհաննու. ամենեքեան պատուէին
զիմաստութիւն նր, և զհանճար վարդապետութե նր.
քանզի երեաք նր զուարճացեալ երևէր ամենեցուն, և
առաւել ոգի նր զուարթացեալ էր շնորհօք Հոգւոյն
սրբոյ: Իսկ զկնի լուելոյն յովհաննու՝ պատասխանի ետ
եպարքոսն և ասէ. Ճշմարտիւ ասեմ զի առանց ճայնակ
ցութեց են ուսմունք հելլենացւոց առ վարդապետութե
քրիստոնէից. քանզի այլ իմն օրինադրու է Քի, և այլ
չածոյն, և բազում կռճիմն կայ 'ի մէջ սոցա և նոցա:
Քանզի որչափ հելլենացի օրինադրութի զիշխանակի
րութին և զառաւելասատացութիւնն պատուէ, այնչափ
քրիստոնէական վարդապետութին զլուկ կենցաղս ամե

նե

նեցուն յինքեանս տպաւորել ուսուցանէ։ Յայնժամ պատասխանի ետ երանելին յովհաննէս և ասէ․ արդարև մեծ անձայնակցութի է մեր Քրի ծառայիցս, և ձեր՝ որ երկրպագուք էք կռոց, և ածք կոչէք զնս։ քանզի զինչ հաղորդութի է լուսոյ ընդ խաւարի․ կամ զինչ հաւասարութի է այ և բելիարայ։ Քանզի գիրք հելլենացւոցն՝ զպիղծ և զանպարկեշտ պագշոտութիս պատմեն առասպել գիտք դիւաց, և նուէրք աղանդաւորաց և վհկաց ապականողաց ոգւոց, և նանրութիք իսկ են ածքն, և արդարև ծաղու արժանի․ Այլ և ոչ նոյն ինքեանք միաձայնին միմեանց, վզի յայլս յայլոց խոտորել ուսուցանեն՝ որ յաղգս նոցա պատմութիք են։ Դարձեալ՝ յայնքան անմտութիս հոլովեցան որ նոցա բանաւորքն էին․ ոչ զի զպագշոտութի պարկեշտացուցանեն, և զկախարդութիւն պատուեն․ այլ և արձանս պատկերակերպս ՚ի քարանց և ՚ի փայտից, և յոսկւոյ եւյարծիթոյ և ՚ի պղնձոյ ՚ի ձեռն արուեստից նիւթեն ՚ի նմանութիւն ջրային և ցամաքին զեռնոց և գազանաց երկրի, և պատուեն զնս իբրև զածս։ Եւ ոչ եթէ մինչև ցայս կացին՝ այլ և մեծագոյնս տաճարս շինեցին Ապողոնի և դիայ․ Եւ կռօնոս և երմի։ Ափրոդիտէս և արտեմայ։

( Լուծմունք։ Ապօղոն և դիայ․ նոչին շնորհունչ։ Կռօնոս և Երմի։ ղորղիս լուփէյին, և նոչէյան գայլ ապաչանին։ Ափրոդիտէս և արտեմայ․ նոչէյան մասող շան։ )

Եւ այլոց ապականչաց և չարագործաց․ որոց առաքինութիք նոցա ՚ի կենդանութե իւրեանց պղծութի է և

զաղ

զազրութն, որ է զերկիր և զօդ, և զլուսնյս մարդկան առ հասարակ պղծեն :

Եւ զկնի այնորիկ 'ի պղծութե տօնին իւրեանց՝ զնոյն զարշութիւնն 'ի պատիւ նոցա կատարեն պաշտօնեայք նոցա : Պատուեն և աթենացիքս 'ի քաղաքիս յայսմիկ՝ Զաթենայ և զարտեմիս : Լ՜Ճ. Սոտա նոչին վակաշոտ 'ի ղտանչոսբեան գէՏ : որոց արձանս կանգնեն 'ի մէջն քաղաքի, և իբրև զաստուածս պատուեն զնոսա : Կանանց պոռնկաց նմանեալ են իմաստունքն հելլենացւոց, զի զպղծութիւնս զոր 'ի գոհան կատարեն, զնոյն և պարծին նոքօք, և զայն ոչ գիտեն եթէ զոր գործենն՝ ստոյգ պղծութիւն է հոգւոյ, և զոր պատմեն յաղագս նոցա սուտութեանն և դիւաց խաբէութեամբ օգնեալք : Իսկ մեր քրիստոնէիցս հաւատս՝ աստուածեղէն զօրութե̃ն հաստատեցաւ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. երեք անձնաւորութեամբն և մի աստուածութեամբ, և նոյն անժամանակ և մշտնջենաւոր, զոր ոչ սկիզբն աւուրց և ոչ կատարած յաւիտենից : Բայց յաղագս այսորիկ ոչ 'ի Ճահէ 'ի ժողովարանս յայս իմաստասիրել, այլ 'ի ժամանակի պարապոյդ և ուղիղ զայս խորհրդածեցից ձեզ և առաջնորդեցից ձեզ 'ի շաւիղս Ճշմարտութեան, եթէ կամիցիք ապրել յանխրաւ և 'ի նանիր ձերոց կռոցդ : Այս ամենայն համարձակութիւն վարդապետութեան վն Քի՝ եղեն 'ի յովհաննու 'ի մէջ հանդիսին աթենացւոց, զոր լուեալ ամենեցուն առ հասարակ Քրիստոնէից և

հե

հեթանոսաց հանդերձ եպարքոսիւն, և անթոմէոսիւ որ
էր գլուխ ա՟մ իմաստասիրաց նոցա: Եւ քրիստոնեայքն
ուրախացեալք զարմանային ընդ իմաստութիւն հոգւոյն,
և ընդ բանս շնորհացն, որ ելանէին 'ի բերանոյ նորա:
Իսկ հեթանոսքն բարկացեալ դժուարին լսէին զասա–
ցեալսն ի նմանէ: Պատասխանի ետ եպարքոսն և ասէ ցնա.
թէ արդարև ոչ ուսուցանես յանուն չա՟ծոյն. գոնէ 'ի
դարշելիս և 'ի պիղծս ասելոյ զն՟ս լռեա: Մի՞ թէ ոչ
գիտես՝ թէ ո՟պ աթենացիքն պաշտեն զն՟ս առաւել քան
զա՟մ մարդիկ՝ որ են ի վ՟ր երկրի. զի եթէ ոչ էիր պատո–
ւեալ 'ի մէնջ, ոչ ներէի այդ քոյին թշնամանացդ. այլ
սակայն ոչ պատուէեմ զքեզ առաւել քան զն՟ս: Զայսո
սիկ եպարքոսն ասացեալ. Իսկ Անթոմէոսն այն տեղի
գտեալ իւրոյ նախանձուն՝ հատուցանել չար հակառակ
յովհաննու: Եկաց 'ի մէջ ժողովրդեանն, և ասէ ցե–
պարքոսն. բազում բարեգործութե՟ հասեալեմք ձերովք
օգնականութե՟դ յորմէհետէ զիշխանութի՟դ զայդ ընկա
լեալ ես. ուստի և զգոհաբանութի՟ս որ վ՟ ձեր յա՟մ ու–
րեք վերաբերոզել ոչ խափանիմք: Այլ 'ի թագաւորէն
հայցեալ մեր յերկար ժամանակս թողուլ՝ 'ի վ՟ր մեր զիշ–
խանութիւն քո. որպէս զի բարւոք ուղղեսցես զկարգ
հայրենեացս մերոց: Նաև՝ զայս ոչ անգիտանայ քոյին
գերագահու՟թդ. քանզի ա՟մ ոք որ եկեալ է 'ի դպրոցս
այսմ քաղաքիս, ոչ դուզնաքեայ պատիւ և զպաշտօնութե՟
մատուցանէին չա՟ծոյն, զի երթեալ 'ի տաճարն մեծ չա՟ծին

տ

աթինայ, և առաջի անկեալ խնդրելով 'ի նմանէ իմաստ-
նացուցանել զմիտս նր առ 'ի յընդունելութի ուսմանն :
Ուստի և այսմիկ հանդիպեալ 'ի ձեռն օգնականութե նր,
դարձան յիւրաքանչիւր տեղիս բազում բարերարութիք
զնմանէ խոստովանեալք : Բայց միայն յովհաննէս այս՝ որ
եկն աստ և զիմաստութիս ամ դպրութես ուսաւ ստու-
գապէս չածոյն զօրութբ. և պատուեցաւ 'ի քաղաքա-
ցեաց, և 'ի ձերմէ իսկ մեծութեդ առաւել քան զամ մարդ
որ յառաջ քան զնա եկեալ էին 'ի դպրոցս : իսկ նա որում
պարտ և պատշաճ էր զարժանաւոր գոհութիւն քաղա-
քիս՝ և բնակչացս, և քեզ՝ և չածոյն բաշխել : և ոչ թէ
միայն զայս չարար, այլ և թշնամանէ ևս զչածն, և
զարշելիս և պիղծս կոչէ. և զսե զաւանդութիս նոցա
առասպելս համարեցաւ : Այսուհետև ամենեքեն թող
ցեն զտաճարն մեծին Աթենասայ, և ընդ նորա Վարդա-
պետութեամբն լինիցին. և լիցին առաջին պաշտամունք

կոխեալ 'ի քրիստոնէից :

Եպարքոսն պատասխանի ետ և ասէ ցանթամէոս : Ամենա
գովելի թագաւորքն քրիստոնեայք են, և հրաման ետուն
ոչ երկրպագանել ումեք այլ այ, բայց միայն Քի որում
քրիստոնեայքն երկրպագանեն և պաշտեն, և հելլե-
նական պաշտամունքս այժմ զաղտնի կատարին և նուէ-
րին չածոյն :, Եթէ աստանօր գիտութիւն լիցի մն նոցա
իշխանակալացն, տարականին և կորնչին առ հասարակ ու-
մունք հելլենացւոց : Լուեա՛ այսուհետև ո՛չ անթամէ

և

և մի՛ շարժեր բանս յաղագս այսորիկ։ վասն զի Ճշմար-
տութք՟ ամ՟ աշխարհք ը՟ իշխանութ՟ նոցայ են, և պաշ-
տեն զՔս՟, և նմա երկրպագանեն այսօր։ քանզի յօրէ
յորմէ հաւատացին ՚ի Քս՟ թագաւորքն հռոմոց, բարձ-
րացաւ փառօք թագաւորութիւնք նր՟։ Եւ առաւել հր-
նազանդեցուցին այժմ զբազում ազգս բարբարոսաց, և
խոնարհեցուցին զպարանոցս նոցա ը՟ լծով ծառայութե՟
իւրեանց։ և ես ինքն կցորդ էի հաւատոց նոցա նախ քան
զգալն իմ յիշխանութիւնս յայս։ Բաւական է քեզ զոր
ասացերդ. յայսմհետէ լռեա՛ վս՟ այդորիկ։

Զայս իբրև լուաւ անթիմոս. լի եղև ահիւ, և ամօ-
թալից եղեալ կարկեցաւ։ Իսկ երանելին յովհաննէս բուռն
հարեալ զբանիցն Ճշմարտութե՟՝ ասէ. Ճշմարտիւ ասեմ.
զի ոչ սուտ խօսեցաւ եպարքոսդ։ Որ տեղի իցէ այժմ,
որ ոչ երկրպագի Քս՟ ՚ի նմա. կամ որ ազգ որ ոչ խոս-
տովանեսցի զնա ած՟. քան զի ամ՟ ազգ հեթանոսաց փա-
ռաւորեն զնա հանդերձ Հարբ և Սուրբ Հոգւովն ՚ի
ծագաց երկրի մինչև ՚ի ծագս նորա։ Ապա եթէ կամիք
իմանալ թէ զինչ կրեցին՝ որք ՚ի բաց խոտորեցան ՚ի
հաւատոց անտի նր՟, և ուրացան զթագաւորութի նր՟, և
զերեքօրեայ փառաւոր յարութին. ընթերցջիք զգրեալն՝
թէ զորպիսի չարիս կրեցին հրեայքն յորժամ պաշարեցին
զքաղաքս նոցա թագաւորքն հռոմոց. քանզի ՚ի նեղութե՟
սովոյն՝ փոխանակ հացի կերան զմարմինս տղայոց իւ-
րեանց։ Արդ այսուհետև եթէ, կամիցիք դառնալ ՚ի կորս

տեա

տական մոլորութենդ ձերմէ և կեալ, երթիջիք առ մ՟ե եպիսկոպոս քաղաքիս, և առաջի անկեալ նո՟ր բազում արտասուօք, և նա ուսուսցանէ ձեզ զճշմարտութի՟ւ, և առաջնորդեսցէ ձեզ 'ի ճանապարհս փրկութե՟ն, որով կեցցեն անձինք ձեր։ Զինչ կայ ձեզ և աթենայի և տաճարի նո՟ր. մանաւանդ թէ ամ՟ե պղծոյն, և գարշելւոյն այնորիկ։ Ահաւասիկ վկայեմ ձեզ առաջի ա՟ծյն. զի եթէ ոչ ապաշխարելով և զղջանալով մկրտեսջիք և հաճատայցէք 'ի Ք՟ս, յայտնեմ զայս ա՟մ առաջի բարեպաշտ թագաւորաց մերոց. զի ոչ լուայք հրամանաց նոցա, և անարգեցիք և արհամարհեցիք զն՟ս։ Եւ ապա տեսանիցէք թէ ո՟պ գայցէ 'ի վ՟ր ձեր բռնութի՟ւ մահու վաղվաղակի, և ա՟մ ինչք ձեր լինիցին 'ի յափշտակութի՟ւ Ա՟ս զի լաւագոյն է մեզ՝ զի թէ ոչ հնազանդիք Ք՟ի և կեայք կենդանի, յանցաւոր կենցաղոյս 'ի բաց վճարել զձեզ. քան թէ կեալ՝ և հայհոյել զն՟ա կռապաշտութե՟ ձերով։ քանզի հանապազ դառնացուցանէք զկերակրիչ ձեր, և ո՛չ՝ գոնէ նմանեցէք շանց, և այլոց գազանաց և անասնոց և թռչնոց. վ՟ն զի շունք բազում գորովս և միամտութիւս ցուցանեն առ տեարս իւրեանց։ Նոյնպէս՝ և այլ գազանք ոչ մեղանչեն այնոցիկ՝ որ դարմանեն զն՟ս այսպէս և Անասունք, նոյնպէս և Թռչունք յորժամ մանանինն և 'ի յորս առաքին, դարձեալ անդրէն կանխեն հանդերձ միամիտ յօժարութե՟ք առ տ՟րն իւրեանց։ Եւ դուք քան զնոսայ ես վայրենագոյնք և անբանագոյնք

և

երևեցայք առ արարիչն ձեր և դարմանիչն ած. որ է արարիչ երևելեաց և աներևութից, և զխնամս բարերա-

րութե իւրոյ յամենեսեան առատութբ բաշխէ ։

Զայս ամ իբրև լուաւ անթոմէոսն այն 'ի սբյն յովհաննէ. լրբեալ ընդէմ՝ պատասխանի ետ և ասէ ։ Ոչ եթէ քո կերկրէ զմեզ, այլ երկիր բղխէ զպտուղ իւր 'ի ձեռն բարի գործողաց, և սերմանողաց. իսկ օդք աճեցուցանեն և պարարտացուցանեն զնս կամօք չածոյն ։ Եւ մինչ դեռ խօսէր զայսպիսի բանս, յանկարծակի հարեալ յայսոյ պղծոյ՝ անկաւ 'ի վր երկրի, և լլկել 'ի չար դիւէն շրջեցան աչք նր, և թիւրեցաւ բերան նր, և սաստիկ ելանէր փրփուրն 'ի բերանոյ նր ։ Եւ այնքան արհաւիրք անկան, մինչև բազմաց որ մերձն կային՝ 'ի փախուստ դառնալ. և այլ բազմութե՝ աղաչել զերանելին յովհաննէս բժշկել զնա ։ Իսկ նր պատասխանի արարեալ ասէ. եթէ ապաշաւեսցէ զչարիսն իւր, և խոստովանեսցի զճշմարիտն ած, զայն՝ որ 'ի նմանէ հայոյեցաւ, վաղվաղակի ընդունի զբժշկութի ։ Յայնժամ՝ սկսաւ վերադոչել անթոմէոս ասելով. խոստովանիմ զի ոչ գոյ այլ ած յահի բայց յայն քրիստոնէից, զոր յովհաննէս քարոզէ ։ Եւ զայս նր ասացեալ. առ ժամայն հալածական եղև դևն 'ի նմանէ. և յարեաւ եկաց 'ի վր ոտից իւրոց, ոպ զի ամքն զարմացան ը արագահաս բժշկութին ։ Իսկ երանելին յովհաննէս՝ ասէ ցանթոմէոս, առ՞եր զփորձ զօրութե կենդանւոյն այ, զորմէ յառաջ սակաւմի տրտնջէիր ։

վասն

վասն է՞ր ոչ օգնեցին քեզ աթինա, և արտեմիս, և դիքս,
այլ չածքն մոլորութեն ձերոյ:

Եւ նա հայեցեալ 'ի յովհաննէս ասէ. գոհանամ զքէն ըն-
դրեալդ այ, տր իմ յովհաննէս, որ առաջնորդեցեր ինձ
'ի ճշմարտութիւն. բայց դարձեալ աղաչեմ զքեզ զի ասաս-
ցես ինձ՝ թէ զինչ պարտէ առնել, ոպ զի կատարեալ մը-
կեցայց և կեցցէ ոգի իմ: Եւ նա ասէ ցնա. երթ յեկե-
ղեցին առ մր եպիսկպսն և նա ուսուսցէ քեզ զինչ պար-
տէ առնել, առ 'ի յօգուտ անձին քոյ: Իսկ եպարքոսն,
և որ ընդ նմայն էին՝ իբրև տեսին զամ եղեալսն, լի եղեն
ահիւ և դողութբ մեծաւ վերագոչէին ամենեքեան իբրև
ընդ մի բերան, և ասէին. մեծ է Ածն քրիստոնէից, որ սքան-
չելիս միայն նա առնէ : Ո՞ր Ած կարէ առնել այսպիսի
սքանչելիս , որպէս Ճշմարիտ Աստուածն և Քրիստոս
զոր պաշտեն դասք քրիստոնէից: Մեծ են հաւատք
նոցա , եւս առաւելապէս՝ ո՞ կարէ պատմել զսէրն և
զգութն նոցա առ Տէրն և աստուածն իւրեանց : Եւ
մեք ըստուգապէս մոլորեալ եմք, և կուրացեալ հոգւով
և մարմնով մեր, պաշտելով զկուռս որ ոչ կարեն օգ-
նել, և կամ վնասել ումեք: Եւ Անթիմոս երթեալ 'ի
տուն իւր, և առեալ զկին իւր և զորդիս և զծառայս
և զաղախնեայս չոքաւ առ եպիսկոպոս քաղաքին, և
անկեալ առ ոտս նր, և աղաչէր զնա զի տացէ նոցա զ-
կնիքն Քի, և հայցեաց զթողութի յայ շնորհել նոցա
վն առաջին գայթակղութեն 'ի կուռսն:

Իսկ

Իսկ եպիսկոպոսն իբրեւ ետես զայնն ըզ յանկարծակի փոփոխումն 'ի լաւագոյնն, որ այնպէս յօժարութեամբ եկն 'ի քս․ ուրախ եղեւ յոյժ, եւ խնդութբ մեծաւ փառաւորեաց զմարդասէրն այ, որ 'ի ձեռն խրատուն իւրոյ լուսաւորեաց զմիտս նոցա: Եւ առեալ զնոսա ուսոյց նոցա զհաւատս սբ երրորդութեն, եւ ապա մկրտեաց զնս 'ի Հայր, եւ Յորդի, եւ 'ի Սբ Հոգին․ զգուշացուցանելով զնս ոպ եւ որն զանդամալոյծն ասելով: Ահա հասեր ողջացար․ այլ մի' եւս մեղանչեր․ զի մի՝ եւս չար ինչ լինիցի քեզ ( Յօհան 5․ 14: ) յետ այսորիկ իբրեւ լուաւ եպարքոսն, եւ ամ բազմամբքոխ բնակիչք քաղաքին աթենացւոց, եթէ հաւատաց անթոմէոս 'ի քս ամտամբ իւրով, եւ մկրտեցաւ: Առաքեցին սուրհանդակս առ եպիսկոպոսն, եւ աղաչէին զի տացէ նոցա զքրիստոսի կնիքն, առեալ եւ զնս սբյ եպիսկոպոսն՝ մկրտեաց ըստ նմին օրինակի, եւ յաւելան 'ի հաւատն նր: Իսկ զեպարքոսն ոչ մկրտեաց՝ զի միանգամ՝ մկրտեալ էր, այլ կարգեաց զնա ըստ սահմանի կանոնաց եկեղեցւոյ, եւ արարեալ 'ի վր նր աղօթս, խառնեաց 'ի թիւ մկրտելոյն: Եւ բազումք որ արտաքոյ քաղաքին հանդիպեցան յայն ժամ, յետոյ եկեալ յորժամ լուան զսքանչելիսն՝ մկրտեցան եւ նք․ եւ եղեւ ուրախութի մեծ 'ի քաղաքին յայնմիկ, այլ եւ յամ եկեղեցիս Քի ուր եւ լսէին զհաւատս նոցա: Ոպ զի անդ կատարէր նուագ սաղմոսին․ իբր զի ուրախանան 'ի քեզ ամենեքեան՝ որք յուսացան 'ի քեզ․

յա

յաւիտեան ցնծասցեն, և բնակեսցես դու ՚ի նս · ( Սաղ.
5. 12 : ) Վասն զի արդարև բնակեաց ՚ի նմ ած · քանզի

որ ՚ի քս մկրտեցան, զքս զգեցեալ են :

Յետ այսորիկ իբրև ծանեաւ եպիսկոպոսն՝ եթէ այս ամ ուղղութիս կատարեցաւ ՚ի ձեռն յովհաննու, խորհեցաւ ձեռնադրել զնա փոխանակ իւր · քանզի ծերացեալ էր այնուհետև անցեալ զաւուրբք իւրովք : Եւ զայս գիտացեալ սբյն յովհաննիսի · յարեաւ գաղտաբար, և չոգաւ ՚ի հայրենի քաղաքն իւր յանտիոք : Եւ յորժամ լուր եղև գալուստն նորայ քաղաքին և գաւառին, կամէին ածել զնա ՚ի դատաւորական աթոռն, ըս իւրոյ հայրենի կարգին : Վս զի յայտնի եղև ամցուն իմաստութի նր, և հանճարն, և խոնարհութե բարեձևութի : և եթէ ոչ կատարեց զամ արուեստս իմաստութե, և յաղթեց ամ հելլենացւոց ուսմանցն : Իսկ նա զմտաւ ածեալ զկենցաղոյ դժրանս՝ զոր ՚ի դատաւորական աթոռս երևելիս երևել վն ՚ի խաղաղական մանաւանդ միշտ ցանկայր մտանել ՚ի վարս : Եւ երանէր միշտ զայնոսիկ՝ որք կարօղ լինէին և զայնպիսի ուղղութիս բերել յանձինս : Եւ ցանկայր ևագրիոսի որում՝ որ լեալ էր աշակերտ լիբանոսի իմաստասիրի, որում և ինքն աշակերտեցաւ յառաջագոյն : քանզի այս ևագրիոս՝ զխաղաղական կենցաղոյս առեալ զճաշակ ածայինսն պարապէր գրոց : Այսպէս և յովհաննէս ութ և տասն ամեայ էր այնուհետև յորժամ ՚ի գլուխ հանեալ զիմաստասիրականս ածայինսն պարապէր գրոց ընթերցմանցն :

Իսկ

Իսկ երանելին մելիտոս եպիսկոպոսն՝ տեսեալ զյառաջադիմութիւն նր̃, զգուշանայր նմա և հուպ առ ինքն պահէր 'ի մէջ եկեղեցւոյն. Քանզի մարգարէական աչօք՝ իբրև ընդ հայելի տեսանէր զերանելւոյն զ'ի վերջն 'ի բարձրագոյն իմաստն: Իսկ երանելին յովհան՝ իբրև այնպէս հոգայր յաղագս առաքինութե̃, հնազանդեցոյց զթէոդորոս և զմաքսիմոս՝ որ էին աշակերտակիցք նորա առ իմաստունն լիբանիոս՝ 'ի բաց թողուլ զերևելի կենցաղս, և մտանել 'ի լուծ և յառաքինի վարս: Որ և թէոդորոս եղև եպիսկոպոս մոպսուեստեայ եկեղեցեայն. և մաքսիմոս 'ի սելևկիոյ՝ 'ի սաւրիայ: Իսկ երանելին յովհաննէս՝ հանդերձ բասիլիոսիւ երբեմն սարկաւագ կացեալ ընդ ձեռամբ մելիտոսի եպիսկոպոսի: Եւ յետոյ բասիլիոս լեալ արքեպիսկոպոս կեսարու կապադովկեցւոց. և էր բազում բարեկամութի̃ հարազատաբար յովհաննու առ բասիլիոս զամ̃ աւուրս կենաց իւրոց. քանզի միևնոյն ուսմանց աշակերտ գոլով, և զնոյն վաստակս ունէին առ բանից իմաստս: Եւ յովհաննէս հանապազ աղաչէր զբասիլիոս, զի զհետ երթիցեն կրօնաւորական վարուցն: Իսկ բասիլիոս թէպէտ և յառաջագոյն հրաժարէր. սակայն յետոյ հնազանդէր նմա, և ձեռն 'ի գործ արկեալ կամէին կատարել զխորհն. և խափան լինէր մէջն յովհաննու սաստիկ սաստիկ աղաչանք մօրն իւրոյ:

Զի յորժամ իմացաւ զխորհուրդս նորա. առեալ զաջոյ ձեռանէ որդւոյն իւրոյ, ած զնա 'ի սենեակն իւր,

և նստուցեալ զնա մերձ 'ի տեղին՝ որ ծնաւն զնա. աղբերս արտասուաց յոյժ հեղոյր առաջի նորա, և ողբալով և կոծելով բանս ողորմագինս առաջի նոր դնէր. ասելով: 'ի հօրն քում առաքինութեան ոչ վայելեցի բազում՝ աւուրս. վասն զի ամն այնպէս հրաժարեաց, որ և քեզ որբութե, և ինձ այրութե առիթ եղև մահն նորա. Այլ սակայն ամ անցք չարեաց ոչ կարացին հնարել ինձ երկրորդ ամուսնանալ, և այլ օտարոտի փեսայ մուծանել 'ի տան հօր քոյ. այլ կացի և մնացի 'ի հնոցս այրութեան համբերութբ 'ի ձեռն մարդասէր խնամոցն աստուծոյ: Ոչ զի հանապազ տեսանել զերեսս քո իբրև զպատկեր կենդանի փոխանակ վախճանելն հօրն քոյ, բազում մխիթարութիւն և սփոփութիւն ընձեռեր ինձ: Այլև ես զինչ քո ոչ նուաղեցուցի 'ի հարկս այրութե, կամ 'ի պէտս ծախից պահանջողաց. և զորինչ ծախեցի վասն քոյին ուսմանդ, և կամ վս այլ իրի, 'ի յընչից ծնողաց իմոց ծախեցի մինչև ցայժմ, և զտունն հօր քոյ ամբողջ պահեցի: Արդ՝ աղաչեմ զքեզ որդեակ իմ. մի՛ անփարատելի տակաւին յարուցանես 'ի վր իմ զողբս անմխիթարս, և գնալովդ քո արկանես յիս ըզ երկրորդ այրութիւն: Այլ համբերեա՝ ինձ սուղ ինչ ժամանակս, թերևս զկնի սակաւ աւուրց գայցէ ինձ հրաւէր մահու: Քանզի մանկունք մինչև 'ի ծերութիւնս ձգելով ապա ակն ունին մահու, իսկ մեք ծերացեալքս՝ ոչ այլ ինչ կերակրելոյ կենաց մնամք, քան եթէ վաղվաղակի մահու: Եւ յորժամ

տայես զհօղս հողոյ, և խառնեսցես զոսկերս իմ ընդ ոսկերս հօր քո, յայնժամ երթիցես ուր և կամեսցիս, և ոչ ոք է որ խափանէ զքեզ։ Այլ մինչ կենդանի եմ ներեա՛ ընդ բնակութեան քո առնել ընդ մեզ, և ոչ է քեզ դատապարտութիւն. վասն զի ամենայն օրէնքն պահանջեն 'ի քէն պատուել զծնօղս քո։ Զայս և առաւել քան զսոյն՝ մեծաւ ողբալով ասէ ցնա մայրն իւր. և հաւանեցոյց զնա առժամայն մնալ անդէն 'ի քաղաքին ընդ նմա։ Բայց սակայն՝ ոչ 'ի բաց կայր նա 'ի փափաքմանէ բարեացն, և կոխէր զամենայն ցանկութիւնս կենցաղոյս, և ոչ ինչ փոյթ էր նմա ամենայն ցանկութիւն կենցաղոյս։ Եւ յինքն ընդունէր զամենայն խոնարհութեան բանս, և սիրելի էր նմա աղքատութիւն հոգւոյ, և ատելի ամբարհաւաճութիւն և ամբարտաւանութիւն. և հատոյց 'ի բերանոյ իւրոյ զամենայն ցանկութիւնս, և զհարցաքննութիւնս խորտակաց։ Յետ այսորիկ զենոնիոս եպիսկոպոս՝ յորժամ դարձեալ յԵրուսաղեմայ գայր, կարգեաց զերանելին ընթերցող եկեղեցւոյն անտիոքայ. և յայնժամ Հոգւովն Սրբով սկսեալ գրեաց ճառս վեց հակառակ հրէիցն։ Եւ վաղվաղակի զկնի ձեռնադրութեանն տակաւին մինչդեռ էր 'ի նմին քաղաքի, սկսաւ 'ի կրօնաւորութիւն, և զխիստ վարս 'ի յանձն առեալ՝ փորձէր զինքն 'ի ճգնութիւնս, զոր փափաքէր 'ի փոքր հասակէ իւրմէ։ Եւ սուղ ինչ ժամանակ անցեալ՝ կատարեաց զժամադրութիւն կենաց իւրոց երանուհի մայր նորա, և փոխեցաւ 'ի հանդերձեալսն. և մնաց նմա ինչս բազում. ք

ոսկի

ոսկի և արծաթ, և հանդերձս մեծագինս, և ձիս, և ջորիս, և անասունս. և այլ բազում ստացուածս, որպէս սովորեն ունել մեծատունք: Եւ նորա առեալ զմայրն իւր արդարապէս և բարեպաշտութեամբ կենցաղավարեալն, թաղեաց 'ի գերեզմանի, յորում թաղեալ կայր հայր նորա. ըստ հրամանի մօր իւրում: Եւ ինքն իսկոյն վաղվաղակի՝ զոսկին ետ աղքատաց և կարօտելոց, և զարծաթն բաշխեաց յեկեղեցիսն և 'ի վանորայսն, որ շուրջ զքաղաքաւն էին՝ առ 'ի սպաս և 'ի զարդ եկեղեցւոյ: իսկ ըզծառայսն, և զաղախնայսն, արձակեաց 'ի կապանաց ծառայութէ: Բայց զայլ ստացուածսն. զոր օրինակ՝ զձիսն, և զջորիսն, և զայլ անասունսն, ետ 'ի քաղաքին մատակարարաւն, վան թախանձ լինելոյ նմա 'ի հարկէ դիմոսական պահանջմանէն: Եւ զայլսն ամենայն այսպէս կատարեաց, և նա հաստատ ճշմարտութեամբ զինքն ցուցանէր. պարապէր միայն 'ի խորհրդածութիս ընթերցման աստուածային գրոց, պահապան արթուն եղեալ մարմնոյ իւրոյ, փախչելով յոյժ յաշխարհական ցանկութեանց: Այլև 'ի բաց հալածէր յինքենէ զմարմաջումն և զանվայելուչ խոտլամունս խառնակութեց և գարշելի ցանկութեց, զկուսութի և զսրբութի 'ի սեպհական մարմնին իւր բնակեցուցանէր: Ապա զմտաւ ածեալ և բռնադատեալ 'ի խղճէ մտաց իւրոց, ոչ թէ չիցէ բաւական զաշխատութիւն ճգնութեամբ և ըզպնդակազմութի մարմնոյն իւրոյ ամբողջ և անարատ պահելով՝ բնակելումն 'ի քաղաքին: Ապա այնուհետև

հե

հեռանայր յազգականաց իւրոց և 'ի քաղաքէն, և եր-
թեալ բնակեցաւ 'ի վանս ուրումն՝ որ էր մերձ 'ի քա-
ղաքն, և անդ զտանջանս անձին իւրոյ Ճգնութեան վարս
Ճեպով կատարէր։ Եւ զցայգ և զցերեկ յաշխատութիւնս
և յաղօթս պարապէր, և զամենայն յառաջագոյն եղեալսն
մոռանայր, և յառաջիկայսն նկրտէր, նմանօղ լեալ իմաս-
տնոյն պօղոսի։ Եւ յորժամ այսպէս տեսանէին եղբարքն
որ էին 'ի վանսն, աղաչէին զնա առաջի կալ նոցա,
որպէս զի զնա օրինակ ունելով, և 'ի նմանէ ուսանելով՝
շահեսցին զօգտութիւնս անձանց իւրեանց։ Իսկ նա
զայս առնելոյ ոչ ներէր, վասն հոգս առնելոյ եղ-
բարցն և զբաղմանց իւրոց․ այլ տուեալ նոցա սահ-
մանս ժուժկալութեան, և սուրբ աղօթից, և Ճգնու-
թեան, և ընթեռնլոյ միշտ զաստուածային գիրս․ և ըղ քաղա-
քավարութիւն հանդարտութեամբ, և անստացուած կեն-
ցաղս ստանալ։ Նաև սահմանեաց նոցայ դասս կարգաւո-
րութեան՝ անխափան յեկեղեցւոջն 'ի ժամու գիշերային,
պաշտամանն և 'ի տուընջենային աղօթսն․ ըմբռնել զլեզու
և ըղ սանձս 'ի վերայ դնել, զի մի՝ զանպատշաճն բար-
բառեսցէ, և մարտնչել ընդդէմ հակառակողին, և որո-
շել զմիտս 'ի դաւաճանօղ և 'ի չար խորհրդոց նորա։

Այլ և մխիթարէր զնոսայ՝ նմանօղ լինել քաղաքավա-
րութեան սրբոյն․ Եւս առաւել Եղիայի, և Եղիշէի, և
մեծին Յովհաննու, որք հանդերձ բազում առաքինու-
թեամբ և մանաւանդ անստացուածութեամբ, հանդիպեցան

արքայ

արքայութեն երկնից, որ թէպէտ և 'ի յերկրի էին, այլ
հաճասարք էին երկնաւոր հրեշտակացն: Եւ ոչ հայի
'ի սեղանս բազմազանս խորտկաց, բայց միայն յայն՝ որ
բաւական է առ 'ի պէտս մարմնոյ, և բաշխել քաղցելոց
արդար վաստակոց ակնկալութբ հատուցման բարեաց՝
յաւուր պարգևողէն այ· ըստ այն որ ասէ: Երանի ողոր-
մածաց՝ զի նոքա զողորմութի գտցեն· (Մատթ. 5. 7:)
Եւ այն թէ· եկայք առ իս ամ աշխատեալք, և ես հան-
գուցից զձեզ· (Մատթ. 11. 28:) Եւ զի՝ որ չարչարի
մարմնով դադարէ 'ի մեղաց, (Պետ. 1. 1:) Եւ մարգա-
րէն ասէ· զվաստակս ձեռաց քոց կերիցես · և այլն
(Սաղմ. 127. 2:) Մի զմարմնական կերակուրն կարծե-
լով զայս, այլ զհոգևորսն· զի զպահքն, զաղօթքն, զգե-
նախշտութիւնս, և զայլ ազգի առաքինութիւնս:
Եւ առաքեալն ասէ· զի որչափ սերմանէ եթէ 'ի հոգին
և եթէ 'ի մարմինն, զնոյն և հնձեսցէ· (Գաղ. 6. 8:)
Եւ մեզ պարտ ցանկալ առաքինութե և վարուց նորին:
Եւ 'ի վր այսոցիկ զհաստատեալսն ամրացուցանէր, և
զժուժկալեալսն հաստատէր: Ցաւել ևս ուսուցանել
նոցայ բանս յաղագս հանդերձեալ դատաստանին, և ըստ
իւրաքանչիւր գործոց հատուցմանն և վր տանջանաց գե-
հեննոյն՝ թէ որքան աններելի է և անվախճան: և դարձեալ
վասն հանգստեան և արքայութե, թէ որպէս յաւիտենա-
կան է, և առաւել ուրախութեցն քան զամենայն միտս
անցանէ: Եւ այսպէս զ յապաղեալսն զարթուցանէր յեր-
կիր

կից և 'ի փափաքումն, և ըզ կատարեալն յառաջելեալ առա
քինութին յօժարեցուցանէր։ և յայսպիսի բանիւք յոր-
ժամ ժամանակի զամենեսեան մխիթարէր։ Եւ այնպէս յայտ
նի եղև նա ամ աշխարհին անտխրեքայ իբրև զքաղաք որ 'ի
վր լերինն կայցէ՝ ըստ տն բանին. նաև այնպէս ամենեցուն
ցանկալի էր, մինչ զի կարօտութք և բազում պատկա-
ռանօք գային առ նա. ոչ եթէ կրօնաւորք միայն, այլ և
կղերիկոսք և ծականք և իշխանք, որ լսէին զիմաստութի
և զխրատ նորա։ Քանզի 'ի բերանոյ նր բղխէին բանք
ածայինք, 'ի հոգւոյն սբյ՝ որ բնակեալն էր 'ի նմա, և
ամենեքեան օգտեալք 'ի նմանէ՝ ուրախութք մեծաւ դառ-
նային յիւրաքանչիւր տեղիս, գոհանալով ըզ այ։ Եւ
ոչ թէ միայն բանս Խրատականս մատուցանէր, այլ և
զածային գիրսն՝ թարգմանէր, և զդժուարիմաց բանսն որ
'ի նմ, պայծառ և յայտնի և ստուգապէս առաջի ամենե-
ցուն դնէր։ գրէր և այլ գրեանս 'ի շահ և յօգուտ փափա
քողացն, զոր առեալ բազումք փոխագրէին զայն և տա-
նէին յապարանս իւրեանց, և անխափան ընթեռնուին, և
'ի բերան առնուին։

Էր ոմն ճգնաւոր բնակեալ 'ի վանսն յազգէ ասորի, որոյ
անունն կոչիւր՝ Աւիքոս, և ունէր շնորհս յառաջագի-
տութեան յաստուածային յայտնութենէն։ Եւ եղև
'ի միում գիշերի 'ի հակման ժամու՝ տեսանէր այր երկու
եկեալ առ յովհաննէս 'ի տեղւոջն՝ ուր կատարէր զաղօթս
իւր, և էին զգեցեալ պատմուճան սպիտակս քահանայա-
կանս

կանս, պայծառացեալ փառօք անճառելեօք: Եւ մինն 'ի նոցանէ՛ ունէր առ ինքեան գիրս գրեալս. իսկ միւսն ունէր 'ի ձեռին իւրում փականս. զոր տեսեալ յովհաննու՝ զարհուրեալ յոյժ, ևանկեալ երկիրպագանէր նոցա 'ի վր երկրի: Իսկ նոցայ: կալեալ զձեռանէ նր յարուցին զնա, և ասեն. քաջալերեա՛ց յայսուհետև և մի՝ երկնչիր: Նա ասէ ցնա. ո՞վ իցէք դուք տեարք իմ, որ արժանի արարիք զծառայս ձեր գալ առ իս այդպիսի լուսաւոր կերպարանօք, զոր ոչ երբէք տեսի: Պատասխանի ետուն դարձեալ և ասեն ցնա. մի՝ երկնչիր այր ցանկութեց նոր դանիէլ առ որ բնակիլ հաճեցաւ հոգին սբ 'ի մաքուր սրտի քում. Առաքեցաւ քեզ 'ի մեծ վարդապետէն և փրկչէն մերմէ Յսէ Քսէ՝ աւետարանել խնդութի մեծ և ուրախութի զոր տուաք, և ամ եկեղեցեաց քի այ: Եւ տարածեալ զձեռն իւր մինն 'ի նոցանէ՝ որ ունէր առ ինքեան զգիրն, ետ ցյովհաննէս և ասէ. ա՛ռ զգիրս զայս 'ի ձեռաց իմոց: Զի ես եմ յօհաննէս՝ որ անկայ 'ի վր լանջացն Տն 'ի խորհրդական ընթրիսն, և ընկալայ զյորդահոս վտակ ջուրցն կենդանութե զխաղացեալսն 'ի կեանս յաւիտենից, և ածաբանեցի զանսկզբնականութի որդւոյ է անսկզբնականին հօր հաւասարեալ: Արդ՝ և քեզ շնորհեաց տէր զգիտութի ճշմարտութե, առ 'ի կերակրել բանիւ քո զժողովուրդս հաւատացելոց կերակրովն որ մնայ 'ի յաւիտեան. և լսցես զբերանս հերձուածողաց, և զհրէից, և զհեթանոսաց՝ որք խօսէին զանօրէնութի հակառակ

այ

ա͞յ մերոյ։ Իսկ միւսն՝ որ ունէր 'ի ձեռին իւրում զփա-
կանսն, ձգեալ զձեռն իւր՝ ետ 'ի նմա և ասէ։ Առ ըզ
փականս զայս. զի ես եմ Պետրոս ջերմ հաւատացեալն,
որ խոստովանեցայ զ Ք͞ս որդի ա͞յ կենդանւոյ. և վ͞սկ
հաւատացաւ 'ի նմանէ ինձ փականք արքայութ͞ե երկնից։
Արդ՝ և քեզ հաւատաց այսօր նոյն ինքն տէր մեր Յ͞ս
Ք͞ս զփականս եկեղեցւոյ իւրոյ։ զոր կապեսցես յերկ-
րի եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեսցես յերկրի,
եղիցի արձակեալ յերկինս։

Եւ յովհաննէս՝ դարձեալ անկեալ 'ի վ͞ր երկրի՝ երկիր
պագանէր նոցա և ասէ։ Ո՞վ եմ ես տեարք իմ և եղ-
բայրք իմ՝ մեղաւորս և տրուպս ա͞մ մարդկան, զի այժմ
ա͞մի զոր ասացիք՝ բաւական լինիցիմ. ո՛չ եմ արժանի յայս-
քան մեծ և սարսափելի սպասաւորութ͞ե համարձակիլ։
Իսկ ն͞ք կալեալ զձեռանէ ն͞ր՝ վաղվաղակի յարուցին
զնա և ասեն. կաց 'ի վ͞ր ոտից քոց՝ զօրացիր և քաջ լեր,
և առ զայս ա͞մ զոր պատմեցաք քեզ, և մի թագուցաներ
զպատուական շնորհս որ տուաւ քեզ ա͞յ՝ առ 'ի հաս-
տատել վարդապետութ͞բ քո զժողովուրդ ն͞ր, յաղագս
որոյ եհեղ զարիւն իւր ո͞բ զի փրկեսցէ զն͞ս 'ի մոլորութ͞ե
անտի։ Եւ դու խօսեսց զբանն տ͞ն ա͞մ համարձակութ͞բ,
և յիշեա զասացեալսն 'ի Տ͞ն։ մի երկնչիր հօտ փոքրիկ.
զի հաճեցաւ Ք͞ս ա͞ծ լուսաւորել 'ի ձեռն քո զանձինս
բազմաց՝ ածելով 'ի գիտութ͞ի ն͞ր։ Եւ հանդերձեալ ես
մտանել 'ի նեղութ͞իս և 'ի վտանգս վ͞ս ուղիղ հաւատոյ

Լոյ՟ քո զբանն ճշմարտութե՟։ բայց համբերեա իբրեւ լ
քաջ նահատակ, զի 'ի ձեռն այրո՟մ ժառանգեսցես
զարքայութի՟ն երկնից։ Եւ զայս իբրեւ ասացին․ անդէն
կնքեցին զճակատ նորա, եւ զա՟մ անդամսն, եւ ետուն նա

զա՟ծային ողջոյն, եւ գնացին 'ի նմանէ։

Իսկ սբ՟ն եւ սիքիոս՝ զարհուրեալ 'ի տեսլենէն, մնաց
ժամս բազումս հիացեալ եւ սքանչացեալ ընդ իրսն։ Եւ
առ վաղի՟ն եկն յեկեղեցին, եւ եգիտ անդ ժողովեալ
զեղբարսն, նստա՟ մերձ առ նոսա՝ որպէս զարհուրեալ
եւ զարմացեալ յանձն իւր։ Իսկ իբրեւ տեսին զնա ո
մերձն էին առ նա, զի այնպէս զարհուրեալ երեւէր նո
ցա․ աղաչէին զնա զի պատմեսցէ նոցա զպատճառն։
Եւ նա մեծամեծ հառաչեալ 'ի խորոց սրտէ իւրմէ, շար
ժեաց զգլուխ իւր եւ ասէ։ Ո՞վ որդեակք՝ ո՞րչափ 'ի մէջ
ծածկեալ ծառայս ունի տէր մեր Յիսուս Քրիստոս
զորս ոչ արժէ ա՟ս։ Է՞․ ո՞րքան անզննելի եւ անքննելի են
գործք քո տէ՟ր։ Եւ եղբարցն առաւել եւս աղաչեցեալ
զնա առ 'ի պատմել նոցա։ Պատասխանի ետ եւ սիքիոս
եւ ասէ․ զ Թագաւորաց խորհուրդ հրապարակել ոչ է ա
գուշագոյն, այլ եւ ծանրագոյն ածէ զ պատիժն․ իսկ զա՟
խորհուրդն յայտնել արժան է, զի եւ որ ծածկէ՝ հա՟
սար ունի զ վտանգն։ Ա՟յ ոչ է պարտ թաքուցանել
մանաւանդ զոր նա ինքն կամի յայտնել վա՟ ծառայից իւ
րոց՝ առ 'ի փափաքումն հոգեւոր, որք ճգնին յաղագս
անձանց իւրեանց։ Բայց աղաչեմ զձեզ հանապազ ընկա
լա

լերուք զարացեալք. վկայէ ինձ խիղճմտանց իմոց՝ զի ոչ ստեմ: Եւ այս պատմեաց նոցա զա̄մ տեսիլն կարգաւ և պատուէրեաց նոցա՝ մի ծանուցանել նոցա զայն յովհաննու, ապ զի մի հեռասցի 'ի նոցանէ, և զրկեսցին յա̄ծային գանձուցն՝ որ բազում ժամանակաւ թաքուցեալ էր 'ի նոցանէ: Եւ յորժամ լուան զայս եղբարքն, սքանչացան, և փառաւոր առնէին զա̄ծ:

Իսկ երանելին յովհաննէս զայս յումեքէ ոչ լուաւ, և ոչ յապաղէր յառաջի արկեալ բարւոք գնացիցն հանդէս: Այլ մինչ ձգնէր հսկելով յաղօթս 'ի տուէ և 'ի գիշերի, և ոչ դադարէր 'ի վերծանութենէ աստուածաշունչ գրոց. և 'ի բերան առեալ զհին և զնոր կտակարանս, թարգմանէր զա̄մ լուսաւորագոյնս, և յայտնագոյնս: Իսկ այլ վանորայքն՝ որ շուրջ բնակեալն էին, իբրև տեսանէին զանհոլովելի նորա վարսն, ամենեքեան գային առ նա լսել զլուսաւոր վարդապետութիւնս նր̄. որ ուսուցանէր և նոցա բանս վարդապետութե̄ և կրօնից, և ուրախութե̄ առաքէր զնոսա: Եւ այսպէս զբան վարդապետութե̄ իւրոյ գրով արձանացուցանէր նոցա. յաղագս հաւատոյ և գործոց. և անաչառութե̄ առանց երկիւղի որ յաղագս ա̄յ է համարձակութիւն. և վասն անստացուածութեան, և զնեղն և զանձուկն ընտրել: Այլև զամենեսեան յորդորէր երթալ զհետ պատուիրանացն տն̄՝ սկիզբն առնել զերկիւղ ա̄յ. յիշելով զբանս մարգարէին որ 'ի հարիւրերորդ տասներորդ ութերորդ

սաղ

սաղմոսինն: Իմաստուն արա զիս և քննեցից զնա բոլորով սրտիւ իմով: Եւ եթէ՝ խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի. այլ խորհէի 'ի պատուիրանս քո զոր սիրեցի: Այլ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր, ոչ միայն թէ բանիւ զարդարեաց զնա, այլ և ետ սմա շնորհս բժշկութեան զանազան ախտից և հիւանդութեանց զոր նկարագրս, այնորիկ զակամն 'ի բազմաց պատմեցից:

## Սոտնչէլէ տտղին:

Այր ոմն էր յանտիոք քաղաքէ մեծատուն յոյժ, և պատուական ազգէ: Եւ ունէր ախտ ցաւոյ զոր՝ աբգարն կոչեն. քանզի ցաւ որ էր 'ի կէս գլխոյ նորա և այ չափ սաստկէր ախտն, մինչև արտաքս եկեալ աչ ակնն և կախեցաւ 'ի վերայ ծնօտից նորա: Եւ ծախեալ բազում ինչս և տարեալ առ իմաստուն բժիշկս, օգտեցաւ և ոչինչ: Ապա լուեալ վասն երանելւոյն յովհաննու, յարեաւ վաղվաղակի, և եկն առ նա 'ի վանսն մեծաւ հաւատով, և բուռն հարեալ զձեռանէ սրբոյն համբուրէր, և ասէր օրհնեամ զքեզ հայր, և հայցեմ վասն իմ 'ի տեառնէ՝ զի բժշկեցայց 'ի սաստկին տանջանացս. վասն զի զամենայն ինչ արարի, և ոչ կարացի հնարել ինձ փրկութիւն: Եւ եթէ էր հնար և տայր ոք ինձ զայն որ կարօղ էր զիս բժշկել, ոչ միայն զամենայն ինչս տայի 'ի ձեռս նորա յօժարութեամբ, այլ և զհոգի իմ տայի թէ էր հնար: Պատասխանի ետ յովհաննէս և ասէ

տակ ցնա․ այսպիսի վտանկ գան 'ի վր մարդկան վս չար գործոց, և 'ի քո թերահաւատութե ։ և եթէ հաւատասցես 'ի Քրիստոս յամ անձնէ քումմէ, և եթէ կարօղ է ած բժշկել զքեզ, և 'ի բաց կացցես յառաջին չար սովորութե քումմէ, յայնժամ տեսցես զփառս ածյ ։ Պատասխանի ետ այրն և ասէ․ հաւատամ տէր իմ՝ յամ սրտէ իմմէ, և յամ անձնէ իմմէ 'ի Քս, և արարից զամ զոր և հրամայեցեր ինձ ։ Եւ զայս ասացեալ այրն․ կալեալ զձուլձոյ սեյն զոր զգեցեալն էր, և եդ 'ի վր գլխոյ իւրոյ, և 'ի վր ախտացել ականն, և վաղվաղակի փարատեաց ախտ գլխոյ նր, և հաստատեցաւ կախել ակն 'ի տեղի իւր՝ և եղև ողջ, և յոյժ լցեալ լուսով որպ թէ չէր եր երբէք ախտացեալ ։ Եւ գնացեալ այրն 'ի տուն իւր գոհանալով զած, որ 'ի ձեռն սրբոյն յովհաննու շնորհեաց նմա զառողջութի ։ Պատմեաց ամ քաղաքին անտիոքայ զսքանչելի նշանսն որ եղև առ նա․ և ամքն զարմացեալք՝ փառաւոր առնէին զած ։

## Սքանչելիք երկրորդ ։

Դարձեալ․ այլ իմն այր 'ի նմին քաղաքին, որում անուն էր արքէս, որ թարգմանի ժողովրդապետ ։ քանզի այս էր իշխանութի նր 'ի քաղաքին անտիոքայ ։ Եւ վառեցաւ յերես նր բորոտութի, և բազում ջանիս յանձին եդեալ՝ ոչ կարաց սրբել զնա, և տրտմութի յոյժ էր 'ի նմա՝ ոչ վս ախտին միայն, այլ և վասն ամօթոյն, զի 'ի յայտնի տեղ-

տեղւոջ էր, և ոչ կարէր թաքուցանել, և վասն այնորի
'ի տան դեգերեալ նստէր՝ անմերձենալի մարդկան լեալ
վն զի ամենեքեն գարշելի համարէին զնա, և 'ի բաց դա
նային 'ի նմանէ. և էր ոմն բարեկամ նորա որ տրտմէ
զնա այնպէս տեսանելով: Իսկ 'ի միում աւուր՝ յորժա
էր նա 'ի տան Արքէոսի, ասէ ցԱրքէոս, բազումանգա
լուեալ եմ վասն ուրումն կրօնաւորի՝ բնակեալ 'ի վանս
որ է մերձ 'ի քաղաքս՝ թէ երթան առ նա ախտացեալք
և բազում գոհութբ և առողջութբ դարձեալ լինին:
Արդ յարուցեալ երթիցուք առ նա հանդերձ հա
տովք, և աղաչեսցուք զնա աղօթել վասն քո. և յու
սացեալ եմ յած կենդանի՝ որ սպասաւորի 'ի նմանէ, եթէ
ոչ դարձցուք 'ի նմանէ առանց օգտութե. և զայսպի
սիբրև յայ ազդեալ 'ի սիրտ նր խօսեցաւ այրն. և հա
ճաւաց Արքէոս բանից բարեկամին իւրոյ: Եւ յարուցե
'ի միասին փութանակի հասանէին 'ի վանսն, և մտեալ ա
երանելին յովհաննէս. և գտին զնա զի նստէր առ դրան
խցին իւրոյ, և անկեալ առ ոտս նր աղաչէին զնա, և
հայցէին առնել աղօթս 'ի վր նոցա, և նա յարոյց զնոսա
և հարցանէր զպատճառ գալստեանն: Պատասխանի
ետ Արքէոս և ասէ. Հայր պատուական՝ աղաչեմ զաստ
ւած զի 'ի բաց տարցէ զախտս զայս 'ի ծառայէ քումմէ
գիտեմ զի լսէ քեզ մարդասէրն ած զոր ինչ և խնդրե
ցես 'ի նմանէ: Իսկ երանելին զուարթութբ պատաս
խանի ետ և ասէ. ո՞վ այր դու զինչ իցեմ ես զի աղօթե

լի

իմ և պաղատանքն՝ կարօղ լինիցին բժշկել զքեզ. քանզի
տրուպ եմ՝ ես քան զամ եղբարքս որ աստ բնակեալ են:
Իսկ նա առաւե՛լ ևս աղաչէր զնա հանդերձ բազում ար_
տասուօք բարեկամաւ՛ն իւրով՝ հայել յաղաչանս նորա, և
ոչ դարձուցանել զնա առանց մասին օգնականութե՛ յու_
սոյն իւրեանց: Եւ՛ նա իբրև ետես զհաստատուն հաւատս
նորա, ասէ ցարքեպս եթէ ուխտեսցես առաջի այ, և արաս
ցես զկամս նր, և ընուցուս զձեռս աղքատաց ՝ի յարդար
ընչից քոց, և զընկեալսն առ տեարսն իւր դարձուսցես,
և հաւատասցես այ՝ թէ կարօղէ բժշկել զքեզ ՝ի բռնու_
թէ ախտից քոց, և առնուս հաւատով զոր խնդրեսդ.
(Ըստ տն ձայնի: և զոր խնդրէք հաւատով յանուն որդւոյ
հաստուսցէ ձեզ. (Յօհ. 16. 25:) զի գործք առանց հա
ւատոյ ոչինչ են նոյնպէս և հաւատք առանց գործոց:)
Պատասխանի ետ արքեպս և ասէ. զամ զոր հրամայեցեր ինձ
՝ի քումմէ սրբութենէդ կատարեցից, և եթէ յումեքէ
առեալ եմ տարապարտուց՝ հատուցից չորեքկին, միայն
բժշկեա զիս Հայր սուրբ:

Յայնժամ երանելին յովհաննէս ասէ ցայնոսիկ՝ որ մերձն
կային առ նա. առէք զդա, և լուացէք ՝ի ջուր աւա_
զանին, ուստի ըմպեն եղբարքդ, և ասացէք. յանուն
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ բժշկեսցի սա: Եւ՛
նոքա առեալ զնա տարին այնպէս արր և պատուէրեաց
նոցա մեծ վարդապետն յովհաննէս: (որ է սա Նմանէլ
երկրորդին՝ որ առ տէրունականն: ) Եւ՛ ՝ի նմին ժամու

ար

սրբեցաւ բորոտութիւն յերեսաց նր, և եղև գոյն մար-
մնոյ նր որպ յառաջն էր. և դարձաւ այրն առ յովհաննէս
և գոհանայր զԱյ, և զծառայէ նր, և անկեալ առ ոտս նր
խոստովանէր զ սխալանս իւր։ Եւ նա պատասխանի ա-
րարեալ ասէ ցնա. յայսմհետէ պահեա զ պատուիրանս
Այ, և մի զրպարտեսցես զաղքատսն. քանզի Ած օգնա-
կան է նոցա և հոգացող, և վրէժխնդիր լինի առ այ-
նոսիկ՝ որ դժրբեն և նեղեն զնս։ Եւ բաւական է
քեզ առ 'ի հաւատարմութի առակ մեծատանն և Ղա-
զարու. թէ զի որդ. մինն վս անմարդութե և անողորմ
բարուցն. դժնդակ տանջէր, թէպէտ և չէր յափշտա-
կեալ ինչ 'ի նմանէ՝ վս զի ոչ ունէր. իսկ միւսն 'ի ձեռն
համբերութե իւրում հանգչէր 'ի գոգն աբրահամու.
Քանզի թէ մեծատունն որ փափկանայր և եթ, և պայծ-
առանայր բեհեզաւն, և ցանկութբն լնոյր զորովայն
փշրանաց սեղանոյն ոչ արժանաւորեաց զաղքատն. այ-
զի այնչափ տանջանաց մատնեցաւ։ Զինչ արդեօք կի-
ցէք դուք՝ որ և զինչս աղքատաց յափշտակէք և մեր-
կացուցանէք զնս։ որ տեղի տանջանաց ընկալցի զ ձեզ
և կամ զինչ լալաչաց և կրճել ատամանց։ Արդ՝ դու գո-
հացիր զԱյ, որ խրատեաց զ քեզ սաստ 'ի ձեռն սակա-
ախտից, որպ զի 'ի ձեռն այդորիկ զգաստացեալ ապրեցար
'ի տանջանացն յաւիտենից։ Այսուհետև տուր փառ-
Այ, զի բարեկամարարեր զնա 'ի ձեռն բարի գործոց քո
և կատարեա արդ. զոր խոստացար նմա առնել յաղքատս

Գա

Պատասխանի ետ ալքէոս և ասէ ցնա․ Ճշմարտիւ ասեմ քեզ Հայր սուրբ, զի բանք քո իբրև զսուր երկսայրի այնպէս մտին 'ի սիրտ իմ, հատանելով զամ չարութի խորհրդոց իմոց, և այնպէս համարեցայ զնս՝ թէ նոյն ինքն 'ի Քսէ լուայ․ այսուհետև ոչ յաւելից գործել ըստ առաջին իմոց գնացիցն։ Եւ ոչ ծառայեցից յայսմ հետէ երկրաւոր թագաւորի, բայց միայն երկնաւորին քն այ։ Արդ՝ երթայց 'ի քաղաքն, և ծախեցից զամ զոր ինչ է 'ի տան իմում, և բաշխեցից կարօտելոց, և դարձայց այսրէն, զի եղիցին մնացեալ ժամանակք կենաց իմոց խոնարհեալ 'ի ներքոյ պատուական ոտից քոց։ Արդ՝ աղաչեմ զքեզ զի աղօթեսցէ վն իմ առ ած․ որպէս զի զօրացուսցէ զիս կատարել զամ զոր ուխտեցի նմա առաջի քո։ Պատասխանի ետ յովհաննէս և ասէ ցնա․ երթ որդեակ 'ի խաղաղութի․ և տր առաջնորդեսցէ զճանապարհս քո, և զամ խորհուրդս քո նա կատարեսցէ 'ի բարի։ Եւ գնացեալ ալքէոս 'ի քաղաքն, արար զամ զոր և խոստացաւ, և հրաժարեալ 'ի կենցաղոյս դարձաւ առ սուրբն յովհաննէս, և եղև կրօնաւոր կատարեալ․ և բարւոք ճգնութբ ժուժկալեալ 'ի նոյն վանսն մինչև յօր վախճանի իւրոյ։

Այլ այր ոմն 'ի նմին քաղաքէ, որում անուն էր թէոդորոս, և էր ազգաւ և մեծութբ զարդարեալ։ Եւ իբրև լուաւ զոր ինչ եղև ալքէոսի, և թէ որպէս հրաժարեաց յամ իրաց նրա, և եմուտ 'ի կարգ կրօնաւորութե․ եկն և նա առ երանելին յովհաննէս, և ընկալեալ ըզ

հրեշ

ըզ հրեշտակական վարսն, և եղև կրօնաւոր ընտրեալ։ Եւ
բազումք ՚ի քաղաքէն անտիոքայ ցանկացան միայնակեցութե֊
և հրաժարեցին յամ ընչից իւրեանց. (Զի տն ասելոյ Ղուկ
14։ Եթէ որ ոչ հրաժարէ յամ ստացուածոց, և առնու
ըզ խաչ իւր և գայ զկնի իմ, ես ոչ ընդունիցիմ զնա։ Եւ
թէ բարւոք է առնուլ զ լուծ խոնարհութե։) և եկեալ
բնակեցան առ յովհաննէս ոմանց ՚ի նոցանէ. և այլք ՚ի
վանորայն՝ որ շուրջն կային, և մտանչէին զ բարւոք
մարտն իւրաքանչիւրոք ՚ի նոցանէ ընդդէմ հանապազոր֊
դեան թշնամւոյն. յառաջանալով ՚ի կատարեալ յառա֊
քինութիւն։ Ոմանք ՚ի խուցս անձուկս արգելեալ զինքեան,
և ոչ ներէին ամենևին խօսիլ ընդ ումեք։ Եւ այլք՝ ոչ ըն֊
դելուին զոք, այլ զամենեսեան ընդունէին՝ որ գային ի
նա։ Եւ այլք բարի վարուք և զանազան ճգնութեք կրօ֊
նաւորէին՝ ըստ իւրում կարի իւրաքանչիւրոք։ Եւ ամեն֊
ցուն պատճառ բարեաց և առաջնորդ ճանապարհին որ
առ այ՝ էր երանելին յովհաննէս, զի զամենեսեան
խրատէր, և ուսուցանէր անաշխատ գրոց մխիթարութե֊
Եւ ամենեքեան հայր կոչէին զնա, և զխորհուրդս մտաց
իւրեանց նմա պատմէին, և առնուին ըստ իւրաքանչիւրոց
մտածութեց զ դատաստանս և ուրախանային, և փառ֊
մատուցանէին այ, որ բարեգործէր առ նոսա ՚ի ձեռն
յովհաննու։ Ոչ եթէ միայնակեացք միայն զայս առնէին,
այլ և բազումք յաշխարհաց գային առ նա, և պատմէին
զ վէրս անձանց իւրեանց։ Զոր օրինակ՝ որք հիւան֊

դա

դացեալք լինին մարմնով, յայտնեն նախ զախտս իւրեանց բժշկաց, և ապա ընդունին զառողջութի՛ն ի՛ իւրաքանչիւրոց ցաւոցն և ի դեղոցն օգտակարութե՛ս: այսպէս և նք 'ի ձեռն յայտնութե՛ ամբարշտին յինքեանս զպատշաճաւոր հոգւոյն առողջութիս, և դառնային ուրախութե: Եւ էր յամ փառօրային տէր բազում, և խաղաղութե կային առ միմեանս, և ոչ գոյր 'ի միջի նոցա ագահութ և խռովութիս, և ոչ ամբարհաւաճութիս, և ոչ կերակրոց առաւել խորտկարարութիս, և ոչ ծաղրս և քրքինջս, և ոչ շատախօսութիս սղալականս, և կամ խեղկատակութիս 'ի բաց փախուցանողս զա՜ծային շնորհս. ոչ նախանձ, կամ գրգռութի, և ոչ այլ ինչ 'ի դժեղխութեանց կենցաղոյս: Քանզի՝ այս ա՜մ ախտք անկեալ եղեն սոցին, 'ի ձեռն հոգաբարձութե՛ յովհաննու: Աստ յեց այսուհետև և զայլ սքանչելիս, զոր եցոյց տր 'ի ձեռս նր:

## Սքանչելի երրորդ:

Այր մի էր, որոյ անունն էր Եւսկեղէոս, զոր եխից սատանայ, զաչյոյ ակնն նր, և եկեալ նր առ երանելին յովհաննէս, և փոքրեալ զհեր գլխոյ իւրոյ, ո՜չ զի առցէ զձև միայնակեցուն: Զոր տեսեալ յովհաննու՝ աղօթեաց 'ի վր նր և ասէ. ա՜ծ ամենեցուն եղբայր լուսաւորեսցէ զաչս հոգւոյ քո և մարմնոյ՝ առ 'ի պաղաբերութի ածային պատուիրանայն: Եւ զայս ասացեալ, վաղվա-

ղա

ղակի բացաւ ակնն նր, և եղև իբրև զմիւսն : Իսկ եղբայրն
տեսեալ զզարմանալի սքանչելիսն, ասէին՝ Ճշմարտութ
ծառայ այ է սա, և հոգին սբ յայտնապէս բնակեալ է
'ի սա որպ յառաջբեալն, և նա կատարէ առաւել զբժշկու-
թիւն : Եւ ամ եղբարքն առաւել փափաքանօք և ամայի
սիրովն, և հանդերձ երկիւղիւ բնակեալ էին առ նմա
վն զի տեսանէին՝ զի այսպիսի նշանս և արուեստս գործէր
աստուած 'ի ձեռն նր :

## Սքանչելիք չորրորդ :

Պարձեալ կին մի էր որում անուն էր քրիստինեա, և
ունէր ախտս աններելիս տեղատեսութն, և մինչև
այսու ախտիւ 7. ամ. և բազում ինչս ծախէր բժշկաց, և
ոչ կարաց օգտել ինչ : Եր սա լուեալ վն երանելոյն
Յովհաննու, և աղաչէր զայր իւր՝ զի տարցէ զնա առ
նա. և մեծաւ հաւատով ասէր : Գիտեմ՝ զի թէպէտ
անարժան եմ տեսութեն սբյն, սակայն ոչ գարշի յանարգա-
նէս, և կամ 'ի բաց մերժէ զմեղաւորս. այլ նմանօղ լինի
իւրում տն, որ ոչ 'ի բաց ընկէց զախտակիցն իմ զկին
զայն տեղատես, այլ և բժշկեաց զնա 'ի ձեռն շօշափելոյ
ըղ քղանցս նր : Իսկ այրն նր եդեալ զնա 'ի վր գրաստու
իւրոյ՝ տարաւ 'ի վանսն, ուր էրն յովհաննէս : Եւ թողեալ
զնա արտաքոյ դրանն, և ինքն մտեալ առ սբն, արկանէ
զինքն առաջի ոտից նր, և աղաչէր զնա բազում արտա-

սուօք

սուօք, և ասէր. Հայր սբ՟ օգնեա մեզ աղօթիւք քոյովք.
և պատմեաց նմա զպատճառս գալոյն, և զախտ կնոջ իւրոյ։
Պատասխանի ետ երանելին Յովհաննէս հանդերձ բազում
հեզութբ՟ և ասէ. զարմացեալ եմ ե՟ այնոսիկ, որք կար-
ծեն թէ զօրութբ՟ կամ իշխանութբ՟ մերով լինիցին այն-
պիսի ուղղութիւք մարդկան։ Զինչ արդեօք իցէ զօրութի՟
մեղաւորիս առ ՚ի բժշկութի՟ ախտից. այլ զի գիտել պար
տէ, եթէ խրատէ զձեզ տր՟ առ ՚ի յօգուտ ձեր. զոմանց
հատանէ զմեղս բազմաց զոր գործենն, և զայլս ընտիրս
գործէ՝ որք գոհութբ՟ ընդունին զխրատ նր՟. վասն զի
ինքն է որ հարկանէ և անդրէն բժշկէ։ Եւ դու երթ ասա՛
ամուսնոյ քում, զի լռեսցէ ՚ի լրբութե՟ բարուցն, և յան
դուքն մտաց իւրոց՝ զոր ստացեալ է առ ծառայս իւր։
գիտելով զի և նա նոյն ինքն ՚ի նոցին բնութե՟ արարեալ է,
և ՚ի նմին զանգուածոյ հրաշագործեցայք յարարչէն։ Զի
թէպէտ և յայսմ աշխարհի՝ ոմն տէր է, և ոմն ծառայ.
ոմն տիկին, և ոմն աղախին լինի։ բայց սակայն մահուամբ
լուծանի այս ամ՟ զանազանութիս, և ա՟ բնութե՟ հաւա-
սարին ամենեքեան։ Դարձեալ ասասջիր նմա, զի խնամա-
կալու լիցի անձին իւրոյ ՚ի ձեռն աղքատաց, և զգուշա-
նալ յաւուրս սահմանեալ պահոցն։ Այլև զաւուրս սբ՟
և զպաշտելի քառասնորդական պարապիլ ՚ի սբ՟ եկեղեցիս,
և ոչ պղծել զանձն իւր ՚ի նմա առաւելութբ՟ կերակրոց,
և անպարկեշտ գործոց։ Արդ՝ եթէ լուիցէ զայս ամենայն
և պահեսցէ՝ ընձեռեսցի նմա բժշկութիւն յաստուծոյ։

Եւ

Եւ ելեալն և պատմեաց զայս ամ կնոջ իւրում, որք և լուեալ ՚ի սբյն ։ Եւ նա ասէ մեծաձայն. այո Հայր սբ պահեցից զածավալյելուչ և զպատուական ըզ պատուէրանսդ քո՝ տէր զամ, մինչև ՚ի սպառումն շնչոյ իմոյ ։ Եւ դարձաւ այրն նր առ երանելին՝ և ասէ. ահա խոստացաւ առնել զամ զոր հրամայեցաւ նմա ՚ի սրբութեդ քումմէ. այսուհետև մի՝ դարձցուք ընդունայն աշխատեալք և անկեալք ՚ի յուսոյ մերմէ ։ Պատասխանի ետ երանելին յովհաննէս՝ և ասէ. երթայք խաղաղութբ, և տէր Յիսուս Քրիստոս բժշկեսցէ զնա ՚ի տանջանացն յայնմանէ ։ Եւ ՚ի նմին ժամու դադարեաց հոսումն արեան նր ։ և իմացեալ զառողջութի իւր՝ պատմեաց այնոցիկ, որ շուրջ կային զնովաւ, և գոհանալով փառաւոր առնէին զած ։ Եւ նոցա դարձեալ խնդութբ մեծաւ ՚ի յարկսն իւրեանց, և քարոզէին զսքանչելիսն այ, որ եղև առ նա ՚ի ձեռն ծառային իւրոյ յովհաննու ։ Բարեխօսութբ և աղօթիւք սբյ յովհաննու՝ Քս ած թողցէ զ յանցանս ամ մեղաւորաց ։

## Սքանչելիք հինգերորդ ։

Արդ՝ լուարուք և այլ սքանչելիս զոր արար ած աղօթիւք սբյ յովհաննու՝ հաւատացելոցն ։ Ուխտ ահաւոր և արհնախանձ բնակէր ՚ի մայրուոջ ուրեմն մեր- ՚ի շրջաբնիկ անդաստանսն, և յափշտակէր յոլովակի զմար- և զանասուն, որք անցանէին ընդ այն ճանապարհ ։ Ա

և զինուո՛րք թէև բազում սպառազինօք, և լարեալ
աղեղամբք, և սուսերամերկք գնային 'ի վ՛ր նորա: Եւ
երանէր զազանն այն 'ի վ՛ր նոցա վայրենաբար և ահագին
որձակմամբ, զոմանս 'ի նոցանէ սպանանէր և զոմանս
խոցոտեալ ջախջախէր, և զոմանս յափշտակեալ՝ առեալ
տանէր 'ի մայրուոջ իւրում, և անդ գէշարկեալ ուտէր:
Եւ այնպէս անկաւ ահ նո՛ր 'ի վ՛ր ամենեցուն, որ՛պ զի չէր
հնար ումեք անցանել ընդ այն վայրս. և բազում երկրա
գործք թողեալ զարտորեայս իւրեանց, 'ի բաց փախչէին,
և եկեալ այլ Գազանք անտառի ուտէին զսերմանիս նո_
ցա: և այլք թողեալ զհայրենիս իւրեանց, երթային յայլ
հեռագոյն գեօղս, և անդ բնակէին: Եւ Ճանապարհորդք
որք լսէին զսաստ զազանին, բազում ապարիզօք խոտո_
րեալ յուղւոյ Ճանապարհէ անտի ընդ անդնդաց տեղիս
առնէին զՃանապարհս իւրեանց: Եւ այսպէս՝ 'ի մեծ նե_
ղութի էին բնակիչք տեղւոյն այնորիկ, և տրտմեալք և
տարակուսեալք՝ ոչ գիտէին թէ զինչ արասցեն: Եւ
ժողովեալք ամենեքեան 'ի միասին, խնդրէին յա՛յ տալ
նոցա իմաստուն այր առ կորուստ նմա:

Պատասխանի ետ միոմն 'ի նոցանէ և ասէ. եկայք երթիցուք
առ սուրբ հայրն մեր յովհաննէս, և աղաչեսցուք հաւա
տովք, զի աղօթս և պաղատանս արասցէ առ ա՛ծ վ՛ն գա
զանիս այս կորստեան, և ապրեցուսցէ զժողովուրդս իւր
'ի նորմանէ: Եւ ամենեքեան միաձայն իբրև 'ի միոջէ բե_
րանոյ պատասխանի ետուն և ասեն Ճշմարիտ՝ արդ կա_

մե

մեծաւ ած զկործանումն ախտիցն այնորիկ։ Եւ յարու-
ցեալք առ հասարակ՝ եւ հաւատովք գնացին փաղփա-
ղակի 'ի վանն ուրէր յովհաննէս, եւ անկեալք արտա-
սուօք առաջի նր աղաղակէին եւ ասէին, ողորմեա՛յ մեզ
հայր սբ, եւ զերծ՛ զմեզ 'ի բռնութե սրտմութեան մե-
րոյ։ Եւ նա յարուցեալ առ նս, ուսուցանէր զնս, եւ
հարցանէր զպատճառս իրին․ եւ նոքա պատմեցին վս չար
եւ անկարգ գազանին։ Յայնժամ պատասխանի ետ հո-
գիազգեացն յովհաննէս եւ ասէ ցնս․ այդ պատահարք ձեզ
հանդիպեցան վս թերահաւատութե ձերոյ․ զի թէ ու-
նէիք հաւատս ճշմարիտս, ոչ էր կարողութիւն գազա-
նին վնասել ձեզ։ Քանզի նոյն ինքն տրն ետ իշխանա-
թի այնոցիկ՝ որք հաւատասցեն 'ի նա, գնալ 'ի վր իժից
եւ քարբից, եւ կոխել զառիւծս եւ զվիշապս, եւ 'ի նոցանէ
ոչ ինչ վնասիլ։ Եւ ոչ միայն զայս, այլ թէ հրամայեն
լերինս այս զի բարձցի եւ անկցի 'ի ծով, եւ փաղփաղա-
կի լուիցէ նոցայ։ Եւ յորժամ խօսէր զայս, ահ եւ
դողումն կալաւ զնս։ Եւ առեալ զպատուական նշանն
Քի՝ ետ ցնս եւ ասէ․ տարէք զխաչդ զայդ, եւ հաստա-
տեցէք 'ի տեղին յայն, ուստի ելանէ առիւծն այն որ առ-
նէ զանկարգութի, եւ միոք 'ի ձէնջ վրիպեսցի 'ի հա-
ւատոց։ Եւ ես յուսացայց 'ի տրն իմ եւ 'ի փրկիչն Յս
Քրիստոս, զի նա երեւեցուսցէ ձեզ զսքանչելիս իւր
'ի նմա, եւ դուք յաւէտ կանխեսջէք յաղօթս 'ի սբ եկե-
ղեցւոջն ամ հանդերձ կանամբք, եւ ուստերօք եւ դստե-

տե

տերօք, և խոստովան լերուք նմա զմեղս ձեր, և խնդրե-
ցէք զքաւութի առաջին ծուլութե ձերոյ․ և յայսմ հետէ
այլ մի՛ ևս մեղանչէք, զի մի՛ չար ինչ ևս լինիցի ձեզ ։
Եւ նոքա առեալ զանպարտելի զէնն զնշան սբ խաչին
մեծաւ ուրախութեամբ և հաւատովք հանդերձ, եր-
թեալք արարին ըստ հրամայեաց նոցա երջանիկն յովհան
նէս, կանգնեցին զնա 'ի տեղւոջն այն, և գնացին 'ի
յարկս իւրեանց ։

Եւ իբրև է երեկս աղօթս արարին՝ որ էին արքն այնոքիկ,
և առ վաղւին եկին 'ի տեղւոջն ուր բնակեալ էր առիւծն,
և գտին զնա անկեալ և սատակեալ 'ի յաղթօղ զօրութե
խաչին Քրիստոսի ։ Աղաղակեցին ամենեքեան և ասեն․
ահա Քրիստոս եհար զառիւծս զայս խաչիւն իւրով
սրբով՝ 'ի ձեռն պաշտանեայ ծառային իւրոյ յովհաննու ։
Եւ ժողովեցան բազմութիք արանց և կանանց 'ի շուր-
ջակողմ գեօղից տեղւոյն այնորիկ տեսանել զգէշն
առիւծուն՝ զոր 'ի վայր արկեալ սատակեաց կենսաբեր
խաչն Քի ։ Եւ բազումք յանհաւատից յորժամ տեսին
զքանչելիսն, հաւատացեալք 'ի Քրիստոս՝ մկրտեցան, և
քարոզէին զփառս Նր զոր արար Խաչիւն իւրով․ և գո-
հանային զնմանէ, որ ետ նոցա փրկութի և ազատութի
'ի յունայնութե կռապաշտութե, զօրութբ և սքանչե-
լեօք՝ զոր արար ած 'ի ձեռն ընտրեալ ծառային իւրոյ
յովհաննու ։ Եւ քանզի սիրէր երանելին զհանդարտութի
և զանզբաղ կեանս, որպէս զի համբերել կարասցէ յեր-
կա

կարութեան յաղօթս, և յընթերցմունս աստուածային գրոց: Քանզի նեղէին զնա յաճախապէս գալովն առ նա բազմութիւն կրօնաւորաց, և իշխանաց յամենայն ուստեք: և դժուարին թուէր նմա և ունայն դարձուցանել զոք յեկելոցն առ նա և կամ ոչ թողուլ առ ինքն ՚ի ներքս, և կամ թագուցանել զինքն ՚ի նոցանէ. զի ստուգապէս գիտէր զօգուտ բազմութեան զոր լինէր ՚ի վարդապետութենէ նորա: Եւ դարձեալ զգուշանայր, զի մի՛ ամբարհաւաճութեան կարծիս առցէ յայլոց, և փոխանակ օգտութեան վնաս լիցի նմա:

Զայս ամենայն զմտաւ ածելով. գնաց յայլ տեղի լռել առանձինն, և եկն բնակեցաւ յանապատ տեղւոջ յայրի ուրեմն որ էր աներևոյթ ՚ի բազմաց: Քանզի հեշտալի էր նմա արդեամբք գործել զգործս պատուիրանացն. վասն զի էր կացեալ ՚ի վանս անդ ՚ի մէջ բազմութեան եղբարցն ամս չորս: Իսկ ՚ի յայրի անդ դեգերեալ յաղօթս, և ՚ի վերածանութիւնս ամենայն կտակարանաց ամս երիս: Եւ զայս ամս առանձինն լինելով, ոչ երբէք բազմեցաւ, ոչ ՚ի տուէ և ոչ ՚ի գիշերի այլ յոտն կալով վճարէր զ պէտս քնութեան. բայց եթէ փոքր ինչ ննջէր ՚ի վերայ գաւազանին և մեռուցանէր զանդամս զերկրաւորս, ՚ի բաց վարելով որ շուրջ զերիկամամբքն են զօրութիւն ցանկութեան, և զօրանայր Հոգւոյն տկարութեամբ Մարմնոյն, ըստ առաքելական բանին:

Դար

## Դարձումն առ Անտիոք։

Արդ՝ այսոցիկ այսպէս եղելոց, եկն անդրէն ՚ի քաղաքն Անտիոք․ և այս եղև ՚ի նախախնամութենէն Քի առ ՚ի պէտս սբ եկեղեցւոյն․ վն զի ոչ սակաւ օգուտս խափանեցաւ որչափ ժամանակս էր թագուցեալ զինքն ՚ի յայրի անդ։ Եւ յետ ոչ բազում աւուրց դառնալոյն անդրէն, ընկալաւ զձեռնադրութի սարկաւագութե ՚ի սբյ Հայրապետէն Մելիտոսէ․ և պաշտաւորէր սբյ սեղանոյն ամս երիս․ Նաև պայծառացուցանելով զեկեղեցին գործովք, և բանիւք քաղցրացուցանելով զամենեսեան ՚ի սէրն այ՝ շնորհատուր վարդապետութեն իւրով։ Եւ վն քահանայութե կարգեաց ճառս երիս․ գրեաց առ ՚ի մխիթարութին նմ՝ և վն անհասիցն անմահնողին․ և զոր վն հաւաքմանն զվեց ճառսն կարգեաց։

Յայնմ ժամանակի վախճանէր սբն մելիտոս ՚ի կոստանդնուպօլիս․ քանզի անդ էր երթեալ վն հաւատոյ հաստատութեան առ մեծն Գրիգորիոս․ որ և ունէր յայնժամ զաթոռ հայրապետութե փղաբիանոս, որ էր այր առաքինի և սբ․ և կոչէ զերանելին յովհաննէս ՚ի քահանայական պատիւ, ըստ յայտնութե այ։ Քանզի յորժամ էր եպիսկոպոսն յեկեղեցւոջն, և կատարէր զկարգ գիշերային պաշտմանն, երևեցաւ նմա հրեշտակ Տն և ասէ ցնա․ արի փղաբիանէ ը առաւօտն, և գնա՛ ՚ի վանսն, ուր է ընտրեալն այ յովհաննէս, և ած զնա յեկեղեցիս այ, և ձեռ-

նա

նադրեա՛ քահանայ։ Ա՟յ զի հանդերձեալ է Տր՟ ՚ի ձեռն նր՟
լուսաւորել ժողովուրդս բազումս, և ածել ՚ի գիտութի
ճշմարտութե՟։ Քանզի նոր առաքեալ և անօթ ընտրու
թեանն է նա, և կոչեցեալ է ՚ի հոգւոյն սբ՟յ։ Ահա առա-
քեցայ առ նա յա՟յ՝ ո՟գ և առ քեզ, պատուիրելով նմա,
զի մի՛ ընդդիմասցի ասացելոցդ ՚ի քէն։

Եւ մինչդեռ երանելին Յովհաննէս կայր ՚ի խցին լու-
սում, և կատարէր զամենական աղօթս իւր՝ որ առ ա՟ծ։
Եւ յանկարծակի երևեցաւ նմա հրեշտակ Տն՟ ՚ի հան-
դերձս սպիտակս յայդ յանդիման. և նորա զարհուրեալ ՚ի
ճառագայթից լուսոյն՝ դողալով անկաւ ՚ի վր՟ երեսաց
իւրոց. և հրեշտակն անդէն փոխեցաւ ՚ի կերպարանս մար-
դոյ, և կալեալ ձեռանէ նր՟, յարոյց զնա վաղվաղակի։
Եւ յովհաննէս եկեալ ՚ի միտս ասէ ցնա ո՞վ իցես դու
տր՟ իմ, զի տեսիլ քո այդչափ խռովեցոյց զիս, և հիա-
ցումն անկաւ ՚ի վր՟ իմ։ Պատասխանի ետ և ասէ հրեշ-
տակ Տն՟. ես առաքեցայ առ քեզ ասել զբանն նր՟՝ զոր
ասաց ցհրէայսն. եթէ ո՛չ պէտս ունէին ողջք բժշկաց,
այլ որ չարաչար ախտիւք են հիւանդացեալք. (մարկ. 2.
17։ ) Եւ քանզի տուաւ քեզ ՚ի նմանէ իմաստութիւն,
որով զարդարեցեր զկարգս կրօնաւորացդ, և ետուր
նոցա կանոնս և սահմանս առաքինութեան. յայսմ հետէ
ոչէ պարտ բնակիլ քեզ աստ, այլ գնալ յանտիոք. և անդ
զարդարել զեկեղեցին ա՟յ վարդապետութբ՟ քո, և ըզ
բազումս դարձուցանես ՚ի կռոցն մոլորութենէ ՚ի ճշմա-

րիտ

րխտ հաւատոյն որ 'ի քրիստոս։ Եւ ոչ այս միայն, այլ ըզ
բազում ժողովուրդս ուսուցանես ապաշխարութե՟ ապրել
'ի յառաջագոյն մեղացն զոր գործեցին, և զղջմամբ հա_
սանիլ արքայութե՟ երկնից։ Եւ զի հանդերձեալ են պա_
տուհական բանք բերանոյ քո ընթանալ 'ի ծագաց մինչև
'ի ծագս Աշխարհի, և բազումք հաւանեսցին և լցու_
ցանիցեն զամենայն։

Իսկ երանելին յովհաննէս, անկեալ առ ոտս նո՟ ասէ։
խնդրեմ 'ի քէն տր՟ իմ. մի՛ օտարացուցանել զիս 'ի հրեշ_
տակական այսմ վարուցս, և 'ի միաւորութե՟ եղբարցս
իմոց այսոցիկ. և ոչ եմ բաւական կատարել զսպասաւո_
րութիւնդ զայդ, վասն զի տկար եմ։ Պատասխանի ետ
հրեշտակն և ասէ ցնա. ո՞չ ընթերցար 'ի գիրս սուրբս,
թէ զի՞նչ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի, յորժամ առա_
քէր զնա առ Փարաւոն Թագաւոր Եգիպտացւոց՝
հանել զիսրայէլ 'ի չար ծառայութե՟ անտի. տաց զքեզ
ասէ՝ ա՟ծ փարաւոնի, և զօրացուցից զքեզ յա՟մ գործս։
Այսպէս՝ և զքեզ նա ինքն զօրացուսցէ, և տացէ քեզ
շնորհս 'ի գործս սպասաւորութե՟ իւրում զոր հաւա_
տացաւ քեզ։ Եւ դու վաղվաղակի ընտրեա՛ երկուս ոմանս
'ի կրօնաւորաց աստի՝ զորս ցուցցէ քեզ տր՟, և հաս_
տատեա՛ զնս՟ առաջնորդս 'ի վր՟ եղբայրութեա՟դ. զի և
նք՟ հանդերձեալ են նմանիլ քոյին վարուցդ, և հոգալ վս՟
անձանց և վս՟ այլոց փրկութե՟։ Եւ դու մի՛ յապաղեր,
այլ առանց երկուանալոյ երթ զհետ փղիբիանոսի եպիս_

կո

կոպոսի 'ի քաղաքն անտիոք, և յանձն առ զամ ինչ զոր և հրամայեսցէ քեզ։ Զի Ած յայտնեաց նմա վս քո զի ահաւասիկ գայցէ աստ հանդերձ կղերիկոսօք Եկեղեցւոյն 'ի տանել զքեզ մեծաւ պատուով։ Իբրև զայս ամ խօսեցաւ ը նմա հրեշտակն Տն, և ետ նմա ողջոյն խաղաղութե, և զօրութի քաջալերութե, և գնաց 'ի նմանէ։

Յաղագս ժողովոյ եղբարցն։ Եւ ընտրութե առաջնորդութեան նոցա 'ի հոգւոյն սրբոյ։

Եւ 'ի վաղիւն անդր ժողովեալ զամ եղբարս երանելւոյն յովհաննէս։ Եւ ընտրեաց 'ի նոցանէ երկու որպէս և հրամանէ առ 'ի Տնէ՝ զզարդարեալսն բազում առաքինութբ. և կացոյց զնս առաջնորդս նոցա, և պատուիրեաց ամ բազմութե եղբարցն հնազանդիլ նոցա երկիւղիւն Այ, և ոչ զանցանել 'ի հրամանաց նոցա. զի որ անարգեսցէ զնս անարգեսցի յԱյ։ Քանզի ես առէ հրաման առի 'ի Տնէ գնալ աստի յայն տեղի, ուր կամքն նր հրամայեսցեն։ Եւ մինչդեռ նա զայս պատուիրէր եղբարցն անդրէն. հասին երկուք ոմանք 'ի ժառանգաւորաց եկեղեցւոյն, և տային աւետիս վս գալստեան եպիսկոպոսին 'ի վանս անդր։ Իսկ մեծն յովհաննէս հանդերձ բազմութբ եղբարց ելեալ ը առաջ նր արտաքոյ վանացն՝ և հանդիպել նմա 'ի պատահման տեղւոջ, երկրպագեալ

դար

դարձան անդրէն 'ի վանսն, և աղօթեալ 'ի սբ եկեղե-
ցին՝ նստան ։ Եւ հայեցեալ եպիսկոպոսին՝ և տեսեալ
զյովհաննէս՝ ասէ ցնա ։ 'ի բազում ժամանակաց ցան-
կացեալ եմ տեսանել զՔոյին Պատուական երեսդ-
Ո՛վ հայր Յովհաննէս, այլ հոգս Եկեղեցւոյն խափա-
նեաց զմեզ մինչև ցայժմ ։ Բայց արդ հրամայեաց յայ
գալ ինձ այսր, և զանց առնել զպատուիրանաւ նր ոչ
համարձակեցայ . վնյ և դու ուրախ լեր հաւատարիմ քա-
հանայ եկեղեցւոյ Քի ։ Ողջոյն քեզ իմաստուն բժիշկ
հիւանդացելոց անձանց՝ համանման սբ առաքելոյն ։
Ողջոյն քեզ՝ որ պարտեցեր զչար Թշնամին ամենեցուն
զբանսարկուն՝ հաւատով սբ Եռորդութեան . որպէս և
երանելին դաւիթ երբեմն զայլազգին Գողիաթ 'ի ձեռն
երից պարսաքարեցն յաղթուր պատերազմին ։ Ուրախ լեր՝
որ սատակեցեր զգիշախանձակ արիւնարբուղխ առիւծն
զօրութբ սբ խաչին Քի, և միաւորութբ օգնութե
հոգւոյն սբյ ։ Երանի է քեզ քաղաքդ Անտիոք, եթէ
զորպիսի ծառ տնկեցեր՝ որ ընձեռէ քեզ պտուղս գեղե-
ցիկս արդարութե ։ Դարձեալ՝ երանի է քեզ . եթէ զոր-
պիսի Գանձանակ Հոգևորական ստացար քեզ, որ լի է
բազմադիմի մարգարտաւն այն՝ զոր տին ասաց . և այլ ևս
ականբք պատուականօք առաքինութբ փայլեալ ։ Երանի
ամենեցուն, որք հաղորդին 'ի Հոգևորական սեղանոյ
վարդապետութե ածային կերակրոցդ, և արբեցին յուրա
խառար խառնարանէդ հոսեցելոյ 'ի հոգւոյն սբյ, Ջայս
ասէ

տեսելով սէր եպիսկոպոսին, զարհուրեալ զարմացեալ կային ամենեքեան որք լուանն։ Եւ դարձեալ ասէ ցյովհաննէս արձակեա զմեզ աստի, զի երթեալ կատարեսցուք վաղվաղակի զհրամանսն Տն։ Հրամայեա մեզ զքան գրոյն՝ որ ասէ. պարտ է մեզ լնուլ զամ արդարութիւն։ ( Մատ. 3. 15։ ) և յարուցեալ գնասցուք աստի։

Պատասխանի ետ յովհաննէս և ասէ ցեպիսկոպոսն. աղաչեմ զքոյին սրբութիդ ո՛վ հայր պատուական զի ներեսցես և զայս ևս օր ՚ի վանս աստ, և առ վաղիւն մատուսցես զանարիւն պատարագն, և բաշխեսցես զանարատ և զանապական մարմինն և զարիւն փրկչին մերոյ Յի Քի. և ապա զամ զոր հրամայեսցի ինձ ՚ի քէն առանց ընդդիմանալոյ կատարեցից։ Եւ կացեալ եպիսկոպոսին զայն ևս օր, կատարեալ զամենայն խորհուրդն, բաշխեաց զմարմին և զարիւն Տն յաւժանաւորսն։ Եւ աղաչեաց երանելին յովհաննէս զեպիսկոպոսն վս երկուց առաջնորդացն, զոր կացոյց ՚ի վր եղբարցն, զի և նա յանձն արասցէ նոցա զհոգս եղբարցն։ Իսկ եպիսկոպոսն կոչեցեալ զամ եղբարսն, պատմեաց ամենեցուն զոր վայելէր առ փրկութիւս, և աղօթս արարեալ ՚ի վր երկուց ընտրելոցն, ձեռնադրեաց զնս հայր վանացն, և առաջնորդս եղբայրութե։

Եւ իբրև ստուգեալ գիտացին Եղբարքն ըզ մեկնիլն յովհաննու ՚ի նոցանէ։ վա՜յ մեզ ասէին՝ որ զրկեցաք այսօր յերանաշնորհ Աշմարիտ Վարդապետէս։ Ո՛ւր գտանիցեմք զայն ոք, որ ըստ Աստուծոյ սփոփէ և բժշկէ

ըզ

ընդ մեզ, զոր 'ի չար դիպուածոց եղեալք վիրաւորեալք ։ Ո՞վ ոք արդեօք ուսուսցէ մեզ զ Ճանապարհն երանութեան․ կամ ով առաջնորդեսցէ, առ 'ի յօգտակար հոգւոց մերոց ։ Արդարև 'ի մեծ բարութենէ զրկեալք եղաք, օտարացաք 'ի հովուէն մերմէ, որք մնացաք 'ի գթոց հօրէն մերմէ ։ Եւ դարձեալ առ Յովհաննէս՝ ասէին․ եկեսցուք և մեք ընդ կնի քո․ ոչ ևս տակաւին յայժմհետէ համարեսցուք որբ 'ի տան Հօր մերում ։ Սկսաւ և ինքն երանելին յովհաննէս՝ լալ և ասել․ Ողոր-մածիք ասեմ ձեզ ով Հարք իմ և եղբայրք, և ոչ ևս խորհեալ էի հեռանալ 'ի ձերմէ սրբ և յարժանաւոր միաբանութենէդ ։ Եւ բազում անգամ աղաչեցի զտր, և ոչ կարացի շահել զ ցանկութիս իմ, և եթէ զինչ գործեցից՝ ոչ գիտեմ․ այլ քանզի ծառայ եմ Տն իմոյ Յի Քի․ ոչ կարեմ համարձակել և ընդդիմանալ հրամանի նր ։ Բայց արդ ահա ունիք զառաջնորդս ձեր՝ երկիւղածութբ և առաքինութբ զարդարեալս, հնազանդ լերուք նոցա իբրև հարց ։ Եւ տր մեր Յս Քս առաքեսցէ զ հոգին սբ 'ի նոսա առ 'ի հովուել զ ձեզ ըստ կամաց սրբութե իւրոյ, և Օրհնեսցէ զձեզ, և Առաջնորդեսցէ ձեզ 'ի յերկիւղ իւր սբ, և փրկեսցէ յամ փորձութեց սատանայի ։ Զայս ամ և որ սոցին նման են բանս մխիթարութեան խօսեցաւ առ նոսա․ և աղաչեաց զեպիսկոպոսն՝ զի արասցէ աղօթս 'ի վր նոցա և ապա ելանիցեն 'ի վանացն անտի ։ Եւ աղօթեալ նր 'ի վր եղբարցն, և ասացեալ

ամե

ամենեցուն զայնն. առեալ եպիսկոպոսն զմեծն Յովհան-
նէս, և Ճանապարհ արարեալ 'ի մեծն անտիոք : Իսկ եղ-
բարքն թողեալ զվանսըն անապատի բնակչաց, ելին
ամենեքեան զհետ նոցա. և յովհաննու տեսեալ զայս այ-
պէս եղեալ, աղաչեաց զեպիսկոպոսն զի դարձուսցէ
զնոսա անդրէն, և նոքա հակառակէին զհետ երթեալ
վարդապետին իւրեանց : Եւ տեսեալ եպիսկոպոսին զընդ-
դիմանալ նոցա, մեծաւ պատուհասիւ էր բանիւ առնէր
զհակառակօղսն . և այսպէս հազիւ հաւանէին դառ-
նալ : Եւ իբրև եկին 'ի վանսն, բախէին զկուրծս իւ-
րեանց, և մեծաւ կոծով ողբային զանջատիլն իւրեանց
'ի սրբոյն : Եւ մինչ դեռ երթային ընդ Ճանապարհայն
եպիսկոպոսն և Յովհաննէս, խօսէին վն յայտնութեցն
իւրաքանչիւրոյ որ եղև յայ. որպէս և սբ Մարգարէքն
հեղիաս, և եղիսէոս :

## Մտանելն սրբոյն յանապատ, և Ձեռնադրելն 'ի Քահանայ :

Եւ յորժամ մերձ եղեն 'ի քաղաքն, և քարոզեցաւ
գալուստ նոցա, ելին ամենեքեան ընդ առաջ նոցա·
քանզի մեծաւ բաղձանօք ցանկային տեսանել զնա : Այր
և կանայք մեծատունք՝ որք պատկառէին յամբոխէ ան-
տի ելանել, արտաքս, ընդ պատուհանն խոնարհեալ եր-
կիր պագանէին նմա, և խնդրէին օրհնութի 'ի նմանէ :
և այսպէս խնդութբ մեծաւ լցաւ քաղաքն անտիոք յա-
ճուր

հուր յայնմիկ ։ Եւ եկեալ 'ի սբ եկեղեցին մեծաւ պա_
տուով, և հանեալ զ գիշերն ամ աղօթիւք և խնդրուա
ծովք անցուցանէին ։ Իսկ 'ի վաղիւն ժողովեալ ժառան
գաւորք եկեղեցւոյն ․ այլ և ամ բազմութիւն, իշխանք՝
և որ ընդ իշխանութբ, և ռամիկք, և զինուորք, նաև
Հելլենացիք՝ մեծաւ փափաքանօք գային 'ի տեսութիւն
նր ․ և լցաւ եկեղեցին բազմութբն, մինչև անձուկ լի_
նել տեղւոյն նստելոյ, և յոտն կալոյ ։

Եւ յորժամ եղև երրորդ ժամ, յառաջ կոչեցաւ ըն_
տրեալն յայս յովհաննէս, և ձեռնադրեցաւ յաստիճան
քահանայութե ։ Որ և սքանչելի իմն տեսիլ երևեցաւ
յաւուր այնմիկ ․ զի 'ի նմին ժամու՝ յորժամ խոնարհեցու_
ցեալ զ գլուխն 'ի ներքոյ ձեռինն եպիսկոպոսին ․ յան_
կարծակի աղաւնի մի սպիտակափայլ իջեալ 'ի վերուստ՝
եկաց 'ի վր գլխոյ երանելւոյն ։ ( Սա նմանեալ տն մե_
րոյ 'ի յորդանան գետ, և կարապետի ձեռնադրողին
ասէր, և տեսեալ զ հոգին աղաւնակերպ իջմամբ, և
ձայնն հայրական ասէ, դա է իմ որդի ․ ) Մատ ․ 24 ․ 20 ։
Զոր տեսեալ եպիսկոպոսին, և ամենեցուն՝ որ մերձ
կային, հիացեալ սքանչացան, և հարուստ մի ժամ՝ զար_
մացան, և փառաւորեցին զաստուած ։ Եւ ել բանս այս
ըն ամ գաւառն անտիոքայ, այլ և ըն ամ ասորիս ․ և պա_
հէին զայս ամ 'ի միտս իւրեանց, և ասէին՝ զինչ ար_
դեօք լինիցի այս ․ զի նշանակ յառաջն իսկ հաւա_
կեն մինչև ցայժմ յայտնապէս երևեցաւ շնորհք հոգւոյն
'ի

՚ի նմա: Եւ կացեալ յաստիճան քահանայութեան յեկեղեցւոջն անտիոքայ ամս երկոտասան: Եւ գրեաց շանդէ-ւրէն, և այլ գրեանս բազումս. և այսպէս զբազումս լուսաւորէր բանիւ վարդապետութեան, և հաստատէր ՚ի հաւատս՝ ՚ի սէր՝ և յողջախոհութիւն:

Իսկ եպիսկոպոսն Փղաբիանոս իբրև ետես զշնորհս հոգւոյն սրբոյ աղբերաբար բղխեալ ՚ի նմանէ յընդհանուրս, աղաչէր զնա զի հրապարակաւ ՚ի մէջ եկեղեցւոյն յանդիման ժողովրդեանն վարդապետեսցէ, որ ինչ պատշաճ է ՚ի խրատ և ՚ի փրկութիւն հոգւոց. և նա ոչ կամէր առնել զայս, զի մի գովութիւս առցէ ՚ի մարդկանէ: Այլ քանզի ՚ի սրտի խորում ունէր զպատուիրանս Տն որ յաւետարանին՝ զվարձսն կրկին շահողացն, և զտոյժս թաքուցողին. ոչ բարւոք վարկանէր զլռելն: Ուստի աղաչէր զեպիսկոպոսն՝ զի գրօք արասցէ զայս: Եւ այսպէս զվարդապետութիւն իւր զոր ընդ գրով արկանէր, բազում անգամ ընթեռնոյր ՚ի գաւիթս եկեղեցւոյն, մերձ լինելով եպիսկոպոսին, և զղերիկոսացն, և յոլովք ՚ի քաղաքացեացն: Բազում անգամ ՚ի վերայ ամբիոնին ելեալ ՚ի մէջ Եկեղեցւոյն՝ յանդիման ժողովրդեանն ընթեռնոյր, և ամենեքեան ուրախանային հոգևորական յորդորմամբ: Եւ յորժամ երթային առ իւրեանս՝ ՚ի սեղանս, կամ ՚ի գուեհս, զնոյն զայս զնր վարդապետութիւն միմեանց պատմէին, և ՚ի նմանէ իբրև ՚ի սաղմոսարանէ ՚ի բերան առնուին. այլ և ՚ի քարտէսս գրեին՝

առանց

առանց մոռանալոյ պահելով զ յիշատակ վարդապետութեան նորայ։

Իսկ 'ի միում աւուր հրամայեաց նմա փլաբիանոս մեծաւ̃ թախանձանօք՝ ելանել յամբիոնն, և առանց գրոյ պատմել ժողովրդեանն. և նա թէպէտ և դժուարանայր, սակայն բռնադատեալ լինէր առնել զկամս նր. և վստահացեալ 'ի զօրութն հոգւոյն սբյ և մաքրութն մտաց իւրոց, ելանէր յամբիոնն։ Եւ նախ զառաջինն սկսանէր բանս լի հանճարով և իմաստութեամբ, և ամենեքեան որք տեսանէին զնա զի առանց Գրոյ՝ միայն իմաստութբ հոգւոյն սբյ պատմէր նոցա զ բանն, առաւել ևս զարմանային և գովէին և փառաւորէին զիմաստութի նր։ Քանզի ոչ երբեք էին տեսեալ, և ոչ լուեալ յումեքէ՝ եթէ լեալ էր յառաջ քան զնա նման նմա 'ի քաղաքին յայնմիկ։ Եւ յորժամ լսէր ամբոխ բազմութն՝ եթէ քաղցր են բանքն յովհաննու իբրև ըղմեղր, ամենեքեան մեծաւ̃ յօժարութբ ընթանային յեկեղեցին։ Այլև՝ արուեստաւորք, և որք էին իշխանութբ էին՝ անտես առնելով զիւրաքանչիւր գործս, անդր հասանէին լսել զ քաղցրաբարբառ բանս նր. և ոչ 'ի ձիընթացս այնպէս բովանդակ անդր լինելով կատարէին զօրն զայն։ Եւ ամենեքեան 'ի բաց թողլով զփողս սատանայականս, և զերգս լկտիս, և զպարս դիւ̃ական ձեռով գնային յեկեղեցին. Քանզի մեծ պատիժ զոչ լսելն համարէին։ Եւ որք վայելէին 'ի յորդաբուղխ

բա

բանի շնորհաց նր, երթային և փառս մատուցանէին այ
որ այսպիսի շնորհս պարգևէ սիրելեաց իւրոց՝ առ ի
խօսիլ զմեծամեծս նր անհատական բարբառով։ Եւ այս
պէս՝ բազում պատմութիս գրոց առնէր յանտիոք՝ նախ
քան զլինելն նր եպիսկոպոս ՚ի Կոստանդնուպօլիս։
Եհաս համբաւ նորա մինչև ՚ի լսելիս Թագաւորին Ար-
կադեոսի, և ցանկութի յոյժ ունէր տեսանել զնա, և
ունկնդնել իմաստութե բանից նր։ Եւ տեսեալ եպիս-
կոպոսին՝ փլաբիանոսի զառաջադիմութի նր, և զհա-
ճատարմութին. աղաչէր զնա առաջի կալ եկեղեցական
ընչիցն, և ունել իշխանութիւն ՚ի վերա գղերիկոսացն,
և ակնունել զի զկնի վախճանի նր փոխանորդեսցէ զա-
թոռ հայրապետութե անտիոքայ։ Իսկ նա ոչ առնոյր
յանձն, պատասխանի առնելով այսպէս. Թողութի տու
ինձ, զի չեմ բաւական հոգալ զընչից կենցաղոյս, և յա
պաղիլ՚ի փրկութե հոգւոյս իմոյ։ Քանզի՝ զսա կամեցայ
շահել, վնկ զամ ինչս իմ զհայրենի ՚ի բաց թողլի, և
առանձինն եղէ յնէս։ Եւ եպիսկոպոսն իբրև ետես
զանփոփոխելի միտս նր, որ ոչ կամէր արկանել զինքն ՚ի
զբօսանս հոգոց կենցաղոյս, թոյլ ետ նմա. և զի մի ար
գել լիցի նմա առ ՚ի կերակրել զժողովուրդն ցն յայտ
նի և ծածային վարդապետական հացին, որ ՚ի յերկնից
իջեալ և կեանս տայ մարդկան։

Սա

## Սքանչելիք վեցերորդ։

Պատմեցից և այլ ևս սքանչելիս, զոր արար ած 'ի ձեռն սբյն Յովհաննու։ Կին ումն՝ ուրումն 'ի Գլխաւորաց քաղաքին Անտիոքայ՝ անուն Եկղիայ կոչեալ· և էր նր որդի մի միայն, որ էր անկեալ 'ի հիւանդութիւն սաստիկ ջերման։ Իսկ մայրն նր տեսեալ որդ նա մերձ 'ի մահ, առեալ զնա փութով ած յեկեղեցին, և ընկեցեալ զնա առ ոտս սբյն յովհաննու, պաղատէր առ նա արտասուօք՝ և ասէր· ո՜վ Տր իմ, հայցեա 'ի Քսէ՝ շնորհել ինձ զորդեակս իմ, որ մերձեալէ 'ի դրունս մահու։ քանզի հաւատամ, զի որչափ հայցեսցես յայ՝ տացէ քեզ· այսուհետև մի անտես առնէր զաղաչանս իմ, ո՜վ հայր սբ։ Պատասխանի ետ յովհաննէս և ասէ· ոչ է այդ մեր իշխանութի զի ում կամիցիմք տայցեմք· և դարձեալ՝ ոչ ամենեցուն է առնուլ զայդ, այլ այ է գործս այս՝ ոգ և ուսանիմք 'ի սբ գրոց։ Հաւատա 'ի տր Յս Քս յամ անձնէ քումմէ՝ և 'ի զօրութէ և 'ի մտաց քոց, և անկիր առաջի նր խոստովանութբ և ապաշխարութբ, և նա պարգևէ որդւոյ քում զառողջութի· և յայսմ հետէ այլ մի՛ ևս մեղանչեր դու և այր քո· քանզի վս չար գործոց ձերոց մեռան որդիքն ձեր յառաջագոյն· զի այդ հինգերորդ է՝ որ արդ ևս կամիք յայդմանէ զրր-կիլ։ Արդ՝ եթէ զգաստանայք այսուհետև ապաշխարու-թեամբ, ոչ միայն մանուկդ ձեր շնորհեսցի ձեզ, այլև

առ

արքայութեան երկնից արժանի լինիցիք ։ Պատասխանի ետ կինն արամբքն իւրով հանդերձ և ասէ հաւատամք ՚ի տէր մեր և յածն և ՚ի փրկիչն Յիսուս Քս̃, եթէ կարօղ է բժշկել զա̃մ ախտս և ըզ հիւանդութիս· և զնոյն ինքն երաշխաւոր տամք քեզ, զի ոչ ևս դարձցուք այսուհետև յառաջին չար գործըսն մեր ։

Իսկ երանելին տեսեալ զնա̃ զի սրտի մտօք դարձան ՚ի խոստովանութի̃, առեալ ջուր՝ և կնքեալ զնա նշանաւ սբ̃ խաչի̃ն, և ասէ ։ Յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սբ̃յ ։ և աղօթիւք սբ̃ հօրն մերոյ եպիսկոպոսին՝ եղիցի Ջուրս այս ՚ի բաց մերժումն ա̃մ ախտից և ա̃մ հիւանդութեանց ։ Եւ̃ սրսկեալ զջուրն ՚ի վր̃ մանկանն երիցս անգամ, և առ ժամայն եթող զնա ջերմն, և յարեաւ էկաց ՚ի վր̃ ոտից իւրոց առողջացեալ՝ ոչ ունելով ամենևին տենտ յախտէն ։ Իսկ ծընօղքն նր̃՝ մեծաւ ուրախութբ̃ առեալ տարան զնա ՚ի յարկս իւրեանց, և գոհանային և փառաւոր առնէին զա̃ծ ՚ի վր̃ եղեալ զօրութեց ։ Եւ̃ հայր նր̃ փութանակի առեալ ոսկի բազում, եդ առ ոտս սբ̃յ յովհաննու և ասէ · ընկալ զայս ՚ի ծառայէ քումմէ հայր սբ̃ վս̃ փրկութե̃ մանկան իմոյ ։ Եւ̃ նր̃ պատասխանի արարեալ ասէ ցայրն · ո՛վ դու՝ տուր զայդ այնոցիկ՝ որք զըրպարտեցանն ՚ի քէն, և զմնացեալսն տուր կարօտելոց · վս̃ զի ա̃մ որ ա̃յ ծառայէ՝ զայդ ոչ խնդրէ, և ոչ կարօտանայ ընչից մարմնաւորաց · այլ ուրախանայ ՚ի պարգևսն ա̃յ ։ Եւ̃ դուք յայսմ հետէ պահեցէք զանձինս ձեր ՚ի չար

գոր

գործոց. քանզի ած խրատէ զձեզ այսպէս. ոչ վնզի ատէ, այլ սիրէ՝ և միշտ տնօրինէ զփրկութի անձանց ձերոց. և այնպիսի բանիւք սփոփեալ զնս՝ առաքեաց 'ի տունս իւրեանց։

## Սքանչելիք Էօրնեբրուրգ։

Ասացից և այլ սքանչելիս, զոր արար նովաւ ած։ Յամօրն յայնոսիկ սերմն սատանայական՝ հերձուածն մարկոնի յոյժ համարձակեալ էր յանտիսք և յամ Գաւառն, և բազումք 'ի յայնմ լտտաց ընթանային զհետ մոլորութե։ Այլև՝ իշխան քաղաքին դեղեալ էր 'ի պիղծ աղանդոյն. և բազումք 'ի ձեռն նր ուրացեալք՝ 'ի բաց կային 'ի Ճշմարիտ և յուղղափառ հաւատոյս։ Իսկ ած՝ որ կամի զամենեսեան զի կեցցեն և 'ի գիտութի Ճշմարտութե եկեսցեն և խնդրէ պատճառ կեցուցանել զազգս մարդկան. կամեցաւ և արդ 'ի ձեռն սբյն յովհաննու ազատել զհոգիս բազմաց 'ի չար մոլորութեն աղանդոյն։ Քանզի՝ կին առացել իշխանին այնորիկ՝ անկեալ յախտս դժուարինս և զազրալիս, ոպ զի որովայն նր յարտաքս աճեալ՝ միշտ բռամբ քարշել զդուրս եկեալ աղտն. և այսպիսի աններելի տանջանօք տագնապէր 'ի տուէ և 'ի գիշերի։ Եւ բազումք յիմաստուն բժշկաց քաղաքին՝ բազում փոյթ և խնամ ցուցին 'ի վր նր, և ոչինչ կարացին օգնել նմա, այլ և

առա

առաւել զայրանայր ախտն. զոր տեսեալ զառաւելութիւն ախտին քան զարուեստս բժշկութեան, տարակուսեալք՝ ՚ի բաց կացին ՚ի նմանէ։ Իսկ այրն նորա տեսանելով զտարակուսումն և զվրիպումն բժշկացն, աղաչէր զՀերձուածօղ առաջնորդս իւր՝ օգնել նմա, և տալ նմա առողջութիւն։ Եւ նոքա հանդերձ բազում ճեպով զայս արարին՝ աղօթելն վասն նորա անխափան զերիս տիւս և զերիս գիշերս. և իբրև ոչ ինչ կարացին օգնել ախտացելոյն անօգուտ աղաչինք նոցա. Կոչեաց կինն ախտացեալ՝ զայր իւր և ասէ ցնա. մեծ երախտիք զայդ խոստովանիմ տեառն իմ, զոր ջանայեր վասն փրկութեան իմոյ. քանզի բազում բժիշկս ածեր, և բազում մարկիոնացիս կոչեցեր, և օգուտ և ոչ մի ինչ և ինձ։ Արդ՝ աղաչեմ զքեզ. մի՝ հրաժարիր ՚ի Պաղատանաց իմոց, և ես յուսացեալ եմ ստուգապէս՝ զի եթէ լուիցես աղաչանաց քոց, վաղվաղակի բժշկեցայց։ Եւ նորա պատասխանի տուեալ ասէ ցնա. Թէ և զամենայն ինչս իմ խնդրեսցես յինէն տալ քեզ առ ՚ի բուժումն հիւանդութեանդ, ոչ զանց արարից զխնդրուածովք՝ քովք։ Եւ նորա պատսպարեալ նստաւ ՚ի մահիճս իւր, և խոնարհեցուցեալ զգլուխ իւր երկիր եպագ նմա, և ասէ։ Լուայ վասն միոյ՝ որոյ անունն կոչի Յովհաննէս, որ է Աշակերտ Քրիստոսի. եթէ զամենայն զորինչ խնդրէ ՚ի նմանէ՝ տայ նմա Քրիստոս. տարցես առ նա զիս, որպէս զի աղօթեսցէ վասն իմ յանուն Քրիստոսի, և բուժեսցէ զիս ՚ի տանջանացս՝ որպէս ըզ բազումս զոր լսեմ։ Զի եթէ գոյր ՚ի մարկիոնացիս զօ-

րու

րութի բժշկութե, կամ հաւատս ուղիղս, լսելի եր լեալ պաղատանք նոցա՝ ով տր իմ, զոր վս իմ ալարին։ Այլ՝ այս գիտութի լիցի քեզ՝ զի Ճշմարիտ ասեմ, զի ես զնս 'ի բժշկութե իրս ոչ լուայ յումեքէ․ այլ վս գարշելի և չար գործոց, որովք աղտեղայուցանեն զինքեանս՝ 'ի բազմաց լուայ 'ի քաղաքայեացս։ Պատասխանի ետ այրն նր և ասէ․ ոչ վայելէ մեզ զայնպիսի արս Թշնամանել, որք պաշտեն զՔս․ այլ երթիցուք առ նա, և աղաչեսցուք վս քո․ և եթէ բժշկեսցէ զքեզ ած 'ի ձեռն նր այնուհետև ոչ ևս դարձցուք առ մարկիոնայիս, այլ 'ի բաց կացցուք 'ի հաղորդութենէ նոցա։ Արդ՝ առողջութիւնդ քո յայտնեսցէ զՃշմարիտ հաւատն յընտրութեան 'ի մէջ երկոցունցն ։

Եւ 'ի նմին ժամու ետ բառնալ զախտացեալ կինն իւր մահճօք, և տանիլ առ երանելին Յովհաննէս․ և գնաց և ինքն զհետ՝ հանդերձ ամենեքումբք, որք բնակեալ էին յապարանս նր ։ Եւ յորժամ հասին յեկեղեցին, կացուցին ըզ մահիճսն 'ի նախադրունսն ։ Ազդ եղև եպիսկոպոսին, և մեծին յովհաննու պատճառ գալոյ նոցա, և եթէ կամին 'ի ներքս մտանել։ Նք իբրև ընդմի բերան պատասխանի տուեալ ասեն, ոչ է նոցայ արժան այար մտանել, և պղծել զսբ տեղիս չար աղանդովն․ բայց եթէ մեք արտաքս առ նոսա ելցուք, և խօսեսցուք, և երեսեսցուք։ Եւ իբրև ելին առ նս եպիսկոպոսն, և յովհաննէս․ փաղփաղակի անկեալ առ ոտս նոցա երկիրպագին և ասեն, եկայք

առ

առ ձեր սրբութիւն՝ ով հարք մեր. զի որ 'ի ձեզ բնա-
կեալ է հոգին սբ, տայէ մեզ առողջութի չար ախտից
և ազատութի յըմբռնեալ տրտմութենէս. քանզի զինչ մեր
բազում ծախեցաք բժշկաց և այլոց ումանց, և ոչինչ
շահեցաք։ Իսկ իբրև լուաք վասն ձեր՝ զի կատա-
րեալ աշակերտք էք Քի, և զամ զոր ինչ հայցէք 'ի
նմանէ տայ ձեզ. վասն ճշմարիտ հաւատովք եկաք առ ձեզ,
որպէս զի տեսանելով ձեր զողորմելի տեսիլս զայս՝ գթա-
ցեալ ողորմեսջիք 'ի վր մեր։ Պատասխանի ետ յովհան-
նէս և ասէ ցնս. եկիք աստ փորձել զմեզ, և ասէք՝ եթէ
կատարեալ աշակերտք էք Քի, և ոչ իմիք անլսելի լինի-
ցիք զոր հայցէք 'ի նմանէ։ Ընդէ՞ր արդեօք և դուք
ինքնին ոչ աշակերտիք նմա. որպէս զի զոր ինչ խնդրիցէք
հաւատովք՝ առնուցուք 'ի նմանէ։ և այս լինիցի ձեզ
միայն թէ կամիցիք։ Եւ դարձեալ՝ առանձինն ասէ
ցայրն նր. վասն է՞ր կաս և մնաս 'ի պիղծ հերձուածն մար-
կիոնացւոց, և հաճեալ դարշելի բանից նոցա, զ զազ-
րալի և զանընդունելի աղօթս նոցա ածեր 'ի տուն քո.
այնպէս վարկանելով՝ որպէս զի 'ի նոցանէ հնարեսցի առող-
ջութի ամուսնոյ քում։ Արդ՝ զդա վաղվաղակի տար 'ի
տուն քո, և ժողովեա անդ զամ մարկիոնացիսն առաւել
քան զառաջինն. և ասա նոցա պաղատել յերկար ժամս,
թերևս լսելի լինիցի աղաչանք նոցա ։ և մի կաղար յեր-
կու ոտից քոց. զի ունիս 'ի քեզ զկրօնսն մարկիոնացւոց,
և եկեալ աստ թերահաւատութբ ջանաս առնուլ զբժշ-

կու

կութի ուղղափառ հաւատոյս: Պատասխանի ետ այրն
և ասէ. այսպիսեաց հարց որդի եղեալ եմ ես, որ և ՚ի
կակղագոյն բանս նոցա պարտեալ եմ. վիճակեցայ այսմ
կրօնիցս մինչև ցայսօր ժամանակի, և ոչ բարեպաշտուե
եմ փարկանելով զկրօնսն զայնոսիկ՝ ոչ կացի ի բաց ՚ի
հայրենական հաւատոյ: Բայց արդ տէր իմ ներեա իմում
անգիտութես, և առաջնորդեա ինձ յուղղափառ հաւատս:
Եւ հայեցեալ ՚ի նա երանելին յովհաննէս՝ ասէ. են ճա
նապարհք որ ՚ի կեանս տանին, և են որ ՚ի կորուստ.
զոր բազումք ՚ի մարդկանէ՝ զոչ բարւոք կարծելով, և
զբարին կարի չար. և վսն թիւրեալ յուղիղ ճանա֊
պարհէն անկանի ՚ի խորխորատս դժոխոց: Բայց թէպէտ
մեղար մինչև ցայժմ, սակայն անգիտութբ ոչ ասացերդ.
այժմ ծանիր զճշմարտութիւն. և ուխտ եդեալ այ՝ յայսմ
հետէ ՚ի բաց կացէք ՚ի չար հերձուածոյն, նզովելով
զմարկիոն, և ըզ խուրսն իւր, և զուսումն նոցա, և զամե
նեսեան որք զհետ երթան մոլորութե նոցա. և դար֊
ձարուք ՚ի ճշմարտութի յամ սրտէ՝ և յանձնէ՝ և ՚ի զօ֊
րութէ՝ և ՚ի մտաց. և նա ինքն ընձեռէ ամուսնոյ քում
զառողջութի, այլ և ըզ կեանս յաւիտենից պարգևեսցէ.
ձեզ: Իբրև լուաւ զայս կինն ախտացեալ, վերագոչէր
խոստովանելով զճշմարտութի, և սկսաւ նզովել զմար
կիոն, և զհետևեալսն իւր աղանդոյն. և եթէ յայսմհե֊
տէ մի՝ լիցի հաղորդել մեզ ընդ նմ, այլ միաւորելով ընդ
ուղիղ հաւատսն, առ նոսին եկեսցուք յեկեղեցին այ:

Ըստ

Ըստ նմին օրինակի ասացեալ և այլն նորա. միայն (ասէ) հայցեցէք յԱյ պարգևել զքաւութիւն առաջին մեղացն մերոց: Յայնժամ եպիսկոպոսն հրամայեաց մեծին յովհաննու, զի պաղատանս մատուսցէ վն նոցա առ Տր: Եւ սբյն յովհաննու առեալ ջուր՝ ետ ցեպիսկոպոսն, և ասէ: հայր սբ՝ կնքեա աջով քո՝ անուամբ Տն մերոյ յի քի. որպէս զի լիցի սմա 'ի բժշկութիւն 'ի ձեռն ամենասբ աղօթից քոց: Պատասխանի ետ եպիսկոպոսն և ասէ. շնորհքդ բժշկութեան քեզ տուեալ է 'ի վերուստ. և նա եւս առաւել աղաչեալ զեպիսկոպոսն՝ մինչև հաւանեալ Տնագրեաց զ ջուրն: Եւ նորա առեալ զ ջուրն՝ եհեղ 'ի վր ախտացեալ կնոջն, և ասէ. Յանուն Տն մերոյ Յի Քի եղիցի ջուրս այս 'ի բժշկութիւն ախտի սր: Եւ առ ժամայն ողջացաւ, և եկաց 'ի վր ոտից իւրոց՝ փառաւորելով զԱծ հանդերձ ամենեքումբք որք եկեալ էին զ կնի նոցա: Եւ այլն նր իբրև ետես զսքանչելիսն. անկեալ առ ոտս սբյն, աղաչէր աղօթել 'ի վր նորա, և տալ հրաման 'ի բաց թողուլ զդիւթական հոգսն, և պաշտել միայն վն փրկութեան հոգւոց: Իսկ մեծն յովհաննէս պատասխանի ետ և ասէ. Ած առաջնորդեսցէ ձեզ առ 'ի առնել զօգտակարսն: Եւ դարձան անդրէն 'ի յարկըս իւրեանց մեծաւ ուրախութբ. բաշխէին ինչս բազումս կարօտելոց, և 'ի բաց կային 'ի հերձուածոյն մրկինացւոց՝ նզովելով զաղանդս նոցա: Եւ երթեալք 'ի սբ եկեղեցին ուղղափառաց, պարապէին յունկնդրութե Աստուածաշունչ գրոց. ետուն և

երե

երեսուն լիտր ոսկւոյ յեկեղեցին 'ի պէտս տնանկաց և աղ
քատացն՝ յեկեղոյն յարտաքուստ :

Իսկ հերձուածն մարկիոնի՝ իբրև լուան եթէ 'ի բաց եկաց 'ի նոցանէ իշխան քաղաքին, և միաբանեցաւ ընդ յովհաննու և ը փիլաբիանոսի : ( Քանզի ոչ գայր 'ի ժողովս նոցա, ոչ սովորն էր յաւուր կիւրակէի՝ ) տրտմեցան. և եկեալ առ նա աղաչէին հանդերձ արտասուօք, զի մի թողցէ զնա որբս, և մի 'ի բաց կայցէ 'ի հայրենական հաւատոյն : Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. քաւ լիցի ինձ յայսմհետէ որ ծանեայ զճշմարտութիւն՝ դառնալ անդրէն 'ի չար հերձուածս ձեր : Բաւական է ինձ առաջին ժամանակն, յորս մոլորեցայ անգիտութբ . քանզի գտայ զայն որ առաջնորդէ մեզ յայսմ հետէ 'ի ձեռն ուղղափառ հաւատոյ՝ յարքայութին երկնից : Եւ նոցա լուեալ զայս, 'ի բաց գնացին ամաչեցեալք, և կրճտէին զատամունս իւրեանց հակառակ յովհաննու . և շուրջ գային 'ի քաղաքին՝ քրթմնջէին զնմանէ, վհուկ և աղանդաւոր կոչելով . և ասէին՝ թէ 'ի ձեռն կախարդութե մոլորեցոյց զիշխանն մեր և զամուսին նր, և փոխադրեաց 'ի հաւատս օտարոտի՝ զոր ոչ ճանաչէին : Եւ յովհաննու լուեալ զբանս զայսոսիկ՝ ոչ ինչ դժուարէր, այլ մանաւանդ բարբառէր առ այնոսիկ որ մերձն էին . ո՞չ ասացէն ( ասէ ) և անօրէն հրէայքն՝ զՏրն մեր և զմեծն՝ անուամբս այսուիկ կոչէին . եթէ բեեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս : Արդ՝ զինչ

օտարոտի Թուի այս՝ հաւաստարելով ըզ մեզ զծառայս նր ՚ի նոյն գարշելի բանս հակառակ մեզ ։ Բայց յուսացեալ եմ ՚ի տր ած իմ՝ զոր պաշտեմն հոգւով իմով, որում և երկիրպագանեմ, ՚ի տուէ և ՚ի գիշերի, զի ցուցցէ ժողովրդեանն իւրոյ զ՚ի բաց բարձումն հայհոյութե նոցա առ ՚ի կործանել զնս վաղվաղակի․ ոչ զի այլքն նոքօք զգաստասցին, և մի ևս կոչեսցեն զծառայս այ աղանդաւորս և կախարդս ։

Եւ ՚ի գիշերին յայնմիկ յանկարծակի շարժեցաւ ամ քաղաքն այն մեծ յընկղմել․ և Թանձրամած խաւար շօշափելի հասեալ մածեաւ ՚ի վր ժողովարանի հերձուածողացն այնոցիկ․ և շարժեալ կործանեցաւ տուն ժողովարանի նոցա, և սատակեաց առհասարակ զամենեսեան որ անդ էին ։ Այլև՝ որք ոչ անդր հանդիպեցան, այլ ՚ի յարկս իւրեանց էին, և այնք ևս բնակութիք նոցա տապալեցաւ, և եղև գերեզման բնակչաց նոցա, ըս մարգարէին ձայնի․ ( Սաղմ 48․ 12 ։ ) Իսկ ուղղափառացն վնաս և ոչ մի ինչ եղև, ոչ տան և ոչ մարդոյ՝ յայնմ սաստիկ բարկութէն ։ Եւ ժողովուրդն հաւատացելոց՝ տեսեալ զայսպիսի սքանչելի նշան, մեծաւ երկիւղիւ առլցեալ փառաւորեցին զամենազօր՝ զամենագութն ած, որ այսպիսի հրաշիւք խնդրեաց զվրէժ սբյն յովհաննու յայնց հերձուածողացն, որք խօսեցան զնմանէ հայհոյութի ։ Իսկ մնացեալքն ՚ի մարկիոնացւոցն՝ որք ապրեցան ՚ի բարկութենէ անտի; ՚ի բաց կացին յաղանդոյն, նզովելով զմար-

կի

կիոն և զհերձուածս իւր . և միաբանեցան յուղղափառ-
հաւատս։ Եւ այս ամ ըստ յովհաննու երանելւոյն զոր
ինչ գրեցաւն 'ի յանտիոք, սուղ ինչ 'ի բազմէն ընտրեցաք
և եդաք 'ի գիր։

Հրաւիրել սրբոյն յոհաննու 'ի կոստանդնուպօլիս, առ 'ի լինել անդ հայրապետ։

Յայնմ ժամանակի՝ Նեքտարիոս եպիսկոպոսն կոստանդնուպօլսի վախճանէր 'ի բարւոք քաղաքավարութիւն կեցեալ, և փոխադրեալ լինէր առ արարիչն իւր 'ի քսանևեօթն սեպտեմբերի ամսոյ։ Եւ անդէն փոյթ 'ի մէջ առեալ վն ձեռնադրութեան եպիսկոպոսի քաղաքին . այլք՝ յայլմէ խնդրեալք լինէին. այլ՝ բազումք առանց խնդրելոյ Նախագահութեան աղագաւ ը հակառակս ելանելով միմեանց՝ անդր փութային։ Նա և ոչ արք երիցունք միայն, այլ որք ոչն էին արժանիք քահանայութեան՝ անդր դեգերեալք կաշառանօք վստահանային առնուլ զիշխանութի քահանայապետութե։ Եւ այսպէս՝ ամբոխ խռովութե յուզէր 'ի քաղաքին, մինչև աշխատ լեալ առնել զթագաւորն 'ի բազում վիճաբանութեն։ Իսկ կողմ ուղղափառացն առ հասարակ բազմութբ առ թագաւորն հասեալ, ծունր խոնարհեցուցեալ՝ առաջի անկեալ աղաչէին և խնդրէին 'ի նմանէ, զի զ հաւատարիմ և զիմաստուն զոք կացուսցէ յաթոռ

հայրապետութե ։ Եւ յոլովակի զայս արարեալ. վախճան կատարածի՝ զայս բարի խորհուրդ միաբան առաջի եդին։ քանզի՝ ժառանգաւորք եկեղեցւոյն հանդերձ մեծամեծօքն, և վեհիւքն բազմութբ քաղաքին խորհրդածեալ առաքել ածել զՅովհաննէս զքահանայապետն ( [illegible] ) անտիոքայ եկեղեցւոյն. և զնա ձեռնադրել յաթոռ հայրապետութե ։ Քանզի համբաւ իմաստութե նր հռչակել էր յամենեցունց լսելիս առաւելութբ, որպ զառաքելոյն պօղոսի ։ Եւ զայսպիսի բանս ազդէին թագաւորին արկադեոսի, և պատրաստեն զնա՝ առաքել ածել զնա. և հաճոյ թուեցաւ բանն առաջի թագաւորին ։ Ուստի գրէ հրովարտակ առ փլաբիանոս եպիսկոպոսն անտիոքայ. որ ունէր օրինակ զայս ։

Թուղթ արքայական առ փլաբիանոս վասն Յօհաննու ։

Արկադէոս և Ոնորիոս՝ յաղթօղք և հաւատարիմ թագաւորք, և ինքնակալք հռովմայեցւոց՝ Քրի-Ցի տէրամբ մերով. սիրելի հօրդ մերում փլաբիանոսի եպիսկոպոսիդ անտիոքայ՝ ողջոյն ։ Ո՛չ գոյ այլ այսպիսի ինչ փոյթ թագաւորութես մերոյ, որպ զհոգս Եկեղեցւոյ սբյ միաբանութե ուղղափառ դաւանութբ. որպ զի հաստատուն կացցէ քրիստոնէութիս 'ի վր առաքելական վիմին, յորում եդ զնա Քս 'ի ձեռն որոյ կեամք և հնազանդեմք զամ ազգս բարբարոսաց ։ Զի ոչ եթէ

զօ

զօրութ̅բ մերով զայս առնեմք, և ոչ բռնութ̅բ երկրա-
ւորաց և կառաց պատերազմականաց, և կամ բազմութ̅բ զօ-
րաց· այլ զօրացեալք զօրութ̅բն ամենակալին ա̅յ, որ զա̅մ
ինչ՝ ի լաւագոյնս ուղղէ և առաջնորդէ, և զամենեսեան
հնազանդեցուցանէ Թագաւորութեան մերոյ։ Արդ՝ զայ-
սոսիկ գրեցաք առ ձեզ· քանզի գիտեմք եթէ հաւատալ
է՝ ի լսելիս ձեր· զի զկէտ ժամանակի իւրոյ կատարեաց
Նեքտարիոս եպիսկոպոսապետ մեր։ Եւ ոչ է պատ-
շաճ եթէ այրի մնասցէ այսքան բազմաժողով Թագա-
ւորական քաղաք, մանաւանդ զի մի՛ արատեսցի յայլան-
դակաց ոմանց՝ կոյս ս̅բ հարսն Ք̅ի ս̅բ եկեղեցիս մեր։
Եւ քանզի ազդ եղև Թագաւորութեան մերոյ ՚ի հաւա-
տարմաց ոմանց՝ իմաստութ̅ի և կատարեալ բարութ̅ի յով-
հաննու քահանայի, որ բնակեալ է ընդ ձերով իշխա-
նութ̅բ։ Եւ վ̅ն̅կ առաքեցաք առ քոյին սրբութ̅իդ զարս
երկիւղածս և զանուանիս ՚ի ժառանգաւորաց եկեղե-
ցւոյս, և զկնի ն̅ր զերևելի և զփառաւոր իշխանսդ մեր։
Ո̅պ զի՝ առաքեսցես զառաջասացեալ երջանիկդ ա̅յ ՚ի
Թագաւորութիս մեր։ Քանզի ոչ է պարտ և պատշաճ
ձեզ միայն վայելել յիմաստութ̅ե դորա, այլ և մեզ մա-
նաւորեցէք, ո̅պ զի զարդարեսցի՝ որ աստ են եկեղեցիքս։
Արդ՝ յորժամ ընթերցցի առ ձեզ հրովարտակդ Թագա-
ւորութեան մերոյ, զգո՛յշ լերուք՝ մի՛ գուցէ արհամար-
հէք՝ ոչ կատարելով զհրամանս մեր, այլ վաղվաղակի կա-
տարեցէք՝ առաքելով այսր առանց իրիք պատճառանաց

զխնդրելդ 'ի մէնջ : Ողջ լերուք 'ի տր աղօթելով վս մեր :

Այդ' յորժամ ընթերցաւ հրովարտակն 'ի քաղաքն անտիոք : ընկալեալ ևս եպիսկոպոսին ընթերցաւ զհրամանս թագաւորացն. և ետ զայն 'ի ձեռս յովհաննու, որ զի և նա ընթերցեալ ծանիցէ զգրեալսն անդր : Եւ իբրև ընթերցաւ, հառաչեաց 'ի խորոց սրտէ, և ասէ ցեպիսկոպոսն. ո՞վ եմ ես թշուառականս, զի համարձակեցայց հասու լինել' և այնքան անուանի և բազմաժողով քաղաքի առաջնորդ : Պատասխանի ետ եպիսկոպոսն և ասէ ցնա. զոր յառաջ սահմանեաց ած, հանդերձեալ է 'ի կատարումն ածել. և ո՞վ է որ ընդդիմանայ նմա, և հրամանին նր : Եւ հրամայեաց զեկեալսն 'ի թագաւորէն հանգուցանել 'ի տան. և բարեմտութբ ընկալեալ զնս' կարգեաց սպասաւորս, և զպէտս ծախուցն յեկեղեցւոյն հրամայեաց տալ նոցա : Իսկ անտիոքացիքն' իբրև գիտացին եթէ զինչ պատճառանօք եկեալ են առաքեալքն 'ի թագաւորէն, ժողովեցան ամենեքեն միաբան յեկեղեցին, և զաղաղակ բարձին, և ընդդէմ կային հրամանաց թագաւորին : Եւ գոչէին առ եպիսկոպոսն իւրեանց' այսպէս ասելով. ոչ տամք թողուլ զի երթիցէ 'ի մէնջ յայլ քաղաք' ածային գանձն և մեծագոյն պարգևն, զոր շնորհեաց մեզ քս. զի թէպէտ և ամենեքեն մեռանիցիմք, ոչ հաճանիմք այդմ հրամանի : Մի՞ թէ պակասէ թագաւորել քաղաքին կատանդրու եպիսկոպոս. ընդէ՞ր զմերս կամի անզարդացանել զեկեղեցիս : Եւ եպիսկոպոսն պատասխանեալ ժո-

ղո

ղովրդեանն զի լռեսցեն, և նք ոչ կամէին լռել. այլ ևս առաւել 'ի խռովութե յուզեալք՝ յանկարգութիս դըրդէին: Եւ տեսեալ եպիսկոպոսին զայն ամ ամբոխ խռովութեամբ 'ի միասին հաւաքեալ, երկուցեալ՝ գուցէ սպանումն գործիցի, յափշտակեալ զարսն զառաքեալ 'ի Թագաւորէն. քանզի անդր մերձ նստէին, և առեալ 'ի բարձրաւանդակս իւր ելանէր: Եւ հրամայեաց զդրունս փակել, և սպասաւորացն պահել զնա զգուշութբ: Եւ առաքեաց զոմանս 'ի գղերիկոսաց առ իշխանսն, որք առաջինք էին քաղաքին, աղաչէր զնա 'ի բաց վարել զամբոխն, և մի՝ ընդդիմախօս լինիլ հրամանաց Թագաւորին: Եւ եկեալ ասացին զամ. և նք ևս առաւել սաստկանային, մինչև ելանել նոցա 'ի պատուհանսն բարձր ապարանիցն եպիսկոպոսին, որ եպիսկոպոսարանն էր, և կամեցան խորտակել ըզ դրունս, և յափշտակել զ յովհաննէս յեպիսկոպոսարանէն:

Զայս ամ դարձեալ իբրև տեսանէր եպիսկոպոսն թէ ևս առաւել կուտի ամբոխն, զի ոչ միայն քաղաքն, այլև ամ գաւառսն որ շուրջն բնակէին՝ վաղվաղակի անդր հաւանէին: Սկսաւ երդմամբ հաւատարմացուցանել զնա, թէ ոչ արձակեմ զ յովհաննէս 'ի քաղաքէս: Նաև ինքն Թագաւորն ( ասէ ) ոչ տրտմեցուսցէ զձեզ, յորմէ հետէ դժուարին Թուեցաւ ձեզ արձակելն զնա: Այսպիսի և որ սոցին նման են բանիւք համոզեալ զժողովուրդն, հազիւ կարաց լռեցուցանել զնս: Այլև՝ ոչ 'ի բացեայ կացին յեկեղեցւոյն,

այլ

այլ շուրջ նայել պահէին զելս նր̃, երկուցեալք՝ գուցէ ընդ ծածուկ տեղիս գաղտ իջուցանեն զնա: Եւ̃ իբրև այնպիսի իրքն յանհնարինս կրթեցաւ: գրեաց եպիսկոպոսն պատասխանի թագաւորին, և ծանոյց նմա զա̃մ եղեալսն ՚ի ժողովրդենէն վս̃ Յովհաննու, թէ սաստիկ երդմամբ հաստատեցին մեռանիլ և ոչ տալ զնա: Գրեաց և ինքն յովհաննէս թուղթ՝ թողութի առնուլ ՚ի նմանէ, զանկարութի առաջի դնելով, և աղաչէր զի մի հարկեսցէ զնա: Արդ առեալ զթուղթ Եպիսկոպոսին անտիոքայ՝ առաքեալքն ՚ի թագաւորէն կղերիկոսքն և իշխանքն, չու̃եցին ՚ի կոստանդնուպոլիս, և յանդիման եղեն թագաւո արկադեոսի: Եւ̃ տու̃եալ զթուղթն պատմեցին նմա զա̃մ եղեալսն ՚ի ժողովրդենէն: Իբրև լու̃աւ զայս թագաւորն՝ սքանչացեալ զարմացաւ: և կոչեաց զա̃մ սինկղիտոսքն՝ հրամայեաց ընթեռնուլ զթուղթըն. և որք առաքեցանն՝ հրաման առին պատմել զա̃մ զոր ինչ և լու̃ան յերանելւոյն յովհաննէ: Իսկ իբրև զայս լուէին սինկղիտոսք, և մեծամեծքն քաղաքին, ասեն ամենեքեան. արդարև արժանի է այսմ վիճակի յուղղել զաթոռ հայրապետութե թագաւորական քաղաքիս. Եւ̃ս առաւել բորբոքեցաւ փափաքումն թագաւորին, և ամենեցուն որք լու̃անն զայս վս̃ մեծին յովհաննու. և խնդրէին թէ ո̃պ ածցեն զնա անդ, և առանց խռովութե պահեսցեն զանտիոքացիսն: Այս խորհուրդ ՚ի մէջ առեալ. գրեաց թագաւորն ՚ի կոմս քաղաքին, առաքել զ Յովհաննէս

առանց

առանց ուրուք գիտելոյ ։ Սոյնպէս և առ յովհաննէս գրեաց պաղատելով, զի փութով եկեսցէ՝ առանց խռովութեան ժողովրդեանն ։ Եւ կոմսին ընթերցեալ զհրովարտակ թագաւորին, աղաչէր զՅովհաննէս՝ զի ելցէ արտաքոյ քաղաքին մինչև 'ի վկայարանն ժամանօսի՝ որ է մերձ 'ի դուռն ։ Եւ անդ նստուցեալ զնա 'ի վերայ մորակաւոր երիվարի դիմոսականին, ետ յներքինին որ առաքեալ էր 'ի թագաւորէն վասն նր՝ հանդերձ զինուորական զօրօքն, և մագիստրոսիանն. և այսպէս ճանապարհորդեալք՝ հասին 'ի կոստանդնուպօլիս ։

## Մտանելն 'ի կոստանդնուպօլիս, և Ձեռնադրելն 'ի Պատրիարգ ։

Եւ յորժամ ազդ եղև թագաւորին գալուստ նր. հրամայեաց ամ՝ զօրապետացն և իշխանացն և մեծամեծացն քաղաքին՝ ելանել ընդ առաջ նորայ ։ Յայնժամ ելին ամենեքեան ընդ առաջ նր յօժարութբ՝ հեռագոյն 'ի քաղաքէն իբրև ասպարէզս վեց. և անդր հանդիպեալ նմա, առեալ մուծին 'ի քաղաքն յանդիման թագաւորին. զոր իբրև ետես՝ ուրախ եղև, և հրամայեաց յեպիսկոպոսարանն երթալ, և հոգս տանել եկեղեցւոյն՝ մինչև ձեռնադրեսցի ։ Եւ քանզի յառաջ քան զգնալն յովհաննու՝ անդ հրամանաւ թագաւորին ժողովեալ էին եպիսկոպոսք բազումք ։ Ընդ որս էր թէոփիլոս աղեքսանդրու հայրապետն. որ և յառաջագոյն մախայր ընդ նմա վասն բազմա-

փայլ

փայլ շնորհաց հոգւոյն՝ որ բնակեալ էր 'ի նմա: Այլ և տգիտութիւն էր Թէոփիլոսի ոչ ձեռնադրել զիմաստունս և զհանճարեղս վասն նախանձուն՝ զոր արմատացուցեալ էր յինքեան, այլ զանմիտս և զանգէտս և զխելագարս, որք ոչ զանձինս՝ և ոչ զժողովուրդն կարէին շահեցուցանել: Այսպէս և աստ կամէր առնել. քանզի ունէր առ իւր քահանայ զոմն՝ Իսիդորոս անուն նորա, որ էր յոյժ սիրեցեալ 'ի նմանէ, զնա փութայր ձեռնադրել յեպիսկոպոսութիւն Կոստանդնուպօլսի: Այլ ոչ կարաց յաղթել ճշմարտութեան, այլ յաղթեցաւ 'ի տեսչութենէ խնամոցն Աստուծոյ: քանզի թագաւորն և մեծամեծքն քաղաքին՝ զՅովհաննէս լաւագոյն համարէին, և բազում ամբաստանութիւնս հակառակ Թէոփիլոսի շարժէին մերձաւորք թագաւորին: Նաև մուրհակս ամբաստանութեան յերեսաց այլոց եպիսկոպոսացն զնմանէ արարեալ, և տուեալ ցՏրոպիլոս այն սենեկապան թագաւորին, և յոյժ կամեցող Յովհաննու: Քանզի սոյն այս սենեկապանս՝ յառաջագոյն 'ի բազմաց խնդրելոյն՝ զՅովհաննէս ազդ առնէր թագաւորին առաքել ածել յԱնտիոքայ: Սա առեալ զմուրհակս չարախօսութեան՝ եցոյց Թէոփիլոսի և ասէ. ընտրեա՛ դու զոր կամիս, կամ ձեռնադրեա՛ զՅովհաննէս, և կամ զյայտնի բամբասանս յանդիման կացուցանեմք թագաւորին: Յայսմանէ երկուցեալ Թէոփիլոսի՝ ձեռնադրեաց զՅովհաննէս. և վաղվաղակի զկնի ձեռնադրութեան զմտաւ ածէր թէ որպէս դաւաճանեսցէ զնա: Որ թէպէտ և նա ինքն

յայն

յայնցանէ որք մերձն կային՝ գաղտնի նիւթէր զնախանձն իւր. սակայն հեռաւորացն յայտնի լեալ՝ պատմէին զնեն-գութ՟ի ն՟ր։ Քանզի հանապազ խոյզէր զնա իմաստութ՟ի Հոգւոյն, որ աղբիւրաբար բղխէր 'ի նմանէ։ Արդ՝ ձեռնադրեցաւ իմաստունն յովհաննէս յեպիսկոպոսութ՟ի. և նստաւ յաթոռ Հայրապետութ՟ե կոստանդնու պօլսի, 'ի 26. փետրուարի ամսոյ։ Եւ յերկրորդումն աւուր զկնի ձեռնադրութեան. եկն թագաւորն հանդերձ սնկղիտոսօքն 'ի ս՟բ եկեղեցին, զի առցէ օրհնութ՟ի 'ի նմանէ։ Իսկ յովհաննէս յառաջ եկեալ ընդդէմ ն՟ր հանդերձ ժառանգաւորօքն, և պատուական քահանայիւքն՝ երկիր եպագ թագաւորին։ Սոյնպէս և թագաւորն խոնարհե-ցուցեալ զպարանոցն առաջի յովհաննու՝ խնդրէր օրհ-նութ՟ի 'ի նմանէ։ Այսպէս և այլ մեծամեծքն ը՟ղ նմին օրի-նակի արարին։ Եւ ն՟ր աղօթեալ 'ի վ՟ր ն՟ր, հայցէր յ՟այ՝ խաղաղութ՟ե, և քաղցրութ՟ե վարել զտիեզերական իշ-խանութ՟ին։ Ըստ նմին օրինակի և 'ի վ՟ր այլոյն աղօթել, և ամենեցուն՝ զամէնն ասացեալ. ը՟ղ սովորութ՟ե՝ բազմե-ցաւ թագաւորն։ Յայնժամ բացեալ զբերանն իւր երա-նելին ասէ. ծանրագոյն է ինձ եպիսկոպոսութ՟ե իշխա-նութիս ո՛վ բարեպաշտ թագաւոր. զի 'ի վեր քան զար-ժանն և զ չափս իմ եղև գործս այս. քանզի տրուպ և կրտսեր եմ ես քան զամենեսեան։ Պատասխանի ետ թա-գաւորն և ասէ ցնա. այն՝ որ ընտրեաց զաշակերտս իւր՝ Տ՟ր մեր Յ՟ս Ք՟ս, և առաքեաց ը՟ղ ա՟մ տ՟ս, լուսաւորել

ըղ

զխաւարեալսն, և առաջնորդել մոլորելոյն․ նոյն ինքն նա ընտրեաց և զքեզ հովուապետ մեզ, և արժանաւոր պատուոյս այսմիկ և աթոռոյս․ որում նմանեալ բարի և քաջ հովուին, որ եդ զանձն իւր ՚ի վր՟ բանաւոր հօտին:

Յայնժամ պատասխանի ետ Թագաւորին և ասէ․ ո՛վ Թագաւոր՝ մի՛ անգիտասցի քո բարեպաշտութիւդ և զայս ևս, զի քահանայք և եպիսկոպոսունք՝ որք ունին զաստիճան սպասաւորութե՟ բանին, և զաթոռ քահանայապետութե՟ և վարդապետութեան, եթէ ոչ զգուշութե՟ հոգասցեն վ՟ն փրկութե՟ ժողովրդեանն՝ ը՟ ածային պատուիրանայն, դարձուցանել զթիւրեալսն յուղիղ ճանապարհն, կոչել զմեղաւորս յապաշխարութի՟․ խրատելով, աղաչելով, յանդիմանելով, սաստելով, և մխիթարելով, առանձինն, ամկաւուք, և ՚ի մէջ բազմութե՟․ և զայս ած՟ ը՟ երկար ժամանակս, զտի՟ և զգիշեր՝ բազում սիրով և արտասուօք․ այլ եթէ թողցեն զիւրաքանչիւրսն ը՟ կամս անձանց գնալ յիւրաքանչիւր ճանապարհս չարս: Այնպիսի առաջնորդքն՝ տայցեն համարս յաւուրն հատուցման ը՟ անձանց, և ը՟ ամենեցունց: և դատապարտեալք առաքին ՚ի խաւարն արտաքին, ուր լալ աչացն է, և կրճել ատամանցն․ ը՟ չար ծառային այնմիկ՝ որ թաղեաց և թաքոյց զարծաթ Տ՟ն իւրոյ յերկրի․ ՚ի մատթէոսի․ 25:

Արդ յայսմանէ գիտասջիք զչարի քահանայից, և ամենայն առաջնորդաց, և վարդապետաց․ զի թէպէտ և կարի սէ՟ ոք լինիցի, և պղերգանայցէ և անհոգ լինիցի՝ որոց

առաջ

առաջնորդէն. ընդ պոռնիկս և ընդ չարագործս մատնի յա՟խտենից տանջանացն ։ Իսկ եթէ կատարեսցէ զհրամայեալս նմա յա՟յ ( թէ և արդեօք ունիցի ինչ սխալանս, որ ոչ մինչև 'ի մահ իցէ. ) աճեցուցանելով զքանքարն, լո՟իցէ զբան Տ՟ն, զոր ձեր ամենեցուն լո՟եալ է յա՟ետարանն ։ Ե՟ ես՝ զի մի այսչափ պատժոյ պատժապարտ գտանիցիմ, աղաչեմ զամենեսեան՝ 'ի գործս բարիս յառաջել զձեզ, և 'ի բաց կալ 'ի չար գործոց, և պարապել միշտ 'ի ս՟բ եկեղեցիս՝ յաղօթս և 'ի պաղատանս ։ Ե՟ մի տրտմեցուցանէք զհոգին ս՟բ 'ի բարկու՟թի, կամ յոխակալու՟թի ձեր ։ այլ թէև բարկանայցէք, սակայն 'ի բաց բարձէք նախ քան զմտանել արեգականն. զի մի փոխանակ արևելից արևմուտք լինիցիք, և զտառապեալ անձն իմ 'ի տրտմու՟թիս կացուցանէք ։ Այլև՝ զայս գիտասջիք ամենեքեան, զի ոչ խնայեմ յոք՝ որ պէտս ունին խրատու. այլ սաստեմ, և աղաչեմ, և յանդիմանեմ, առանձինն լինելով, և առաջի բազմաց՝ թէ այն բարւոք իցէ. և զայս ա՟մ առնեմ վ՟ն օգտի ձեր ։ Քանզի երբեմն Դաւիթ թագաւորն և մարգարէն մեղաւ Տ՟ն, և առանձինն յանդիմանեցաւ 'ի Նաթանայ մարգարէէ ։ Ե՟ քանզի 'ի ձեռն առակացն Նաթանայ՝ յինքն եբեր զպատիժ պատուհասին՝ թագաւորն, և ապա խոստովանեցաւ՝ եթէ մեղայ Տ՟ն. և վաղվաղակի զթողու՟թի մեղացն ընկալաւ, և զգեցաւ զբրաբիոնն 'ի ձեռն խոստովանու՟թե ։ քանզի ասաց ցնա մարգարէն. թէ՝ Տ՟ր եթող զ՟յանցանս քո.

(2· Թագ· 12· 13: ) Արդ՝ նա եղիցի ձեզ օրինակ փրկութե, զի յորժամ առանձինն յանդիմանից վն մեղաց, մի ըմբոստացեալ ՝ի բաց վազեսջիք, այլ զերկիւղն այ ՝ի ձեզ բերելով՝ ապաշխարեցէք ոպ զԴաւիթ, դառնալով ՝ի ճանապարհաց ձերոց չարաց, զի և դուք նոյնպէս թողութե հասանիցիք:

Պատասխանի ետ Թագաւորն, և սինկղիտոսքն և ամեն· գիտեմք զամ զոր ինչ և ասացեր Հայր պատուական, արա զամ զոր ինչ և հաճոյ է քեզ ըստ պատուիրանացն Տն· վն զի՝ ոչ ոք է որ դիմակաց հրամանի քում, այլ հնազանդեալք բանից քոյ՝ յօժարութբ կատարեմք ոպ ՝ի Քէ ասացեալ: Յայնժամ բացեալ զբերանն իւր երանելին յովհաննէս· սկսաւ զօրինադրելն ՝ի Քէ, և ՝ի մէջ նր՝ երկրորդել նոցա: Նոյն ինքն տէր մեր յս քս ասաց յայտնապէս՝ ով Թագաւոր· եթէ որում բազում տուաւ առաւել ևս խնդրեսցի ՝ի նմանէ· ( մատ· 12· 1: ) Եւ դարձեալ· եթէ ծառայ՝ որ գիտէ զկամս Տն իւրոյ, և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նր, առցէ գան բազում· ( ղուկ· 12· 47 ) Քանզի՝ ոչ եթէ միայն քահանայք սպասաւորք են մեծային խորհրդոյն, այլև՝ զօրաւորք զօրութբ քնեն, զի այսոքիկ են՝ որ բազում աւանդեցաւ նոցա: Քահանայք՝ որք բազում հօտս ընկալան ՝ի հովուապետէն, և ոչ հոգայցեն վն նոցա կենդանութե և փրկութե, առաւել ևս պահանջին ՝ի նոցանէ: Իսկ որք գիտեն զկամս այ, և ոչ պատրաստեցին ըստ կամաց նր· նք են՝ որ գիտութբ

մեղան

մեղանչէն, որք և սաստիկ տանջանաց պատժապարտք գտանիցին։ Զի վ՟ն քահանայից, և առաջնորդաց՝ գրէ Պօղոս առ Տիմոթէոս, և առ Տիտոս։ Թէ պարտ է անարատ և իմաստուն լինել՝ իբր ա՟յ տնտես. ( I. Տիմ. 3. 2։ և Տիտ. I. 7։ ) Իսկ վ՟ն այլոց՝ առ եբրայեցիսն զէ կուցանէ. եթէ զբարիս գործել մի՝ ձանձրանայք. զի ը՟ այնպիսի պատարագս հաճի ա՟ծ. (Եբր. II. 2։) Եւ եթէ՝ հնազանդ լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կա- ցէք նոցա. զի նք՟ տքնին վ՟ն հոգւոց ձերոց. ո՟պ զի հա մարս տալոց են, զի խնդութբ՟ արասցեն զայն և մի՝ հա ռաչելով. ( Եբր. I3. I7։ ) Քանզի պարտ և արժան է ժողովրդեանն՝ որք ը՟ ձեռամբ եպիսկոպոսաց, և քա- հանայից են, պատուել զն՟ս. և նք՟ մի ծուլասցին հսկմամբ աղօթել վ՟ն նոցա, և խրատել՝ և ուսուցանել զն՟ս, ստանալ զհամբերութի. և առաքինութբ՟, և սրբութբ՟ ակնու- նել յուսոյ յարութե՟։ Եւ այս ա՟մ՝ զոր ասասցիս, ոչ եթէ ՚ի քահանայից միայն պահանջի. այլ և ՚ի թագաւորաց, և Յիշխանաց, և ՚ի Ռամկաց, և յիւրաքանչիւր յումեքէ ըստ իւրում կարի. ո՟պ և գրեալ է վ՟ն ամենեցուն հա- սարակաբար։ Եթէ վայ ձեզ որք կորուսեալ էք զհամ- բերութի։ զի՞նչ գործեսջիք յորժամ այց արասցէ ձեզ տր՟. (սիրաք. 2. I7։) Եւ առաքելական բանն առ նոյն հայի։ եթէ զխաղաղութե՟ զհետ երթայք և զսրբութե՟, առանց որոյ ոչ-ոք տեսցէ զտր՟. (Եբրայ. I2. I4։)

Իսկ

Իսկ՝ որ վ՟ա առաջնորդաց եկեղեցւոյ գրեալ է. Թէ սաստեա՛, յանդիմանեա՛, և մխիթարեա՛. (2. Տիմ. 4. 2։) և այս խնամակալութ՟ն սիրոյ է, զի յանդիմանել ասաց. և ոչ եթէ գանել, կամ հրապարակել որ է օտար իսկ 'ի սիրոյն։ Այլ թէ ծանի՛ր նմա, և ասա՛ թէ՝ գիտութ՟ի եղև առ իս վ՟ա քո՝ որ 'ի մեղս ես։ և ապա սաստեա՛. յ՟ս՝ բանադրեա՛. որպէս թէ ասիցէ ոք՝ արկ զբանս քո յականջս ն՟ր, զի ծանիցէ՝ թէ գիտակ ես ն՟ր յանցանացն։ Եւ՟ ապա զկնի ն՟ր՝ մխիթարեա՛. ո՟չ զի մի յուսահատեալ 'ի յանդիմանութ՟էն՝ զրկեսցի 'ի փրկութ՟է քաւութ՟ե։ Մխիթարեա՛. Այսինքն՝ լե՛ր ապաշխարութ՟ե ն՟ր կցորդ. ցո՛յց զշա՟ւիղ փրկութ՟ե. երաշխաւոր կաց. զի եթէ ստուգութ՟բ խոստովանեսցիս (ասա՛) և ապաշխարեսցես, և ոչ դարձցիս 'ի նոյն դարձեալ, ոչ մնասցէ առ քեզ հետք մեղացն։ Իսկ Թագաւորաց, և իշխանաց՝ հանդերձ այլ բարեգործութ՟բ՝ և արդարութ՟ի և ճշմարտութ՟ի պիտոյ է կատարել՝ Թա՛գաւոր։ Զոր և Տիտոս հռովմայեցւոց Թագաւորն ասէր եթէ այսօր թագաւորեցաք, յորժամ զբարիս գործեցաք. զի եթէ ոչ ո՟չ արժանի է թագաւորի՝ բարեգործեալ եաք. ոչ կարէաք ասել։

Եւ՟ մինչ դեռ նա զայս խօսէր. կամեցաւ՟ ա՟ծ յայտնել սքանչելօք զառաքինութ՟ի ս՟ր՟յն։ Զի ահա զայր մի բարձեալ ոմանց որ էր նեղեալ յայսոյ պղծոյ, և բերեալ եդին առաջի ն՟ր. և աղաչէին զի աղօթս արասցէ վ՟ա ն՟ր. ո՟չ զի բժշկեսցի. զի առաւել սաստիկ լլկէր զնա, Թի-

րե

բերով զդէմսն, և զլեզուն բնաւին արտաքոյ բերանոյն հա նեալ: Պատասխանի ետ յովհաննէս, և ասէ ցնա· հաւատա՞յք եթէ կարող է ած բժշկել զդա: Եւ նք ասեն· հաւատամք հա՛յր պատուական: Յայնժամ կնքեաց զնա՝ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սբյ, և ասէ· ըստ հաւատոյ ձերոց եղիցի: Եւ անդրէն զգետնեաց զնա դեւն, և վաղվաղակի ել 'ի նմանէ: Եւ կոչեցեալ յովհաննէս ըզ զգաստացեալն առ իւր՝ և ասէ· յայսմհետէ դադարեա՛ որդեակ 'ի գայթակղութենէ քոյ՝ զոր ունէիր առ ածային խորհուրդն· վս զի՝ այս անցք անցին ընդ քեզ յաղագս ծուլութե աղօթից՝ և յապաղման ածային խորհրդոյն, որով քո չհաղորդեալ սրբութե՝ ամսն եղեր չարութե: Այսուհետև կանխեա՛ 'ի սբ եկեղեցիս այ՝ աղօթիւք, ոպ զի 'ի ժամանակի հաղորդեսցիս հեզութբ՝ և միամտութեամբ սբ խորհրդոյն, և այնուհետև ոչ ես փորձիս 'ի չարէն: Զայս սքանչելիս տեսեալ Թագաւորն, սինկղիտոսքն· և կղերիկոսայն, և ամ ժողովրդոյն փառաւորեցին զած, որ առնէ զսքանչելիս միայն 'ի ձեռն սրբոյն իւրոյ, և օրհնեալք 'ի նմանէ գնացին (որ է բուն չարգի այլոց՝ տոյն Սքանչելի ոսկեբերանի:)

Իսկ երանելին՝ դարձեալ սկսաւ խրատել զամենեսեան, որ 'ի մեղսն հոլովեալք էին· զհեշտասէրսն աղաչէր 'ի բաց կալ, և փութալ 'ի նաւահանգիստն ապաշխարութե Յանդիմանէր և զագահսն, և ասէր· եթէ պարտ է 'ի բաց թօթափել և զօր արդարութեն է ստացել, թող թէ

ըղ

զպղծութի ամենաստացութեանն որ յանկրաւութենէ ։ Արգել առնէր բանիւ վարդապետութե, ոչ միայն լկտութիւն պոռնկութե, նա և անչափ հեշտութիւն, որ առ ամուսնութիւն է ։ Զի պատուական զայնժամ էին հարսանիքն, և մք անկողինքն ( ասէ ), յորժամ ճանաչիցեն ըզ սահման պատուէրանին առ որդեծնութիւն, և ազատ իմիաբանութե միմեանց՝ աղօթից պարապեսցեն ։ Խրատէր և վս ողորմութե ։ Պատուէր տայր մեծատանց՝ ստանալ զգութ, և զքաղցրութի, և զողորմութի ։ Եւ յիշել ըզ բանս տեառն. եթէ որովհետև արարէք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ արարէք. ( մատ. 25. 40 ։ ) Եւ մի ընդ հակառակս ելանել հրամանին. զշունս և զջորիս զարդարել՝ և յագեցուցանել, և զՔս առ դուռն տեսեալ՝ և անտես առնել. զի մի՝ զընդդէմն լուիցեն. եթէ որովհետև ոչ արարէք նոցա, և ոչ ինձ արարէք ։ Զի թէ ճշմարիտ է բանն քո. որպ և է իսկ. առնելն և չառնելն՝ նմա է և մի կողմն գովլի և պսակի, և միւսն մեղադրի և տանջի ։ Արդ զինչ պարտ է ասել յաղագս այնոցիկ, որք անարգեն, և գան հարկանեն, և հայհոյեն զաղքատս ։ քաջայայտ է՝ թէ զՔս անարգեն ։ Յայսմանէ բազումք զգաստացան յիւրաքանչիւր չար ճանապարհէ, և բազումք մեծատունք իբրև զմոմ կակղացեալք ՚ի խրատութե իւրեանց՝ բաշխեցին զինչ իւրեանց աղքատաց. մինչ զի՝ գրէ թէ բազում աղքատք հարստացան ընչիւք յառատութե մեծատանցն ։ ուստի և յայսմանէ բազումք ոչ եթէ այլ ինչ, քան թէ ողորմած

զնա

զնա ասելն, և անուանելն:

Խրատէր դարձեալ՝ ատել զփքացումն և զամբարտաւանութիւն. գովէր զխոնարհութիւն. յորդէր զչափաւոր և ըզ պարկեշտ կեանս. խափանէր և զայնոսիկ, որ վասն մեծամտութեան՝ բազում սպասուք և ծառայիւք յեկեղեցիս, և 'ի փողոցս, և 'ի բաղանիս երթային, Այլ՝ բաւական է ասէ, միով մանկամբ կամ երկուց, և այլ՝ վասն կարևոր պիտոյից: Ուսուցանէր սիրել զսրբութիւն մարմնոյ և հոգւոյ, զի այնու կարասցեն հաւասար հրեշտակաց լինել, և տեսցեն զԱստուած՝ որքան տանիցին: Այլև՝ բառնալ ըզ նախանձ, և զատելութիւն, զզրպարտութիւն, զշոգմոգութիւն քանզի ասէր այդ ամենայն գործ է սատանայի: Եւ վնկ բանս սարկու կոչեցաւ. քանզի նախանձեալ ընդ փառս մեր՝ չարախօսեաց զԱստուծոյ առ Ադամ, և զնոյն դարձեալ զՅոբայ առ Աստուած: Եւ վասն զրկողաց ասէր. եթէ հաւասար են սպանողաց: Աղաչէր սիրել զմիմեանս, և 'ի պատուի զմիմեամբք ելանել, և մի զնախագահութիւն սիրել. այլ ըզ վերջինն ունել զտեղի, 'ի ճաշս՝ և յընթրիս՝ և առ ամենայն իրս: Եւ 'ի վարդապետելն իւրում՝ յիշէր զվարս Ճգնաւորացն, և յորդորէր նմանիլ առաքինութեանց նոցա. մինչ զի՝ բազումք ստրջանային 'ի բանս նորա, և բազում արտասուս հեղուին յաչաց իւրեանց, և 'ի բաց հրաժարեին յաշխարհէս, և անկանէին 'ի բարւոք կափուլն: Ուսուցանէր և վասն օտարասիրութեան, մանաւանդ ճանապարհորդաց և ճգնաւորացն հոգ տանել: Բերելով օրինակ՝ զօտարասէրն

զա

զԱբրահամ, և զՂովտ, որք զԱստուած ընկալան։ յառաջ ածե-լով ես զառաքելական բանն՝ որ առ Հեբրայեցիսն. եթէ զօտարասիրութիւն մի մոռանայք։ և զՏէրունական ձայնն.

եթէ օտար էի և ժողովեցիք զիս։

Դարձեալ ուսուցանէր նոցա՝ փոխանակ անպիտան նու-ագարանացն, Ողբերգական ձայնիւ երգել զաստուածա-բանն, և զայլ երգս հոգևորս, և զնոյնս յամենայն տեղիս. ՚ի ՚ի նաւի, ՚ի Ճանապարհի, ՚ի գուեհս, և ՚ի տունս։ Նաև այլ բազում բանս մխիթարիչս, և խրատականս ամենեցուն առաջի արկանէր։ Եւ զայսպիսի վարդապետութիւն՝ ոչ յեկեղեցւոջն միայն առնէր. այլ և ՚ի տանն նստելով, և յեպիսկոպոսարանին. այրաժամ ուսուցանելով՝ ՚ի ժամու և ՚ի տարաժամու, մշտնջենաբուղխ շնորհօք հոգւոյն, որ եղեալն էր ՚ի նմա։ Եւ զայս՝ զոր ասացի, ոչ եթէ ՚ի քաղաքին միայն առնէր, այլ ըստ իւրաքանչիւր գա-ւառաց ՚ի ձեռն թղթոց, և արանց սրբոց Ճգնաւորաց՝ զորս ընտրեալ առաքէր։ Քանզի՝ զամենայն գաւառս Թրակացւոց, որ վեցերրորդ իշխանութիւն էր, և զամենայն Ասիայ՝ որ մետասան երորդ իշխանութիւն էր, և զամենայն Պոնտոս՝ որ և նա մետասան իշխանութիւն էր, վարդապետեցան շնորհատուր օրինօք նորա։

Լուաւ երբեմն վասն փիւնիկեցւոյն՝ եթէ դեռևս դի-ւական զոհիւքն խառնակեալ են։ Եւ ընտրեալ արս առաքինիս՝ վառեալս աստուածային նախանձու, առաքեաց զնոսա հանդերձ թագաւորական հրամանօք՝ կործանել զբա-գինսն, որ անդ ղօղեալն էր։ Սոյն՝ և ուր արխոսի չար

հեր

հերձուածն լինէր՝ յազգս, կամ 'ի լեզուս՝ որպէս զն͞ս ուռկանաւ բանիւն 'ի յալէկոծութէ հերձուածոյն 'ի յուղղափառ հաւատոյս նաւահանգիստն։ Քանզի ընտրեաց արս զօրացեալս հոգւով սրբով, որք էին նովին լեզուովն, և այնու դարձուցանէր զն͞ս 'ի ճշմարտութիւն։ Ղուկաս և վ͞ս սկիւթացւոցն, եթէ ծարաւի էին փրկութե͞, և կարօտին ջրոյն կենաց. ֆ՝ վարդապետական բանին։ Ընտրեաց արս իմաստունս՝ նախանձաւորս առաքելական վարուցն, և առաքեաց վերակացուս և ուսուցիչս նոցա։ Եւ գրեաց հրովարտակս 'ի Ղևոնտէս եպիսկոպոսն անկիւրայ, որով սկիւթացւոցն յայտ եղև փրկութի͞. զի և նա առաքեսցէ արս յաջողակս առաջնորդ նոցա։ Եւ լու եղև նմա զկողմանցն արևելից, եթէ ախտացեալ են 'ի յաղանդոյն մարկիոնացւոց։ Եւ վաղվաղակի առաքեաց անդ արս առ եպիսկոպոսն այնմ կողմանցն, ունելով ընդ ինքեանս զթագաւորական հրամանն, որք 'ի բաց հալածեցին զաղանդն զայն։ Եւ այսպէս բերէր յանձին զհոգս ամենայն եկեղեցեաց, Քի͞. ը͞ս նմանութե͞ առաքելական

առաքինաւորութեան։

Յետ այսորիկ քննեաց զանդեայն զմատակարարսն եկեղեցւոյն, և եգիտ անդ ծախս անօգուտս, որ ոչ օգտէին եկեղեցւոյն, և հրամայեաց խափանել՝ որ յայնմանէ զօրութիւք էին։ Եկն 'ի տունն գանձուցն պիտոյից եկեղեցւոյն, և եգիտ անդ առատագոյնս զգուզնաքեայն. և հրամայեաց տալ զայն 'ի հիւանդանոցսն։ Իսկ որժամ պետ-

քըն

քըն յաւելաւ, հրամայեաց շինել հիւանդանոցս բազումս, և կացոյց 'ի վերայ նոցա զերկուս ոմանց յերիցանցն, երկիւղածս և հաւատարիմս՝ առ 'ի սպասաւորութիւն և 'ի դարմանս հիւանդաց, որք բնակէին անդ ։ Յետ այսորիկ կոչեցեալ առ ինքն զդասս այրեացն, և ըստգտանէր զայնոսիկ՝ որք ոչ ուղիղ գնային, և եգիտ անդ զոմանս մարմնասէրս ։ Խրատէր և ուսուցանէր՝ զնոսա ստանալ անձանց պահս և պարկեշտ վարս, զի 'ի ձեռն այնր հալածեսցեն զախտ մարմնոյն ։ և հրամայէր որոշել զինքեանս 'ի բաղանեաց, և 'ի փափուկ զգեստուց, և մի՝ վաղվաղակի մտել առ երկրորդ ամուսնութիւն, զի մի՝ թշնամանեսցի օրէնքն այ՟ ։ Զկնի այսր ամ՟ի· աղաչէր զժողովուրդն համբերել յարաժամ և 'ի գիշերական պաշտամունսն, և զկանայս նոցա խրատէր՝ կալ մնալ 'ի տունս 'ի յարկս իւրեանց, և անդ կատարել զաղօթս իւրեանց։ Եւ վն՟ ոչ պարապելոյ արանցն 'ի տունջեանն, կարգէր զհսկումն գիշերոյ. և այս ամ՟ տրտմեցուցանէր զծոյլսն առ 'ի սպասաւորութիւն հսկմանն. վն՟ զի էին 'ի կղերիկոսացն, և այլք 'ի ժողովրդոցն՝ որք հնացեալ սովորութբ՟՝ ունէին ըզպղերգութիւն ։ Եւ նա զայս այսպէս ուղղէր, և զծուլութիւնն 'ի բաց վարէր. վնկ՟ դժկամակ լինէին ։

Յետ այսորիկ մերձեցուցանէր զյանդիմանութ՟ սուրբ և առ մեծատունս, 'ի բաց հատանելով զագահութիւն յանձանց նոցա, և ուսուցանէր նոցա ։ 'ի չափու ունել զանձինս իբրև զայլ մարդիկս, և հաւանել առաքելական բանին,

զոր գրեաց առ Տիմոթէոս ( I. Տիմ. 6. 7։ ) Եթէ՝ ոչ
ինչ բերաք յաշխարհս, և ոչ ինչ տանել կարօղեմք, այլ ունիմք
կերակուր և հանդերձ, և այնու շատասցուք, Եւ դար-
ձեալ պատուիրէր միանգամ ճաշակել յաւուրն կերակուր և
յաւէտ զայսպիսս ՚ի բաց փախուցանել ուսուցանէր. և ըզ-
քահանայսն և զայլսն յեկեղեցականացն՝ որք կերակրէին
՚ի ժողովրդականացն, ոչ անպատշաճ վարկանէր, ըստ ասա-
ցելումն յաստուածեղէն գիրս. եթէ արժան է մշակին վարձու իւ-
րոյ։ Եւ եթէ՝ ով ոք արածիցէ խաշն, և ՚ի կաթանէ խա-
շինն ոչ ուտիցէ, և կամ տնկիցէ այգի, և ՚ի պտղոյ նորա
ոչ ճաշակիցէ ( I. Կորնթացւոց. 9. 7։) Եւ ինքն ոչ կա-
մէր ուրեք ճաշակից լինել, և ոչ՝ եթէ կոչէին ոմանք ՚ի
ճաշ կամ յընթրիս՝ երթայր առ նոսա։ Ոչ թէ՝ զի վասն բարձ-
րամտութեան, և կամ քան զայլ մարդիկ զինքն առաւել վարկա-
նելոյ զայս առնէր, այլ վասն բազում իրիք պատճառանաց։
Առաջին՝ զի գինի ոչ ըմպէր, վասն ջերմութեան գլը-
խոյն։ Եւ երկրորդ՝ զի տկարութիւն ստամոքսի նորա ոչ
կարէր ընդունել զբազում խորտիկսն, որ կազմէին նմա
՚ի կերակուրս. քանզի էր կերակուր նորա հաց և ջուր։ Եւ
երրորդ՝ ոչ ախորժելի թուէր նմա հարկիւ յումեքէ, և
ծանրացուցանել զինքն կերակրովք և անկարօղս առնել
առ աստուածային գրոց տեսութիւն։ Եւ դարձեալ հանդերձ
ասացելովք՝ և այս ևս Չորրորդ պատճառ. զի ոչ կարէր
լռել ղ դատարկաբանութիւնս, և զայլս նմանս սմին՝ որ ՚ի
սեղանսն լինէին։ Եւ զի ոչ էր զգուշալի այնմ մեծագոյն
պա-

պատուոյն արժանացելոց, որ ընտրեցաւ յԱյ՟ տընտես Հա-ւատարիմ և իմաստուն՝ տալ, ծառայիցն Այ՟ 'ի ժամու ըզ կերակուր բանին որ մնայ 'ի կեանսն յաւիտենից, յասմանէ պարապումն տալ անձին, և փութալ 'ի պէտս մարդկան սե-ղանոյ : քանզի ոչ էր պատշաճ նմա՝ որ ածային բանին սպա-սաւորն էր · որ պատմօղն էր յայտնապէս ծածկութից խմաս-տից գրոց : Որ այրեաց խնամածուն էր, և որբոց մխի-թարիչն · հիւանդաց տեսուչն · աշխատելոց օգնականն · զրկելոց իրաւարարն · մեղաւորաց քաւարանն · մոլորելոց առաջնորդն · վշտացելոց փրկիչն · կարօտելոց դարմանիչն, որք 'ի բանդի էին տեսանօղն · լուսաւորիչն ամ՟ տիեզե-րաց : Արդ՝ որ այսպէս կատարեալն յածայինս, և բերան-այն՝ որ միշտ սովորեալն էր լսել և խօսել զԱյն, և աղօ-թիւք խօսակցիլ ը՟ Այ : զի որդ ներէր լսել զբազմահոյլ բանս սեղանոյ, և կամ տեսանել զայնքան աղմուկս : Վասն այնորիկ՝ տաղկացաւ առ այսպիսի իրս, և ասէր՝ եթէ հեռի լինելով իմ յայսքան չարաբանութեց, յայնժամ ու-րախանամ · և զգրեալն 'ի գործն առաքելոցն նոյնագէր ( 6 · 2 : ) Ասէ արք եղբարք · ոչ է մեզ պարտ թողուլ զբանն Այ, և սպասաւորել սեղանոյ : Եւ զայս ամ՟ առնէր վս՟ առաւել ճգնութե՟ իւրոյ : Եւ զգանձս եկեղեցւոյն, որ առաւել էր քան զպէտսն՝ տայր զայն 'ի ձեռս աղ-քատաց · քանզի յոյժ անարծաթասէր էր, և ողջախոյ ա-ամենեւին՝ և խոնարհ : Որ այս ամ՟ մանաւանդ պսակ է քահանայից · ու՟, խրատել՝ ուսուցանել՝ հաւանեցուցա-նել

նել՝ հայիլ յորբս եւ յայրիս, ողորմիլ աղքատաց եւ տկարաց. եւ զայս ոչ անձնէ իմաստնանալ, այլ հայիլ յաստուածային օրէնսն. եւ զհրամանս պատուիրանին բարեզարդութեան, եւ ըստ օրինի կարգել։

Արդ՝ յորժամ տեսանէին զայս ամենայն ուղղութիւն առ երանելւոյն. բազումք 'ի կղերիկոսացն շարժեալք 'ի բանսարկուէն՝ դժուարէին, եւ ըմբոստանային 'ի նմանէ, եւ ատելի երեւէր յաչս նոցա. եւ խոտորէին 'ի նմանէ, վասն զի յանդիմանեալք լինէին 'ի նմանէ գործովք իւրեանց։ Սերապիոն ոմն անուն՝ սարկաւագ կարգեալ 'ի նմանէ, 'ի յաւուր միում՝ յորժամ մերձ էին ամենայն կղերիկոսքն, ձայնիւ մեծաւ աղաղակեաց եւ ասէ. Ո՛վ եպիսկոպոս, ոչ երբէք կարես զսոսա ժուժկալս առնել. եթէ ոչ զամենեսին միով գաւազանաւ հալածեսցես։ Զայս ասացեալ նորա հակառակ մեծի եպիսկոպոսին, զբազումս յատելութիւն զարթուցանէր։ Յետ այս բանից ոչ բազում՝ աւուրք անցին, եւ երանելին յովհաննէս զբազումս 'ի ժառանգաւորացն՝ արտաքսեաց յեկեղեցւոյն, վասն այլ եւ այլ պատճառանաց։ Նա՝ սերապիոնի բարձրութեան, եւ ամբարհաւաճութեան ոչ ոք կարէր համբերել. զի բազում համարձակութեամբ կեայր առ եպիսկոպոսն, զի զամենեսեան 'ի ներքոյ իւր ցանկայր տեսանել։

Յաւուր միում սեւերիանոս ոմն անուն եպիսկոպոս՝ եկն յեկեղեցին։ Իսկ սերապիոն սարկաւագն՝ ոչ ընկալաւ զնա, եւ պատիւ ոչ արար որպէս արժան է եպիսկոպոսի։ Եւ

ոչ

ոչ յարեաւ՛ ի՛ առաջ ողջոյն տալ նմա, այլ նստելով կատարեաց զողջոյնն. և այսու ցուցանէր զի սակաւ ինչ հոգայր զգալուստ նր: Եւ՛ սևերիանոս՝ ոչ ներեաց արհամարհանացն սերապիոնի, այլ մեծաձայն ՚ի լսելիս այնոցիկ՝ որք մերձ էին. եթէ սերապիոն քրիստոնեայ մեռանի՝ Քս ոչ է մարդացեալ: Զայս այսպէս առնելով սերապիոն. յայտ յանդիման զ սևերիանոս թշնամի երանելւոյն յովհաննու կացուցանէր, որ յառաջ սիրելիք էին: Եւ՛ զսա համառ բանին զոր ասաց սևերիանոս, թաքոյց սերապիոն: Քանզի՝ նա զայս միայն ասաց, եթէ Սերապիոնն քրիստոնեայ մեռանի՝ Քրիստոս չէ մարդացեալ: Իսկ նա երթեալ առ Հայրապետն յովհաննէս՝ ասէր. թէ սևերիանոս ասաց, եթէ Քս չէ մարդացեալ. և զժողովուրդն որ անդն կային, վկայ կացուցանէր յայտ յանդիման հայրապետին՝ եթէ այսպէս ասաց սևերիանոս: Իսկ երանելի հայրապետն առանց յապաղելոյ՝ վն այսր մի պատճառանացս ՚ի բաց հանէր զսևերիանոս ՚ի քաղաքէն, և ելոյծ ՚ի նմանէ զսէրն՝ իբր զի բան հայհոյութե ասաց:

Զայս իմացեալ թագուհին և Դոքսիա, առաքեաց զորդին իւր զթէոդոսս առ երանելին յովհաննէս. որ յայն ժամ տղայ գոլով՝ յետոյ թագաւորեաց զկնի արկադէոսի հօր իւրոյ, զոր բերեալ եդին ՚ի վր ծնգաց սբյ հայրապետին՝ յեկեղեցւոջն, որ կոչի յանուն սրբոց առաքելոյն: Եւ՛ ուխտս դնէին, և միջնորդ և բարեխօս առնելով սբ զառաքեալսն, հազիւ՛ դարձուցին զսէրն սբյ եպիսկո-

պո

պողին յովհաննու առ սեւերիանոս, Թէպէտ և ոչ պա-
հեաց զընութիւն սիրոյն սեւերիանոս, առ յովհաննէս, մա
նաւանդ զի յերաւէի իսկ տրտմեցաւ յովհաննէս, սեւերիա
նոսի, Թէպէտ և նա այլ ինչ ասաց, և սա այլ ինչ լուաւ :
Քանզի յոյժ ցանկացօղ և նախանձայոյզ էր Ճշմարիտ
հաւատոյն, կամեցաւ ցուցանել զՃշմարտութիւն իւր առ
Քս, և առնէր՝ զոր յԱծեղէն գիրս գրեալ է : Նախան
ձելով նախանձեցայ զնախանձ Տն. ( 3. Թագ. 10. 9 :)
Եւ. դարձեալ ասէ. ոչ զատելեա քո Տր ատեցի. այլ՝ի
վր Թշնամեաց քոց մաշեցայ : Ատելութբ կատարեալ
ատեցի զնս, և եղեն ինձ Թշնամիք. ( սաղմ. 112. 8 : )
Արդ՝ այսոքիկ էն պատՃառք ատելուե սեւերիանոսի առ
եպիսկոպոսապետն յովհաննէս, զոր վերոգրեցաք : Իսկ
ինքն երանելին՝ այնպէս էր առաՃելեալ Ձգնութբ, մին-
չև ընդ է ամ հո՝ և է քաղաքս՝ և է կղզիս ել բարբառ
նր, և ամենեքեան գային մեծաւ ցանկութբ տեսանել զնա, և
լսել զիմաստութիւն վարդապետուե նր : Բազում անգամ
գրեաց 'ի կոստանդնուպօլսէ առ երանելին Ենովկենդիոս
հայրապետն հռովմայ, և ընկալեալ Թուղթ 'ինմանէ՝ առ
'ի յընդունիլ, և գովել զիմաստուի վարդապետութե նր :
Եւ ինքն իմաստունն յովհաննէս, այնպէս յոյժ կարի սի-
րէր զԹուղթսն երանելույն Պօղոսի առաքելոյն, մինչ զի՝
ոչ ևս պարապէր ունելով 'ի ձեռս իւր, և հանապազ ըն
Թեռնոյր զգիրս նր, և սքանչանայր է ածեղէն իմաստս, որ
անդ ամբարեալ էր : Եւ խորհելով է միտս իւր՝ ասէր այս-

պէս

պէս․ եթէ ոչ էր երանելւոյս այսորիկ ստացեալ միտս սրբս, և հոգի անախտ, և մաքրեալ զմարմին իւր յամ՛ աշխարհական ցանկութեց, ոչ այնքան զեղոյր 'ի նա անճառելի շնորհք հոգւոյն սբյ։ Եւ՛ միշտ 'ի յիշատակ ածէր առ նա զ բան փրկչին՝ որ ասէր․ երանի այնոցիկ՝ որք սրբ են սրտիւք․ զի նոքա զա՛ծ տեսցեն․ (մատ․ 5․ 8։) Ունէր և առ ինքն յօրինեալ զնկարագիր պատկեր կերպարանաց սբյ առաքելոյն․ և յորժամ սուղ ինչ հանգչէր վա տկարութեան մարմնոյն, զի առաւել 'ի վեր քան ըզ բնութին հսկէր․ եւ յորժամ ընթեռնոյր զթուղթս նր, նկարէր զպատկերն նրա կենդանի․ և այսպէս հայելով 'ի նա՝ երանէր զնա․ և հանապազ զամ զմիտս և զխորհուրդս իւր առ նա ունելով, այնպէս համարէր, թէ կենդանւոյն տեսանէ զնա, և խօսի ընդ նմա։ Եւ փափաքէր բորբոքմամբ հոգւոյն, զի թարգմանեսցէ զթուղթս նր, զի պարտ է (ասէ) ամենեցուն յայտնի լինել առաքինութի առն։ Զի ոչ վայելուչ համարէր յայնքան մեծապէս պարգևացն դատարկանալ եկեղեցւոյն քի․ այլ պայծառագոյն դնել զ ջահ իմաստից ծածկելոց յայտ յանդիման․ որպ զի՝ ամենեքեան զ լոյսն տեսցեն, զոր և արարն իսկ։ Քանզի յորժամ զայս խորհրդածէր, յերեկորեայ երթեալ լինէր առանձինն 'ի սենեկի իւրում, և նստեալ անդ լուցանէր լապտերս պայծառս, և առնոյր 'ի ձեռս իւր ըզ մագաղաթս, և սկիզբն արարեալ գրէր 'ի նմա զճառս առաքելականս, և ըզ թարգմանութիս նր։ Եւ ոչ ոք համար-

ձա

ձակեր մնանել առ նա յայնմ ժամու, յորժամ պարապէր նա 'ի թարգմանութեան, այլ և ոչ արտաքոյ դրանն կալ և խօսել, զի մի՛ ցրուեսցի արագացեալ մտացն նորա, յիմաստից մեկնութեան Աստուածեղէն բանիցն ։ Եւ այսպիսի ձեռնարկութեամբ թարգմանեաց զբազումս 'ի թղթոց երանելւոյն պօղոսի ։

Դէպ եղև նմա յաւուր միում՝ զի մարդկեղէն իմն կարծիս ձանձրութեան արկեալ 'ի միտսն, ասէր ցանձն իւր. ո՞վ գիտէ՝ եթէ հաճոյ են Աստուծոյ այսպիսի աշխատութիւնք իմ ։ կամ թէ՝ որպէս պարտ է՝ այնպէս թարգմանի՞մ. կամ, հասու եղէ՞ այնքան իմաստից առաքելական մտացս ։ Եւ խնդրէր յԱստուծոյ յայտնել նմա զհաւատարմութիւն իւրն. որովք հաստատիցին խորհուրդք մտաց նորա. վասն այսորիկ և ոչ հեռագոյնս, այլ 'ի մօտոյ առ զվախճան իւրոյն ։ Քանզի՝ այր ոմն 'ի մեծ իշխանացն քաղաքին, յոմանց՝ որք նախանձաբեկք էին նորա, չարախօսեցաւ առաջի թագաւորին. և թագաւորն բարկացեալ 'ի վերայ նորա, 'ի բաց էառ զիշխանութիւն 'ի նմանէ. և մեծաւ անարգանօք արտաքսեաց 'ի պալատէն ։ Իսկ առն 'ի բազում տրտմութիւն անկեալ. քանզի ոչ գտանէր զոք հնարել հաշտեցուցանել ընդ նմա զթագաւորն ։ Եւ ապա եկեալ 'ի միտս իւր վասն յովհաննու, թէ որպէս համարձակութիւն ունի առ թագաւորն, և ոչ ինչ են անլսելի բանք նորա առաջի նորա ։ Եւ կոչեցեալ զոմն յեկեղեցականացն, որ մերձաւոր էր սմին, պատմեաց նմա զաղէտս տարակուսանացն իւրոց ։

Եւ

Եւ աղաչէր զնա՝ ծանուցանել առ Եպիսկոպոսապետն, որպ̅ զի գթասցի 'ի նա, և հրամայեսցէ գալ առ ինքն, և անձամբ պատմել զ չարիսն որ հասին 'ի վերայ նորա։ Եւ դարձեալ պաղատէր այրն․ զի 'ի գիշերի հրաման տացէ գալ, և մի 'ի տուընջեան։ Քանզի երկնչէր թէ՝ գուցէ տեսցէ ոք զնա 'ի թշնամեայն, թէ աղաչանց Վան երթայ առ հայրապետն պատգամաւորել 'ի թագաւորն, և վաղվաղակի կալցեն զնա և ածցեն առաջի ատենին։ Եւ եկեալ՝ որ առաքեցաւն յառնէն առ յովհաննէս, պատմեաց զա̅մ աղաչանս նր̅ և նր̅ խոնարհեալ յաղաչանս առնն քանզի միշտ պատրաստէր կարկառել զձեռս իւր առ 'ի յօգնութ̅ի նեղելոց։ Եւ առժամայն կոչեաց երանելին զոմն յաշակերտաց իւրոց, որ էր մերձաւոր ազգնութեան նր̅ որում անունն էր պրոկղոս, և հրամայեաց նմա վա̅ առնն այնորիկ, զի յորժամ գայցէ 'ի գիշերի, ազդ արասցէ նմա։ Եւ ինքն յովհաննէս 'ի բաց դնէր զմարդկեղէն կարծիս, և դարձեալ շարժէր 'ի հոգւոյն սէր, և սկիզբն առնէր թարգմանութեան առաքելական իմաստիցն։ Իսկ այրն այն՝ եկն 'ի գիշերի՝ ը̅ս հրամանի հայրապետին, որպ̅ զի խօսեսցի ը̅դ նմա։ Ցարեաւ պրոկղոս, և եկն առ դուռն սենեկին, և 'ի բաց առեալ զծածկոյթ պատուհանին, և խոնարհեալ 'ի ներքս, ետես զ յովհաննէս նստեալ 'ի վե̅ աթոռոյ զի գրէր զմեկնութ̅իս թղթոյն առաքելոյն պօղոսի։ Ետես և զերանելին Պօղոս՝ զի կայր յետոյ թիկանց նր̅, և խոնարհեալ առ գլուխն յովհաննու, և մեր-

ձե

Ձեւացեալ զբերանն առ աջոյ ունկն, խօսէր ընդ նմա : Եւ էր նշան կերպարանացն այսպէս· այր չափահասակ, հերն գանգուր, մօրուօք կատարեալ լայնաշոյն, մեծակն՝ յօնակից, ունչքն երկայնաձոյն, ամենեւին ըստ եղխէական կերպարանացն : Եւ ունկնդիր էր Պրոկղէոս, զի թերեւս իմասցի՝ եթէ զինչ խօսի ընդ նմա, եւ ոչ լուաւ ինչ. եւ 'ի բաց ելեալ 'ի դրանէն՝ ասէ ցայրն· համբերեա՛ աստ սակաւիկ մի, զի այլ ոմն եկն աստ նախքան զքեզ, եւ խօսի ընդ նմա եւ ոչ կարեմ մուծանել զքեզ առ նա մինչեւ ելցէ այրն այն : գուցէ զի եւ ոչ նա կամի զի գիտասցէ ոք, որպէս զի եւ ոչ դու կամիս զի տեսանիցիս յումեքէ : Եւ պրոկղիոս էր 'ի զարմացման, եւ տարակուսէր վասն իրայն, եթէ զի արդ կարաց մտանել նա առ նա՝ առանց իմոյ գիտութեան· զի ոչ ոք կարէր մտանել առ յովհաննէս՝ յորժամ լինէր առ անձինն 'ի սենեկին, եթէ ոչ արդ լինէր նմա 'ի պրոկղոսէ : Եւ դադարեալ ընդ այրն այն բազում՝ ժամս, դարձեալ աղաչէր զպրոկղիոս, զի յարուցեալ արդ ասասցէ հայրապետին : Նա պատասխանի ետ եւ ասէ ցնա· ահաւասիկ քանի ժամք են, եւ ոչ ել արտաքս այրն այն՝ որ խօսի ընդ նմա : Եւ ես ոչ կարեմ առնել ինչ՝ եթէ ոչ նախ ելանիցէ· եւ եթէ ոչ հաւատաս, եկ մերձեցիր ընդ դուռն սենեկին, եւ ես դիտեցից ընդ ծերպս պատուհանին՝ թերեւս կատարեցին զխօսս, եւ այժմ հանգիցեն· եւ երթեալ տեսանէր զնա որպէս յառաջագոյնն : Եւ քանզի ստիպէր զնա այրն, եւ նա երիցս եւ չորիցս եւ բազում անգամ երթեալ տեսանէր ընդ ծերպս

պա

պատուհանին՝ ըստ առաջին օրինակին, զի՛ խոնարհեցու-ցեալ նոյն այր զգլուխն՝ խօսէր յաջ ունկն երանելոյն, և նա անխափան գրէր, ոչ յոք նկատեալ զաչսն ամենևին, և կամ պարապեցուցել զձեռսն : Եւ՛ դարձաւ պրոկղիոս, և ասէ ցայրն. Ճշմարիտ ասեմ եղբայր. զի ոչ գիտեմ թէ զինչ ասացից վասն այսց պատճառանացս, որ հակառակ ՚քեզ հանդիպեցաւ՛ . կարծեմ թէ ոչ կամի աստուած զի դարձցիս դու անդրէն յիշխանութի քո : Զի ահաւասիկ բազում անգամ երթեալ եմ, և ոչ գտի զնա պարապ յառ-նէն, որ խօսի յունկն նորա :

Պատասխանի ետ այրն և ասէ ցպրոկղիոս. պարտէր քեզ ով հայր զի ոչ էիր ածեալ զայլ ոք առ հայրապետն նախ քան զիս, գիտելով քեզ զբազում թախծութիս իմ, որ մահու ակն ունիմ յամ ժամ, և եթէ ոչ ա՟ծ 'ի ձեռն նր՟ կեցուցանէ զիս՝ կորեայց աւասիկ : Պատասխանի ետ պրոկղիոս և ասէ ցնա. հաւատա ինձ եղբայր, զի ոչ եմ ես ածեալ զնա առ հայրապետն, և ոչ ծանեայ եթէ զի արդ-եմուտ առ նա, նաև ոչ այլ մուտ կայ՝ զի մտանիցէ ոք 'ի սենեակն բաց յայսմանէ. սակայն դու ներեա թերևս ելանիցէ այրն, և ես վաղվաղակի մուծից զքեզ առ նա : Զայս նոցա խօսելով ընդ միմեանս, վաղվաղակի հարին զձայն նշանակի ձայնի ազդմանն ; որ զարթուցանէր զամենեսեան յերգս օրհնութե առաւօտին, առ 'ի ժողո-վել միաբան յեկեղեցին : Յայնժամ ասէ պրոկղիոս ցայրն, արի եղբայր երթ 'ի խաղաղութի, քանզի այսուհետև

ոչ

ոչ խօսի ընդ ումեք մինչև կատարէ զպաշտօն գիշերոյն։ Այլ երթ մնա դու զվաղուցեան տեւեն ուղջույն՝ մինչև 'ի մերձենալ միւս գիշերոյն, և ապա եկեսցես այսր. և մեք ազդ արասցուք նմա, և դու մտցես առ նա նախ քան զմեզ մարդ։ Եւ յարեաւ գնաց այրն մեծաւ տրտմութ՛բ, և բազում արտասուօք։ Եւ երանելին յովհաննես ոչ ինչ ծանեաւ յայսմանէ, այլ և ոչ Պրոկղոս իմացաւ ինչ, և կամ եհարց՝ եթէ ով էր որ խօսէր ընդ նմա։

Ի յերկրորդումն գիշերին՝ դարձեալ եկն այրն յեպիսկոպոսարանն, և պրոկղոս յարուցեալ արար ըստ առաջին օրինակին. և ետես զնոյն տեսիլն նովին կերպարանօք՝ զառաքեալն, զի խօսէր ընդ երանելւոյն. և այսպէս աշխատեալ զամ գիշերն, ոչ համարձակեցաւ ազդ առնել եպիսկոպոսին։ Իսկ յորժամ նշանակեցին զձայն ազդմանն 'ի մուտս եկեղեցւոյն առ 'ի կատարել զպաշտօնն գիշերոյն, յարեաւ այրն կոծելով, և տրտմութեամբ գնաց 'ի յարկս իւր։ Եւ պրոկղիոսի բազում զարմացման եղեալ, սքանչանայր ընդ իւրն, այլ ոչ ումեք յայտնեաց, և կամ բարկացաւ ինչ, թէ ով է որ առանց նորա ազդ առնելոյ մտանէ առ հայրապետն 'ի սենեակ անդր. այլ անձին իւրում համարէր զպարտութիւն, որպէս զի ծուլացաւ 'ի պահպանութեան դրան սենեկին։ Եւ վասն այնորիկ եղև այն, զի ոչ կարէր իմանալ դեռևս՝ թէ յանմարմնոց իցէ կերպարանն, որ խօսի յունկն նորա։ Եւ եդ սահման անձին իւրում, և ոչ ուտէր և ոչ ըմպէր, և ոչ ննջէր, և ոչ երբէք մեկնէր 'ի դը-

րա

րանէ անտի. զի մի՛ ոք մտցէ առ նա, մինչև ածցէ 'ի սենեակ անդր առ երանելին՝ զայրն պարտաւորեալ, և կամ գիտասցէ՝ թէ ո՞վ է՝ որ մուծանէ զայն այր խօսել ընդ նմա։ Եւ զայս արար զերկուս Գիշերս, մինչ դարանակալ կալով առ դրանն, և ոչ երբեք մեկնէր 'ի դրանէ անտի, և ոչ զ չափ քթթելական միոյ։ Եւ այրն պարտաւորեալ ըստ սովորութեան՝ եկն անդրէն 'ի նոյն տեղի. և պրոկղիոս ասէ ցայրն, Ճշմարտիւ տեսեմ եղբայր իմ. զի վասն քո զայս երկուս գիշերս ոչ կացեալ եմ 'ի բաց 'ի դրանէ աստի. արդ այսուհետև ասա արարից նմա վասն քո։ Եւ յարուցեալ մերձեցաւ 'ի մուտս դրանն, և հայեցեալ տեսանէր՝ որպէս յառաջնումն, և յերկրորդ գիշերին. և ապա իմացաւ եթէ յով է առաքեալ այրն՝ որ խօսէր ընդ յովհաննու. զի ոչ թէ դրան և մտից կարօտանայ, այլ աներևութաբար մտանէ առ նա։ Բայց սակայն ոչ համարձակեցաւ խօսել ընդ նմա, և ծանուցանել զոր ետես, և կամ վասն առնն թախանձանաց. այլ ասէ ցայրն, եղբայր՝ երթ խաղաղութեամբ 'ի տուն քո, և աղաչեա՛ զԱստուած աղօթիւք նորա օգնել քեզ. վասն զի՛ որ խօսի ընդ եպիսկոպոսապետին, անմարմնական զօրութիւն է, և ես ոչ կարեմ մտանել առ նա։ Եւ յարուցեալ այրն՝ գնաց դառնապէս լալով իբրև յուսահատեալ յիւրմէ փրկութենէն։

Իսկ 'ի լուսանալ առաւօտին, յիշեալ սուրբ Հայրապետն յովհաննէս վասն առնն այնորիկ, և կոչեցեալ զպրոկղոս ասէ ցնա. ո՞չ եկն աստ այրն այն, զոր պատուիրեցի քեզ ածել առ մեզ։ Նա պատասխանի ետ և ասէ ցնա. այո՛ Հայր

սուրբ․ այս երիս գիշեր է՝ զի գայ տ։ առաջի աստ․ Եւ նա ասէ՝ ապա ընդ է՞ր ոչ ազդ արարեր ինձ։ Ասէ պրոկղիոս, ո՞վ տր՟ իմ, այլ ոմն էր առանձինն խօսելով ընդ քեզ, և վս՟ այնորիկ ոչ համարձակեցայ գալ առաջի սրբութե՟դ ձերոյ, իբրու յանդգնութի՟ զայն գործել համարեցայ ինձ։ Եւ նա ասէ․ և ո՞վ էր որ եկն առ իս, վասն զի այս երիս գիշերս ոչ զոք տեսի մտեալ առ իս։ Եւ ապա պրոկղիոս՝ սկսեալ պատմեաց զն՟մ երանելւոյն, և զկերպարանն՝ և զձևն զառնն զայն, որ երևեցաւ նմա։ Եւ եթէ՝ զիարդ զբերանն իւր խոնարհեցուցեալ յականջս նր՟, և խորհրդով խօսէր ը՟ նմա․ և կամ ո՞պ՟ ինքն անխափան գրէր առանց զբաղանաց, և կամ հայելով յայն՝ որ խօսէրն ընդ նա։

Իսկ յորժամ լուաւ զայս երանելին, առաւել սքանչացաւ։ Եւ պրոկղիոս մինչդեռ խօսէր զայս, նկատեալ ետես ըզպատկերն երանելւոյն պօղոսի՝ որ էր յօրինեալ ՚ի տախտակի, զոր միշտ առ ինքն պահէր յովհաննէս։ Եւ քանզի՝ զգուշութե՟բ ամբարեալ էր զտեսիլ կերպարանաց առնն զոր ետես, որ բերէր նմ՟ իրօք զնմանութի՟ այնմ պատկերի, որ էր գծագրութե՟բ յօրինեալ ՚ի տախտակին։ Եւ ապա յառաջի անկեալ երանելւոյն յովհաննու, երկիրպագանէր և մատամբ ցուցանէր զպատկերն, և ասէր․ Թողութիւն արա ինձ հայր իմ պատուական, զոր տեսի խօսելով ը՟ քեզ՝ զայս պատկերիս բերէր նմ՟ իրօք զնմանութի՟ կերպարանաց․ և ո՟պ՟ կարծեմ սա ինքն նա է։

Յայն

Յայնժամ գիտաց իմաստունն յովհաննէս, թէ ընդունելի եղև ա̅յ խորհուրդք սրտի ն̅ր, և լուեալ աղօթից ն̅ր՝ որ յաղագս թարգմանութե̅ էր առաքելական թղթոցն, և նա ինքն հրամայեաց առաքելոյն իւրոյ՝ 'ի ձեռն յովհաննու թարգմանել զթուղթն իւր։ Եւ հրամայեաց պրոկղի՝ սակաւ մի արտաքոյ դրան սենեկին լինել. և փակել զդուրսն, անկաւ 'ի վերա յերեսաց իւրոց յերկիր՝ մեծաւ հառաչանօք և արտասուօք, զհարուստ մի ժամ գոհանալով՝ աղօթս մատուցանէր մարդասիրին ա̅յ. որ այնպէս վաղվաղակի կատարէ զխնդրուածս այնոցիկ, որք հաւատով խնդրեն 'ի նմանէ։ Եւ ապա կոչեալ զպրոկղիոս՝ ասէ ցնա. կոչեա առ իս զայրն զայն 'ի գիշերիս յայսմիկ. զի յայսմ հետէ ոչ ևս տեսցէ ոք զայրն, զոր տեսիքն յառաջագոյն՝ խօսելով ընդ իս։ Եւ իբրև եկն այրն պատուաւորեալ՝ 'ի գիշերի, և պրոկղիոս յարուցեալ մերձեցաւ 'ի դուռն, և ետես զ յովհաննէս զի նստէր ինքն միայն՝ և գրէր, և տեղ արարեալ՝ եմոյծ զնա առ Յովհաննէս, և պատմեաց նմա զա̅մ անձինն իւրոյ անցս։ Իսկ ը̅ վաղուն երթեալ երանելի հայրապետն առ թագաւորն և աղաչեաց վ̅ս առնն այնորիկ, և վաղվաղակի կատարեաց զխնդրուածս ն̅ր, և կոչեցաւ այրն յառաջին պատիւն, և տուաւ նմա իշխանութի̅ իւր զոր՝ ունէրն յառաջագոյն 'ի պալատանն։ Արդ զկնի այսմ տեսլեան, հաւատարմութի̅ առե̅լ՝ վերստին զ յառաջին թարգմանեալսն յօրինէր շնորհօք ս̅բ հոգւոյն. զի ուր պակասն էր զայն լնոյր, և զկրկնա-

բա

քանութեն 'ի բաց վերացուցանէր ։ Գրեաց և զայլոց թըղ-
թոյն առաքելոյ զբովանդակ զմեկնութիւն ։

Իսկ այնոքիկ, որք ոսոխն էին յովհաննու յաղագս բա-րւոք քաղաքավարութեն նր, և զի միշտ յառաքինութիւն յորդորէր զնս ։ Իբրև տեսին թէ զաղօթք նր յանդ ելին, և խնդրուածք նր կատարեցան՝ որ յաղագս մեկնութեն սբ գրոց ․ բարկացան յոյժ, և գործակից առեալ իւրեանց ըղ-սատանայ, ժողովեցան 'ի միասին հակառակ նմա, և խոր-հէին՝ թէ որով օրինակաւ նիւթեսցեն նմա չարիս ։ ԵՒ քնաղի թագուհին Եւդոքսիա անկեալ էր յախտ արծաթ-սիրութե, սկսաւ ժողովել ինչս բազումս՝ յանիրաւութե ։ Իսկ երանելին այն՝ յոլովակի 'ի ձեռն պատուիրանացն այ առաջի արկեալ զչար ցանկութիւն զայն՝ աղաղակէր, և 'ի վայր հարկանէր զտենչօղս նր, և կոչէր զայնպիսին կռա-պաշտ ։ ԵՒ խորհէր՝ 'ի ձեռն այսոցիկ պատուիրանաց դարձուցանել 'ի չար ճանապարհէ անտի, և ոչ միայն զնա, այլ և զամենեսեան որք ջեռանէին յայսպիսի ախտս, կամէր զգաստացուցանել ։ Զի ոչ եթէ յայտ յանդիման յերեսս ումեք զախտս զայս ունել ասէր ․ ոչ թէ թագուհին, կամ այս անուն ․ այլ հասարակաբար առ ամենեսեան ճառելով, որպէս զի՝ ամենեքեան սարջասցին, և ընդդէմ կայցեն ախտին
արծաթսիրութեան ։

ԵՒ այր մի էր 'ի կոստանդնուպօլիս ․ Թէոդորիքոս անուն ․ որ Եւարգրոնի հայերէն՝ [illegible] ․ սա էր մեծատուն, և ա-ռաջին 'ի պալատան թագաւորին ։ ԵՒ բազում անգամ

խոր

խորհեցաւ Թագուհին Եւդոքսիա՝ զինչ նոր յափշտակել 'ի նմանէ, և ոչ գտանէր ճար՝ թէ որով օրինակաւ զայս գործեսցէ։ Քանզի՝ էր այրն 'ի բազում իրս արքունի հաւատարիմ, և ողջախոհ գտեալ, և ոչ ինչ պատճառս ունէր զրպարտութեան. և վասն ոչ գտանելոյ ելս իրացն, դժուարէր։ Իսկ ապա յաւուր միում կոչեցեալ զնա 'ի պաղատն, և յղէ առ նա պատգամաւորս զներքինիս իւր, որում անուն էր՝ Մեղենդարիոս, և նորա եկեալ առ նա ասէր զբանն յերեսաց Թագուհւոյն։ Մի անգիտասցէ (ասէ) քո բարեպաշտութիւնդ, զի բազում ինչք ծախեցաւ և ծախին 'ի Թագաւորութեան՝ 'ի պէտս պարգևաց, և ռոճկաց զօրաց յայսմ ժամանակի, և յայլ բազում և անհրաժեշտ պատճառս։ Եւ ոչ եթէ այս միայն, այլ և հարկս բազումս տուաք հակառակորդաց, որպէս զի խաղաղութիւն արասցուք ցուց, և վասն որոյ նուաղեցան ինչք ստացուածոց մերոց։ Արդ և դու մասնաւոր լեր այս Թագաւորութեան, մասնաւորելով յընչից քոց և յայսմ ժամու միայն, և դու յաւիտեան վայելես, և նախամեծար լինիս 'ի մերմէ բարեգործութենէ, և զկնի սակաւ ժամանակի անդէն անթերի ատցես մեծաւ գոհութեամբ, զոր 'ի քէն տուաւ մեզ։ Այսուհետև մի դանդաղանօք՝ և տարաժամ կատարեր զխնդրուածս իմ, այլ արա որպէս վայելէ քոյին բարեպաշտութեանդ՝ և առատամիտ առաքինութեանդ։

Զայս իբրև լուաւ Թէոդորիքոս, խռովեցաւ յոյժ, և ելեալ 'ի պաղատէն մեծաւ տրտմութեամբ, և դիմեալ իբրև

յամ

յամբոխեալ 'ի ծովէ՝ 'ի խաղաղ նաւահանգիստ յեկեղեցին, առ հաւատարիմ նաւապետն յովհաննէս․ որ միշտ 'ի դըրդեալսն կալով, չտայր խռովիլ 'ի բազմակոյտ ալեաց ծական ծփանացն ։ Եւ անկեալ առ ոտս նորա, պատմեաց զամենայն մի ըստ միոջէ․ և բազում արտասուս հեղեալ առաջի նորա, խնդրէր օգնութիւն 'ի նմանէ ։ Իսկ նա՝ որ միշտ աւտակիցն էր վշտացելոց, և զըրկելոյն այցելու, ոչ անտես արար զաղաչանս նորա, այլ առաքեաց առ թագուհին զերկուս ոմանս 'ի կղերիկոսացն, և գրեաց հրովարտակ՝ և ետ 'ի ձեռս նոցա, ունելով օրինակ զայս ։

## Խրատական թուղթ առ Եւդոքսիա ։

Ես՝ քանզի տեսանեմ զատոյգ բարին, և զճշմարիտ փրկութիւն ոգւոյ քոյ, և յայն փութամ միշտ հաստատել զքեզ, և դու մի դանդաղեսցես, և կամ տաղտկեսցես զբանս իմ ։ Զի ես ոչ զայս միայն կամիմ քեզ՝ թէ յառժամ այս և եթ ժողովրդեան թագաւորութեան վայելեսցես, այլ յանվախճան և մշտնջենաւոր արքայութեան ժառանգորդ երևեսցիս՝ 'ի ձեռն բարեգործութեան քում․ զի այն՝ առաւել պարծանք են մեզ քան զայս, ապա զի անդ ամենեցուն յայտ յանդիման երևեսցի քո ամենագեղեցիկ բարեպաշտութեամբ լցեալ կենցաղդ ։ Արդ ճըշմար

մարտիւ՜ սուեմ, զի այսօր վիրաւորեցաւ՜ անձն իմ. եւ դար ձեալ զարմացեալ եղէ՝ յորժամ լուայ, զոր 'ի ձերմէ ինք նակալութէդ ասացաւ՝ թէոդոսիոսի պատրկի առն, որ ըստ ա՟յ կեայ: Եւ ո՞չ ա՟ծ տ՟ր է երկնի եւ երկրի եւ ա՟մ արարածոց, եւ ոչ կարօտանայ իմիք: այսպէս եւ զձեզ կացոյց տեարս երկրի եւ ծովու. եւ ոչ կարօտանայ ինք- նակալութիւդ ձեր ինուլ յընչից ն՟ր. եւ մանաւանդ՝ զի ոչ ինչ է մեղանչական թագաւորութեդ ձերոյ: Արդ՝ աղա չեմ զքոյին ա՟ծասիրութիւդ, զի մի՝ այն որ ասացաւ՜ն 'ի քէն պահանջեսցի 'ի նմանէ, այլ թողցես նմա զա՟մ, եւ առանց ակնառութե ընկալցես զնա: Եւ նոյն ինքն տ՟ր մեր եւ ա՟ծն Յ՟ս Ք՟ս՝ կատարեսցէ զա՟մ խնդրուածս քո 'ի բարի ըստ կամաց իւրոց: Ողջ լեր 'ի տ՟ր ո՛վ Ք՟սա- սէր եւ բարեպաշտ, պարագայց ամօք, եւ խաղաղասէր մտօք

հովուելով զիշխանութիւն հռովմայեցւոց:

Արդ իբրեւ ընթերցաւ՜ բան հրովարտակին այսորիկ ա- ռաջի թագաւորին, եւ նա զմտաւ՜ ածեալ՝ տարակուսէր 'ի խորհուրդս իւր. քանզի ընդդէմ կալ հրամանի երա- նելւոյն, եւ կամ անընդունակ առնել զաղաչանս ն՟ր՝ պատ կառէր. եւ դարձեալ՝ զի յոյժ ջերմացեալ էր ախտին, սրբել զինքն յայնմանէ ոչ կարէր: Այս պատասխանի արարեալ 'ի ձեռն կղերիկոսայն՝ ասէ. ո՞չ հրամայեցեր մեզ հայր ս՟բ այնպէս առնեմք, եւ ոչ միայն թէ ոչ առ ցուք 'ի նմանէ ինչս, այլ եւ 'ի հարկից աներկիւղ մնա- ցէ 'ի քաղաքս, եւ 'ի պալատս. եւ ոչ ոք է որ ստիպէ

ըղ

զդա, որպէս յերեկն և յեռանդն։ Իսկ յորժամ գայթակղի բանս պատասխանւոյ լուեալ երանելին յովհաննէս վասն Թէոդորոսի։ Հայեցեալ 'ի նա հայրապետն և ասէ. ո՞վ եղբայր Թէոդորոս. եթէ հրապարակեալ էր զինչս քո Թագաւորին, կարծեմ թէ ոչ էր մնացեալ 'ի տան քում և ոչ մի ինչ, և ուստի արդեօք ժողովէիր քեզ կրկին ինչս։ դարձեալ՝ զի ոչ միայն եթէ ոչ կարէիր առնել զայն, այլ և ոչ համարէին այն քեզ արդարութիւն, և կամ վարձս յԱստուծոյ։ Իսկ եթէ տայցես զայդ Աստուծոյ, ստուգապէս գիտացիր՝ զի բիւրապատիկ առցես զայդ յարքայութենէ երկնից. զի որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ։ Այլ՝ նոյն ինքն Տէր բանս ուսուցանէ, և ասէ. եթէ ստացէք ձեզ գանձանակս, որ ոչ մաշի, և գանձս անպակասս և անապական՝ յերկինս. ( Ղուկ. 12. 33։ ) Պատասխանի ետ Թէոդորոս՝ և ասէ ցնա. ահաւասիկ զամենայն ինչս իմ ո՞վ հայր պատուական՝ վասն բանի քո տաց 'ի հիւրատունս եկեղեցւոյդ, 'ի պէտս աղքատաց և օտարաց։ Բայց եթէ սակաւ ինչ պահեցից, զի լիցի 'ի կերակուր ինձ, և որդեկաց իմոց, այլ և թողից զամենայն պարտս իմ պարտապանաց։ Եւ երթեալ այրն արար փաղփաղակի զամենայն, զոր ուխտեաց երանելւոյն յովհաննու, և ոչ մի ինչ եթող յայնցանէ, զոր ոչ կատարեաց՝ զոր և խոստացաւն։ Եւ ինքն եկեալ անկաւ առաջի երանելւոյն և ասէ. աղաչեմ ըզքեզ տէր, աղօթս արա վասն իմ առ Աստուած. որպէս զի ընդունիցի զողորմութիւնս իմ, և թողցէ զյանցանս իմ։ Նա ետ պա-

տասխ

տասխանի և ասէ ցնա. վստահեմ ՚ի բարեգործն ած, և հաստատեալ գիտեմ, զի ոչ ևս յիշէն յառաջագոյն գործեցեալ մեղքն քո, զիարդ ևս արժանացար Թողութեան. բայց յասմհետէ զգոյշ լեր և պահեա զանձն քո, զի այլ մի ևս մեղանչիցես նմա, և ես երաշխաւոր եմ, զի ընդունելի են ողորմութիւք քո՝ ոպ զկուռնելիոսին, և զայլողորմածացն:

Իսկ Թագուհին Եդոքսիա՝ իբրև լուաւ, զոր ինչ գործեացն Թէոդորիքայ, տրտմեցաւ յոյժ. և առաքեաց զոմն ՚ի գլխաւորաց քաղաքին, առ մեծն յովհաննէս և ասէ ցնա: Ես ըստ քոյին հրամանացդ՝ արձակեցի զպատրիկն Թէոդորիքոս՝ առանց իրիք խարդախելոյ, և ոչ ինչ առի ՚ի նմանէ, Թէպէտ և պէտս ունէր Թագաւորութիւս վն զանազան ծախուցս: Իսկ դու՝ և զնա ևս յափշտակեցեր հանդերձ ամ ընչիւքն իւրովք. զդորա մեծութիւնդ և զհարստութիւնդ մեզ վայելէր շահ՝ և ամբարել, իբր զի զամդ՝ ՚ի Թագաւորական սպասաւորութենէ էր ստացեալ: Եւ զայդ զոր արարեր՝ ոչ էր պարտ քեզ առնել. այլ մանաւանդ մեզ նմանել, զի որպէս մեք ոչ ինչ առաք, նոյնպէս և դու էիր արարեալ: Իսկ իմաստունն այն, առեալ քարտէս. գրեաց ՚ի նա զայս օրինակ:

## Վէրափին բուղը տա Եգիպտոսի:

Որպէս ինձ թուի՝ ոչ անգիտանայ քոյին բարե-
պաշտութիւդ՝ զիմոյ ծնողացն զմեծութի, զոր
արհամարհեցի՝ առ ինչ ոչ համարելով զերկրաւոր մեծու-
թիւս, զի անցանէ: Եւ զայս զոր ասեմ՝ ոչ վասն պարծա-
նաց ինչ. քաւ լիցի. այլ վասն այդր պատճառանաց՝ զոր
կարծեսդ, եթէ ակն ածի ընչիցն Թէոդորիկոսի, որ ոչ
երբեք ցանկացայ ՚ի մանկութէ՝ փառաց մարդկան, կամ
մեծութե. այլ մանաւանդ՝ որ ՚ի նոյանէ փրկութի գոր-
ծի հոգւոյ՝ ՚ի ձեռն բաշխմանն աղքատաց, զայս խոր-
հեցայ առնել: Իսկ որ ՚ի նոցանէն հոգս, և այլ անօրէ-
նութի կատարի, այնոցիկ որք բևեռեալն կան ՚ի նմա, զայն
փոխ ՚ի բաց եդի: վասն զի լուայ Ճշմարիտ վարդապետին՝
որ ասէ. Թէ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, որ յաւ
Վնասակարացս երկրայնոցս անապական և անմերձենալի մնայ.
(Մատ. 6. 20:) Եւ մանաւանդ՝ մեզ զիարդ վայելէ
ինչս ժողովել, որ միշտ խրատեմք և ուսուցանեմք զայ-
նոսիկ, որ զայն ստացեալ են՝ ընձեռել զայն ՚ի ձեռս
աղքատաց: Այլև վասն ինչ իրաց ստանամք զայն, զի մեզ բա-
ւական է սակաւ ինչ ՚ի բազմաց այս ինչ, սուղ ինչ հացիւ
և բանջարով և աղիւ կերակրել զմարմինս՝ վասն զտկարութ
զօրացուցանելոյ: Իսկ վասն Թէոդորիկոսի՝ զոր նշանակեցերն
առ մեզ, իբր թէ ամբարեցի զինչս նորա վասն իմոյ շահից.
գիտութի լիցի ինքնակալութեդ քոյ: Զի ոչ եթէ ինձ

ինչ

ինչ տուեալ է. այլ Աստուծոյ եւ զայն փոխ ՝ի ձեռն աղքատաց՝ եւ անանկաց՝ եւ օտարաց՝ եւ կարօտելոց. եւ այն ունի՛ զի առցէ զայն բազմապատիկ ՝ի կեանսն յաւիտենից։ Ապա եթէ եւ դու կամիս սորա մեծութեան ցանկալ. Թափեա՛ եւ դու քեզէն զինչս քո ՝ի գանձանակն Քրիստոսի, որ ոչ ցեց ուտէ, եւ ոչ ուտիճ ապականէ, եւ ոչ գողքական հատանեն եւ գողանան. զի եւ այնու կարիցես առնուլ զհանդերձեալ թագաւորութիւն մեր՝ ընդ յաւիտենական թագաւորութեան Քրիստոսի ։ Ապա թէ ոչ, եւ զայս կամիցիս յափշտակել՝ եւ առնուլ՝ եւ տրտմեցուցանել զՔրիստոս, դու գիտես ո՛վ թագուհի, զի այս է հրաման տեառն։ Արդ՝ իբրեւ ընթերցան զայս առաջի թագուհւոյն՝ լցաւ սրտմտութեամբ, եւ բարկութեամբ եւ խորհէր ՝ի միտս իւր, թէ ո՞րպէս կարասցէ նենգել զյովհաննէս։ Իսկ թէոդորիքոս՝ առաւել եւս ժուժկալութիւն ստացեալ, եւ համբերութիւն ճգնութեան բերեալ յանձին, միշտ կանխելով ՝ի մէջ եկեղեցին Աստուծոյ յերկարաձիգ աղօթիւք, մինչեւ յայտնի եղեւ անուն նորա ընդ բազում տեղիս։

Արդ՝ այսպէս մեծն յովհաննէս, ոչ երբեք դանդաղէր՝ եւ կամ ական ածէր յումեքէ, այլ համարձակաբար զլուսաւոր վարդապետութիւն առաջի արկանէր՝ մեծամեծաց՝ եւ փոքունց, եւ առ ով լինէր անիրաւութիւն, համարձակ յանդիմանէր։ Այլեւ՝ զթագաւորն, եւ զթագուհին միշտ խրատէր, եւ մերձեցուցանէր ՝ի լաւագոյնն։ Եւ զքահանայսն աղաչէր, մի աղաւաղել զեդեալ Աստուծոյ օրէնս.

զի

զի ոչ է պարտ (ասէ) և արժանի քահանայական պատուոյ վայելել, որ ոչ զարժանի քահանայութեան զճշմարիտ կեանս կեայ, Եւ յաղագս այսպիսի անաչառութեան՝ ոմանք 'ի կղերիկոսաց, և բազումք յայլոց ոչ կարէին տանել զառաւելութեան ճառագայթիցն, այլ տկարացեալք 'ի ճշմարիտ լուսոյ վարդապետական խրատուն, առաւել ևս բորբոքէին 'ի նախանձ : Զի զոր օրինակ, որ առողջք են տեսանելեօք, յստակ հայէին զճառագայթս Արեգականն, և ևս լուսաւորին : Այսպէս և առ երանելեաւս այս լինէր. զի որոց հոգիքն սրբեալք էին, ևս քան զևս լուսաւորեալք և իմաստնացեալք լինէին 'ի վարդապետութեան նորա, և մտադիւրութեամբ ընդունէին : Իսկ որոց աչքն զհոգւոյն կուրացուցեալ էր. լքանէին և անկանէին 'ի վարդապետութեան նորա, և դժուարէին ընդ լսելն զբժշկական բանս. այլ և հեգնէին ևս, և բարկանային : Զի և այս սովորութիւն է. որոց զգաստութիւն փութալի է, սակաւ ինչ հոգ տանին երկրաւորացս, իբրև ընդ բարեգործ հային ընդ յանդիմանողն : Իսկ որք յերկրաւորս և եթ հարեալ են, և անփոյթ արարեալք զհոգւոյն փրկութեան, առողջութեան բանն վիրաւորէ զնոսա, և վասն այնորիկ իբրև 'ի թշնամւոյ 'ի բաց դառնան 'ի բարեգործէն :

Արդ այսոցիկ այսպէս եղելոյ՝ զոր վերագոյն ասացաք, զգաստացելոյն սիրելի երևէր յովհաննէս, և միշտ փրկիչ հոգւոյ զնա կարդային. իսկ ծուլիցն՝ և որք ոչ կամէին դառնալ 'ի չարեացն, ատելի՝ 'ի ձեռն յանդիմանութեան : Եւ սկսան բանսարկուել առ Թագուհին, և առ այլ

ոմանս

ոմանս 'ի մեծամեծացն, թէ միշտ հակառակ թագուհւոյն, և այլոց խօսի։ Այլ և՝ առ Տրոպիլոս ոմն, որ էր սենեկապան թագաւորին, զնոյն բանսարկութիւն մատուցանէր։ Եւ էր տրոպիլոս այս, այն՝ զոր յառաջագոյն յիշեցաք՝ առ ձեռնադրութեան յովհաննու։ Իսկ սա իբրև թէ վրէժխնդրութիւն իմն յովհաննու, սկսաւ անօրէն և անմարդի օրէնսդրութիւն խնդրել, 'ի թագաւորէն։ Ոչ է (ասէ) արժան՝ որք պատժապարտք են, տալ թոյլ նոցա ապաւինել յեկեղեցին. և եթէ համարձակեսցի ոք և մտցէ, մի ոք իշխեսցէ արգելուլ, այլ անյապաղ հանցեն և սպանցեն։ Զայսոսիկ հակառակ Աստուծոյ, և օրինաց նորա օրինադրեաց։ Իսկ՝ որ ըմբռնէ զիմաստունս 'ի խորամանկութեան իւրեանց, և զչարութիւն նոցա անգործ առնէ. վաղվաղակի զիւր օրինադրութիւն՝ հակառակ գլխոյ իւրոյ դիպեցուցանէր։ Զի զկնի սակաւ ինչ ժամանակի, սոյն ինքն այս տրոպիլոս՝ հակառակ երեւեալ թագաւորին, փախստեայ անկանէր յեկեղեցին։ Եւ ահա մինչ դեռ անկեալ կայր նա առաջի սեղանոյն Աստուծոյ առաւինեալ՝ 'ի սրբութիւն քահանայապետն Աստուծոյ յովհաննէս՝ ելեալ 'ի վերայ ամբիոնին, և արդարութեամբ երթեալ զհետ արդար օրինացն Աստուծոյ, զանօրէնութիւն նորա յայտ յանդիման հրատարակէր։ Եւ զայն զոր չարաչարն օրինադրեաց հակառակ այնոցիկ՝ որք ապաւինեին յ[եկ]եղեցին. ընդդէմ իւր հանդիպեցան՝ ըստ երգոյն դաւթի, [ո]ր ասէ. զգուբն զոր փորեաց, 'ի նոյն անկցի. (Սաղ. 7. 16։) Եւ դարձեալ թէ 'ի գործս ձեռաց իւրոց կապեսցի մեղաւորն. (Սաղմ. 9. 17։)

17։) Ցուցանէր և նմա Ճանապարհ ապաշխարութեան ի ձեռն Ճշմարտութեան խոստովանութեան և խոնարհութե, միանգամայն և Ճանաչել զարդարութիւն այ ՝ի վր այսոցիկ ՝ի եղելոցս։ Զի եթէ ամ անիրաւ դատաւորք, և որք առանց աչառակցութե ածեն շարաչար ՝ի վր մեղուցելոց զտանջանս՝ դատապարտին. ապա որչափ ևս առաւել որ զայր քաղցր և զարդար դատապարտեն։ Եւ այսպէս՝ երանելիս այս, ոչ եթէ անձին ինչ հոգ տանէր, այլ իբրև զՃշմարիտ ծառայ Քի, նախանձաւոր էր օրինացն այ։ Եւ վս այնորիկ որք անցանէին ըն օրէնս հաճոյ լինել ոչ կամէր, ըստ երանելոյն Պօղոսի եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քի ծառայ ոչ էի. ( Գաղ. I. IO։)

## Յաղագս ընծայելոյն արիանոսաց, և մակեդոնեանց։

Ի յայնմ ժամանակի՝ փոխեալ աղանդն արիոսի և մակեդոնի՝ ՝ի ներքս ՝ի քաղաքին ունելով տեղի զժողովարան իւրեանց, ոչ զակամս ՝ի թուլացելոյն ՝ի Ճշմարտութենէն՝ դարձուցանէին ՝ի չար հերձուածս իւրեանց։ Եւ յաղագս այսորիկ մեծապէս վշտանայր յանձն իւր երանելին յովհաննէս, և խնդրէր թէ որպ արգելլիցի չարութե նոցա։ Եգիտ ապա դիպօղ ժամանակ ըստ յաջողելոյն այ։ քանզի յաւուր հրաշալի ծննդեն և յայտնութե Տն մերոյ Յի Քի. եկեալ թագաւորն և թագուհին ՝ի սբ եկեղեցին, ուրէր քահանայապետն այ։ Իսկ նր զկենարար

խաչ

խորհուրդն կատարեալ, և հաղորդեցուցեալ զարժանա-
ւորսն մարմնոյ և արեան Տն: Եւ յետ կատարման տէրու-
նական խորհրդոյն, եկեալ մերձ առ սբ հայրապետն՝ Թա-
գաւորն և Թագուհին, ընկալեալք օրհնութի 'ի նմանէ՝
նստան: Եւ հայեցեալ 'ի նա Թագաւորն ասէ, Ճշմար-
տիւ աստ հայր սբ, զի ոչ արժանի եղև քաղաքս այս 'ի
ժամանակէ անտի կոստանդիանոսէ մինչև ցայսօր՝ այսպիսւոյ
եպիսկոպոսապետի և վարդապետի, որպ ձերում սրբութեդ:
Եւ մեք 'ի վր այսր ամի՝ գոհանամք զմարդասիրութենն այ, որ՝
առաքեաց զքեզ առաջնորդ մեզ 'ի գնացս արդարութե:
Իսկ սբն յովհաննէս՝ լցեալ հոգւով իմաստութե, խօ-
սեցաւ բանս առակաւորս առ Թագաւորն՝ և ասէ: Որ
կազմէ Թագ Թագաւորին, և զարդարեալ կատարէ զնա
յոսկւոյ սրբոյ՝ քարամբք պատուականօք, Ճառագայթաձև
փայլեցուցեալ, ոչ է պարտ խառնել ընդ այնպիսւոյ
գեղեցկութե՝ նիւթս խաւարայինս, և տկարացուցանել
զփաղփաղուն, և զփայլացայտ պայծառութին. զի մի՝ և
ամ փայլչութի պակսին յայնմանէ պղծեսցի: Այնպէս՝
և որք կամին հիւսել անձանց իւրեանց պսակս երկնայինս
'ի բազմապատիկ, և 'ի զանազան առաքինութեց, ոչ է
պարտ և ոչ մի ինչ պակասեցուցանել անտի, և կամ խա-
ւարային գործս սատանայականս 'ի ներքս մուծանել, զի
մի՝ պղծեսցի զարդ ոգւոյն: Զսոյն և Քս ասաց, եթէ
ոչ է պարտ արկանել կապերտ, անթափ 'ի վր հնացեալ
ձորձոյ. ( Մատ. 9. 16: ) Եւ դարձեալ՝ եթէ եղերուք

կա

կատարեալք. որպ և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է. (Մատ. 5. 28։) Պատասխանի ետ Թագաւորն և ասէ. մեկնեա մեզ զառակս զայս յայտնապէս։ Եւ նա ասէ. ահաւասիկ որպ տեսանեմ՝ տր իմ Թագաւոր՝ զբարեպաշտութե լցեալ իշխանութիւդ քո, որպ զի՝ ամ աշխարհք Թագաւորութեդ քոյ ՚ի յուղղափառութե կեան այսօր, ՚ի բաց կացեալք յառաջին վնասակարութեն։ Արդ՝ ընդ է՞ր աստեն ՚ի քաղաքիս գարշելի հերձուածն արիոսի՝ զանձինս տգիտաց խաւարեցոյց։ Քանզի ոչ եթէ սակաւ ինչ համարձակութի բերեն յանձինս, և զբազումս գայթագղեցուցանեն, մինչև լռեայ յոմանց (զի այսպէս ասեն.) եթէ ոչ գիտէր Թագաւորն զուղղութի պաշտամանց նոցա, արգելոյր արդեօք զնս յայնպիսի ձեռնարկութե։ Արդ՝ հրաման տացէ ինքնակալութիւնդ ձեր յայսմ հետէ. կամ դառնալ ՚ի չար հայհոյութեն, և նզովել զհերձուածն իւրեանց և ապաշխարել՝ և խոստովանել զուղղափառ հաւատս, և կամ արտաքսեա զնս ՚ի քաղաքէս, և կամ թէ բնաւ իսկ ՚ի բաց բարձ զպղծութի նոցա։ Եւ մի՝ թողացուսցէ բարեպաշտութիւդ քո նոցա, ժամանակ՝ հայհոյել զորդին այ, զի մի՝ շարժեսցուք զբարկութին այ ՚ի վր մեր. վս զի ոչ իսպառ համբերէ մեզ, կամակարութե տեղի տալով նոցա հայհոյութե, և մանաւանդ զոր դիրին է քեզ՝ զայն գործել Թագաւորութեդ քոյ։ Զայս իբրև լուաւ Թագաւորն, ոչ ևս այնուհետև զտեղի առնոյր. այլ հրաման տուեալ՝ որք մերձն կային։ և վաղվաղակի

ինք

ինքնին յարուցեալ երթայր 'ի ժողովարանս նոցա : Եւ կո-
չեցեալ զհերձուածապետն նոցա, հարցանէր զխոստովա-
նութիւն իւրեանց : Եւ իբրև հեղին զգայուն անօրէնութեան,
խոստովանելով զժահահոտ չարափառութիւն իւրեանց :

Յայնժամ Թագաւորն լի եղև սրտմտութեամբ, և հրամայէր
արտաքս հանել զնոսա 'ի քաղաքէն, և զչար հայհոյու-
թեան տեղիսն՝ զեկեղեցիսն նոցա փակել. և կնքել՝ հրա-
մանս ետ ․ ներելով նոցա առ ժամանակ մի, թերևս 'ի լա-
ւագոյնն փոխարկեսցին : Ուստի և բազումք 'ի նոցանէ,
տեսանելով զսաստ Թագաւորին, 'ի բաց կացին 'ի չար աղան-
դոյն ․ և դիմեցին յօժարութեամբ 'ի սուրբ եկեղեցիս ուղղափա-
ռաց, նզովելով զհերձուածն արիոսի : Եւ ապա հրաման
ետ Թագաւորն լինել քարոզ ընդ ամենայն քաղաքն՝ զայս օրի-
նակ : Որ ոչ կամի զղջանալ, և դառնալ 'ի յայդմ չար
հերձուածոյդ, և գալ 'ի ճշմարտութիւն՝ և յուղիղ հա-
ւատս, ելցէ արտաքս 'ի քաղաքէս, և ինչք նորա 'ի յափշ-
տակութիւն եղիցի : Արդ՝ յայսպիսի քարոզէ ոմանք երկու-
ցեալք, միաբանեցան յուղղափառսն, և այլք՝ պնդեալք
'ի չարութեան իւրեանց, ելին 'ի քաղաքէն : Իսկ զկնի ժա-
մանակաց ինչ անցելոց, արիանոսքն՝ արտաքոյ քաղաքին
ունելով զբնակութիւն իւրեանց, ապա կացեալք առաջի
դրան Թագաւորին, աղաչէին՝ որպէս զի թողացուսցէ նոցա
միայն 'ի շաբաթու, և 'ի կիրակէի 'ի ներքս 'ի քաղա-
քին կատարել զտօնս իւրեանց : Եւ ապա՝ սկսան առ սա-
կաւ սակաւ համարձակիլ, յորժամ 'ի շաբաթու, և 'ի կիրա-

կէի

կէր իշխանութիւն առին յեկեղեցւոյ իւրեանց ժողովել։ Եւ ապա երգս 'ի բերան առեալ՝ որ լի էր հայհոյութեամբ. վասն զի զերրորդութիւն՝ ոչ մի զօրութիւն, և ոչ մի բնութիւն ասէին։ Եւ զայս չարափառութեան երգս՝ սկսանէին յերեկօրեայ մինչև ցառաւօտն՝ բարձր ձայնիւ յերկրորդէին 'ի ներքս 'ի քաղաքին։ Եւ յորժամ հանէին զնոսա արտաքոյ դրանն իւրեանց 'ի ժողովարանն, զնոյն հայհոյութիւն խօսէին։

Յայնժամ տեսեալ երանելւոյն յովհաննու զայնպիսի չար արուեստս նոցա, երկուցեալ գուցէ զբազումս 'ի պարզամտաց պատրեսցեն այնպիսի երգովն։ Ապա հրամայեաց քահանայիցն, և սարկաւագացն՝ առնուլ խաչս արծաթեղէնս, և զգենուլ պայծառ հանդերձս, և 'ի գիշերի շուրջ գալ 'ի քաղաքին և բարձրաձայն հնչմամբ երգել զհամագոյութեան երգս. որպէս զի 'ի ձեռն երգոյն զհայհոյութիւն եղծցեն։ Եւ այսպէս ընդդէմ միմեանց շուրջ գալով 'ի քաղաքին՝ երգէին։ Եւ բազում անգամ 'ի գիշերի մարտնչեալ հանդիպէին միմեանց, և քարամբք զմիմեանս հարկանէին, և արիանոսքն յանխնայ ձգելով զքարինսն ընդ առաւել չարութեան իւրեանց՝ զոր ունէին առ հաւատացեալս համագոյութեան։ Եւ եղև 'ի միում գիշերի՝ հարին զճակատ ներքինւոյ թագաւորին, որոյ անունն էր Բրեսոն, որ ընդդէմ հարկանէր չար երգոց նոցա. նաև բազումք կորեան 'ի ժողովրդոցն 'ի յերկոցունց կողմանցն։

Զայս իբրև լուաւ թագաւորն, շարժեալ 'ի սրտմտութեան, հրաման ետ արգել առնել արիանոսացն, զի մի՛ ևս

իշխեսցեն յայտ յանդիման հանդիսիւ կատարել զպաշտօնս իւրեանց: Եւ ուղղափառաց կողմն՝ զոր վեր ձայնութբ երգէին, էր այն երգ՝ որ յինքնատես բանին այ՝ յածազգեստ վկայէն Իգնատիոսէ տուեալ եկեղեցւոյն Անտիոքայ, և անտի քարոզեցաւ ընդ ամ եկեղեցիս քրիստոնէից: որ և սա յափշտակեցաւ ը ածային տեսութե եսայեայ. և լուաւ զհրեշտակական օրհնութիւն, և զնոյն՝ յեկեղեցիս այ հաստատեաց: Եւ զի եսայիաս զորդի ետես, վկայէ ածաբան աւետարանիչն յօհաննէս. եթէ զայս ասաց եսայի, որ ետես զփառս նր, և խօսեցաւ վն նր. (Յօհան. 12. 41:) Այսինքն՝ զխորհուրդն Մարդեղութե, և զփրկութի՝ որ անտի լինելոց էր՝ յառաջագոյն ասաց որով լցաւ ամ երկիր ածածանօթութեամբ: Իսկ զսրբասացութիւն՝ որ ՚ի յերիս բաժանեցին, և ՚ի մի տէրութի համարեցին. վն զի՝ սբ երրորդութիւն անձնաւորութբ զանազանեալ են, այլ և մեք խոստովանիմք, և բնութբ, և զօրութբ, և ածութբ մի: Իսկ աւետարանիչն՝ որ ասէ. Թէ զորդի ետես, և որդւոյ ասաց՝ մատուցանել սերովբէիցն զսրբասացութիւն. վն զի զհայր, և զհոգին սբ՝ որդւով ծանեաք: Որպէս և ինքն Քս ասաց. եթէ եկեսցէ ժամանակ, յորժամ Ճշմարիտ երկրպագուքն երկիրպագանիցեն հօր՝ հոգւով և Ճշմարտութբ: (Յօհան. 4. 23:) Զնոյն և երանելի ածազգեստ վկայն ետես՝ հոգւոյն սբյ առաջնորդութբն, զի զնոյն սրբասացութի մատուցանէին անմարմնական զօրութիւնքն՝ որդւոյ, որ յաղագս մարդկան փրկութե մարդ-

եղև,

եղև, և չարչարեցաւ մարմնով, և մեռաւ 'ի խաչին, և եդաւ 'ի գերեզմանի, և յարեաւ իշխանութ՟բ, և համբարձաւ յերկինս : և զնոյն աւանդեաց ած՟ եկեղեցւոյ Ք՟ի : Ո՟պ զի՝ 'ի խաչին չարչարանօքն Ք՟ի՝ ծանեաք զանձնաւորութ՟ի, ս՟բ երրորդութ՟են· և զմի ած՟ութիւն, և զբնութ՟ի· որով և լցաւ ամ՟ երկիր փառօք ճշմարիտ ած՟գիտութե՟ : Զոր և իմաստունն յովհաննէս՝ զնոյն երգ կարգեաց ը՟ դէմ արիանոսայն, որ ոչ եթէ զհայր, կամ զհոգի՝ չխոստովանէին, այլ զորդի օտար ասէին 'ի բնութ՟է հօր : Նա վ՟ն այնորիկ զայն երգ՝ որ յաղագս որդւոյ ած՟ութե՟, և փրկագործութե՟՝ զինեալ վառեաց ընդդէմ նոցայ :

# Սքանչելիք իններորդ :

Արդ՝ լուարուք և զայլ սքանչելիս, զոր արար ած՟ 'ի ձեռն յովհաննու ոսկեբերանին : Այր ոմն էր այնմ ժամանակի՝ որ ունէր զաղանդն մակեդոնի, ինքն և ամուսին իւր : Զսա 'ի ժամանակս բազումս խրատէր և ուսուցանէր երանելին, 'ի բաց թողուլ զպիղծ հայհոյութ՟ին՝ որ 'ի հոգին ս՟բ, և դառնալ յեկեղեցիս ուղղափառաց : Զոր և հաւանեցաւ առնել զկամս ն՟ր· հաւատաց ճշմարտութե՟, այլ և կինն հնազանդեցաւ առն իւրում, և եկն յեկեղեցիս ուղղափառաց, բայց կեղծաւորութ՟բ, և ոչ ճշմարտութ՟բ : Եւ եղև յաւուր միում առեալ ըզհացն հաղորդութե՟ 'ի հոգէմարտիյն, և տարեալ ցա֊

ղա

ղախինն իւր պահել զայնն. և ինքն կեղծաւորեալ եկն համ-
դերձ աղախնեաւն՝ յեկեղեցին ուղղափառաց՝ հաղորդիլ
աստուածային խորհրդոյն։ Եւ յորժամ էառ զպատառն յոր-
հնութեան հացէն, դարձաւ ետ զայն յաղախինն, և ինքն
էառ զայն՝ որ 'ի հերձուածողացն տուեալ էր ցնա։ Եւ
իբրև եդ զայն 'ի բերանն իւր, գտաւ ճշմարտապէս
քար. և ապա ըմբռնեալ երկիւղիւ մեծաւ, սկսաւ խոս-
տովանիլ զճշմարտութիւն։ Եւ 'ի բոլոր սրտէ առանց կեղ-
ծաւորութեան՝ միաւորեցաւ 'ի ժողովս ուղղափառաց, և
զհաց հերձուածողացն՝ որ դարձաւ 'ի բնութիւն քարի,
եդին զայն 'ի տունս անօթոց։

Արժան է և ոչ զանց առնել՝ և զոր առ Գաղլինոսաւն
եղև։ Գաղլինոս այս էր յազգէ գեղտոսական. որ ոչ
ինչ նուազէր ամենևին բարբարոս դժնդակ բարուք, և էր
շաղախեալ ընդ աղանդն Արիոսի։ Սա յառաջագոյն անծիկ
գոլով՝ կարգեցաւ 'ի դասս զինուորաց, և առ սակաւ
սակաւ յառաջ մատուցաւ, և եղև զօրավար հեծելոց, և
հետևակաց։ Սա մատուցեալ առ Թագաւորն Արկադէ-
ոս, խնդրէր իւր եկեղեցի մի 'ի ներքս 'ի քաղաքին. զի
անդ հաղորդեսցի իւրայնօք չարափառութեամբ։ Իսկ Թա-
գաւորն յիշէր զքաջութիւն առնն, և որպէս թէ՝ սանձել կա-
մէր զբռնութիւնս, կամեցաւ տալ. և առաքեաց զնա առ
քահանայապետն Աստուծոյ, որպէս զի տացէ նմա՝ զոր խնդրէն։
Իսկ ցանկալին Յովհաննէս. եկն առ Թագաւորն և ասէ ցնա՝
ով Թագաւոր, ո՞չ խոստացար յառաջագոյն ոչ տալ զօր

բու

բութի չանց, և այժմ ընդե՞ր առնես զայդ ։ Այլ ես ոչ ներեմ հանել յարտաքս զայնոսիկ՝ որ ուղղութե՛ Ածաբանեն, և փառաբանեն զԱծ երրորդութիւն, և մուծանել զայնոսիկ, որք հայհոյեն զնա ։ Արդ՝ և դու մի ինչ հոգասցես վս՛ բարբարոսին այնմիկ, և եթէ բան ինչ իցէ, կոչեա՛ զնա հանդերձ ինև, և միայն լուր զբանս իմ, և ես սանձեցից զբերան նր՛ ։ Զայս իբրև լուաւ թագաւորն, առժամայն լուռ եղև ։ Եւ յետ սակաւ ինչ ժամանակի, հրամայեաց կոչել զԳայիանոս, մերձ լինելով և Յովհաննու ։ Իսկ Գայինոս իբրև եկն առաջի թագաւորին, առժամայն սկսաւ խնդրել զխոստացեալն իւր ։

Պատասխանի ետ եպիսկոպոսապետն և ասէ․ ոչ է պարտ և արժան թագաւորի մերձենալ յԱծայինսն, և համարձակիլ՝ի բաց բառնալ զբարեպաշտութի, և մուծանել զայլանդակ պաշտամունս ։ Եւ եթէ ոք կամիցի հաւատովք խնդրել զտեղի աղօթից, բաց է առ հասարակ ամենեցուն սբ՛ եկեղեցի․ բայց միայն ուղղութե՛ մատիցէ ։ Ասէ Գայինոս, ես այլ կրօնս ունիմ, և այլ դասս, հանդերձ նոքօք պարտիմ աղօթել, և վս՛ այնորիկ տուն ինձ միայն խնդրեմ ոչ զի հաղորդիցիմ ը՛ նս՛ ։ Եւ մանաւանդ՝ զի արժանի իսկ եմ այսմ պարգևի, զի բազում պատերազմունս վանեցի, որք զինեալ էին ՚ի մարտս պատերազմաց ընդդէմ հռովմայեցւոց ։ Ասէ երանելին Յովհաննէս, այլ դու ունիս մեծագոյն փոխարէնս ը՛ աշխատութե՛ քոյ․ վս՛ զի զօրաւարութե՛ պատուոյ՝ զօրաց՝ և զինուց՝ և զգես

տուց

տուց արժանացար՝ի Թագաւորել։ Այլև՝ զայս արժանէր քեզ իմանալ, թէ ով էիր յառաջագոյն, և կամ յորպիսի աղքատութի, և կամ՝ զինչ այժմ, և յորպիսի մեծութի հասեր. եթէ զայդ զմտաւ ածես, սակաւ է վաստակդ, և մեծագոյն պատիւդ։ Ապա եթէ եկեղեցւոյ խնդիր ես. մատիր առ իս հաւատովք և ուղղափառութբ, և ես տաց քեզ զեկեղեցի՝ բաւական, և գանձ անսպառ։ Եւ այսպիսի բանիւք ըմբերանեաց զնա. ոչ զի ոչ ևս կարէր ամենևին տալ պատասխանի, մինչև սքանչանալ Թագաւորին ընդ իմաստութի նորա, եթէ ոչ սուղ բանիւ զայնպիսի անմարդի և զխակաբերոյ և զհայհոյիչ բերանն եխից։ Յետ սակաւ ինչ ժամանակի՝ սոյն ինքն այս անօրէն Գաղիանոս, կուտեաց առ ինքն զօրս բազում և ապա ի չարութի իւր յայտ յանդիման ցուցանէր. զոր էր յառաջագոյն մթերեալ՝ի սրտի իւրում։ Քանզի ըմբռնեալ զերկիրն Թրակացւոց, և զմակեդոնացւոց. ապստամբեաց՝ի Թագաւորէն։ Զայս իբրև լուան իշխանք Թագաւորին, երկեան յոյժ. քանզի պատերազմել ոչ խորհէին ընդ նա, վասն բազմութեան զօրացն ժողովելոց, և առաւելութեան նորա. և պատգամաւորք ոչ իշխէին երթալ, վասն բարբարոսական բարուցն։ Յայնժամ ամենեքեան աղաչէցին զսուրբ եղբայրհօրին զՅովհաննէս, զի միջնորդ սիրոյ և խաղաղութեան լիցի՝ գնալով առ խուժադուժ բարբարոսն այն։ Իսկ երանելին՝ ոչ զառաջին հակառակութիւն ած զմտաւ, և ոչ զայթումն հպարտութեան, որով խրոխտացեալ ամբարտաւանէր

ներ ապստամբութեան, այլ յօժարութեամբ դիմեաց և եկն առ նա 'ի Թրակիս: Իսկ բռնակալն՝ իբրև ծանեաւ զգալուստ երանելւոյն, և մանաւանդ զիւր յաղագս սիրոյ և բարեպաշտութեան համարձակեալ գայ: Ել ընդ առաջ նորա, և մինչ դեռ հեռագոյն էր, երկիր եպագ նմա. և մերձեցեալ 'ի սմին, առեալ զաջն եդ 'ի վերայ աչաց իւրոց, և զմանկունսն՝ որք մերձն կային, առ ոտս նորա յերկրպագութիւն մատուցանէր: Եւ հաւանեալ սորա քահանայապետին, արկ զինքն ընդ ծով հռովմայեցւոց և եհաս առ ժամայն զձեռն խռովութեան: Քանզի այսպիսի էր սորա յովհաննէս, զի և թշնամիք ճշմարտութեան, և բռնակալք՝ զարհուրեալք պատկառէին 'ի յերեսաց նորա: Յետ ոչ սակաւ ինչ ժամանակի, փախեաւ այս գալինոս 'ի Թրակիս, և անկաւ 'ի ձեռս զօրացն հռովմայեցւոց, և սպանաւ ինքն, և ամենայն միաբանեալքն ընդ նմա: Այլ թէ՝ որպէս պատերազմունք 'ի ժամանակն նորա, յայլում տեղւոջ գրեցաւ:

## Պատմեցից և յաղագս այլոց իրաց, որ եղեն 'ի ժամանակս նորա:

Ժողովեցան ոմանք յեպիսկոպոսաց ասիացւոց, Թուով իբրև քսան և երկու. և յանկարծակի 'ի միում ժամու յաւուր շաբաթու եկին 'ի կոստանդնուպօլիս: Եւ Եւսեբիոս՝ Ուաղենդու եպիսկոպոսն, մտեալ առ երանելին Յովհաննէս, և տուեալ ցնա մուրհակս, որ

որ էր գրեալ բանիւ ժողովոյն՝ հակառակ անտոնի՝ եփեսոսի եպիսկոպոսին: Եւ երդմնեցուցեալ զքահանայապետն տ͞ն յա͞ծ կենդանի, և 'ի փրկութ͞ի թագաւորացն, զի 'ի քննութ͞ի ածցէ զմուրհակսն: Եւ էր ամբաստանութ͞ի գրեալ անդ՝ եօթն գլուխ:

Առաջին. զի զանօթս եկեղեցւոյն, զոսկեղէնս և զարծաթեղէնս՝ հալեաց, և 'ի պէտս որդւոց իւրոց արար զայն:

Երկրորդ. զի զմարմարիոնն՝ որ 'ի մուտս եկեղեցւոյն՝ մերձ առ աւազանին կայր, եառ, և տարեալ եդ իւրոյ բաղանեացն:

Երրորդ. զի զսիւնն՝ որ 'ի բազում ժամանակաց եդեալ կայր 'ի ներքս յեկեղեցւոջն, խլեաց անտի, և տարեալ եդ իւրոյ սենեկին:

Չորրորդ. զի ծառայն իւր սպանեալ էր մարդասպանութ͞ի, և նա ունի զնա 'ի սպասաւորութ͞ի ա͞ռ զանպարտ:

Հինգերորդ. զի զեօղքն՝ որ տուեալ էր եկեղեցւոյն 'ի մօրէն յուլիանոսէ, զայն ծախեաց, և ագահելով շտեմարանեաց:

Վեցերորդ. զի յառաջագոյն հրաժարեալ յամուսնոյ իւրոյ, և դարձեալ անդրէն մերձաւորեցաւ ը͞ն նմա և արար որդիս:

Եօթներորդ. զի սովորութ͞ի է ն͞ր վաճառել զձեռնադրութ͞ի, որ առ եպիսկոպոսս:

Իբրև ընթերցաւ զայս երանելին, ըստ ընդաբոյս հեզութեան և հանդարտութեան, կամէր փարատել զնախանձն 'ի նոցանէ, և հաստատել զսէր: Պատասխանի ետ և ասէ.

եղբայր Եւսեբիոս՝ գիտեմ զայս. զի ամբաստանութիւն և չարախօսութիւն՝ որ 'ի սրտմտութենէ լինի, ոչ ստուգեալ ունի զցուցումն։ Լուեալ այսուհետև 'ի մուրհակացդ ամբաստանութիւն, և աստ յայտնապէս զպատճառ սրտմտութեան քոյ։ Իսկ Եւսեբիոս առաւել ջեռանէր սրտմտութեբ մինչև զձայնն խոշորագոյն հանէր և պնդագոյն, մեծաւ աղաղակաւ վկայէր և ասէր. ոչ առ չարութիւն է ամբաստանութիւնս, այլ ստուգութիւն։ Յայնժամ հրամայեաց երանելին յովհաննէս՝ պօղոսի երակլիոյ եպիսկոպոսին, զի սերտիւ քննեալ՝ խաղաղութիւն արասցէ 'ի մէջ նոցա։ Եւ ինքն յարուցեալ հանդերձ եպիսկոպոսօքն՝ գնաց յեկեղեցին և տուեալ ժողովրդեանն զխաղաղութիւն, նստան։ Եկն դարձեալ անդր ամբաստանօղ Եպիսկոպոսն Եւսեբիոս՝ յանդիման ամենայն ժողովրդեան և տուեալ միւս ես մուրհակ հակառակ անտոնի որ ունէր զնոյն առաջին օրինակն։ Եւ սկսաւ ստիպել երդմունս առաջի արկանել հայրապետին, զի քննութիւն արասցէ ամբաստանութեան։ Իսկ մեծն յովհաննէս՝ հանդերձ այլովք եպիսկոպոսօքն՝ ելեալ նստաւ առ լուսարանին։ և կոչեալ զԵւսեբիոս՝ դարձել խրատէր զնա ըստ առաջին օրինակին։ Բազումք (ասէ) վասն սրտմտութեան գրեն գիր ամբաստանութեան, բայց տկարանան առ 'ի յայտնի կացուցանելն. արդ՝ եթէ ստուգապէս գիտես զոր ասեսդ, ոչ թողումք առանց քննութեան։ Եւ դու յառաջ քան զընդերնուլ մուրհակիդ, ընտրեալ զօգուտն քո քանզի զկնի ընթեռնլոյդ առաջի բազմաց, պարտ է 'ի քննութի

մտա

մտանել. և եթէ ոչ կարիցես բազում վկայիւք յայտնի կացուցանել, իբրև զչարախօսս ելցես արտաքս յեպիսկոպոսութենդ: Եւ նա՝ ևս առաւել գոչէր, և զնոյն վկայէր:

Ապա հրամայեաց ընթեռնուլ զգրեալսն ՚ի մուրհակին, զեօթն գլուխ չարախօսութեն: Յայնժամ ծերքն յեպիսկոպոսացն ասեն ցյովհաննէս. թէ և մի ոյ և եթ գրելոց գլխոցդ այդոցիկ՝ անօրինեալ է, անցեալ է զածային օրէնօքն: Ընդէ՞ր է և մեզ այլոցն պարապումն առնել. արդ՝ նախ և առաջին ՚ի մեծագունիցն արասցուք զքննութիւն. զի եթէ այն ճշմարիտ գտանիցի ապա և այլքն ստոյգ իցեն: Զի թէ արմատ ամ̃ չարեաց արծաթսիրութի է, և նա զհոգւոյն ս̃բյ բաշխումն՝ արծաթոյ է վաճառել, և ՚ի վր̃ իրաւանիցն կաշառս առնու, զիարդ իսկ խնայէ նա յանօթս եկեղեցւոյն, կամ յաւանս, և ՚ի գեօղս, որ վիճակ է եկեղեցւոյն: Յայնժամ երանելին յովհաննէս ասէ ցան տոն. դու զի՞նչ արդեօք տայցես պատասխանի այսմ ամբաստանութեն: Իսկ նա ուրացաւ՝ ասելով. եթէ զիարդ մարթի այդմ լինել. քանզի պատկառէր խոստովանիլ զամօթալի գործս իւր: Եւ սկսեալ յառաջին ժամէ աւուրն՝ մինչև եօթներորդ ժամն յերկարեցաւ քննութիւն, և ոչ ինչ յայտնեցաւ: Յայնժամ իրաւացի դատաստան արարին, զի վկայիւք հաստատեսցեն զվաճառն գործոյն ոպ̃ զի որք ետունն զարծաթն, կամ որք ընկալանն զձեռնադրութի՝ նոքօք հաւատարմասցին իրքն: Եւ քանզի վկայքն մերձ ոչ էին, այլ ՚ի յասիայ. և վր̃ այնորիկ երանելին յովհաննէս՝

դրժ

դժուարէր ընդ երկարութ՟ն գործոյն. վ՟ս զի ա՟մ խրօք յօ-
ժարամիտ էր մաքուր տեսանել զեկեղեցիս ք՟ի յ՟ամ վնասա-
կար գործոց: Եւ վ՟ս յամելոյ վկայիցն՝ ինքնին կամեցաւ
գնալ 'ի յասիայ. ո՟պ զի կատարած արասցէ մուրհակացն
ամբաստանութ՟ե, որ յաղագս անտոնի պարտաւորութ՟ե:
Իսկ անտոնիոս՝ իբրև ետես անվեհեր գնալն ն՟ր, և զան-
կաշառք դատաստանին, և զիւր գործն՝ թէ պատժոյ ար-
ժանի է: Գնաց առ փորագլուխ մի, որոյ յանձնէր կող-
մանքն ասիացւոց, ո՟պ զի արգել արասցէ գնալոյն յովհան-
նու յասիայ, քանզի գիտէր՝ եթէ անդ 'ի ձեռն վկայիցն
անթաքչելի լինի ապիրատութիւն նորայ: Ապա հրաման
ել 'ի պալատէն, զի մի երթիցէ յովհաննէս, զի ոչ է ասէ
զգուշալի՝ հայրապետի, թողուլ զաթոռ իւր և զվերա-
կացութիւն հօտի իւրոյ, և երթալ յասիայ. այլ պարտ
է՝ եթէ բանք ինչ իցեն, դիւրին է աստ գալ վկայիցն,
և ոչ քեզ անդր երթալ: Եւ հնազանդեալ երանելւոյն
ոչ գնալ անդր, այլ համբերել մինչև եկեսցեն վկայք:
Իսկ իբրև արգել եղև գնալոյ ն՟ր անդ, ընտրեաց երեք
եպիսկոպոս, և առաքեաց յասիայ, ո՟պ զի 'ի ձեռն վկա-
յիցն՝ որ անդ էն, քննութ՟ի արասցեն: Եւ իբրև գնացին
եպիսկոպոսունքն, հրամայեցին եւսեբիոսի, և անտոնի, զի
եկեսցեն յանդիման միմեանց առաջի իւրեանց. ո՟պ զի մինն
բերցէ զվկայսն, և միւսն պատասխանի արասցէ: Զայս իմա-
ցեալ անտոնիոս, և եկեալ առ եւսեբիոս, և տուեալ նմա
ոսկի բազում՝ հաճանեցոյց զնա, զի սուտ արասցէ զամ-

բաս

բաստանութին։ Իսկ նր՟ երդումն արարեալ նր՟, ոպ՟ զի մի հոգս կալցի վն՟ ամբաստանութե՟, զոր յառաջագոյն գր րով և երդմամբ հաստատեաց։ Եւ եկեալ առ եպիսկոպոսունսն, որոց դատաստանն յանձնէր, խաղաղական բանս առաջի դնէր, և պայման սահմանէր զքառասուն օր, և ապա եկեսցեն վկայքն. և ինքն զաղտագողի փախստական եղեալ գայ 'ի Կոստանդնու պօլիս։ Իսկ դատաւորքն համբերեալ իբրև զաւուրս 30, և տեսին զի ոչ եկն. ապա իմացեալ զխաբէութի նր՟, կտրեն զնա 'ի հաղորդութէ եկեղեցւոյ իբրև զրպարտող։ Իսկ Անտոնինոս 'ի մարդկային դատաստանացն զերծաւ 'ի ձեռն կաշառոց. սակայն յանկաշառ դատաւորէն ոչ կարէր ապրել, քանզի զկնի սակաւ աւուրց վախճանէր։

Արդ՝ իբրև այս այսպէս եղև. վաղվաղակի գրեն թուղթ՝ ափրիկան կողման եպիսկոպոսունքն, և երիցունքն մեծաւ աղաչանօք. որպէս զի արագ հասցէ առ նոսա բժիշկն հոգւոյ՝ երանելին յովհաննէս ոպ՟ զի բժշկեսցէ և զայնց կողմանց եկեղեցիսն 'ի պիղծ աղանդոյն արիոսի, և 'ի չար ագահութենն, որ անդ սերմանեցաւ։ Իսկ քահանայապետն ն՟յ. վն՟ յուանդնոս և ջերմ սիրոյն, զոր ունէր առ ամենեն, և վն՟ յօժարութե՟՝ որ առ հաստատութի եկեղեցւոյն, և վն՟ նախանձուն ն՟յ՝ որ առ բարեպաշտութե հաւատն, առ ոչ ինչ համարէր զնմ՟ խափանողական կըրճին. ոչ զտկարութի մարմնոյն, և ոչ զխստութի ձմերանն, և ոչ զերկարութի ճանապարհին։ Այլ անյապաղ փութով մտեալ

մտեալ 'ի նաւ, և յերկու աւուրս ել 'ի յապամեայ, քանզի անդ միայն նմա պօղոս, և կիւրինիոս, և պաղադիոս՝ ընտրեալ եպիսկոպոսունքն· քանզի սոքօք կամեցաւ ճանապարհորդել յեփեսոս: Եւ իբրև լուր եղև գալստեան նր յեփեսոս, եկին ամ լիդիոն, և իւռեկիայ, և կառիա, և ամ ասիական ծքն, եպիսկոպոսունք, և երիցունք, և այլք նշանաւորք, և իշխանք՝ մեծաւ ուրախութբ եկին ը առաջ նր: Եւ ժողովեցան առ նա անդ՝ եպիսկոպոսունք թուով իբրև եօթանասունք, բաց յերիցանց, և 'ի սարկաւագաց, և 'ի մեծամեծ իշխանաց: Իսկ բազմամբոխ ժողովուրդն եւս առաւել բազում էր յոյժ· քանզի մեծաւ ցանկութբ և փափաքանօք կամէին տեսանել զնա ամենեքեն, և լսել զքաղցրաբարբառ, և զյորդառատ վարդապետութի նր: Եւ մն առաւել իմաստութե, և անաչառ, և լուսաւոր բանին՝ կոչէին զնա Ոսկեբերան:

Իսկ զկնի այս ամի, եւսեբիոս ոմն անտոնինոսի, եկեալ առ երանելին յոհաննէս, զի ընկալցի զնա 'ի յաղորդութի յայնմ յառաջին յորտշմանէն, որով լուծակաւ յեպիսկոպոսայն իբրև զպարտօղ, ընդունելութի խնդրէր, և խոստանայր՝ զոր յառաջագոյնն ասաց, ըդ վկայսն յանդիման կացուցանել զայնոսիկ, որք տուեալ են զարծաթն, և ընկալեալք զձեռնադրութի եպիսկոպոսութեան 'ի յանտոնէ: Եւ իբրև ածան նոքա առաջի, սկսան հրաժարիլ՝ իբր թէ չիցեն նոքա այնոքիկ· քանզի վստահանալով յայս, որպէս զի մեռաւ անտոնինոս որ էառ զարծաթն, եթէ

ոչ յայտնեն նոքա: Իսկ ապա իբրև քննեցաւ, և ընթերցաւ ամբաստանութին առաջի ամենեցուն, և նոքա տակաւին ևս ուրանային: Յայնժամ վկայքն մերձ եկեալ և զտեղին, և զժամանակն, և զկշիռ ոսկւոյն՝ յանդիման կացուցին: Իսկ ապա յաղթեալ արքն 'ի յանդիմանութե վկայիցն, խոստովանեցան վն տալոյ արծաթոյն: Եւ այսպէս ժողովն դատաստան արարեալ, զոսկին 'ի բաց առին 'ի ժառանգաւորացն անտոնի, և ետուն 'ի տեարս ելևանցն, որք տուժեալն էին, և այնու ստացեալ զպարգևս աստուծոյ: Եւ սահմանեցին նոցա 'ի բաց կալ յեպիսկոպոսութենէն, փոխանակ զի հրէական ագահութեան և փառամոլութե զհետ չոգան, արծաթոյ գնելով զքահանայութե, և զեպիսկոպոսութե զպատիւն: Եւ էին որք զայգործեցին՝ վեց եպիսկոպոսք, որք և 'ի բաց կացին 'ի պատուոյ, զի մի չար սովորութի անկցի յեկեղեցիս այ: Եւ ապա ընտրեալ երանելին յովհաննէս հանդերձ այլովքն որս առաքինս՝ ձեռնադրեաց փոխանակ նոցա: Եւ ամենեքեան ուրախացան ընդ վրէժխնդրութի օրէնացն այ, և փառաւորեցին զած: Եւ այլ բազում ձեռնադրութիս ընտրէր՝ 'ի բաց հանելով զարատաւորսն, և փոխանակ նոցա կացուցանէր զսուրբսն, և զանարծաթսէրսն, և զանփառասէրսն, և զհեզս, և զխոնարհս:

Յայնժամ խնդիրս 'ի մէջ առեալ, թէ զո՞վ ձեռնադրեսցէն եպիսկոպոս եփեսոսի փոխանակ անտոնի: Եւ 'ի բազում աւուրս քննեալ, ապա գտին զոմն, որում անուն

էր

էր երակլիդիայ, որ էր սարկաւագ անուանի, յերկրէ կիպրոսի, զնա ձեռնադրեցին եպիսկոպոս եփեսոսի։ Եւ զայլ բազում եկեղեցիս լուսաւորեաց ձեռնադրութեամբ, եւ ամենայն վարդապետութեամբն, որ հոգւովն սրբով իբրեւ զմշտնջենաւոր հոտանս բղխէին ՚ի նմանէ։ Եւ իբրեւ ամրացոյց զասիայ ամենայն պատուիրանօքն զամենեսեան առ հասարակ. եւս առաւել ըզ եպիսկոպոսունս, յիշեցուցանելով նոցա զառաքելական բանն, որ առ Տիմոթէոս զգուշութիւն ձեռնադրութեան. Եթէ՝ մի մատաղատունկ, զի մի՝ հպարտացեալ՝ ՚ի դատաստան սատանայի անկցի. ( I. Տիմ. 3. 6։ ) Եւ եթէ վաղվաղակի ձեռս յուրուք վերայ մի՛ դնիցես, եւ մի կցորդ լինիցիս մեղաց օտարաց. ( I. Տիմ 5. 22։ ) Եւ ապա յետ այսորիկ, եկն ՚ի կոստանդինուպօլիս, եւ եգիտ զնոսա տրտմեալս յաղագս խռովոյ յամելոյն։ Ապա անդրէն իսկ եւ իսկ ելեալ ՚ի բարձր աստիճանն, յաւէտ բազմացուցանէր զաստուածաբանութիւն, փոխանակ ՚ի բացեայ լինելոյն։ Եւ ով արդեօք պատմել կարասցէ զառաւելութիւն բարեացն, որ ՚ի նմանէ լցեալ լինէր յեկեղեցիս Աստուծոյ։ զի ոչ եթէ ՚ի նոյնութեան միշտ կայր. այլ եւ առաւելեալ լինէր ՚ի բարիսն, գնալով ՚ի զօրութենէ ՚ի զօրութիւն։ Քանզի՝ յամենայնի բերէր յինքն զ ջերմութիւն սիրոյն Քրիստոսի՝ որպէս երանելւոյն պետրոսի, եւ զբարեաց նախանձն՝ որպէս Պօղոսի, եւ զհամարձակութիւն՝ որ յաղագս տնօրինեցելոյն յօրէնս Աստուծոյ՝ որպէս անուանակից իւր մեծն ՚ի ծնունդս կանանց կարապետն Քրիստոսի յովհաննէս։ Քանզի ոչ զանգիտէր ՚ի

՚ի վտանգից, կամ ՚ի մահուանէ՝ որ յաղագս պատուիրանացն ա̄յ յանդիմանութեան. այլ մանաւանդ յայնմանէ զարհուրէր, գուցէ յաղագս ծուլութեան երբեք տրտմեցուսցէ զա̄ծ :

## Վասն նախանձայոյզ գորոյ Սրբոյն՝ առ Աճոյին երանունւ :

Պատմեցին և վ̄ն համարձակութեան երանելւոյն, որ առ Երուսաղէմն ա̄յ ունէր : Կին ոմն, որում անուն էր կալիստրատս, որ էր լեալ առն նաւապետի յաղեքսանդրիայ : Եւ ոմանք յիւրոց քաղաքակցացն՝ լցեալ նախանձու սատանայի, մատնեցին զնա ՚ի ձեռս Բաբղակիոսի զօրավարի, որ ունէր յայնժամ զիշխանութեան քաղաքին աղեքսանդրու : Իսկ ն̄ս ըմբռնեալ զկինն այրի, պահանջէր ՚ի նմանէ հինգ հարիւր դահեկան. և ն̄ս քանզի ոչ ունէր հատուցանել, տուեալ զա̄մ ինչս իւր գրաւական, և առեալ դրամ փոխ, ետ՝ և արձակեցաւ ՚ի նմանէ : Եւ յետ սակաւ ժամանակի փոխեցաւ բաբղակիոս յիշխանութենէ անտի, և եկն ՚ի կոստանդնուպօլիս : Իսկ ապա փոխատուքն կնոջն՝ երբև ոչ ունէր հատուցանել, յաճախապէս նեղէին զնա, և թշնամանէին, և կալեալ խեղդէին, մինչև տացէ զոր է առն փոխ : Եւ ապա կինն այն աղաչեալ՝ զի ներեսցեն նմա, և ինքն յարուցեալ նաւեաց, և եկն ՚ի կոստանդնուպօլիս, և ծանոյց զդատաստանս իւր Թագաւորին : Եւ Թագաւորն հրամայեաց եպարքոսին՝ դարձուցանել յայրին, զոր

ինչ

ինչ անխրատեալն էր բարբաղկիսս: Իսկ եպարքսն՝ քան-
զի բարեկամ էր նմա, թիւրեաց զդատաստանն, արհա-
մարհելով և աղարտելով զայրն: Եւ այրւոյն երթեալ
առ ոմն 'ի նաւապետաց քաղաքին, ծանոյց նմա վն որ-
համարելոյ եպարքոսին զդատաստանն նր, որ եղև 'ի թա
գաւորէն. և աղաչէր զնա՝ զի համարձակեցուսցէ զնա
առ թագուհին Եւդոքսիա: Իսկ նր գթացեալ 'ի նա՝ ած
զնա առ թագուհին: Եւ նր պատմեալ զամ տառապանս
իւր, զոր կրեաց 'ի բարբաղկիսէ: Իսկ թագուհին 'ի
նմին ժամու առաքեաց երկուս զինուորս՝ ածել զնա ա-
ռաջի իւր: Եւ իբրև ածան՝ ասէ ցնա. դու՞ ես՝ որ աւե-
րեցեր զմայրաքաղաքն եգիպտացւոց աղեքսանդրիա, փո-
խանակ շինելոյ և հաստատելոյ. մի՞ թէ այդպէս առեր
հրաման 'ի մէնջ: Նա պատասխանի ետ և ասէ. ո՞վ թա-
գուհի՝ ոչ զոք աւերեցի, կամ զրկեցի: Եւ նա ասէ ա-
հաւասիկ մի յայնցանէ, որ զրկեցան 'ի քէն, աղաղա-
կէ զկնի քո, յորմէ պահանջեալ ես անխրատութե հինգ
հարիւր դահեկանս. արդ զինչ տայցես պատասխանի առ-
այդ: Ասէ այրն. մի անգիտասցէ ինքնակալութիւդ քո, զի
ծախեցի զայն 'ի պէտս իշխանական հրամանաց թագաւո-
րութեդ ձերում, նախ քան զելանելն իմ յիշխանութե
քաղաքին: Ասէ թագուհին. ինձ ոչ ինչ է փոյթ, և
կամ, թէ գիտիցեմ զոր խօսիդ, այլ իմ երդուեալ 'ի փրկը-
կութի ինքնակալութեցս, եթէ ոչ ելցես աստի, մինչև
հատուսցես հարիւր լիտր ոսկւոյ: Եւ, հրամայեաց զինու

որ

ճօրայն տանջել զնա մինչև տայէ : Իսկ բաբղակիոս իբ-
րև իմացաւ զանհրաժեշտ հրամանն. ետ զոսկին, և ար-
ձակեցաւ : Եւ Թագուհին առեալ զայնչափ կշիռ ոս-
կւոյն հրամայեաց տալ այրւոյն՝ երեսուն և վեց դահե-
կան, և զայլն եարկ 'ի գանձանակն իւր, և զայրին հրա-
մայեաց արտաքս հանել : Եւ այրին այն տառապեալ լայր,
և կոծէր զինքն դառն արտասուօք ողբալով 'ի վերայ անակն-
կալ չարեաց, և երկրորդ վշտայն, որ եկն 'ի վերայ նորա :
Ապա լուաւ վասն երանելւոյն Յովհաննու, թէ ընդունի
զամենայն վշտացեալս, և մանաւանդ զայնոսիկ՝ որք ոչ ունիցին
օգնական : Եւ երթեալ անկաւ առաջի նորա, և պատմեալ
զամենայն աղէտսն, որ հասին նմա՝ 'ի բաբղակիոսէ, և զհետ
այնորիկ 'ի Թագուհւոյն :

Զայս իբրև լուաւ յովհաննէս. գթացաւ 'ի նա, և մա-
նաւանդ իբրև ետես թէ բազում պարտս բարդի յաղէք
սանդրխայ, և նեղի 'ի նոցանէ : Յայնժամ կոչեաց առ ինքն
զբաբղակիոս 'ի յեկեղեցւոջն, և ասէ ցնա : Որդեակ կար-
ծեմ ոչ զմտաւ ածես դու եթէ ոչ զայրին զայն, այլ
զաստուած անիրաւեցեր զի նա է հայր որբոց և դատաւոր այ-
րեաց. և ոչ գիտես եթէ խիստ է քեզ ընդդէմ սուսե-
րի կիցս ընկենուլ : Հատո՛ արդ տառապեալ կնոջն զոր
պահանջեցեր անիրաւութեամբ զի վճարեսցէ զպարտս իւր
և ազատեսցի յաններելի տրտմութենէն, և դու արձակեսցիս
յանիրաւութեանց կապանացդ : Պատասխանի ետ բաբղակիոս
և ասէ. տէր՝ գնաց կինդ այդ առ Թագուհին, և նա

տու

տուգանեաց զնա՝ հարիւր լիտր ոսկւոյ. արդ երթիցէ՝ առցէ 'ի նմանէ, զկնի իմ զի՞ աղաղակէ։ Ասէ ցնա երանելին. թէպէտ և ո՛չ ասաց՝ պահանջեաց 'ի քէն թագուհին, սակայն ես վասն անիրաւութեան, զոր գործեցեր յիշխանութեան քում, ոչ անտես արարից զիրաւունս տառապեալ կնոջն այսորիկ։ Այսուհետև տուր զոր ինչ առեր 'ի դմանէ՝ անպակաս, և մի՝ պատճառեր զթագուհին. զի ասեմ քեզ՝ թէ ոչ ելանիցես աստի, մինչև վճարեսցես՝ զոր անիրաւն պահանջեցեր։ Զայս լուեալ թագուհւոյն Եւդոկսեայ, առաքեաց առ նա ասելով. եթէ արձակեա զդա, քանզի պահանջեցի 'ի դմանէ վասն այդմ պատճառանացդ զքսան դանկ ոսկին։ Իսկ երանելին Յովհաննէս ասաց նմա 'ի ձեռն այնոցիկ՝ որ առաքեցան 'ի նմանէ։ Հաւատա ինձ թագուհի՝ զոր ինչ ասեմ քեզ եթէ ոչ արձակի սա աստի, մինչև անդրէն դարձուսցէ զոր էառն անիրաւութեամբ 'ի տառապեալ կնոջէ աստի։ Եւ դարձեալ առաքեաց առ նա թագուհին ասելով. եթէ մի՝ հակառակիր ընդդէմ թագաւորաց։ Իսկ երանելի Հայրապետն, պատասխանի արարեալ ասէ. եթէ կամիս զի արձակեսցի զդա, առաքեա զտառապեալ այրւոյն՝ զհինգ հարիւր դահեկանն։ Եւ յորժամ զայս առնէր՝ ոչինչ զրկէր, զի վասն այսմ պատճառի գու բազում ոսկի առեր 'ի բարեպաշտաւ. զճ հարիւր լիտր։

Զայս իբրև լուաւ թագուհին, լի եղև սրտմտութեամբ և ասէ. ո՛չ տեսանեմ, եկն նա յանտիոքայ անգործ առնել կամելով զհրաման թագաւորութեան մերոյ։ Ապա առաքեաց

եր

երկուս Սպարապետս հանդերձ երկերիւր Ձիաւորօք. ո͞պ զի բռնութ͞բ կորզեսցեն զԲաբղակիոս յեկեղեցւոյն, և արձակեսցեն զնա 'ի տուն իւր: Եւ նոցա եկեալ առ նախադրունս, կամեցան և 'ի ներքս մտանել: Եւ ահա տեսին զի հրեշտակ ա͞յ կայր առ դրունս, ունելով 'ի ձեռին իւրում սուսեր մերկ, և արգելոյր զն͞ս 'ի մտանելոյ: Իսկ նոցա տեսեալ զայս՝ երկեան յոյժ, և դողութ͞բ մեծաւ դարձան անդրէն առ Թագուհին, և պատմեցին նմա զտեսիլ հրեշտակին. իսկ իբրև լուաւ զայս Թագուհին, երկեաւ յոյժ: Այլ Թէպէտ և այսպէս զարհուրեալ սարսափէր յանձն իւր. սակայն զխռովութ͞ի հոգւոյ իւրոյ՝ զոր ունէր առ Յովհաննէս, և զդժուարութիւն կրից իւրոց ոչ կամեցաւ 'ի բաց դնել յինքենէ. այլ սաստիկ միշտ յիշատակէր չարիս կրեալ 'ի նմանէ, և խնդրէր ժամանակ՝ ո͞պ զի հատուսցէ նմա վրէժ: Բայց առ ժամայն ոչ յայտնէր, այլ առաքէր դարձեալ զոմն յիշխանաց պալատին, որում անուն էր Փորմենտիոս, և աղաչէր հեզ բանիւք արձակել զԲաբղակիոս: Իսկ մեծն Յովհաննէս՝ միշտ հայելով յիրաւունս ա͞յ, վ͞ն այնորիկ և ոչ այն ևս փաղաքշանացն ն͞ր կամեցաւ լսել, այլ զայս պատասխանի առնէր: Ոչ (ասէ) Թէ ընդ հակառակս ինչ ելանել Թագաւորական հրամանաց՝ զայս գործելով. վ͞ն զի՝ չէ իսկ արժան հակառակ կալ հրամանաց Թագաւորաց. այլ կամիմ զի զողորմելոյ արժանաւոր զայրն զայս՝ ազատեցից 'ի կապանաց աղքատութ͞է, որ 'ի զրկանաց անտի եղև. և զԲաբղակիոս արձակեցից 'ի

կա

կապանաց անիրաւութեան, որ 'ի զրկանաց անտի եղև ։ Եւ
զքեզ զգաստացուցից, ո՞չ զի վաճառաշահ լիցիս առ հոգ-
ւոյդ փրկութիւն, և մի՛ կուտեսցես վէրս 'ի վերայ վիրաց՝ զայլս
զրկելով ։ Իսկ բաբղակիտս իբրև ետես թէ ոչ ինչ օգտի
'ի Թագուհւոյն, առաքեաց 'ի տուն իւր՝ և ետ բերել զհինգ
հարիւր դահեկանն, և ետ ցայրին՝ յանդիման եպիսկոպո-
սապետին, և այսպէս արձակեցաւ յեկեղեցւոյն, և գնաց
'ի տուն նորա ։ Եւ կինն այրի, ուրախութեամբ մեծաւ դարձաւ
'ի քաղաք իւր, փառաւորելով զԱստուած՝ որ ազատեաց զնա 'ի
բազում վշտաց, օգնականութեամբ սրբոյն յովհաննու ոսկեբե-
րանին ։ Եւ ինքն երանելին յովհաննէս՝ դարձեալ անդրէն
'ի նոյն կանխեալ, յանձնապէս խրատէր հասարակաբար
զամենեսեան՝ 'ի բաց կալ յախտէ արծաթսիրութեան, և 'ի
զրկանաց և յանիրաւ դատաստանաց, այլ և յամենայն անօրէնու-
թենէ, և գործել զընդդէմն ախտից՝ որ է սիրելի Աստուծոյ ։

Իսկ Թագուհին զայս ամենայն ասացեալս առ ինքն կարծելով,
առաքեաց զոմանս յիշխանացն առ նա և ասէ ։ Լուեալ այ-
սուհետև 'ի գործոյ՝ որ ոչ հոգս է քեզ, այլ մեզ թա-
գաւորացս, և մի ձեռնարկեր յայն ինչ՝ որ ոչ անկ է քեզ,
ո՞չ և մեք ոչ ձեռնարկեմք յեկեղեցական գործըս ։ Լուեալ
արդ, և մի 'ի հրապարակի եկեղեցւոյդ 'ի ձեռն առակաց
'ի դէմս այլոց անարգեր զիս, զի ես երբեք ոչ խափանե-
ցայ, և ոչ երբեք այլ խափանիմ իբրև զհայր պատուել ըզ
քեզ ։ Այսպէս և դու՝ զոնեայ յայսմհետէ 'ի լաւագոյնսն յա-
ռաջեալ խօսել՝ ո՞չ և վայելէ քեզ ։ կաց արդ յեկեղեցական
իրադ

երտդ, և մի՛ արկաներ զքեզ 'ի քաղաքական և 'ի դիւա-
նական գործ. քանզի ոչ ներեսցես այդպէս գործելով քո:
Իսկ երանելին Յովհաննէս՝ երբեւ լուաւ զայս, մտախոհ
եղեալ յանձն իւր՝ ասէր. զինչ արդեօք լինիցի նմա, զի
այնպէս լքեալ բարկացուցանէ զնա գործովք իւրովք,
և դժմադարձ լինելով պատուիրանացն նորա. և յոգւոց հա-
նելով մեծապէս հառաչէր զանզգամութենէ նորա: Եւ պատաս-
խանի տուեալ այնոցիկ, որք առաքեցանն՝ ասէ: Երանելի
առաքեալն Պօղոս՝ աղաղակէ ասելով: եթէ տակաւին
մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի. (Գաղ.
1. 10:) Եւ դարձեալ ասէ. թէ յանդիմանեա, սաստեա,
և մխիթարեա. (2. Տիմ. 4. 2:) Եւ դարձեալ. ինձ ոչ
ինչ դանդաղելի ասելս, և ձեզ կարի զգուշալի՝ որ լսէք.
(Փիլ. 3. 1:) Այսպէս՝ և ես փութամ ոչ ինչ համարե-
լով զլուտանս այլոց, այլ պահել և քարոզել զբանն Տն
ամբիծ՝ մինչև 'ի վերջին շունչն: Նա՝ ով և ինքն իսկ
կարծէ յայտ յանդիման ամենեցուն թէ յանդիմանէի զնա,
ոչ էր պարտ բանբասել զիս: Քանզի տեսանեմ զնա արտա-
քոյ օրինացն այ, այլ սակայն 'ի յերեսս՝ ոչ զնա, և ոչ զայլ
ոք յանդիմանեցի, կամ աղարտեցի. այլ որք յանձնաթողու-
թեան, կամ յայլ անօրէնութիւնս ըմբռնեալ են, զայնպիսին
ոչ դադարեցի 'ի յանդիմանելոյ, և այլ ոչ ևս դադարեմ,
թերևս ազատեսցին 'ի սատակիչ ախտիցն: Եւ այս՝ ու-
րախութիւն զամօթալին է իմանալ, և ազատանալ յայնմանէ,
և ոչ եթէ տրտմութիւն, կամ անարգանաց առիթ: Արդ

եթէ

եթէ 'ի ներքոյ անկեալ է յինէն ասացելոյն, և յայնմանէ ազատանալ ոչ կամի, գիտասցէ՝ զի ոչ եթէ զնա անարգեմ, այլ զգործս իւր. զի որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղացն. որպէս ուսուցանէ մեզ Քրիստոս. (Յօհանն. 12. 11։) Եւ զինչ այլ անարգագոյն կայցէ՝ յորժամ ոք զինքն պղծութեան 'ի ներքոյ դնիցէ, և զնա իւր հրամանատու առնիցէ ։ Եւ կամ զի՞նչ օգուտ 'ի յագահութեն իցէ. զոր և Քրիստոս յայտնապէս աղաղակէ ։ եթէ զինչ օգտեսցի ոք, եթէ զաշխարհ ամենայն շահեսցի, և զհոգի իւր կորուսանէ, և կամ զինչ տացէ մարդ փրկանս փոխանակ անձին իւրոյ. ( Մատ. 16. 26 ։)

Արդ՝ զայս, և որ նմանէ նոցին ասացեալ, արձակեաց զնա ։ խաղաղութեամբ. և նոքա եկեալ առ Թագուհին՝ ասեն ցնա ։ Լուաք մեք 'ի նմանէ բանս համարձակութեան, և տեսաք մեք զնա յոյժ գեր 'ի վերոյ քան զերկիւղ բնութեանս, զի ոչ 'ի սրոյ երկնչէր, և ոչ 'ի խորտասողն լինելոյ. այլև՝ զամենայն տանջանարանս առ ոչ ինչ համարի, և միայն այս փոյթ է նորա՝ սաստել և յանդիմանել, որք զանդէպս գործիցեն ։ Եւ զայս ասացեալ նոցա, մատուցին առաջի նորա զգիրսն. քանզի զամենայն զբանս երանելւոյն, զոր պատասխանեաց նոցա՝ գրեցին ։ Եւ նորա կոչեցեալ զմի 'ի դպրացն, ընթեռնուլ հրամայեաց առաջի իւր. և յորժամ իմացաւ զզօրութիւն բանիցն, առաւել ևս լցաւ սրտմտութեամբ և բարկութեամբ, և խորհէր թէ որպէս նենգեսցէ զնա ։ Նա և՝ այս գործէր չարանախանձ դիւին, որպէս զի՝ ամենայն չարութեամբ գործեսցէ զնա, և նովաւ ան զարդացուսցէ զսուրբ եկեղեցիս Քրիստոսի ։

Քանզի

Քանզի իբրև ետես բարի ատեացն այն, զի օր աւուր նո առաւել պայծառանայր քաղաքն բարեպաշտութեամբ, և ողջախոհութեամբ, և զանձն իւրաքանչիւրոցն տեսանէր զուարճացեալս սաղմոս երգութբ. և 'ի ձեռն հոգևոր փողոյ վարդապետութե մեծ՝ ամենեքեան թողեալ զձի ընթացիկ թատերսն՝ որ էր գաւիթ սատանայի, ընթանային 'ի փարախս մե հօտապետին։

Յաղագս դաւաճանութե հակառակորդացն, և Տանջանաց Թէոփիլոսի։


Արդ զայս ամ տեսեալ դիւին՝ վառեցաւ նախանձու, և կամեցաւ զթագաւորական քաղաքն, մանաւանդ թէ զամ իսկ տիեզերս՝ զրկել 'ի լուսափայլ և ածախօս վարդապետութենէն, այլ ոչ կարաց ըստ կարծեացն, և փութային. քանզի պակեաւ 'ի ճառագայթարձակ հրաշէից իմաստութե։ Այլ սակայն ջանայր, և շարժէր զոմանս 'ի պատերազմ, որք ազգի ազգի պատճառանօք թըշնամութի ունէին ընդ նմն։ Եւ առաջնորդք նախանձու հակառակութեն՝ էին այսոքիկ, 'ի յայտնի եպիսկոպոսաց չորս։ այ Ակակիոս, Անտիոքոս, Թէոփիլոս, և Սևերիանոս։ Իսկ երիցունք երկու։ Եւ սարկաւագունք, հինգ։ Եւ այսոքիկ՝ այնք էին, որք յառաջագոյն որոշեալք էին 'ի նմանէ յաղագս պղծութե իւրեք, և վասն թար գոլ ծոյց։ Իսկ 'ի թագաւորական գաւթէն՝ երկու, կամ երեք միայն էին. որք

որք յետոյ զինուորական զինու օգնականք, և մարտակիցք եղեն Թէոփիլոսեանցն: Եւ կանայք այլեք, որք հրաշակաւորք էին՝ երեք, որք իբրև զարս 'ի յափշտակութե և յանիրաւութե բազում ինչ ստացեալ էին, որք՝ և կախարդութե, և այլ չար պիղծ աղտեղութե, զոր պատկառեմ ասել՝ լցեալք էին: Եւ զոր օրինակ, ժողովածու ջուրք ժահահոտեալք՝ անպիտան լինին ըմպողաց, այսպէս և ուսումնատեացք և չարագործք՝ 'ի մի տեղի գումարելք, հակառակ եկեղեցւոյ խաղաղութե հնարէին:

Յայնժամ Ակակիոս եպիսկոպոս Բերիոյ քաղաքին, և Սևերիանոս, և Անտիոքոս՝ հանդերձ այնոքիւք, որ 'ի կղերիկոսաց դասէն էին. (զոր յառաջագոյն յիշատակեցաք 'ի բանս) որք վս պատճառանաց իրիք ատելիք էին յովհաննու: և այլ ոմն Իսահակ անուն, որ էր առաջնորդ անօւանեալ՝ սուտ անուն կրօնաւորաց: Որք՝ միշտ հակառակէին ընդդէմ Ճշմարիտ եպիսկոպոսաց, ևս առաւել՝ վս յովհաննու դաւաճանէին, մանաւանդ թէ՝ փառաց փոկ չէին Քս ընդդիմանային: Առաքեն յանտիոք յառաջագոյն, ուր սնեալն էր երանելին, զի թերևս բիծ ինչ կարասցեն գտանել 'ի տղայութե հասակի նր. ոչ զի՝ դիցեն ը դէմ հակառակ նր. և անդ պատրաստեցան առ 'ի քննել զքննութիս, բայց գտին և ոչ ինչ: Ապա՝ առաքեցին յաղէքսանդրիայ առ Թէոփիլոս, ոչ զի կարկատեսցէ 'ի վր նր բաղբաղանս ինչ, ոչ էր նր սովորութի, և ինքն լիցի նոցա գլուխ՝ պատերազմել ընդ յովհաննու: Իսկ

նա՝ ուղղակաբար խնդիրս արկանէր՝ թէ ո՞վ արդեօք ստակեսցէ, և հանցէ ըզ գանձն պատուական, և յանպատսպարան աղքատութեան սովեցուսցէ զ սուրբ եկեղեցի: Եւ ապա եգիտ սակաւ ինչ պատճառս, զոր յառաջագոյն էր կարկատեալ: Քանզի ՚ի ժամանակին յայնմիկ, էր ոմն քահանայ ծերունի և սուրբ՝ յաղեքսանդրիայ, որում անուն էր Իսիդորոս, և ունէր զձեռնադրութիւն քահանայութեան ՚ի մեծէն Աթանասէ, և ինքն էր ամաց իբրև ութսնից: Եւ այլ ոմն էր առաջին Քահանայ եկեղեցւոյն աղեքսանդրու, որում անուն էր՝ Պետրոս, առ որում և դժուարութիւս ունէր ընդ նմա Թէոփիլոս, և խորհէր արտաքսել զնա յեկեղեցւոյն, պատճառս գնելով ՚ի վերայ նորա. ոչ թէ զոմն կին մանիքեցի հաղորդեցոյց ՚ի սուրբ խորհրդոյն՝ նախ քան զ՚ի բաց կալն ՚ի չար աղանդոյն: Եւ Պետրոս ասէր. եթէ ՚ի բաց էր կացեալ յաղանդոյն, այլ ես ոչ եթէ յանձնէ, այլ քո կամօքն արարի զայն. և Թէոփիլոս ասէր՝ թէ ոչ գիտեմ զեղեալն: Եւ Պետրոս՝ զԻսիդորոս կոչէր վկայ, իբր թէ չէր անծանօթ Թէոփիլոս իրայն: Բայց Իսիդորոս քահանայ, ՚ի ժամանակին յայնմիկ էր ՚ի Հռոմ. քանզի առաքեցեալ անդ ՚ի Թէոփիլոսէ ՚ի Դամասոս հայրապետն Հռովմայ, առ ՚ի հաշտեցուցանել զնա ընդ Արք եպիսկոպոսն անտիոքայ Փղաբիանոս, որ յաղագս իրիք պատճառանաց էր որոշեալ: Եւ իբրև եկն Իսիդորոս յաղեքսանդրիայ, առեալ զնա պետրոսի՝ ածէր առ Թէոփիլոս, վկայել թէ՝ նորա կամօք հաղորդեցոյց ՚ի սուրբ խորհրդոյն զկինն, որ յառաջն մանիքեցի էր նախ քան զհա-

ւոր

ղորդելն։ Իսկ Թէոփիլոս իբրև լուաւ զայս, բորբոքե-
ցաւ սրտմտութեամբ, և զպետրոս քահանայ 'ի հաղորդութեան
սեղանոյն 'ի բաց հալածեաց, և զմտաւ ածէր՝ թէ որով օրի-
նակաւ և զեպիսկոպոսս աքսորեսցէ, զոր ապա 'ի ձեռն բազ-
մայոցն լինելոյ՝ եգիտ։ Սա՝ տուեալ հազար դահեկան
ցեպիսկոպոսս, և երդմնեցուցեալ զնա 'ի տէրունական սե-
ղանն, զի մի ծանուցանիցէ զայն Թէոփիլոսի. զի մի ասէ
վայրապար ծախեսցէ զայդ 'ի շինուածս. այլ զի գնես-
ցես դու զգեստս, և զգեցուսցես զաղքատս՝ և զորբս՝
և զայրիս՝ և զտնանկս աղէքսանդրու։ Եւ եպիսկոպոսն ա-
ռեալ զդահեկանսն, այնպէս արար՝ որպէս ասացաւ նմա։
Իսկ իբրև ծանեաւ զայն Թէոփիլոս, կոչեցեալ առ ինքն
զեպիսկոպոսն՝ հարցանէր, թէ ո՞րպէս իցէ որպէս լուեմ, իսկ
նա խոստովան եղև՝ և ոչ ուրացաւ. ասէ՝ որպէս երդմնեցոյց
զիս՝ որ աւանդեացն, այնպէս սպասաւորեցի։

Զայս լուեալ Թէոփիլոսի՝ առժամայն ծածկեաց զմը-
թերեալ սրտմտութիւն իւր. և զկնի երկուց ամսոց՝ յայտ
յանդիման բորբոքէր 'ի նախանձ. քանզի գրէր մուրհակս
հակառակ նորա՝ որպէս թէ յայլումեքէ ընկալեալ վասն նորա։ Եւ
էր պարտաւորութիւն նորա՝ գործ սոդոմայեցւոյն, զոր գը-
րեաց 'ի մուրհակին. և առեալ զթուղթն ետ ցեպիսկո-
պոսն՝ և ասէ. զայս գիր վասն քո ընկալայ յառաջ քան
զութուտասն ամ։ Պատասխանի ետ եպիսկոպոսն և ասէ.
և ընդէ՞ր զայնչափ ժամանակս պահեցեր, և ոչ յայտնե-
ցեր։ Ասէ Թէոփիլոս. վասն զի՝ անպարապ էի յորժամ ընկա-

լայ

լոյ զԹուղԹս՝ մոռացումն եղև. և ապա այժմ այլ ԹուղԹ խնդրէի, և գտի զայս հակառակ քո գրեալ: Ասէ ցնա իսիդորոս. և գրեսցուք Թէ դու մոռացար, և մանուկն որ ետ ցքեզ՝ ընդէ՞ր ոչ պահանջէր: Պատասխանի ետ Թէոփիլոս և ասէ. եԹէ նաւեալ էր մանուկն՝ և ոչ էր մերձ: Ասէ ցնա իսիդորոս. ո՞վ հայր պատուական, բաւական էր նաւելոյն երկու ամ, կամ երեք ուԹուտասն ամն՝ ընդէ՞ր էր. արդ յայսմհետէ եկեալ է, հրաման տուր կալ առաջի: Իսկ Թէոփիլոս յապաղէր մինչև 'ի միւս ևս օր: Եւ ապա երԹեալ ողոքէր զմանուկ ոմն՝ և զմայր իւր, և տուեալ մօրն՝ հնգետասան դահեկան, որպէս զի ստիպեսցէ ըզ մանուկն՝ վկայել այնպէս առաջի Թէոփիլոսի:

Բայց սակայն՝ անքուն ակնն, որ զխորհուրդս քննէ, արկեալ 'ի սիրտս կնոջն՝ ոչ ընդունել զդաւաճանուԹի Թէոփիլոսի: Ապա զմտաւ ածեալ՝ Թէ զրպարտեմ զիսիդորոս՝ ամբիծ և սբ քահանայ. և գուցէ ելցէ 'ի դատաստան առ իշխանս, և ստուԹիւն ոչ կարէ կեալ առաջի Ճշմարտութե, պատժեսցիմք: Եւ եկեալ առ իսիդորոս, ասաց նմա զխորամանկուԹիւն Թէոփիլոսի, և եցոյց նմա զոսկին՝ զոր առեալ էր 'ի կաշառս վն հաւանութե: Եւ այսպէս՝ իսիդորոս անբիծ զերծեաւ 'ի դաւաճանուԹենէ նր. բայց և ոչ ինչ խորհէր չար փոխանակ չարի նր, այլ կայր առանձինն՝ և աղաչէր զած: Իսկ Թէոփիլոս՝ առաւել ևս փղձէր որոմութբ յաղագս վրիպելոյն. և այլ ոչ ինչ կարացեալ առնել, սակայն յեկեղե-

ցւոյն

ցւոյն 'ի բաց մերժէր, և անդադար համբաւէր զանար-
ժան զոյժն 'ի վր նր: Եւ խնդորոս երկուցեալ՝ զու-
ցէ յայլ դժնդակ չարութէ պատրի Թէոփիլոսի, դարանա-
կալ լինել առ 'ի սպանանել զնա: Ապավաղակի հեռացեալ
անտի, գնաց 'ի լեառն Նիտրայիտոյ՝ առ գունդըս կրօ-
նաւորացն. ուր բազում ժամանակս կացեալ էր 'ի ման-
կութե տիսն. և անդ նստեալ 'ի սենեկի խցում, կայր
մինչ յաղօթս առ երկայնամիտն ած:

Արդ յայնմ ժամանակի՝ այսքան, և այս չափ խռովու-
թի լինէր յիշխանութիս հռովմայեցւոց 'ի մէջ եկե-
ղեցւոյ: զի քահանայք, և եպիսկոպոսունք ընդ հակա-
ռակս եղեալ՝ զմիմեամբք նենգէին, և 'ի մէջ քրիստոնէ-
ից՝ 'ի սատանայական հպարտութենէն՝ այլ և այլ կրօնք
հակառակ միմեանց քարոզեալք լինէին: Եւ սկիզբն չա-
րեացն՝ յեգիպտոսէ սկսեալ. զի խնդիրս 'ի մէջ առեալ,
ոմանք զած մարդանձև, և մարմնակերպ ասէին. և այլք ան-
մարմին, և անկերպարան: Եւ յաղագս այսպիսի խնդրոյ,
այլք այլոց ջատագով լինէին, և կէսք ընդդէմ հակա-
ռակ էին: և այս առ բազումս լինէր, մանաւանդ առ
կրօնաւորս՝ որք դատարկացեալք, և առանց ուսման, և
անագորոյնք էին: Այլև՝ Թէոփիլոս Եպիսկոպոսապետն
աղէքսանդրու, այնպիսեացն ձայնակից լեալ. յաւուր միոջ
յեկեղեցւոջն այնպէս հրապարակախօս լինէր, մարդա-
կերպ զած ասէր լինել, զոր յառաջագոյն անձև, և ան-
մարմին ասէր: Զայս լուեալ՝ որք յեգիպտոս կրօնաւորքն
էին

ելին, Թողին զվանորայսն, և եկեալ ժողովեցան յաղեք-
սանդրիայ. և ամբոխ արարեալ 'ի վր Թէոփիլոսի, կամէին
զի իբրև զմի յամպարշտաց սատակեսցեն զնա:

Իսկ Թէոփիլոս հնարեցաւ՝ որպ զի ձողոպրեսցի 'ի նոցա-
նէն, զի մի սպանցեն զնա. և եկեալ առ նս, փաղաքշանօք
խօսէր ընդ նս, և ասէր այսպէս: Ես այսպէս տեսանեմ զձեզ
իբրև զերեսս Այ. այս բանք կակղացոյց զնս, և Թողա-
ցուցին զդիմելն 'ի վր նր: Եւ ասեն ցնա. Թէ պարտէր
քեզ իբրև հայրապետի՝ եկեղեցւոյ հոգ տանել, և զա-
մենայն հաւանեցուցանել, և զճշմարտութի հաստա-
տել, և քարոզել զածութիւնն՝ անտեսանելի, անհասանե-
լի, անկերպարան, անձև, անսկիզբն, յառաջքան զյաւի-
տեանս: Իսկ մարմին մարդոյն (ասեն) և կերպարն՝ և ձև,
յետոյ միածինն հօր զգեցաւ վս փրկութե մարդկան. և
յորժամ կատարեաց զամ, նովին մարմնով ել նստաւ ընդ
աջմէ հօր, և գալոց է նովին մարմնով 'ի դատել զկեն-
դանիս և զմեռեալս: Արդ՝ այսպէս պարտ էր հաստա-
տել զճշմարտութի, և փառաւորել զած: Իսկ Թէոփի-
լոս, հաւանեցոյց զնս ասելովն. Թէ՝ տեսանեմ զձեզ իբր-
զերեսս Այ. որպ զի կարծեցուցանել նոցա, Թէ զքզ ար-
իմ այսպէս ասելով, նոցա Թուեցաւ Թէ մարմնապէս, և
մարդաձև ասացի զօլ զած : Եւ նոքա յորժամ այսպէս
լուան 'ի նմանէ՝ ասեն ցնա. եթէ այսպէս ասես, նզովեա
զգրեանսն որոգինի. ապա Թէ զայդ ոչ առնես, իբրև ամ-
բարիշտ պատուհասիս 'ի մէնջ: Ասէ ցնս. այլ և ես Թէ-

ոփի

ոփիլոս՝ ոչ դուքդ ասէք, մինչ դժուարինս եմ ընդ Որոգինէսի, և այդպէս առնեմ. վս էր բարկանայք 'ի վր իմ։ Արդ՝ զայս այսպէս խորամանկեաց Թէոփիլոս, և խաղաղութբ 'ի բաց յուղարկեաց զնս յիւրաքանչիւր տեղիս։ Բայց մեզ արժան է կարգաւ տանել զպատմութիս ըն ոճին։

## Յաղագս այլոց վաճառականութեանց Թէոփիլոսի։

Էին չորք եղբարք կրօնաւորք ընտրեալք յամ Եգիպտոս, և վայելչացեալք ամ առաքինութբ, որոց անուանքն են այսոքիկ. Դէոսկորոս. Ամոնիոս. Եւսեբիոս. և Եւթիմիոս։ Սոքա եղբարք էին հարազատք՝ ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ, և հանդերձ այլ առաքինութբ և վարուք, և զդաւանութի Երրորդութեն ուղիղ խոստովանէին. և Թէոփիլոս զնս առաւել սիրէր քան զամ կրօնաւորսն։ Ըստ որում և զմինն 'ի նոցանէ զԴէոսկորոս՝ բռնութբ եպիսկոպոս ձեռնադրեաց Երմոն քաղաքի։ Եւ զայլ զերկուսն, զԱմոնիոս, և զԵւթեմիոս, հազիւ հաւանեցուցեալ մեծաւ աղաչանօք՝ մօտ առ ինքն կալ. և ձեռնադրեաց զնս քահանայս՝ խառնելով իշխել կղերիկոսացն, հաստատեալ 'ի նս զտնտեսութի եկեղեցւոյն։ Իսկ նոքա 'ի հարկէ պաշտէին ըզսպասաւորութին, զմտաւ ածելով, եթէ՝ ոչ ոք պարտ է կրօնաւորաց՝ այնպէս կալ, վնասելով զանցեալ ժամանակի ճգնութի մեր։ Այլև՝ տեսանէին զԹէոփիլոս, զի

յոյժ

յոյժ ցանկացօղ էր ընչից, և ջանայր ստանալ արծաթ. որ է արմատ ամ՟ չարեաց արծաթսիրութի՟ւ: Եւ վս՟ այս պիսի պատճառանացս՝ 'ի բաց հրաժարեալք 'ի նմանէ երկիւղածքն այնորիկ, գնային յանապատն իւրեանց: Իսկ Թէոփիլոս՝ իբրև ետես զինքն այնպէս անպատուեալ 'ի նոցանէ, լի եղև սրտմտութ՟բ, և չարապէս սպառնայր 'ի վր՟ նոցա, և նոքա սակաւ՟ ինչ հոգ տարեալ սպառնալեացն, սիրեցին զվարս ճգնութ՟ե իւրեանց, զոր 'ի մանկութ՟է ստացեալ էին: Եւ նա բազում և ազգի ազգի պատճառս յօդէր 'ի վր՟ նոցա, և բազում սրտմտութի՟ս և ճգունս հասուցանէր 'ի վր՟ դէոսկորոսի եղբօր նոցա, որ էր եպիսկոպոս Երմոն քաղաքի:

Եւ իբրև յայտ ամ՟ խորամանկութ՟եց ոչինչ կարաց ադել: Ապա հնարեցաւ յայտնի պատերազմաւ 'ի բաց հալածել զն՟ 'ի լեռնէ անտի. և սկսաւ քարոզել իբրև ըզյայտնի հերձուածօղս զն՟, որպ՟ թէ ձայնակիցք են որոգինի: և ոչ թէ միայն զն՟, այլև զեպիսկոպոսունսն՝ որք մերձք էին առ ն՟՝ հաւասար հալածել հրամայէր: Իսկ նոքա հանդերձ քահանայիւք իւրեանց՝ եկին յաղեքսանդրիայ, և մտե՟լ առ նա, աղաչեցին իմանալ զպատճառս հալածանացն: Իսկ նա մոլորութ՟բ լցեալ, և զամենայն զոր կանելին պարաւանդեալ ընդ պարանոցն, և հրամայէր զանիւ՟ զծնօտն վիրաւորել. և արիւնաթաթախ արարեալ զմատունսն և զազանական ձայնիւ՟ հերետիկոս և հերձուածօղ ասէր զորոգինէս՝ և նզովէր: Զայս յաղագս

երից

երից եղբարցն այնոցիկ առէր, և Իսիդորոսի օտարասիրի՛
որ էր 'ի Նիտրայիս. ոչ թէ այսպէս զանալից և արիւ-
նաթաթախ առնէն 'ի ձեռն ուսմանն իւրեանց. որք ոչ
ինչ համարեցան զսպառնալիս նր, չոգան զհետ կրօնա-
ւորական ճգնութե իւրեանց։ Եւ զայս ասացեալ Թէո-
փիլոս եպիսկոպոսունն, առաքեաց զնս 'ի յարկս իւ-
րեանց, և պատուէր ետ նոցա՝ ընդդէմ և հակառակ
կալ կրօնաւորացն, և մի ընդունել զնս 'ի հարցումնս,
կամ 'ի պատասխանիս։ Այլև՝ զերիսն զայնոսիկ. զամով-
նիոս, և զսեբիոս, և զեւթեմիոս, նզովել և հերձուածողս
քարոզել. ընդ նոսին և զԻսիդորոս՝ որ մինչև ցայժմ ոչ
դադարեաց 'ի չարագործութե։

Զայս նոցա հրաման ետ, և ինքն ամբարտաւանութե
իւրով ածեալ առս հինգ՝ անուսումնս, անխմաստս, և անար-
ժանս ամ կարգօք, զոր և ասեմ թէ՝ և ոչ քաղաքի, կամ
դուեհաց դռնապանք չվայելէին, թող թէ եկեղեցւոյ
հաւատարիմս։ Զմինն 'ի նոցանէ ձեռնադրեաց եպիսկո-
պոս՝ կոմիդոյ քաղաքին, որ ոչ ոք երբէք լուեալ էր՝
թէ աթոռ եպիսկոպոսի լեալ էր, կամ անուանեալ քա-
ղաքն այն։ Եւ զմիւսն՝ երէց ձեռնադրեաց. և զայլսն
սարկաւագունս։ Եւ կազմեաց մուրհակս չարախօսութե
անբիծ կրօնաւորացն այնոցիկ. և ետ փաղփաղակի առ
իշխանն, և զնս վկայս կացուցանէր, և ցուցանէր զմուր-
հակսն, և խնդրէր 'ի նմանէ զունդս զինուորաց, ոչ
զի՝ զասացեալ զսբ զարսն զայնոսիկ՝ իբրև զպիղծս եղհեր

ձեռա

ձոմածօղս 'ի բաց հալածեսցէ: Եւ առեալ անօրէն զօրս անօրէնս, և անհաճոյս, որ 'ի գիշերի յանկարծակի 'ի վր կրօնաւորացն հասեալ. աւար հարին զլեառն ամ, և ըզ խուցս կրօնաւորացն ունայնս առնէին. այլ և զմաշկեղէն հանդերձիկս նոցա 'ի բաց զերծուին 'ի նոցանէ. և բարկութք խնդրեալ զերիս եղբարսն զայնոսիկ, ոչ կարացին գտանել: Քանզի լարս կախեցին և իջին 'ի ջրհորս խորս, և ածեալ պրտուեղէնս՝ կալան զբերան ջրհորին, և այսպէս զերծան 'ի նոցանէ: Իսկ նոքա իբրև ոչ գտին զնս, զխցիկս նոցա լուցին հրով, և զամ անօթս և զգիրս աճս այրեցին: Եւ այլ կրօնաւորքն արկեալ զխուրեամբք զսփածանելիս, զի մերկս թողին զնս, և լալով եկին յաղէքսանդրիայ. և այսպէս 'ի մէջ հրապարակին խայտառակ շրջէին:

Զայս իմացեալ քաղաքացեայն, զոր ինչ արարին Թէոփիլոս, ժողովեցան ամենեքեան 'ի միասին, և առեալ ջահս 'ի ձեռս իւրեանց, պատեցին զեպիսկոպոսարանն, և սկսան հուր հարկանել: Բայց ապա՝ նախ մտեալ յափշտակեցին զոր ինչ անդ կայր, կամեցան և զանօթս եկեղեցւոյն յափշտակել: Զայս լուեալ իշխանին քաղաքին՝ վաղվաղակի անդր հասեալ, աղաչէր ցածուցանել զխռովութիւն. և նոքա ևս առաւել ամբոխէին, և աղաղակէին 'ի վերայ Թէոփիլոսի: Եւ իշխանն տարակուսեալ վն վրդովելոյ խռովութեան, կամեցաւ մատնել զԹէոփիլոս 'ի ձեռս նոցա: Իսկ Թէոփիլոս՝ զփախչելն իւր փրկութիւն հնարեցաւ

ցաւ, և էր յեպիսկոպոսարանին ողղմուտ տեղի մի, անդ-
դարանամուտ եղեալ՝ թաքչէր զերիս աւուրս։ Յայնժամ
իշխանն առեալ զկրօնաւորսն՝ տարեալ յապարանս իւր, և
զգեցուցեալ համդերձս, և անկեալ առաջի նոցա աղաչէր՝
զի երթիցեն յամբոխն, և դադարեցուսցեն զաղմուկն։
և նոքայ խոնարհեալ յաղաչանս նորայ՝ գնացին, բայց
ոչինչ կարացին ցածուցանել. այլ և առաւել բորբոքէին
'ի նախանձ։ Յայնժամ իշխանն ելեալ յապարանից անտի՝
եկաց առ դուռն տաճարին, և շարժեաց ըզ ձեռն իւր
ընդդէմ նոցա ժողովրդեանն։ Եւ իբրև փոքր ինչ լռե-
ցին, սկսաւ հաւատարմացուցանել նոցա երդմամբ՝ 'ի փըր-
կութիւն ինքնակալացն, թէ ոչ գիտեմ ես զխորհուրդսն
Թէոփիլոսի այլ պատճառանօք ոմանց հերձուածողաց, որ
բռնացեալք Թիւրէին զուղիղ հաւատս, խնդրեաց յինէն
զինուորս, ոչ զի մարտակիցք լինիցիմք նմա, և հաստատի-
ցեմք զճշմարտութիւն։ Ապա թէ զայդ իմացեալ էր մեր, ոչ
զինուորս տայաք, և ոչ արտաքս քան զդուռն քաղաքին
թողլ տայաք ելանել։ Եւ այսպէս խաղաղացուցեալ զամ-
բոխն, ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս։ Եւ Թէոփիլոս՝
քանզի պարտաւոր գտաւ առ իշխանին՝ խաբելովն զնա, եւ
նմա կաշառս բազումս, և հաշտեցոյց զնա։ Նոյնպէս և
զքաղաքացիսն կաշառեաց բազմութեամբ ոսկւոյ։ Արդ՝ զոր
պարտն էր որբոցն և այրեացն, և տնանկացն, և օտարացն
տալ՝ ըստ օրէնն էր եկեղեցւոյ, զայն ոսկեսիրացն տուեալ՝
առանց երկիւղի նստաւ անդրէն յաթոռ եպիսկոպոսութեան։

Իսկ

Իսկ երկուղած արքն այնոքիկ, ամենեքեան, և միաբան, համ-դերձ եպիսկոպոսիւն Դէոսկորիսիւ եղբարքն իւրեանց, քանզի և զնա արտաքսեաց յեպիսկոպոսութենէն, և այլք բազումք ընդ նմ, է որս էր՝ և խնդրողս քահանայ՝ գնա-ցին առ Սեղբանոս հայրապետն երուսաղեմի: Բայց դը-ժուարիմացն Թէոփիլոս, իբրև գիտաց՝ թէ անդ են. գրէ հրովարտակ առ սեղբանոս, նոյնպէս և առ այլ եպիսկո-պոսունս պաղեստինացւոց, իբրև թէ հերձուածողք են, և չէ պարտ առանց նորա կամացն ընդունել զնոսա իբրև զեկեղեցականս. այլ իբրև զօտարս համարել՝ ար-տաքոյ Եկեղեցւոյ, այլև հալածել: Յայնժամ սուրբ Արքն այնոքիկ՝ ստիպեալք 'ի նեղութենէ նորա, եկին հասին 'ի կոստանդնուպօլիս առ մեծն յովհաննէս. և անկեալք առ ոտս նորայ, խնդրէին 'ի նմանէ ողորմու-թիւն՝ որպէս զի փրկեսցէ զնս 'ի զրպարտութենէ չա-րագլուխ առն Թէոփիլոսի: Իսկ նա գթածաբար հայե-ցեալ 'ի նս՝ արտասուեաց. քանզի էին իբրև 50 այր՝ բարե-զարդք և ժուժկալք տեսլեամբ, արկեալ զխուրձեամբ սքեմ: Մանաւանդ յորժամ ետես է նս՝ զխնդրողս, որ յառա-ջագոյն ջերմն սիրելին էր Թէոփիլոսի. ոչինչ յիշէր զառա-ջին դժուարութիս, այլ ախտակցաբար ը օրինակին յով-սէփու 'ի վր եղբարցն՝ սաստիկ արտասուս հեղոյր 'ի վր նոցա: Հարցանէր և զնս զպատճառս հալածանացն. և նք սկսեալ ոչ դուզնաքեայ զվէրս 'ի մոլորութենէն Թէոփիլոսի՝ պատմէին կրել յանձինս: Իսկ երանելին՝ մխիթարէր և

սփո

սփոփէր զնա բանիւք ածային գրոց, և խրատէր մի դը-
ժուարել, այլ յորդորամիտ լինել առ նեղութիւս: Եւ նք
առեն ցնա, եթէ և դու ինքն ո՞վ հայր մեր՝ անտես առ-
նես զմեզ, ամաչելով և պատկառելով 'ի Թէոփիլոսէ՝ որպ
և այլ եպիսկոպոսունքն, կամք յանդիման Թագաւորին,
ես և պատմեմք նմա զչարիսն նր, զոր անցոյց առ եկե-
ղեցիս այ 'ի ձեռն Թշնամութե, և ատելութե, և զըպար-
տութե՝ զոր գործէ առ ծառայս Քի: Արդ՝ հաւանեցո
զնա 'ի ձեռն Թղթոյ՝ զի Թոյլ տացէ մեզ բնակել յեգիպ-
տոս, որ ո՛չ ինչ եմք մեղուցել նմա. այլ՝ ո՛չ Թիւրու-
Թի եմք արարեալ, կամ ուսուցել յօրէնսն այ, որպ և նա
զըպարտութե վերաձայնէ 'ի վր մեր: Իսկ երանելին՝ պա-
տուով զնս ընկալեալ. հրամայեաց նոցա կալ յեկեղեցւոջ
սբյն Անաստասայ, մինչև ինքն հոգասցէ վն նոցա:

Ընդ այն ժամանակս՝ եկին հասին ոմանք 'ի կղերիկո-
սացն Թէոփիլոսի 'ի կոստանդնու պօլիս՝ առաքեալք 'ի
նմանէ, վն պատճառաց իրիք վաճառուի: Եւ կոչեցեալ
զնս սբյն՝ հարցանէր, եթէ գիտիցեն ինչ պատճառս վնա-
սու զձգնաւորացն: Իսկ նոքա խորհրդակից գոլով վար-
դապետին իւրեանց, Ճշմարիտ առէին զասացեալսն 'ի վր
նոցա: Եւ առէին ցմեծն յովհաննէս. եթէ բազում բըռ-
նութիւս կրեաց 'ի նոցանէ Տրն Թէոփիլոս եղբայրն քո, և
եթէ դու զնա քեզ բարեկամ կամիցիս պահել, մի ընդու-
նիցիս զդոսա 'ի հոգևոր հաղորդութի: Այլ Թէ կամիցիս
բարեգործել առ դոսա, արժանէ քեզ իմաստութե խոր-

հել

հել՝ զի կամօք նորա լինիցի։ Իսկ նորա գրել թուղթս աղաչանաց առ Թէոփիլոս, խնդրէր 'ի նմանէ շնորհս՝ որպէս զի գիրկս արկցէ նոցա որպէս հեռացելոց մանկանց, զոր և Տէրն արար՝ զայն հեռացեալն առ ինքն ժողովելով՝ քաղցր և հեզ ձայնիւ. զի և այսպէս՝ և այդ է քեզ գովութիւն ասէ առաջի ամենայն։ Եւ Թէոփիլոսի անախորժելի թուեցեալ գրեալքն յովհաննու. վասն՝ այլ ևս առաւել սկսաւ վերաձայնել զնմանէ ստեղծաբանութեան լուրով, մոլորեցուցիչ և հերձուածօղս։ Իսկ ամբիծ արանցն սրտառուչ եղեալ, կամեցան գրով արձանացուցանել զնորա անօրէնութիւն, և մատուցանել առաջի Թագաւորին։ Եւ մեծն յովհաննէս՝ խափանեաց զնա յայնմանէ. և ինքն դարձեալ գրեաց առ Թէոփիլոս, և խրատէր զնա՝ ընդունել զնոսա գթութեամբ. և ծանուցանէր՝ եթէ ոչ արասցես զայս, մուրհակս չարութեան կամին մատուցանել վասն քո առաջի Թագաւորին. այսուհետև ընտրեա՛ որ ինչ միանգամ՝ վայելէ քոյին փառաւորութեանդ։ Իսկ Թէոփիլոս՝ հրացեալ սրտմտութեամբ գրէ ընդդէմ յովհաննու՝ այսպէս. Որպէս ինձ թուի, ոչ գիտես զհրամանս ժողովոյն Նիկիոյ. զի օրինադրեցին՝ եթէ եպիսկոպոսք արտաքոյ իւրոյ վիճակին, ոչ ունի իշխանութիւն զդատաստանս դատել։ Արդ զայս գիտացեալ քո, 'ի բաց կաց 'ի մերմէ դատաստանէս. ապա եթէ պարտական իցեմ դատաստանի, պարտ և պատշաճ է՝ զի յեգիպտոսի եպիսկոպոսացն աստի դատիցիմ, և ոչ 'ի քէն՝ որ հեռի եմ աւելի քան զեօթանասուն աւուրց ճանապարհ։

Արդ՝ զայսոսիկ ընթերցեալ սրբոյ հայրապետին, տարակու-
սեալ է միտս իւր ընդ յամառութիւն բռնութեան Թէոփի-
լոսի. եւ քանզի արձակել զնոսա բռնութեամբ եւ իշխանութեամբ ՚ի
կապանաց նորա՝ ոչ կամէր, զի մի պատճառս տայցէ ընդ-
դիմաբանութեան նորա, արձակեաց զնոսա խաղաղութեամբ ։ Եւ
նոքա երթեալք՝ բազում բանս չարախօսութեան գրեալ ՚ի
մուրհակի, ետուն ՚ի թագաւորին ։ Եւ ել հրաման ՚ի թա-
գաւորէն՝ զի վաղվաղակի զԹէոփիլոս ածցեն ՚ի կոստան-
դնուպօլիս, զի դատաստան լիցի նմա ՚ի յովհաննէ հայրա-
պետէ ։ Գրեաց թագաւորն արկադէոս հրովարտակ եւ առ
իշխանն քաղաքին աղեքսանդրեայ՝ որ ունէր օրինակ զայս ։

Արդէն ստուգեալ գիտայի՝ եթէ չարութիւն հերձուածո-
ղացն՝ որ սակաւ ժամանակօք յառաջ էին քան զմեզ, որք
եւ բռնութեամբ ունէին զաթոռ հայրապետութեան, արդէն
իսկ յայտնեցաւ. քանզի՝ եւ դոքա նոյնպէս բռնացեալք,
զայլ ազգիս յարուցանեն ՚ի վերայ եկեղեցւոյ ։ Արդ՝ եթէ
լուեալ այդմ իրաց՝ գուցէ վնաս համաշխարհական հա-
սանիցէ ՚ի վերայ թագաւորութեանս մերոյ, եւ հնազանդելոց
մերոց ։ Եւ զայս գիտեմք՝ մեղադիր լինելով ձեզ, որ ՚ի
մինչ ընկալեալ զզօրութիւն իշխանութեանդ՝ ոչ ըստ օրինի
թագաւորութեանս, այլ անպատշաճ եւ անօգուտ ՚ի կիր
արկանես. քանզի՝ ակնածութեամբ եւ կաշառանօք արհամար-
հես զհրամանս մեր, եւ զփառս՝ եւ զինքնակալ տէրութիւն
մեր՝ առ ոչինչ համարիս ։ Այսու հետեւ զգոյշ լեր յայդմ
ամենայնէ, զի մի՛ ՚ի պատիժ պատուհասի անկանիցիս ՚ի

մեր

մերմէ բարկութէնս: Արդ՝ յորժամ հասցէ առ քեզ հրո-
վարտակ հրամանի մեր, վաղվաղակի առաքեա՛ առ մեզ
զԹէոփիլոս եպիսկոպոս քաղաքիդ, ո՛չ վայելէ եպիսկոպո-
սապետի՝ կատարէք դմա· այլ և զոսոխս նր՝ որք են յե-
պիսկոպոսաց, և կղերիկոսաց՝ հանդերձ Թէոդայիւ, և
Թէոդորոսիւ, որ յառաջ իշխանն էր քաղաքիդ՝ ընդ
նմա առաքեա: Արդ գրեցաւ հրովարտակս՝ և առաքեցաւ
անդ 'ի ձեռն իշխանի, որում անունն էր Եղափիոս:
Գրեաց դարձեալ Թագաւորն արկադէոս՝ առ Ենովկեն-
տիոս հայրապետն հռովմայ, և առ Որոնիոս եղբայր իւր·
զի առաքեսցեն իմաստուն սպասաւորս յառաքելական ա-
Թոռոյն, ո՛չ զի՝ հանդերձ ժողովով քննութի արասցեն
'ի մէջ Թէոփիլոսի, և կրօնաւորացն՝ լերինն Նիտրայոյ:
Իսկ իշխանն աղեքսանդրու՝ իբրև ընկալաւ զԹագա-
ւորական հրամանն, կոչեաց առաջի իւր զԹէոփիլոս,
և մեծաւ սրտմտութբ, և սաստիկ սպառնալեօք խօսէր
ընդ նմա: Ասէ· բազում ինչս ժողովեալ է քո, և վս
այսորիկ յայն համարձակեալ՝ զայսպիսի իրս գործես ընդ
կղերիկոսս, որ ընդ իշխանութեամբ քո կարգեալ են:
Ապա և ցուցանէր նմա զհրաման Թագաւորին· Թէ պարտ
է նմա փութով նաւէլ 'ի Թագաւորական քաղաքն: Իսկ
Թէոփիլոս՝ բազում ոսկի տուեալ կաշառս, և առատա-
պէս լցեալ զաչս իշխանի քաղաքին, և զեղափիոսի՝ որ ե-
կեալն էր տանել զնա, զի ներեսցեն նմա ժամանակս ինչ
մինչև պատրաստեսցի: Եւ ապա պատրաստէր՝ ժողովէր
խունկս

խունկս անուշահոտս, և այլ պատուական ընծայս, զի այնու հանդերձ գնասցէ 'ի կոստանդնուպօլիս։ Բայց այնոքիկ՝ որ զմուրհակս չարախօսութեան հակառակ սրբոյ արանցն արարեալ էին, յառաջագոյն քան զԹէոփիլոս առաքեցան 'ի Թագաւորական քաղաքն, և անդ խոշտանգեալք 'ի դատաւորացն, խոստովանեցան զ չարաչար խորհուրդն իւրեանց, եթէ հրամանաւ Թէոփիլոսի արարաք զայս։ Իսկ ապա Թէոփիլոս, քանզի նախանձ բազում ունէր ընդ սրբոյն յովհաննու, ապա յառաջագայն պատմեցաւ։ և յետ այնորիկ՝ համբաւ սուտ հանէր 'ի լսելիս նոր, եթէ զԻսիդորոս քահանայ՝ որ զորպար տեալն էր 'ի նմանէ, և զդէոսկորոս՝ հանդերձ երեք եղբարքն 'ի հաղորդութենէ ընկալաւ։ Առաւել ևս բորբոքեցաւ նախանձու չարութեամբ. քանզի և այս սովորութիւն է նախանձոտաց՝ և ատոց, զի զմիտս իւրեանց ախորժակայն զբանս և զխորհուրդս ճշմարտեսցին դատեն։ Այսպէս՝ և Թէոփիլոս, առ բազում նախանձն՝ որ մրթերեալ ունէր. ոչ եթէ վասն դէոսկորոսի, և Իսիդորոսի վրէժխնդրութեան, այլ չար նախանձու լցեալ՝ ջանայր զսուրբ և զանբիծ քահանայապետն մեր յաթոռոյն արտաքս ընկենուլ։ Եւ ապա առեալ ընդ իւր զեպիսկոպոսունսն իւր՝ նաւեաց 'ի կիպրոս, և եկն առ սուրբն եպիփան։ քանզի վասն սպառնալեաց Թագաւորին՝ պանդխտեաց երագահաս լինել 'ի կոստանդնուպօլիս։ Եւ վասն զի՝ եպիփան էր այր բարեմիտ և իմաստուն և կատարեալ ամենայն առաքինութեամբ, որ և յիսուն և հինգ ամ ատուգապէս ուղղեալ էր զքահանայապետութիւն։ Իսկ

Թէ

Թէոփիլոս ծածկելով զնենգութիւն իւր, պատճառելով ըզգիրսն որոգինոսի, խաբէր զնա՝ 'ի ճշմարտութիւն դարձուցանելով է յովհաննու: Եւ եպիփան ոչ իմացեալ ըզմիտսն Թէոփիլոսի. ժողովեալ զեպիսկոպոսունսն կիպրոսի, նզովէին զգրեանսն որոգինի: Եւ ապա առաքէր թուղթ առ երանելին յովհաննէս, խրատէր 'ի բաց կալ յորոգինի գրեացն, և ազդ առնէր նմա վասն ժողովոյն՝ որ եղեն առ նա վասն նորա: Իսկ երանելին յովհաննէս, զամենայն յԱստուած ապաստան առնելով, սակայն ինչ հոգայր վասն դաւաճանութեան զոր 'ի վերայ նորա կարկատէին, և ինքն զսովորական բանն վարդապետութեան 'ի գործ արկեալ՝ միշտ ուսուցանէր, և աստուածաբանութեամբն հաստատէր զեկեղեցին սուրբ:

Յաղագս առնելն Նորատեսոյ Ջոյգի այրոյն, Նորա փոխ ոսկեացն առ նա, զի պարծեսցէ զնա առ փէրն:

Եւ էր այր մի 'ի կոստանդինուպօլիս՝ սինկղիտոս, որոյ անուն էր Թէոգնոստոս, (որ թարգմանի հայերէն՝ աստուածածանօթ. այսինքն քրիստոսասէր.) Եւ ունէր այր այս զերկիւղն այ միշտ առաջի աչաց իւրոց, և վաճառական էր սիրեցեալ յոյժ 'ի թագաւորէն արկադեոսէ: Եւ էր միւս ևս այլ սինկղիտոս, որոյ անուն էր՝ գաղղիաս, ունելով ըզկրօնսն արիոսի: Սա նախանձեալ ընդ բարեգործ առն Թէոգնոստեայ՝ բանսարկու եղև զնմանէ առ թագաւորն՝ իբր թէ անարգէ զնա, և զթագուհին՝ ժանտացեալ և

կրա

կռապարիշտ կոչելով՝ զԵւդոքսիայ. յաղագս ընչասիրութեանն: Եւ Թագաւորն վաղվաղակի հրամայեաց զԹէոգնոստոս աքսորել 'ի Թեսաղոնիկն, և զա՟մ ինչս նր՟ և զագարակս 'ի բաց առնուլ 'ի նմանէ. բայց մի գեօղ՝ զոր հրամայեաց տալ կնոջ նորա՝ վս՟ մարմնաւոր հարկի, և կերակրոյ որդեկաց նորա: Իսկ յերթալն Թէոգնոստեայ 'ի մետաղսն՝ աշխատեալ 'ի Ճանապարհին, և հիւանդացեալ՝ մեռանէր: Եւ ամուսնոյ նորա տեսեալ զյանկարծահաս վտանգն եկեալ 'ի վր՟ առն նորա, և զինքն յանբաւ կարօտութի ըմբռնեալ, առեալ զորդին իւր՝ եկն յեկեղեցին առ երանելին յովհաննէս, և պատմեաց նմա զա՟մ եղեալսն: Իսկ նա՝ որ ա՟մ վշտացելոց ախտակից էր, տրտմեցաւ յոյժ, և սկսաւ սփոփել զնա և ասէ. մի տրտմիր ով կին դու, այլ առաւել գոհութի մատո՛ ա՟յ, ընկալ զա՟մ վտանգս տառապանաց՝ սիրով և քաղցրութբ՝ որ հասին 'ի վերայ ձեր: վս՟ զի ունիս զա՟ծն ամենեցուն դատաւոր այրութե քում, և հայր որբոց քոց, զի նա ինքն զամենայն գիտէ, և զա՟մ ինչ յօգուտ մեզ մատակարարէ՝ ո՟պ նորոց ծառայից: Զի թէպէտ և զոր տարապարտուց մեռաւ այրն քո, սակայն յառաւել վայելումն կենացն յաւիտենից առիթ եղև մահ նր՟. և անհրաժեշտ տանջանքն և կորուստն յաւիտենից՝ գանձել պահին այնմիկ, որ պատճառ եղև աքսորանաց նր՟: Արդ այսպիսի բանիւք, և որ սոցին նմանի են՝ մխիթարեալ զնա՝ առաքեաց 'ի տուն իւր, և հրամայեաց 'ի հիւրանոցէ եկեղեցւոյն ընծեռել նմա զպէտս

կե

կերակրոց՝ և որդեկացն իւրոց, մինչև զմտաւ ածեալ հը-նարեսցէ թէ՝ ոչ հայցեսցէ ՚ի թագաւորէն դարձուցա-

նել զինչ առ նորա ՚ի նա։

Արդ մինչ դեռ նա զայս զմտաւ ածէր, այլ ևս չարիք հասին ՚ի վերայ վշտացելոյ կնոջն. զի ՚ի ժամանակի կթոյ խաղողոյն, յորում ամենեքեան ելանէին ՚ի գեօղս իւրեանց՝ կթել զողկոյզ այգեստանին. գնաց և թագուհին ՚ի գեօղս թագաւորականս՝ զբօսնուլ անդ։ Եւ մինչ դեռ շրջէր, եմուտ յագարակ կնոջն Թէոդնաստասի, և անցեալ յայգեստանն, եհատ ողկոյզ մի յուռոյ անտի՝ և եկեր։ Ասեն ցնա զսպասաւորքն՝ որ մերձն կային. ով դշխոյ՝ օտարէ այգիս այս։ Եւ օրէնք էր սահմանեալ յառաջնոյն՝ հրամանաւ թագաւորացն, զի թէ թագաւոր, կամ թագուհի մտանիցէ ՚ի գեօղ կամ յագարակ, և կոխէ ՚ի նա, կամ ճաշակիցէ ՚ի պտղոյ նորա, այլ այնուհետև չունի իշխանութիւն տէր ագարակին, կամ պտղաբերոյն՝ իշխել ՚ի նմա, այլ լիցի է արքունական տէրութեան։ Իսկ տէր տեղւոյն առցէ այլ փոխանակ ընդ այնր յարքունական գեօղից՝ կամ ՚ի պտղաբերից, ուր ոչ իցէ մտեալ երբէք թագաւոր՝ կամ թագուհի, և կամ զգինն առցեն՝ ոչ արժան իցէ յարքունական գանձուցն։ Յայնժամ հրամայեաց թագուհին՝ ՚ի գիրս թագաւորական հանել զագարակն և զայգի տառապեալ կնոջն այնորիկ, կամելով իսկ կամեցաւ տրտմութիւն ՚ի վերայ տրտմութեան յաւելուլ այրւոյն և որդւոյն, և քանզի գիտաց վասն նորա եթէ առ Յովհաննէս չոգաւ յառաջագոյն։ Եւ զի

ինքն

ինքն խնդրէր պատճառս՝ որով ընդդէմ գայցէ նմա առ 'ի յարտաքսել զնա յեկեղեցւոյն ։ Եւ՛ դարձեալ՝ զի կարի քաջ գիտէր զողորմած բարս նր, զոր միշտ աղէխարշեալ լինէր 'ի վր որբոց և այրեաց ։ Զմտաւ՛ եած՝ թէ յորժամ ես զայս գործեմ, և նա վրէժխնդիր լինի, ապա աղդեամբք կատարեմ՝ զոր ինչ խորհեալ եմ վասն նր ։ որպ և եղեն իսկ ։

Արդ զայս իմացեալ երանելւոյն Յովհաննու՝ եթէ մախանակ զ յառաջագոյն յափշտակեալսն անդրէն դարձուցանելոյ, զաւելեալ մնացեալսն անդրէն այլ ևս յինքն կորզեաց յայրւոյն ։ Առաքեաց առ նա զեւտիգես սարկաւագ՝ որ էր այր իմաստուն և բանաւոր, և զարդարեալ ամ վարուք առաքինութբ, և պատուէր ետ նմա խօսել ընդ թագուհւոյն այսպէս ։ Քրիստոսէր ծնողաց քոց հաւատք և վարք՝ յայտնի է 'ի լսելիս ամենեցուն, և զի յաղագս նոցա գեղեցիկ քաղաքավարութեն, և ած ընկալ պաղատանացն՝ ետ քեզ ած զերկրաւոր թագաւորութիւն, և սպասեալ այլն ունի քեզ՝ որպ զի 'ի ձեռն գործոց բարեաց ժառանգեսցես զերկնաւոր արքայութիւն ։ Քանզի և երկրաւոր փառքս և մեծութիւնս՝ և երևելի լինիլն յայսմ կեանս, ոչ ինչ օգուտ են մեզ յահեղ աւուրն դատաստանի, եթէ առանց բարեաց գործոց գտանիցիմք ։ Այլև՝ 'ի վր այսր ամն՝ յուշ լիցի քեզ երկիւղն այ, զի հաստատեալ գիտեմք՝ եթէ շունչ մեր ամենեցունց 'ի ձեռս նր է, զի զոմանս յաւելու գալ 'ի կեանս յայսրիկ, և զոմանս պակասեցուցանէ և 'ի բաց բառնայ՝ ք

ղէ

ղեկով ղհօտս նոցա. քանզի հող և մոխիր եմք ամենե-
քեան, և զինչ սուղ ինչ ժամանակի անդէն 'ի նոյն եմք դառնալոց՝ ըստ սահմանի արարչին, զոր օրինակ և թագաւորքն՝ որ յառաջն էին քան զձեզ, և իշխանքն, և պետքն: Տես արդ՝ թէ յորպիսի փառս էին յայնժամ, և այժմ զինչ են: 'Ի միտ առ՝ թէ զիարդ յուրաքանչիւր կարգս զի որք զբարիս գործեալ են, յամենեցունց բարբառոյ՝ և յամ ազգս միշտ երանին, և որք զչարիս գործել իցեն, միշտ 'ի չարիս, և յանէծս՝ ոչ դուզնաքեայ յամենեցունց բերանոյ յիշատակին: Նաև՝ ոչ այլ ինչ անուանս նոցա ասեն, քան թէ չարագործս և նզովեալս զնոսա կոչեն:

Արդ՝ նմանեալ լերուք ձեր բարեպաշտութեամբ այնոցիկ՝ որք բոլորովին հաստատուն, և անբեկելի պահեցին ըզ հաւատն հանդերձ բարի գործովք, և բարւոք քաղաքավարութեամբ կեցին յաշխարհիս, և 'ի ձեռն այսր հանդիսադրութեան՝ երկնից արքայութեան արժանացան: Եւ հրամայեա դարձուցանել զայգի ողորմելոյն այնորիկ՝ զամուսնոյն թէոդոսստեայ՝ և զորբոյ նր, զի այն է մնացել նոցա 'ի մխիթարութի: Բաւականէ նմա առաջին վիշտքն, և տրտմութիւն՝ որ հասին 'ի վր նր: զի այլն նր յօտարութեան վախճանեցաւ՝ 'ի Ճանապարհս աքսորանաց, և ամ գոյք նր 'ի բաց բարձան 'ինմանէ: Այո. աղաչեմ զքեզ Քնասէր Թագուհի, անյիշաչար լեր առ նա, և արձակեա զնա 'ի տրտմութէ վշտացն, և յիշեա զառաքելական բանն՝ որ հրամայէ. ոչ մատնել արեգականն 'ի վր բարկութե

ան

մերոյ. (Եփես. 4. 26։) Այլև՝ համառօտիւ զխրատեալսն տեառն առ մեծատունն. Թէ անմիտ. յայսմ գիշերի զհոգի ի քո պահանջեն 'ի քէն. իսկ զոր պատրաստեցեր՝ ո՞ւմ լինիցի. (Ղուկ. 12. 20։) Մի՛ թէ երթայցէ ընդ մեզ քաղցրութիւ պտղոյ այգւոյն, կամ անուշահոտութիւնն ծաղկոյ, կամ պարարտութիւնն ձիթենւոյ՝ յորժամ աստի անդր փոխիցիմք. քանզի մերկ եկաք, և նոյնպէս գնալոց եմք։ Արդ՝ զայս ամենայն զմտաւ ածեալ, դարձո՛ անդրէն զայգի այրւոյն, զի դու ողորմութիւն գտցես յաւուրն դատաստանի։ Զայս ամ, և որ սոյին նման են՝ խօսեցաւ իմաստուն սարկաւագն

ևտիգէս առ Թագուհին՝ 'ի դիմաց մեծին յովհաննու։

Իսկ նա՝ յորժամ լուաւ զայս ամ, գրեաց նմա պատասխանի այսպէս։ Բազում բանիւք դատապարտեցեր զիս իբրև զանիրաւ, ո՛չ թէ՝ առանց օրինաց ինչ գործեալ իցեմ, և ո՛չ թէ՝ ոչ գիտիցես զթագաւորական օրէնս և զսահմանս, այնպէս արհամարհես զիս, փոխանակ զարժանն և զպատշաճ պատիւն մատուցանելոյ. այլ ես ոչ ներեմ այդպէս իսպառ թշնամանեալ 'ի քէն։ Իսկ վասն այգւոյն Թէոդոսի, մի անգիտանայցես՝ զոր օրինադրեցին առաջին թագաւորքն։ Արդ՝ զոր հաճոյ թուի քեզ՝ և նոր, յերկոցունց ընտրեսցէ. եթէ կամեսցի՝ փոխանակ այգւոյ իւրոյ այլ այգի առցէ, և եթէ ոչ՝ զգինսն առցէ, ես խորամահատ լինել յօրէնս թագաւորացն ոչ կամիմ։ Իսկ իմաստունն յովհաննէս՝ իբրև ընթերցաւ զայս. յարուցեալ ինքնին գնաց 'ի պալատն, և սկսաւ բանիւք վարդապետութեամբ խրա-

տել

տել զնա առաւել քան զառաջինն ։ Եւ յետ այնորիկ ասէ ցնա. դարձո՛ արդ զայգի այրւոյն անդրէն 'ի նոյն, և մի ախորժեր լսել յինէն՝ թէ զրկեցեր յինէն ։ Եւ նա ասէ ցնա. ո՞չ ապաքէն գրեցի առ քեզ, եթէ օրէնք է թագաւորաց, թէպէտ առցէ այլ ընտիր այգի, և թէպէտ զգինս ։ Ասէ ցնա յովհաննէս. ասացի՝ և արդ դարձեալ ասեմ, դարձո՛ յայրին զիւր այգին, զի ոչ խնդրէ 'ի քէն զօտարոտին ։ Ասէ ցնա թագուհին. մի այդպէս ընդդիմախօս լինիցիս թագաւորի, վասն զի ոչ ինչ օգուտ բերէ ։ Պատասխանի ետ դարձեալ յովհաննէս և ասէ. տո՛ւր զայգի այրւոյն, և մի պատճառեր զօրէնս կռապաշտ թագաւորացն ։ և մանաւանդ՝ ոչ ինչ է քեզ արգել, խափանել զանօրէն օրէնսդ զայդոսիկ, որ յանօրինաց օրինադրեցաւ. քանզի ես դու դշխոյ և կին թագաւորի ։ Արդ՝ այսուհետև արա զոր ասեմս, զի մի հարկեսցես լսել զանուն քո, և ածցես 'ի վերայ քո անէծս ցաւագինս ։ Եւ յորժամ զայս ասաց սուրբ հայրապետն. թագուհին լի եղև սրտմտութեամբ, և հրամայեաց զնա բռնութեամբ արտաքս հանել 'ի պալատէ անտի. և յայտնի երևեցոյց զծածկեալ չարութիւն 'ի վերայ արդարոյն, և ասէր յայտնապէս ։ Ես խնդրեմ զվրէժն իմ. այլ և՝ ոչ զայգին տամ և ոչ զփոխարէնն. նաև՝ ոչ դու կարես յաղթել ինձ, կամ հարկել զիս՝ առնել զայն ինչ, զոր ես ոչ կամիմ. այլ և՝ ես ուսուցանեմ զքեզ չարհամարհել զիս ։ Իսկ երանելին յովհաննէս՝ ելեալ 'ի պալատէն գնաց յեկեղեցին, և կոչեցեալ զեւտիքոսա

սար

սարկաւագ, պատուիրեաց նմա և ասէ։ Այս ցուցապանն եկեղեցւոյն զգուշանալ. զի յորժամ գայցէ Թագուհին յեկեղեցիս, փակեսցեն զդրունս ընդդէմ նր, և այլոյն՝ որ էկց զկնի նր. և այսպէս ասասցեն՝ եթէ Հրաման առաք յեպիսկոպոսապետէն զայս այսպէս առնել։

Եւ յաւուր տօնի կենսաբեր և պատուական սբ խաչին. ժողովեցան ամենեքեան յեկեղեցին, որք 'ի քաղաքին էին, և որք արտաքս քան զքաղաքն։ Նաև՝ Թագաւորն, և ամենայն սինկլիտոսքն, այլև օտարք և անցաւորք անդր գային հասանէին. ոչ միայն վս տօնին, այլ զի մեծաւ փափաքանօք ախորժէին լսել զվարդապետութի նր։ Զի կարի վայելուչ էին բանք նր՝ յորժամ խօսէր պատմութի ինչ. և կամ յորժամ թարգմանէր զսբ գիրս. զի այնպէս ըզդժուարիմացս և զծածկեալ բանս յայտնի և սբ՝ յամենեցունց լսելիս մատուցանէր, որպէս զի՝ ամենեքեան օգտեալք լինէին 'ի վարդապետութէ նր՝ արք և կանայք, ծերք և իմաստունք. Եւ վս այնորիկ՝ ոմանք ասէին. եթէ յայտնապէս Հոգին սբ խօսի նովաւ։ Եւ այլք՝ բերան ոսկի կոչէին զնա։ Եւ կէսք՝ իբրև զմի յերկոտասանիցն՝ երեքտասն առաքեալ կարդային զնա։ Քանզի՝ և սա ասէին 'ի Քէ առաքեցաւ մեզ արժանի այսմ առաքելական և աւետարանչի աթոռոյ հայրապետութե։ Արդ մինչ դեռ զածային, բանն 'ի կարգ արկեալ խօսէր՝ յաւուր տօնի սբ խաչին, և ամենեքեան անդ էին՝ ոպ յառաջագոյն ասացաք, հանդերձ Թագաւորաւն, և սինկլիտոսօքն։ Եւ էին

անդ

անդ իմաստասէրք, և դպիրք աշխատասէրք իմաստից, որք ուղիղ ճանաչէին զստոյգ բանաւորս. նոքայ հետեւեալք զարմանային ընդ բանս նր: Զի ոչ կաղակրկին, և կաղէ կաղս, և տամնտաղաբանս խօսէր 'ի պատմելն՝ որպ և այլքն. այլ որպէս թէ 'ի բերան առեալ ըստ կարգի և ըստ խոր-հրդոյն՝ անշփոթաբար ճառէր:

Յայնժամ գայր հասանէր թագուհին առ դրունս եկե-ղեցւոյն՝ բազում և երևելի սպասուք և դիմօք զօրա-կացայն յառաջոյ և զկնի: Եւ իբրև կամեցաւ մտանել յեկեղեցին. դռնապանքն փակեցին զդրունսն ընդդէմ նր, որպ և հրամայեաց նոցա յովհաննէս 'ի ձեռն սարկաւագա-պետին ստեփանոսի: Իսկ նա ամօթալից եղեալ՝ լցաւ մեծաւ սրտմտութբ, աղաղակեաց և ասէ. տեսէք ամենեքեան թէ որպիսի խռովութի ունի ընդ իս այրս այս: Զի ամենեքեան անարգել մտանեն յեկեղեցին, և զիս միայն արգելու մտա-նել անդր, մի՞ թէ ոչ կարեմ վաղվաղակի արտաքսել զնա յաթոռոյն իւրմէ: Եւ որք ընդ նմա էին՝ ասեն ցդռնապանսն. բացէք թագուհւոյն, և մի՛ լինիք խելագարք. և նոքա պատասխանի ետուն և ասեն. ոչ եթէ յանձնէ ինչ արարաք զայս, այլ որպէս հրամայեաց մեզ եպիսկոպոսապետն: Իսկ մի ոմն 'ի զօրականաց թագուհւոյն՝ հանեալ զսուսերն, կամեցաւ հարկանել զմի 'ի դռնապանաց եկեղեցւոյն: Եւ առ ժամայն գօսացաւ ձեռն նր. և տեսեալ զայն թագու-հւոյն՝ զահի հարեալ, դարձաւ անդրէն 'ի պալատն: Իսկ այրն՝ որոյ գօսեցաւ ձեռնն, մտեալ յեկեղեցին 'ի մէջ բազ

մու

մուխե աղաղակեաց և ասէ։ ողորմեաց ինձ հայր սբ, և բժշկեա զգօսացեալ ձեռն իմ, որ յանդգնութբ համարձակեցայ 'ի յանձայնի սպասաւորն։ Եւ յովհաննէս լցեալ հոգւով սրբով՝ ասէ ցնա. երթ լուա զձեռն քո յաւազան եկեղեցւոյդ, և ես հայցեցից յայ վն քո, և լիցի քեզ բժշկութի։ Եւ գնացեալ այրն լի հաւատովք՝ արար որպ և հրամայեացն նմա երանելին, և առ ժամայն բժշկեցաւ։ Եւ եկն եկաց 'ի մէջ ժողովրդեանն՝ գոհանայր և փառաւոր առնէր զած. և ամենեքեան որ տեսին զսքանչելիսն՝ տային օրհնութիւն այ, որ առնէ սքանչելիս միայն 'ի ձեռն ծառային իւրոյ յովհաննու։ Արդ՝ զայս ամ տեսեալ թագաւորն արկադէոս՝ անտես առնէր, ոչ ինչ վրէժխնդիր լինելով թագուհւոյն, քանզի գիտէր զնա՝ խիստ և յանդուգն. իսկ զյովհաննէս՝ առաւել սիրէր, և քաղցրութբ լսէր նմա։ Եւ թագուհին միշտ ջանայր ընկենուլ զնա յաթոռոյն, որպ փոքր մի յետոյ արար, այլ առ ժամայն ոչ կարէր։ Նաև՝ զի ոչ զօրունէր համախորհ յեպիսկոպոսաց։ և դարձեալ՝ երկնչէր 'ի բազմութենէն, զի ամենեցուն սիրելի էր յովհաննէս, և յոյժ ախորժելի և ցանկալի բանք նր։

Յետ սակաւ ինչ ժամանակի, մեծն եպիփան արք եպիսկոպոս կղզւոյն կիպրոսի՝ եկն եհաս 'ի կոստանդնու պօլիս, պատճառանօք որոգինի գրեանցն, զոր յառաջագոյն ամբաստան եղեալ էր թէոփիլոս զյովհաննէս առ նա։ Եւ յորժամ ել 'ի նաւէն անտի եկն 'ի վկայարանն սբյ կարապետին, և անդ ժողով արարեալ՝ սարկաւագաւն ձեռնադրեաց։

Եւ

Եւ յորժամ եմուտ 'ի քաղաքն, հրաման ետ յովհաննէս պատրաստել նմա տեղի հանգստեան 'ի ներքս յեպիսկոպոսարանին: Իսկ նա խոտորեալ 'ի Յովհաննէսէ վասն Թէոփիլոսի, առանձին խնդրէր լինել: Եւ նա դարձեալ առաքեաց առ նա՝ և աղաչէր, գալ հանգչել առ նա՝ հանդերձ եպիսկոպոսօքն, որք եկեալ էին ընդ նմա: Իսկ նա՝ և ոչ աղօթակից հաւանէր նմա լինել, եթէ ոչ՝ զայնոսիկ որ ընդ դէոսկորոսին էին, արտաքսեսցէ 'ի քաղաքէն, և գրեսցէ ընդ հերձուածն որոգինի: Յետ յայսորիկ՝ դարձեալ առաքէ առ նա յովհաննէս զսերապիոն սարկաւագն՝ և ասէ: Ո՞վ հայր պատուական եպիփան. արտաքոյ կանոնաց գործես, վասն զի ձեռնադրութիւն արարեր յեկեղեցիս՝ որ է իմ իշխանութեան են՝ առանց իմոյ հրամանաց, և իբրև իշխանութեամբ վարիս յայլոց վիճակի: Արդ՝ զգոյշ լեր, գուցէ խռովութիւն ինչ լինիցի 'ի ժողովրդեանդ, և յայնմանէ վտանկ հասանիցէ քեզ: Եւ եպիփան իբրև ետես զպատմութիւնն յովհաննու, երկեաւ երթալ առ նա, այլ հեռացեալ գնաց և յայնմ եկեղեցեացն՝ որ էին զառաջինն: Իսկ թագուհին իբրև լուաւ զպատմութիւն երկայնից սրբոյն ամմոնեանս, զոր նենգութիւն Թէոփիլոսի գործեաց. վասն զի՝ ժամանակ աջողակ գտեալ առ 'ի դաւաճանել զյովհաննէս: Առաքեալ կոչեաց զեպիփան, և ասէ ցնա. ո՞վ հայր սուրբ՝ վասն թուի ինձ ոչ անգիտանաս՝ եթէ մեր թագաւորութիւն հռովմայեցւոց է իմով իշխանութեամբ է: Եւ ահա ես զամ քահանայապետութիւն եկեղեցւոյ քեզ տաց, եթէ լուիցես ինձ

ինձ այսօր, և բժշկեսցես զսաստիկ ցաւս հոգւոյ իմոյ։ Ասէ մեծն եպիփան. ըստ իմոյ զօրութեան՝ ով որդեակ իմ, որ ինչ առ 'ի շինութիւն և փրկութիւն հոգւոյ է՝ ոչ յապաղեցից առնել։ Եթէ ապա սկսանէր նա պատրողական բանիւք իւրովք որսալ զերանելին, իբրև ուռկանաւ՝ այսպէս ասելով. Ով զի յովհաննէսդ այդ՝ օտարոտի եղև յիշխանութեան քահանայութեան, և անկարգութիւն իմն բերէ հակառակ թագաւորաց, և ոչ բաշխէ մեզ զպատշաճ պատիւն՝ որպէս արժան է թագաւորաց։ Այլև ասեն իսկ՝ եթէ հերձուած իմն ունի արտաքոյ հաւատոյս մերոյ, և վասն ես 'ի վաղուց ժամանակաց հետէ չարչարիմ հոգւով իմով։ Եթէ արդ՝ կամիմ առնել ժողով, և 'ի բաց ընկենուլ զնա 'ի քահանայապետական իշխանութենէն, և զայլ ոք հաստատել փոխանակ նորա հայրապետութեան, որ կարօղն է ուղղութեամբ վարել զիշխանութիւն, որպէս զի գոնէ յայսմհետէ խաղաղասցի թագաւորութիւնս մեր։

Արդ՝ մինչ դեռ զայս խօսէր թագուհին ցերանելին եպիփան, շարժեալ լինէր անհնարին ցասմամբ 'ի բարկութենէ հոգւոյն, և անդէն վաղվաղակի կրկնեալ ըզբանս իւր ասէ։ Յորժամ դու ով հայր սուրբ՝ աստ ես հանդերձ այդ օգնականութեամբ, զինչ պէտք մեզ զայլ հարս աշխատ առնել գալ աստ. դու այսուհետև զոր Աստուած յայտնէ քեզ, կացո եպիսկոպոս, և հաստատեա յաթոռ հայրապետութեանդ, և զնա արտաքսեա յաթոռոյն, և ես զամենայն հայրապետս պատրաստեցից զի հնազանդեսցին քեզ։

քեզ։ Եւ մեծն եպիփան ասէ ցնա, անոխակալ լեր որդեակ, և լուր հօր քոյ, և ես տացից զօգուտն քո։ Եւ նա ասէ ցնա՝ սա հայր, և ես զա՟մ ինչ կատարեցից զոր հրամայեաց։ Ասէ եպիփան. եթէ ո՟պ ասեաց՝ ի հերձուած պարտաւորի յովհաննէս, և յետ այնորիկ ոչ զղջանայ, և խոստովանի՝ և ապաշխարէ զյանցանս իւր, անարժանէ քահանայութե՟, մեք՝ զոր ինչ հրամայես առնեմք։ Ապա՝ եթէ վս՟ ձեր յանդիմանութե՟ և թշնամանաց վրէժխնդիր լինիս արտաքսել զյովհաննէս, յայդմ խորհուրդ եպիփան ոչ հաւանի՝ և ոչ միաբանի։ Եւ մանաւանդ որդեակ. զի ո՟պ և մեզ, նոյնպէս և ձեզ թագաւորացդ է թշնամանիլ՝ և թողուլ առնել. քանզի ունիք և դուք թագաւոր յերկինս, որում ը՟ սովորութե՟ մարմնաւորացս մեղանչեք, և թողու ձեզ. ո՟պ ասէ Տր՟ ՚ի սբ՟ աւետարանս. եթէ եղերուք գթածք ո՟պ և հայրն ձեր՝ որ յերկինս է, գթած է. (Ղուկ. 6. 36։)

Պատասխանի ետ թագուհին և ասէ ցեպիփան. եթէ խափանումն առնիցես այսմ բանի՝ առ ՚ի չարտաքսել ըզյովհաննէս, բանամս զբագինս կռոցն, և հրաման տամ երկիրպագանել ամ՟ծոցն, և այնպէս առնեմ, ո՟պ զի վերջին մոլորութիս չար լինիցի քան զառաջինն։ Եւ մինչդեռ զայս խօսէր ընդ ս՟բյն, ՚ի դառնութե՟ զայրացմանն՝ վտակք արտասուաց սաստիկ հոսէին յաչացն, և գոյն երեսաց նր՟ փոփոխեալ շառագունեցաւ, և կրճտէր զատամունսն։ Ասէ ցնա եպիփան. ես՝ որդեակ անպարտ եմ յայդմ դատաստանացդ. և զայս ասացեալ՝ ել ՚ի պալատէ անտի։

Եւ

Եւ յայսմանէ համբաւ հռչակեաց 'ի քաղաքին. եթէ մեծն եպիփան արք Եպիսկոպոսն Կիպրացւոց՝ եմուտ առ Թագուհին, և արար՝ զի արտաքսեսցեն զյովհաննէս։ Եւ ապա առեալ սբ՟յն յովհաննու քարտէս՝ գրեաց առ սքանչելին Եպիփան այսպէս։ Ով իմաստունդ Եպիփան, և դու միաբանեցար Մանաւանդ վասն իմոյ Արտասահմանելոյն մի ևս նստցիս և դու 'ի վերայ Աթոռոյ քոյ։ Իսկ Ն՟ր առեալ գրեաց նմա պատասխանի այսպէս։ Ով յաղթող նահատակդ ք՟ի յովհաննէս. յաղթես՝ և յաղթիս. վ՟ս զի՝ և դու յերկրորդ արտասահմանութեդ՝ ոչ ևս հասցես 'ի տեղի աքսորանացն։ Եւ այս՝ ոչ եթէ բան ինչ էր որոշման, և կամ սուր պատժողական՝ վճիռ կատարածի հատանելով 'ի վ՟ր միմեանց։ Այլ մարգարէութ՟բ ասացան յերկոցունց սբ՟ցն, որ հանդերձեալ էր լինել, որ և կատարեցաւն իսկ. զի եպիփան նաւեալ 'ի կիպրոս՝ ոչ ժամանեալ յաթոռ իւր։ Նոյնպէս և յովհաննէս՝ յերկրորդումն նուագին արտաքսեալ յաթոռոյն, ոչ ժամանեաց 'ի տեղի արտասահմանութեանն։ Եւ արդ՝ մի՝ ոք պարսաւանս 'ի վ՟ր արկցէ սբ՟յն եպիփանու, իբր թէ կամակից լինել անկմանն յովհաննու։ Զի որ զայս չափ բարեաց ուղղութիւնս արարեալ էր, զի արդ յայսպիսի խորխորատս չարեաց ունէր իջանել, և զայնպիսի լուսաւորիչ և զանարատ վարդապետ տիեզերաց՝ 'ի բաց արտաքսել տարապարտուց։

Արդ՝ իբրև լուաւ երանելին յովհաննէս. եթէ Թագուհին ևդոքսիա սպառազինեաց զԵպիփան ընդդէմ ն՟ր,

և

և նա ոչ հաւանեցաւ նմա, և ոչ խորհեցաւ առնել զայն։ Սկիզբն արարեալ յայնուհետև զսովորական վարդապետութիւն 'ի կիր արկանէր. քանզի միշտ ջերմէր 'ի յուսուցանել, և 'ի խրատել համարձակաբար զամենեսեան, զայր և զկանայս։ Եւ զբանբասանս, և զյանդիմանութիւնն' որ առ համարձակ կանայսն լինէր, յափշտակեալ զբանն բազմութեան, իբր թէ առակաւ 'ի վերայ թագուհւոյն ասէր զայն, և մատուցանէին զայսպիսի բանս 'ի լսելիս թագուհւոյն։ Այլև' ինքն իսկ թագուհին' պատմեաց նմա վասն անարգանացն իւրոց, և այսու բանիւ պատրաստեաց զթագաւորն' զի հանդէս ժողովոյ արասցէ 'ի վերայ յովհաննու. որպէս զի արտաքսեսցէ զնա յեկեղեցւոյն։ Եւ վաղվաղակի գրեաց Եւդոքսիա' առ Թէոփիլոս. աղեքսանդրու եպիսկոպոսն, զի փութասցէ առանց յապաղելոյ հասցէ 'ի կոստանդնուպօլիս, ոչ ինչ կարծիս երկիւղի ունելով վասն առաջին պատճառին. որպէս զի գլուխ արասցէ զնա ժողովոյն, որ վասն անկման յովհաննու։ այլ և յառաջագոյն կազմէր և պատրաստէր զայս գաբաւոնացի, զի դեռևս ոխս պահէր ընդ յովհաննու։

Գա

### Գալուստն Թէոփիլոսի հանդերձ իւրայնովքն 'ի Կոստանդնուպօլիս, և ատենադրումն ընդդէմ Յովհաննու:

Յետ սակաւ ժամանակի՝ եկն Թէոփիլոս բազում եպիսկոպոսօք, զորս ժողովեաց յայլ քաղաքաց՝ իբրև 'ի հրամանէ Թագաւորին, մանաւանդ եթէ ինքեանք իսկ գային հասանէին անդր, որք 'ի զանազան պատճառանաց տրտմութիւս ունէին ընդ յովհաննու: Եկին և այնոքիկ՝ որք 'ի յասիա կողմանէն էին, որ արծաթոյ էին գնեալ զեպիսկոպոսութիւնն 'ի յանտոնինոսէ եփեսոսի եպիսկոպոսէն. զորս երանելին յովհաննէս մերժեաց զնոսա, և զայլս կացոյց փոխանակ նոցա, յորժամ և զերակղիդէս ձեռնադրեաց եպիսկոպոս եփեսոսի: Սոքա ամենեքեան միաձայնեալք, եկին 'ի քաղկեդոն բիւթանացւոց: Նաև եպիսկոպոսն՝ որ անդ էր, կարի ևս հակառակութեամբ էր ընդ սմին, և չարութեամբ իւրով հայհոյէր զնա՝ ամբարտաւան և ամբարհաւաճ կոչելով, որում անուն էր նորա՝ կիւրինոս, յազգէ եգիպտացի: Եւ ելեալք 'ի քաղկեդոնէ, եկին հասին 'ի կոստանդնուպօլիս: Բայց 'ի հռովմայ ոչ ոք եկն անդր՝ ոչ եպիսկոպոս, և ոչ յայլ պատուաւորաց Եկեղեցւոյն: Քանզի ոչ գիտէին նոքա զժողովելն արևելեան Եպիսկոպոսացն, այլ և միայն թուղթ ընդունել 'ի Թագաւորէն, և 'ի հայրապետէն: Եւ Թէոփիլոս յորժամ եկն յառաջագոյն 'ի կոստանդինուպօլիս, ոչ եկն յեկեղեցին՝ ուր էր յովհաննէս, այլ և՝ ոչ նոքա իբրև վայելէ եպիսկոպոսի պատիւ արարին

նմա

նմա, քանզի յանդիման Թշնամի երևեցաւ ։ Նաև Թագաւորն արկածեալ ոչ կամէր ամենևին խօսել ընդ Թէոփիլոսի ։ Իսկ Թագուհին և դուքսն՝ կոչեցեալ զԹէոփիլոս համդերձ այլովքն, որք ընդ նմա եկեալ էին ․ բանս դնէր ընդ նս՝ զգուշանալ հնարել յաղագս երանելոյն յովհաննու՝ Թէ զի՞ արդ կարասցեն ընկենուլ զնա յաթոռոյն ։ Եւ ուխտ դնէր ընդ նս, հաւանեցուցանել՝ պատրաստել զԹագաւորն, զի զդատաստանն նոցա 'ի գլուխ հանիցէ ։ Եգիտ 'ի նոցանէ՝ որ կարի ևս ծարաւիք էին նր արտասահմանութեն, այլ և բազում առատութբ կաշառս տայր նոցա ․ և իբրև բազում զգուշութբ ամրացոյց զգործ իւրոյ նենգութեն արձակեաց զնս 'յապարանից իւրոց ։ Եւ Թագաւորն արկածեալ ոչինչ գիտէր յայնմ ածէ ։

Իսկ երանելին յովհաննէս ․ իբրև ծանեաւ զդժրութիւն դաւաճանութե Ժողովոյ եպիսկոպոսացն և զուխտս միաբանութեան՝ զոր եդին ը Թագուհւոյն ։ Այսպէս ասէր ցնոսա՝ 'ի ձեռն որումն սպասաւորի իւրոյ ։ Ժողովեցան առիս քահանայք ամօթոյ՝ որք ուտեն 'ի սեղանոյն յեզաբելի ։ որպէս զի՞ ասիցեմ ցնոսա, Թէ մինչև յե՞րբ կաղայք երկոքումբք ոտիւք, եթէ գոյ ած 'ի մէջ Ձրչ մարտի պատուիրանաց իւրոց, երթա՛յք զհետ նր ։ Իսկ առ Թէոփիլոս այսպէս ասէր ․ ով արդեօք եղ յեգիպտոսէ իբրև զԹէոփիլոս, որ ոչ նմանեաց արդ 'ի սէջն, և ոչ առաջնոյն ․ մանաւանդ մեծին յովսեփու՝ արհամարհելով զփառսն պետափրեայ, և զգարշելի կնոջն նր,

այլ

այլ զհետ չոգաւ խեղկատակաց և լկտի կանանց՝ եւդոք-սիոյ, և նմանեաց նորա. Արդ զայս գիտացեալ Թէոփի-լոսի և որ ընդ նմա էին եպիսկոպոսունքն. գրեն զհաւա-տարն այսմ պատմութե̄, և մատուցանեն առաջի Թագա-ւորին արկադէոսի. Իսկ նա տրտմեցաւ յոյժ, և ևս առա-ւել վս̄ նախատանաց Թագուհւոյն. յայնժամ հրաման ետ Թէոփիլոսի ժողով առնել ՚ի վր̄ յովհաննու. Ապա և Թագուհին առեալ զԹէոդէա զքոյր Թէոդորոսի եղե-լոյ իշխանին աղեքսանդրու՝ որ տարեալ էր զհազար դահեկանն ցիսիդորոս, զի բաշխեսցէ աղքատաց, (զոր մէ վերագոյն ասացաք) ամբաստանայցուցանէ զնա Ղեմենտո-սի եպարքոսի քաղաքին և այսու օրինակաւ հաշտեցու-ցանէր ընդ Թէոփիլոսի որ յառաջն ոսոխք էին. Ըստ նը-մին օրինակի՝ և զեկեալ եպիսկոպոսունսն, և զկղերիկոսսն յեգիպտոսէ՝ ամբաստանողք Թէոփիլոսի, աղաչանօք և կա-շառանօք զոմանս համանեցուցեալ ՚ի բաց յուղարկէր, և զայնոսիկ՝ որք ոչ հաւանեցան աքսորել հրամայէր ՚ի Թեսա-ղոնիկէ. Եւ այսպէս՝ յամ̄ կողմանց անհոգս առնէր զԹէո-փիլոս, ոմ̄ զի համարձակ պատերազմեսցի ը̄ յովհաննու.

Եւ կացեալ Թէոփիլոս ՚ի կոստանդինուպօլիս՝ շաբաթս երիս, ոչ հպեցաւ ամենևին յեկեղեցին, ուր էր երանելին յովհաննէս, և ոչ խօսեցաւ ը̄ նմա. Այլ արտաքոյ կա-ցեալ, զայս չափ աւուրս՝ զցայգ և զցերեկ խորհէր հան-դերձ իւրայնովքն վս̄ Յովհաննու, ոչ միայն զի արտաք-սեսցէ յեկեղեցւոյն, այլ զի և ՚ի կենաց բարձցէ. Նաև՝

զանա

զանազան կաշառանօք և բազմախորտիկք սեղանովք զա-
գահս, զորովայնամոլսն ՚ի կղերիկոսացն՝ փաղաքշանօք
՚ի բաց քեցեր ՚ի յովհաննէ: Ապա յայտնապէս ը̅ս իւրում
սովորութ̅ե՝ զոր առնէր ՚ի վ̅ր ամբիծ արանց, կամեցաւ
սուտ վկայս կացուցանել ՚ի վերայ արդարոյն: Ապա՝
գտեալ զերկուս ոմանս ՚ի սարկաւագացն, որ արտաք-
սեալք էին ՚ի յովհաննէ. մինն վասն շնութ̅ե, և միւսն
վ̅ս սպանութեան. և առեալ զն̅ս խոստանայր կարգել ՚ի
սպասաւորութ̅ի ս̅բյ սեղանոյն, միայն՝ զի մուրհակօք
վկայեսցեն սուտ ՚ի վ̅ր յովհաննու. զոր և արարին իսկ՝
յետ արտասահմանութ̅ե երանելւոյն կարգեաց զանօ-
րինեալսն ՚ի սպասաւորութ̅ի սրբութ̅ե: Յայնժամ սուտ
վկայքն հաւանեալք թէոփիլոսի, արարին մուրհակս ամ-
բաստանութ̅ե ՚ի վերա արդարոյն, որ քննեցաւ՝ և գտաւ
՚ի ն̅ս ճշմարտութ̅ի և ոչ ինչ: Բայց միայն սուղ ինչ՝ զոր
խրատէր զհաղորդեալսն զն̅ս ևսեան զկնի ճաշակման կենա-
րար խորհրդոյն առնուլ սակաւ ինչ հաց, կամ ջուր՝ կամ
բաժակ, զի մի վ̅ս հարկի բնութ̅ե՝ ո̅չ հանդիպի ոմանց,
արտաքս անկցի ՚ի սրբութ̅ե օրհնացն փշրան ինչ: Որև
այս երկիւղածութ̅ե մտացն նո̅ր էր՝ որ զպարկեշտութ̅ի
ուսուցանէր, և ոչ եթէ արտաքոյ ա̅ծային օրինացն: Եւ
զկնի երկոցունցս այսոցիկ, ամբաստանէին զնմանէ սուտ-
թեամբ՝ սևերիանոս, և անտիոքոս, և ակակիոս. քանզի ս̅բ
աշխարհահաւէրք էին, և վ̅ս խրատու վարդապետութեան
ս̅բյն՝ ոխս պահէին նմա: Քանզի ըստ նմանութ̅ե մեծին

պօ

պօղոսի, ոչ թէ 'ի հրապարակի միայն խրատէր և ուսուցանէր, այլև 'ի տուն և յամ տեղիս՝ զիւրաքանչիւրոք: Արդ՝ այսպիսեաց զոր տեսայք՝ որք էին յիւրաքանչիւր աստիճանաց, ժողովեցան արտաքոյ Քաղաքին 'ի գեօղ մի՝ զոր կոչնի անուանէին, որ հայէր ընդ կողմն քաղկեդոնի, որք էին թուով երեսուն և վեց: Իսկ երանելին Յովհաննէս, նստէր 'ի Պատրիարգանոցն հանդերձ քառասուն եպիսկոպոսօք: Եւ ապա խորհուրդ յառաջ բերեալ Սրբոց Եպիսկոպոսացն որ ընդ նմա էին՝ զարմանային, թէ զիարդ յանկարծակի մատուցակեաց սատանայ 'ի ձեռն թէոփիլոսի զանազակն իւրոյ չարութե յայսքան եպիսկոպոսս, և կղերիկոսս, որ ժողովեցան 'ի միասին վն պատառորութե առն անբծի և անարատի, և այսպիսի մտածութե՝ տարակուսեալ տխրէին: Յայնժամ երանելին լցեալ հոգւով սրբով, և ասէ ցնս: աղօթս արարէք 'ի վր իմ հարք, և եղբարք, և բարեկամքն, և մի՝ թողցէ իւրաքանչիւրոք 'ի ձէնջ զեկեղեցի իւր վն իմ. զի ես այսուհետև նուիրեալ եմ, և ժամանակ իմոյ հանգստեան հասեալ է՝ ըստ երանելւոյն պօղոսի: Այլ և բանսարկուն չար եղեալ մարտնչի 'ի ձեռն իւրոց սպասաւորացն. քանզի՝ և այս սովորութիւն է նորա, վասն է զծոյլս՝ և զաշխարհասէրս՝ և զնախանձոտս՝ ընդդէմ այնոցիկ, որ ուղիղ և առանց ակնառութե պատմեն զբանն ճշմարտութե. վնյ և դուք աղօթս արարէք՝ զի և ինքն յաղթեսցի: Զայս իբրև լուէին եպիսկոպոսքն՝ և այլ բազ

մու

մութիւն ժողովրդոյն՝ որ անդր ժողովեալ էին. ոմանք 'ի նոցանէ արտասուէին, և այլք յառաջ մատուցեալ ըզսբ՟ գլուխ նր՟ և զաչսն՝ համբերձ քաջաշունչ բերանովն համբուրէին։ Իսկ նա աղաչէր զնս՟ գնալ 'ի յարկս իւրեանց և նոքա ևս առաւե՛լ փարէին զԵրանելեաւն, և իբրև զպարս մեղուա՛ց շուրջ եկեալ, և ողբերգական ձայնս արկեալ ողջագուրէին զնա, և նա իբրև գթած հայր մխի-թարէր զնս՟ ։ Մի՛ լայք ասէ 'ի վր՟ իմ. զի իմ կեանքն Քս՟, և մեռանիլն շահ։ Եւ՛ դարձեալ ասէր՝ թէ յիշեցէք զոր յառաջիգոյն ասէի ձեզ, եթէ այսմ կենցաղոյս հեշտական քըն, և տրտմականքն արագ անցանեն. այլէ՝ որ ոչ անցանէ հանդերձեալն. քանզի ամենեքեան իբրև 'ի վաճառանի եմք, ջանասցուք շահել՝ զի անդր մեծանայցեմք, և հանգչի ցիմք։ Այլ վս՟ իմ մի՛ ինչ լայք. քանզի՛ ոչ եթէ լաւագոյն եմք մեք քան զնախահարսն, և զմարգարէսն, և կամ քան զառաքեալսն, զի անմահ կայցեմք մնայցեմք յայս կեանս։

Յայնժամ մի ոմն 'ի ժողովրդոյն՝ ասէր բարձր ձայնիւ, լի հառաչանօք։ Վասն այսորիկ ողբամբք ( ասէ ) և սուգ առնեմք, վս՟ զի տեսանեմք զորբութիւն մեր, և զայրու-թիւն սբ՟ եկեղեցւոյս, և զօրինակ անիրաւ՛ որոշմանդ, և զիշխանացդ՝ որ յայսմ հետէ ոչ ևս երկնչին 'ի Տնէ՟՝ և յառաջնորդաց, և զալքատաց զանվերակացութի՟, և զվար-դապետութե՟ զանպատուութի՟։ Պատասխանի ետ երանե-լին և ասէ. բաւականէ եղբարք՝ զոր յառաջագոյն ասացի։ բայց և արդ դարձեալ ասեմ. իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ՝

զէ

զեկեղեցին իւր մի թողցէ վս իմ․ վասն զի՝ ոչ յինէն սկը-
սաւ վարդապետութին, և ոչ յիս վախճանեցի ։ Մի՞ թէ
ոչ մեռաւ մովսէս, այո՛ մեռաւ․ և յորժամ նա մեռաւ,
ապաքէն զկնի նորա յարեաւ յեսու որդի նաւեայ ։ Մի՞
թէ ոչ մեռաւ սամուէլ, և զկնի նր օծաւ դաւիթ ։ Պա
կասեցին աւուրքն երեմիայի, մի՞ թէ ոչ եղև զկնի նր
բարուք ։ Վերացաւ կառօք եղիա, մի՞ թէ ոչ մարգա-
րէացաւ եղիսէոս ։ Փոխեցաւ պօղոս․ մի՞ թէ ոչ եթող
յետոյ զտիմոթէոս․ և զտիտոս․ և զայլս բիւրս, որք աշա
կերտք եղեն նր, և այլոց առաքելոցն, և զկնի նոցա
տարածեցին յընդհանուրս զբանն վարդապետութեան ։
Պատասխանի ետ Եղիսէոս և ասէ ցերանելին․ արժան է
մեզ ոչ ասել դու՝ ունել զեկեղեցին․ այլ՝ և հաղո՞րդ
լինիցիմք դաւաճանողացն քոյ, և վկայութի ևս գրե՞մք
վս քո ։ Ասէ ցնս երանելին յովհաննէս․ հաղորդ լինիլ
հարկ է, զի մի պատառեսցի եկեղեցիս, այլ 'ի վկայութիւ
սուտ մի՛ գրէք․ վս զի՝ ես ոչինչ գիտեմ զանձին իմոյ
պարտաւորութիւնս՝ եթէ արժան եմ որոշելոյ ։ Եւ
մինչ դեռ նոքա զայսպիսի բանս խօսէին ընդ միմեանս ։
և ահա եկին հասին առաքեալքն Թէոփիլոսի՝ ունելով
'ի ձեռս իւրեանց հրովարտակ, որ ունէր օրինակ զայս ։
Սբ ժողովս՝ որ եղև 'ի գեօղն կաղնի․ գրեմք առ
քեզ յովհաննէս՝ զոր և ոչ եպիսկոպոս արժանի առնեմք
կոչել ։ Մուրհակք ընկալաք վասն քո, որ ունէր
բիւր չարեաց օրինակս գրեալ յինքեանս ։ արդ՝ այսուհետև

մտա

փութա եկ՝ առա՛ առ այս պատասխանի: Ցայնժամ սբց եպիսկոպոսացն՝ որ ընդ յովհաննու էին, առաքեցին առ Թէոփիլոսեանսն՝ երեք եպիսկոպոսս, և երկու երէցս՝ արս երկիւղածս և պատուականս. և պատուիրեցին նոցա՝ զայս ինչ ասել պատասխանի թղթոյն իւրեանց: Մի՛ քակէք զաստուածադրութի Հոգւոյն Սբյ, և մի բաժանէք զեկեղեցին այ, զոր բանն ած մարմին զգեցաւ, և միաւորեաց զնա ընդ ածախառն մարմնոյ իւրոյ: Եւ մի ՚ի վայր կործանէք զօրէնս եկեղեցւոյ, որ ՚ի ձեռն ածազգեստից երեքհարիւր տասն և ութից սբց հայրապետացն հաստատեցաւ. և մի տարասահման դատէք զարդար դատաստանն այ: Եւ արդ՝ դու ո՛վ Թէոփիլոս՝ եկ առ մեզ, և մի նմանեսցիս կայենի՝ կոչելով զհաբէլ ՚ի դաշտ անդր՝ տանիցիս սպանանել: Եւ քանզի մուրհակս ասես գրել յոմանց վն յովհաննու: և արդ՝ ահաւասիկ մեք եօթանասուն գլուխ մուրհակս ունիմք վն քոյոյ պարտաւորութե, որ յայտնի իսկ է գործ անպատշաճ, և բազումք վկայեն: Այլև՝ մեք ժողովեալ եմք աստ ՚ի խաղաղութի և ՚ի շինութի եկեղեցեաց, և ոչ եթէ ՚ի խռովութի, և ՚ի կործանումն: Նաև՝ ճ կանոնաց մեք առաւելագոյն եմք. վնզի որ ճ քեզ են՝ երեսուն և վեց միայն են, և այգ ՚ի միոյ իշխանութե: Իսկ մեք՝ 40 եպիսկոպոսք ՚ի զանազան իշխանութե, որ եօթն մայրաքաղաքացի եմք, և վնկ հարկ է նմա զգունիցն ՚ի լաւագոյնս, և յառաւելագոյնս ընթանալ: Ունիմք և թուղթ, զոր քո իսկ գրեալ է առ հաղորդա-

կիցս

կիցս մեր Յովհաննէս, որ ոչ տարապահման առնէր զդատաստան, այլ ըստ եկեղեցւոյ օրինաց: Արդ՝ կամ ընկալ ոսոխ քեզ զքոյին գըրեալն, կամ դադարեա՛ ի յամբաստանութենէդ. զայսոսիկ քառասունքն: Իսկ Յովհաննէս՝ զայս օրինակ պատուէր ետ ասել: Ես՝ եթէ կամիցի ոք զինէն ասել ինչ, ոչ երկնչիմ. վն՟ զի՝ ոչ ինչ գիտեմ զանձին իմոյ, և դուք՝ եթէ կամիք զի գայցեմ առ ձեզ, յայտ յանդիման թշնամիսդ իմ, որք իւրեանց նախանձուէ, և ՝ի չար խղճէ մտացն չարացն՝ ՝ի բաց հանէք ՝ի ժողովոյ ձերմէ, և ես առանց յերկուանալոյ՝ ուր և պէտք իցէ դատեցայց, թէպէտ և մանաւանդ պարտ իսկ էր ՝ի թագաւորական քաղաքս: Եւ այսոքիկ էն՝ յորոց հրաժարիմ ՝ի դոցանէ. Թէոփիլոս, Ակակիոս, Սևերիանոս, Անտիոքոս: Զի ոմանք ՝ի դոցանէ՝ նախանձու բեկեալք՝ նենգեն զմեզ: Եւ այլք՝ վասն անմտութեան, և զաշխարհական իրս՝ և զթատերս սիրելոյ՝ յանդիմանեալք ՝ի մէնջ, ոխս պահեն: Արդ՝ եթէ դատաւորք համարիք զդոսա, ելցեն ՝ի բացեայ կոյս ժողովոյդ, և եթէ դատախազք՝ նոյնպէս, զի դատախազն յաթոռ դատաւորի զիարդ նըստիցի: Եւ ես՝ որպէս խօսիցիմ ընդ դոսա. իբրև ընդ դատաւորս թէ իբրև ընդ դատախազս: և եթէ ոչ արտաքս ելցեն դոքա, այլ ինչ աւելի քան զայդ չէք լսելոյ յինէն:

Արդ՝ իբրև գնացին առաքեալքն, և պատմեցին զայս ամենայն, զոր հրաման առին խօսիլ առ Թէոփիլոսեանսն: Եւ նոցա կալեալ զնոսա, զոմն գանհարեալ ձաղկեցին, և զոմն որոշեալ ՝ի

'ի բաց պատառեցին. և զայլ ումն երկաթ արկեալ 'ի պարանոցն՝ պահէին 'ի կապարանի: Եւ մինչ դեռ նք զայս այսպէս գործէին. եկն դպրապետ մի 'ի թագաւորէն, ունելով հրովարտակ 'ի նմանէ, յորում գրեալ էր՝ զի վաղվաղակի ակամայ ածցեն զյովհաննէս 'ի ժողովն: Եւ ապա արձակեցին զերկու երէցն, որ առաքեալքն էին 'ի յովհաննէ, և առաքեցին առ նա՝ ասելով, եկ առ մեզ, և տուր պատասխանի վս պարտաւորութե քում: Իսկ պատասխանի ետ նոցա երանելին. ո՞չ յառաջագոյն ասացի, եթէ զդուս ոչ տրուշէք, ոչ այլ ինչ լսէք յինէն. և արդ 'ի ձեռն կղերիկոսացն իմոց կոչէք զիս: Եւ նք դարձեալ անդրէն՝ պատմեցին զասացեալսն: Եւ նք իբրև գիտացին՝ թէ յամ կողմանց օրինօք արդարանայ, ապա խորհուրդ առեալ՝ գրեն թուղթ առ թագաւորն ամբաստանութի զյովհաննէ՝ ասելով. ոպ գիտէ զխիղճ մոգաց կրօնց, վս այնորիկ ոչ կամի գալ 'ի ժողովս: Արդ՝ հրամայեսցէ ձեր բարեպաշտութիդ և ինքնակալ տէրութիդ առանց քննութե ժողովոյ՝ 'ի ձեռն զինուորաց ակամայ աքսորել զնա, զի բազում մուրհակս ունիմք զնմանէ. բայց բաւական է անարգանքն, և բանբասանքն՝ որ առ թագուհին. զի յեզաբէլ ասաց զնա: Յայնժամ առաքեաց թագաւորն զօրագլուխ մի հանդերձ զինուորօք, ոպ զի պատերազմեսցին ը ժողովրդեանն, և ակամայ հանցեն զնա յեկեղեցւոյ: Քանզի՝ զցայգ և զցերեկ ոչ նիրհէին՝ պահելով զերանելին. և և՛ս բազմանայր ժողովքն, և մեծամ աղա-

ղա

զակաւ՟ ընդդեմ կայսին հրամանին՝ մինչև յերկս աւուրս.
Յետ այսորիկ՝ իբրև գիտաց երանելին զպատիր սէր նոցա,
եթէ յայսմանէ խռովութի՟ լինի ժողովրդեանն. եւ զինքն
կամաւ՟ 'ի ձեռս զինուորացն գաղտ 'ի ժողովրդենէն։ Եւ՟
նք՟ առեալ տարան զնա 'ի հրամայեալ տեղին արտասահմա
նութե՟, եկեղեցի մի՝ որ էր յեզր ծովուն։ Եւ՟ անդ կացել՟
մինչև 'ի դարձն նր՟ միւսանգամ անդրէն 'ի քաղաքն, և յա
թոռն իւր։ Իսկ ժողովուրդն միշտ ողբովք, և դառն կա
կանմամբ խնդրէին զհովիւ՟ն իւրե՟նց, և բազումք 'ի նոցա
նէ աղաղակէին 'ի վր՟ թագաւորին վս՟ անիրաւ՟ գործոյն.
Եւ առաւ՟ել՝ 'ի վր՟ չարախօս եպիսկոպոսացն, և դաւա-
ճանողին Թէոփիլոսի։ Եւ՟ ամ՟ քաղաքն լինէր սգով և
տրտմութբ՟, բաց յայնցանէ՝ որ վս՟ անօրէնութե՟ գործոց
յանդիմանեալք լինէին 'ի նմանէ։ Արդ այսոցիկ այսպէս
եղելոց, լցաւ՟ չար կամք թագուհւոյն։

Եւ՟ առեալ գրեաց թուղթ Թէոփիլոս, առ Ինովկեն-
դիոս հայրապետն հռովմայ վս՟ անկմանն յովհաննու, և
առաքեաց անդ 'ի ձեռն սարկաւագի միոջ աղեքսանդ-
րացւոյ։ Իսկ նա՝ ծանուցեալ զչարութի՟ նր՟՝ որ է՟ յով-
հաննու. և պատասխանւոյ անգամ արժանի չառնէր զնա։
Այլև՝ բազումպարսաւանօք աղարտեալ զԹէոփիլոս, անդ-
րէն դարձուցանէր զառաքեալն 'ի նմանէ, և ասէր։ Թէ
մինչ ոչ եմ ընկալեալ երիս թուղթս. նախ՝ 'ի քահանայա-
պետէն յովհաննու. և երկրորդ՝ 'ի նորին միաբանելոցն քա-
ղաքիս եպիսկոպոսացն. և միւս ևս այլ՝ 'ի կղերիկոսաց
եկե

եկեղեցւոյն կոստանդինուպօլսի, ոչ ևս հաղորդեցայց ընդ նա բանիւք հաստատութեամբ թղթոյ: Յետ սակաւ ինչ աւուրց դարձեալ գրեաց Թէոփիլոս թուղթ առ Երանելին Եպիփանիոս, և առաքեաց 'ի ձեռն Պետրոսի ուրումն երիցու աղէքսանդրացւոյ, և մարտիրոսի սարկաւագի՝ եկեղեցւոյն կոստանդնուպօլսի: Եւ էր գրեալ յերեսաց. 36. եպիսկոպոսաց, որոց՝ 27. եգիպտացիք էին, և այլքն յայլմէ դասուէ: Եւ ունէր զօրութիւն գրեալքն՝ այսպէս: Եթէ յովհաննէս՝ իշխանասիրութեան ախտիւ շարժէր զամենեսեան. վասն զի՝ վեշտասան եպիսկոպոս 'ի միումն աւուր արտաքսեաց, և փոխանակ նոցա զայլս ձեռնադրեաց յիւրոց սպասաւորաց. և այլ բազում բանս ամբաստանութեան նման սոյին ունէր գրեալքն: Առաքեաց ընդ թղթոյն և զմուրհակն՝ զոր ստութեամբ յօդեալ էին 'ի վերայ յովհաննու:

Իսկ իբրև ընթերցաւ զայն Եպիփանոս հայրապետն հռովմայ, գտաւ 'ի նմա և ոչ մի ինչ պատճառս որոշման: Եւ տարակուսեալ ընդ միտս իւր, քանզի՝ ոչ յովհաննէս մերձ էր, որ խօսէր և տայր պատասխանի. այլ միայն մեղադիր լինէր մոլութեան Թէոփիլոսի, զի այնպէս 'ի հեռուստ բորբոքեցաւ նախանձու, պարտաւորութեամբ թղթովք պարտաւորել զանպարտն: Եւ ապա աղօթս և պաղատանս մատուցանէր առ Աստուած՝ հանդերձ պահօք, որպէս զի քակտեսցի հերձուածն, և հաստատեսցի եղբայրսիրութիւն: Գրեաց և առ Թէոփիլոս այսպէս. Եղբայր Թէոփիլոս՝ մեք զքեզ գիտեմք մեզ հաղորդական,

կամ, և զՅովհաննէս՝ զեղբայր մեր. ո՞չ և յառաջագոյն յայտ
արարաք զբնութիւնս մեր, այժմ և զնոյն միտս ունիմք. և
որչափ և գրես 'ի մեզ, զնոյն լուիս, եթէ անհնար է ա-
ռանց պատճառանաց 'ի բաց կալ մեզ 'ի հաղորդութենէն
յովհաննու: Արդ՝ եթէ կամ է քեզ և համարձակիս,
երթ 'ի ժողովն ածային, և զպատճառս 'ի նոսա կըր-
թեա վկայութեան խորագոյն կրօնաւորացն զի այլ կանոնս
հռովմայեցւոց եկեղեցիս ոչ ընդունի: Զայս թուղթս
իբրև ընթերցաւ Թէոփիլոս՝ և հասու եղև, ոչ ևս յա-
ւելագրել առ երանելին Ինովկենտիոս. այլ սկիզբն արա
րեալ 'ի յերակլիդիայ եպիսկոպոսէ եփեսոսի, որ ձեռնա-
դրեցաւն 'ի յովհաննէ, զի թերևս այնու հնարեսցէ պատ
ճառս գտանել՝ քակել զօրմանս 'ի հաղորդութենէն յովհան
նու: Եւ էր պատճառն երակլիդիոսի՝ այսպիսի. զան
հարեալ զօրմանս 'ի տարապարտուց՝ խայտառակեալ և
կապեալ շղթայիւք 'ի դուռս և 'ի փողոցս քաղաքին
եփեսոսի, և յայնմ ժամանակի՝ յոր Թէոփիլոս զայսպիսի
խնդիրս ուզէր, ոչ էր մերձ երակղիդիոսի, այլ մեկնեալ
'ի հեռագոյն տեղիս: Եւ աղեքսանդրացիքն յամառէին
'ի մէջ բերել զամբաստանութիւն. իսկ քաղաքացիքն եփե-
սոսի՝ ընդդէմ կային նոցա՝ ասելով. եթէ ոչ է պարտ
հեռագոյն դատաստան դատել՝ մինչև ամբաստանեալն,
և ամբաստանողն առ իրեարս մերձ եկեսցեն: Եւ կռու-
տեցաւ ամբոխ բազում յերկոցունց կողմանցն, և եղև
խռովութիւն մեծ, և հարուածք, և մահք. և այսմ ամենայնի

էր

էր պատճառ Թէոփիլոս ։ Զայս իմացեալ բիւզանդացիքն, խնդրէին կորուսանել զնա ընկղմելով ՚ի խորս ծովուն . իսկ Թէոփիլոս գիտացեալ զայս՝ փախստական եղեալ գը-նաց յեգիպտոս ։ Եւ ամենեքեան ՚ի բերան առեալ՝ զպար սաւանս նր խօսէին, և ասէին թուէր նա յաչս ամենե-ցուն ։ Արդ՝ վս Թէոփիլոսի այսքան եղև ։

## Դարձուցումն յաքսորանաց սրբոյն Յովհաննու ՚ի Կոստանդնուպօլիս՝ յաթոռն իւր ։

Իսկ Թագաւորն Ոնորիոս, յորժամ լուաւ ՚ի յԻնով-կենդիոսէ Հայրապետէ, թէ ոչ արտաքոյ կանոնաց բազումք միաբանեցան ընդ Թէոփիլոսի ՚ի ձեռն կաշառանաց եւդոքսիայ, և ընկեցին յԱթոռոյ զերանելին Յովհաննէս, տրտմեցաւ յոյժ ։ Քանզի յառաջագոյն լուեալ էր վս առաքինութե նր, և անձաշնորհ վարդապետութեան նր, և ցանկայր տեսանել զնա ։ Յայնժամ գրեաց թուղթ մեղադրեաց, և առաքեաց առ եղբայր իւր Արկադէոս. թէ զիարդ արժան էր Թագաւորի՝ թոյլ տալ զայնպիսի այր ընտրեալ յԱյ՝ զանուանի՝ և զհռչակաւոր՝ արտաքսել յաթոռոյ ։ Զոր և յետ սակաւ ինչ ժամանակաց՝ բազում պարսաւանօք այպանեցաւ նոյն ինքն Արկադէոս ՚ի յՈնորիոսէ. թէ ոչ առանց կամաց նր՝ և առանց Առաքելական աթոռոյն սպասաւորացն՝ գործեաց զանպատշաճն ։ Արդ՝ իբրև ընթերցաւ թագա-

ւորն

ձօրն արկանէր զգիրսն, սրտմեցաւ յոյժ. և խնդրէր թէ որով օրինակաւ հնարեսցէ դարձուցանել զնա անդրէն յաթոռ իւր: Քանզի՝ ստուգեալ գիտաց և ինքն Թագաւորն՝ թէ զուր տարապարտուց՝ ՚ի ձեռն պատրանացն Թէոփիլոսի դատապարտեցաւ այրն Աստուծոյ յովհաննէս: Նաև՝ շարժեցաւ քաղաքն ամենայն սաստիկ շարժմամբ, և անկեալ կործանեցաւ սենեակ Թագաւորին, և բազմութիւն ամենայն զահի հարեալ աղաղակէին և ասէին. եթէ ոչ դարձցի այրն յովհաննէս՝ որ զուր տարապարտուց արտաքսեցաւ, ամենայն քաղաքս առհասարակ կործանի: Յայնժամ հրաման ել ՚ի Թագաւորէն, ապ զի դարձցի յաթոռ իւր: Եւ վաղվաղակի առաքեաց զոմն ՚ի հաւատարմաց իւրոց, որում անունն էր Բրիսոն՝ հանդերձ այլովք բազմօք. ապ զի փութապէս ածցեն զնա յեկեղեցին, զի խաղաղութեամբ մնացէ քաղաքն՝ և հաստատուն: Եւ վս առաւել փութոյ գալստեան սրբոյն, այլք զկնի առաջնոյն ձեպէին, և զհետ նոցա զայլս ևս:

Եւ իբրև եհաս աւետիք գալստեան նորա, ելին ամենայն քաղաքն ընդ առաջ նորա ջահիւք լուցեալովք, և անուշահոտ խնկօք, և յերգս հոգևորս լցեալ՝ ցնծութեամբ և ուրախութեամբ ընդունէին զքահանայապետն իւրեանց: Եւ հանդիպեցան նմա աղօթիւք արտաքոյ քաղաքին ՚ի գեօղ մի՝ որ կոչէր մարանա. և անդ զտեղի առեալ սրբոյն, ոչ կամէր մտանել ՚ի քաղաքն՝ թէպէտ բազմութիւն փութացուցանէին, այլ մինչև մեծագոյն դատաստանօք ( ասէ ) քննը

նութիւն լինիցի 'ի մէջ մեր, և այնոցիկ՝ որք հակառակ յանդգնեցան: Ապա յայնժամ ինքն իսկ թագաւորն՝ հանդերձ կղերիկոսօքն, և փառաւորօք, և ամենայն բազմութեամբ հարկեցուցեալ զնա, մեծաշուք պաշտամամբ ածին 'ի քաղաքն: Եւ մեծաւ աղաչանօք թախանձէին զնա նստիլ յաթոռ յեպիսկոպոսապետութեան, և ըստ սովորութեան զխաղաղութեան աղօթսն տալ ժողովրդեանն: Իսկ նա՝ հրաժարէր ասելով, եթէ պարտ է նախ քննութիւն լինել. և ժողովուրդն ևս առաւել զարմանային, քանզի բորբոքէին մեծաւ սիրով, և ցանկային տեսանել նստեալ զնա յաթոռ իւր: Եւ հաւանեալ սէր երանելւոյն, նստաւ յաթոռ հայրապետութեան. և զսովորակի զբան վարդապետութեան 'ի վար արկեալ, և զմեկնութիւնս աստուածային գրոց, առ հասարակ լուսաւորէր զհեռաւորս և զմերձաւորս: Իսկ բազմութիւն քաղաքին՝ զօրն զայն, յորում նստաւ սուրբն միւսանգամ յաթոռն իւր, տօն մեծ կատարեցին որ յօր երեքտասան է նոյեմբերի ամսոյ՝ առ 'ի

յիշատակ յաւիտենական:

Ի ժամանակին յայնմիկ, էր 'ի կոստանդնուպօլիս՝ կին մի, որում անուն էր Ողոմբիայ. և էր կին այս յազգէ թագաւորացն լի իմաստութեամբ, և բարի բնութեամբ, և ողջախոհ վարուք, այլև՝ զարդարեալ ամենայն առաքինութեամբ: Սա 'ի մանկաց իւրոց՝ առն խօսեցեալ էր, բայց զփորձ առն ոչ ընկալաւ. քանզի կացեալ ընդ առն իւրում ամիս քսան սրբութեամբ՝ մինչև այն կատարեաց զկեանս իւր,

և

և միաբանգամ լծակցիլ ընդ առն ոչ կամեցաւ, թէպէտ և զոր խօսէին նմա՝ յաղագս թագաւորին էր. այլ կանխէր յառաժամ 'ի պահս, և յաղօթս, և 'ի տքնութիւնս: Իսկ թագաւորն՝ վասն զի ոչ հնազանդեցաւ նմա լինել առն, յամէ 'ի բաց մերկացոյց զնա յընչից՝ և 'ի հայրենեաց. սակայն և նա այնպէս անշարժելի կացեալ՝ սպասաւորեալ սրբութեան. և թագաւորին այսպէս պատասխանի առնէր: Եթէ կամեցեալ էր թագաւորին իմ՝ զիս է առն կեալ, ապա ոչ էր արդեօք ամփոփեալ առ ինքն զայրն իմ: Այլ վասն զի՝ ետես ամենատես գիտութիւն, զի անյարմար էր ինձ ապականեալ կենցաղս այս, և զի՝ անհնար էր հոգալ զառնն՝ և հաճոյ լինել նմա. վասնորոյ զնա ազատեաց 'ի կապանաց կենցաղոյս, և զիս փրկեաց 'ի ծանրագոյն լծոյ առն ծառայութենէ, և զքաղցր լուծն իւր, և զթեթև բեռն՝ որ յուսով հանդերձելոյն լինի, զայն 'ի ձեռն ժուժկալութեան եդ 'ի միտս իմ:

Եւ թագաւորն իբրև լուաւ զայնպիսի պատասխանիս 'ի նմանէ, հրամայեաց՝ զի ամբողջ պահեսցէ եպարքոս քաղաքին զինչս նորա ընդ ձեռամբ իւրով, մինչև հասցէ 'ի չափ կատարեալ հասակին՝ որ ըստ թուոյ երեսնամենիցն. որպէս զի՝ այսու հնազանդեցուսցէ զանկատար հասակն, և զեռանդն մանկութեան պակասեցուցանել 'ի յուսոյն, և արկն արկել 'ի յերս Ցայլին: Իսկ նա առաւել ևս պնդէր զինքն պահօք՝ և գոհանայր զԱծյ, և ըստ արժանի իւրոյ առաքինութեանն՝ վայելչաբար պատասխանի առնէր թա-

գա

գաւորին՝ այսպէս: Բարւոք և պատշաճաւոր այցելութիւն ցուցեր յիս յաղախնին քո՝ ով Թագաւոր. քանզի հրամայեցեր պահել զծանրագոյն զբեռն իմ, զոր մի հոգս բազումս ունէի՝ թէ զիա՞րդ զնա մատակարարեցից: Եւ արդ՝ լաւագոյնս ինձ գործես՝ եթէ հրամայեսցես բաշխել զնորա աղքատաց և եկեղեցեաց. և ես աղօթս արարից՝ զի դու բաշխեսցես, որպէս զի ես ապրիցիմ 'ի սնափառութենէ, զի մի 'ի ձեռն հպարտութեան զձախութիւն լուսաւոր բնութեանս ստուերացուցից, և նիւթականօքս մոլորեցայց յաննիւթ՝ և 'ի ճշմարիտ շաւղաց որ առաջնորդէ 'ի կեանս: Եւ արդ նորա զայս այսպէս ասացեալ՝ ըստ նմին և իրքն կատարեցաւ. քանզի յորժամ դարձաւ Թագաւորն 'ի պատերազմէն Մաքսիմոսի, և լուաւ վասն առաւել ճգնութեան նորա, հրամայեաց Ուղիպիադայի՝ զի նա իշխանէր 'ի վերայ ընչիցն, սպասաւորել այնպէս՝ որպէս և նա խնդրեաց: Իսկ երանելի կինս այս՝ բարւոք կրօնաւորութեամբ զարդարեալ զկեանս իւր, և հանդերձ այլ խոնարհութեամբն՝ կեայր հանապազ առանց լուանալոյ: Ապա թէ՝ դուն ուրեք պէտք լինէին նմա բաղանիս՝ միայն վասն հիւանդութեան մարմնոյն, զգեստիւն մտանէր 'ի ջուրն, վասն զի պատկառէր զինքն մերկ տեսանել: Արդ՝ վասն այսպիսի բարւոք կրօնաւորութեան, և ողջախոհ և իմաստուն մտաց՝ արժանի եղև սպասաւոր լինել մեծի եկեղեցւոյն, և սրբոյ քահանայապետին յովհաննու. քանզի՝ երկիւղածութեամբ սպասաւորէր նմա զպէտս կարևոր կերակրոյն: Եւ յամենայն եկե-

ղե

ղեցիս սքանչանային է կատարեալ առաքինութիւնք, զի ունէր հանդերձ կուսութեամբ՝ և զողորմութիւն ։

Իսկ Թէոփիլոս՝ որ միշտ պատրաստ էր չարախնդելն ընդ նել, ոչ երբեք դադարէր ստէպ ստէպ գրել 'ի յԻննովկենդիոս հռովմայ՝ բամբասանս վասն սորին յովհաննու յաղագս այսորիկ ։ Քանզի երբեւ սուղ ինչ ժամանակս խաղաղանայր եկեղեցին և ամենեքեան ուրախ էին 'ի վերայ իմաստուն հովապետին, և նա ծածուկ բանիւք վարդապետութեան ով յուաջագոյն՝ զամենեսեան շինէր և սփոփէր ։ Ընդ դարձեալ սատանայ զինքն նախանձոտացն, և չարաբարոյիցն իւրով չարութեամբ ։ Յայնժամ Եւդոքսիա, պատկեր արծաթի կանգնէր 'ի վերայ ծիրանի սեանն՝ քղամիթ զգեցեալ, ոչ մերձ՝ և ոչ հեռագոյն յեկեղեցեացն, այլ կարի 'ի մէջ երկոցունցն՝ սրբոյն Սոփիայ, և միւս եկեղեցւոյն՝ 'ի ճանապարհի փողոցին ։ և ամենեքեան ամբոխէին անդ, և զօրն ցերեկ յանկարգութեան մնային ։ Իսկ երանելին յովհաննէս՝ թշնամութիւն, և անարգանս վարկանէր զայնպիսի անկարգութիւնն սրբոյ եկեղեցեացն ։ Եւ դարձեալ՝ սկիզբն արարեալ զհամարձակախօս, և զծածաբան լեզուն՝ ընդդէմ հակառակ այնոցիկ զինէր որ զայնպիսիսն գործէին, և ոչ միայն թէ յանդիմանական ձայնիւք վարէր, այլ և որոշելով զայնպիսիսն՝ է բանիւք առնէր ։ Եւ թագուհին՝ զայն զայնպիսի բանսն յինքն ձգէր, և մեծ անարգանս համարէր անձին իւրոյ ։ և դարձեալ պատրաստէր ժողովս առնել 'ի վերայ յովհաննու ։ Իսկ երանելին՝ քարոզ պատուիրա

նի

նի հռչակաւոր առնէր ընդ նմ եկեղեցիան, այսպէս ըս-
կիզբն դնելով բանին։ Դարձեալ՝ հերովդիադայ խըռո-
վի։ դարձեալ անդրէն մոլի։ դարձեալ՝ կաքաւէ։ դար-
ձեալ՝ խնդրէ ՚ի վ̄ր սկտեղ զգլուխն յովհաննու մկրտչի։
Եւ այլ՝ որ սոցին նման բանք իցեն։ Զայս լուեալ թա-
գուհին եւդոքսիա. (որ թարգմանի քաջափառ, զոր յեղա
նակեմք չարափառ) եւ առաւել ՚ի բարկութի շարժեցաւ։
Եւ զկնի երկուց ամսոց՝ ժողով արարեալ ՚ի կոստանդի-
նուպօլիս զեպիսկոպոսս՝ հանդերձ մետրապօլտօք, զորոց
զանուանս չհամարեցաք պատշաճ գրել. եւ ՚ի գալն նոցա
հպարտացան առաջին ոսոխք յովհաննու ՚ի վ̄ր ն̄ր։ Իսկ
յովհաննէս համարձակեալ ՚ի վ̄ր նոցա, վ̄ն զի՝ ոչ ինչ գիտէր
զանձին իւրոյ, եւ խնդրէր զոսոխսն՝ զի դէմ յանդիման մի-
մեանց ասասցեն զամբաստանութի։ Իսկ նոքա զանգիտեալք
՚ի նմանէ, քանզի՝ ոչ ինչ կարէին ստութ̄բ իւրեանց ՚ի դիմի
հարկանել ճշմարտութե։ Ապա առաքեցին յաղէքսանդ-
րիայ առ թէոփիլոս, ո̄պ զի՝ կամ ինքն եկեսցէ, եւ զի-
նեսցի ընդդէմ յովհաննու. կամ՝ եթէ երկնչիցի ՚ի ժո-
ղովրդենէն, հնարեսցէ թէ որով Օրինակաւ սկիզբն
արասցեն։ Իսկ թէոփիլոս գալ առ ն̄ս ոչ կամեցաւ, քանզի
զմտաւ ածէր՝ թէ ո̄պ յառաջագոյն փախստական եղեւ
անտի։ Այլ առաքէ անդ եպիսկոպոսս, որք յառաջագոյն
խրատեալք եւ ամրացեալք էին ն̄ր չարութեամբն. եւ ետ
ցն̄ս զկանոնս արիանոսայն, զոր ՚ի վ̄ր երանելւոյն աթանասի
գրեալ էին այսպէս։ Եթէ եպիսկոպոս, կամ երէց՝ եթէ

յի

յիրաւի, և եթէ յանիրաւի՝ քակել իշխանութեանն իւրմէ, և դարձեալ առանց ժողովոյ մտանէ յեկեղեցին, այնպիսին

ոչ ունի տեղի պատասխանատուութեան,

Զայսպիսի դատաստանս իբրև ընթերցան եպիսկոպոսքն, և մետրապօլիտքն՝ ծանեան եթէ ոչ ըստ ուղղութեան կանոնաց դատի Թէոփիլոս զՅովհաննէս ։ Իսկ առաքեալքըն 'ի Թէոփիլոսէ վիճէին՝ թէ յուղղափառաց է կարգեալ կանոնքդ ։ Եւ նոքա ընդդէմ կային նոցա, և մեծաւ ձայնիւ ասէին՝ թէ չէ պարտ առանց իրիք վնասու պատճառանաց զայնպիսի քահանայապետ աքսորել ։ Այլև՝ կանոնքըդ այդ ոչ որպէս ասէքդ՝ թէ 'ի սարդիկեայ ժողովոյն սահմանեցաւ, այլ արիանոսաց եղաւ ։ Նաև՝ ոչ եթէ ըստ օրինաց սրբոց գրոց՝ յաղագս պարտաւորութեան անկաւ յառաջագոյն յաթոռոյն, այլ բռնութեամբ 'ի զօրապետէն, որ առաքեցաւ 'ի թագաւորէն ։ Եւ ընդդիմակացն դարձեալ ասէին. որպէս ոչ զոք համարեցաւ՝ ասէ, և առանց ժողովոյ նստաւ յաթոռ եպիսկոպոսութեան. նոյնպէս և առանց քննութեան, և դատաստանի արտաքս ելցէ ։ Եւ նոքա ասեն՝ ոչ եթէ ոսոխ ոք դէմ յանդիման պարտաւորեաց զնա, այլ թագաւորն բռնութեամբ արտաքսեաց, և դարձեալ թագաւորն անդրէն կոչեաց ։ Արդ՝ մինչ դեռ նոքա այսպէս ընդ միմեանս բանակռուք լինէին, առաքեաց թագաւորն, և կոչեաց ըզ կողմն Թէոփիլոսի, և տան եպիսկոպոս 'ի դատաստան յովհաննու. քանզի էին աւելի քան զքառասուն, որք վիճէին վասն կանոնացն ։ Կէսքն հակա-

ռա

ակէին՝ թէ ուղղափառացն է, և կէսքն ընդդէմ կա-
յին նոցա՝ թէ աղխանդացն է: Եւ մինչ դեռ այնպէս
անկարգք լծակրուխ լինէին, ըստ նմին օրինակի և ա-
ռաջի թագաւորին, և ձանձրոյթ առնէին նմա վիճա-
բանութեամբն: Մտին անդ երկու արք Սուրբք ծերնա-
կանք. Եղպիդոս լաւոդիկեցի, և Տրանկղիոս, արք իմաս-
տունք և հանճարեղք, որք հաւանեցուցին զթագաւորն,
ոչ առանց պատճառանաց արտաքսման լինել յովհան-
նու, զի ոչ օրինօք արտաքսեցաւ, այլ քոյին հրամանաւդ:
Եւ այժմ դարձեալ՝ ոչ յանձնէ խուզէ, այլ ձեռով հրամա-
նաւ անդրէն դարձաւ: Այլև՝ կանոնքդ այդ, զոր այժմ
երևեցուցին, որով և դատապարտեն զնա, արիոսի հերձո-
ւածնէ: Ասէ իմաստունն եղպիդիոս ցկողմն թէոփիլոսի՝
հեզ բանիւ. այսուհետև թող չառնեմք ձանձրոյթ ինքնա
կալիդ, լուեսցուք 'ի շատխօսութենէ: Արդ՝ եկեսցեն
առաջի թագաւորիս, որք ընդ ակակիոսին, և անտիոքսին
են, և տացեն գիր՝ զի մի՝ սուտ գտանիցեն, թէ արդարև
ուղղափառացն է կանոնքդ այդ, և ոչ աղխանդացն. և
մեք՝ այլ ոչ ևս ընդդիմասցուք նոցա: Յայնժամ հաճոյ
թուեցաւ բանք իմաստնոյն առաջի թագաւորին. բայց նո-
քա պապանձեցան: Զի թէպէտ և առաջի թագաւորին՝
կէս 'ի կէս բանիւ խոստանային տալ զգիրն, սակայն զան
գիտեալք՝ յետոյ ոչ համարձակեցան. զի ստուգապէս գի
տէին թէ հերձուածողացն է: Ապա՝ յայլ հնարս մտանէ
ին արտաքսել զյովհաննէս, զի կային առանձինն առաջի

Թա

Թագաւորին, և չարախօսութիւն մատուցանէին ։ Արդ՝
երբ և ընդ երկարեցաւ գործն, քանզի ամիսք ինն անցին 'ի
վր ։ Եւ երանելին զայս ամ փորձութիս եկեալ հասեալ
'ի վր, յածապաստան արարեալ՝ անփոյթ առնէր զանձնէ .
այլ և՝ ուրախ ևս լինէր, զի մեծաց վարձուց և փառաց
արժանաւոր զնա գործէր . և ժողովուրդն անխափան վայե-
լէին 'ի նորա լուսաւոր վարդապետութե ։

Եկն եհաս օր տօնի ծննդեան, և յայտնութե քի այ . և
Թագաւորն՝ ըստ սովորութե ոչ կամեցաւ գալ յեկեղեցին,
ուր էր սուրբ հայրապետն ։ Եւ ազդ առնէր նմա, եթէ
թէ՝ ոչ կարիցէ հաղորդիլ անդ՝ մինչև 'ի բաց մերկասցի
զամբաստանութին ։ Իսկ երանելին՝ քանզի վստահ էր 'ի
ճշմարիտ միտս իւր, զի ոչ ինչ արժանի պատժոյ գործեալ
էր, կամ ամբաստանութեան, համարձակ երևեցուցանէր
զինքն առաջի ստախաց իւրոց ։ Եւ ընդդիմակացքն նր եպիս
կոպոսք՝ գիտելով զխիղճ մտաց իւրեանց, զարհուրեալք
լինէին 'ի նմանէ ։ Եւ երբ կատարեցան աւուրքն՝ որ ընդ
կնի յայտնութե քի այ, եկն եհաս՝ և զատիկ յարութե
փրկչին մերոյ, և երթեալ չարախօս եպիսկոպոսքն մտին
առանձինն առաջի Թագաւորին՝ և ասեն ։ Պարտաւորեցաւ
յովհաննէս, արդ հրամայեա՛ աքսորել զնա ։ Իսկ Թագաւորն
հարկեալ 'ի նոցանէ, այլ և՝ հաւատացեալ երբև եպիսկոպո-
սաց . առաքեաց առ յովհաննէս, զի ելցէ յեկեղեցւոյն . և
ասէր՝ եթէ երկու ժողովք վս նր եղեն, և ոչ կարեմ ես
մտանել յեկեղեցին, եթէ ոչ նախ նա ելանիցէ ։ Իսկ երա
նե

նելոյն՝ այսպէս պատասխանի առնէր, ես յԱյ իմոյ և 'ի Տնէ Յսէ Քի կացեալ եմ ըստ այսմ՝ սբյ եկեղեցւոյս՝ առ 'ի հովուել և խնամել զփրկութիւն նր. և վն՝ ոչ կարեմ ինքնակամ՝ յօժարութբ 'ի սմանէ արտաքս ելանել. բայց եթէ ոք բռնութբ հանցէ։ Արդ՝ եթէ այդ կամ է քեզ, դու ինքնին արտաքսեա՛. զի ես այսուհետև ունիցիմ պատճառս

պատասխանատուութե՛՝ զքոյին բռնութիւդ։

Յայնժամ թագաւորն առաքեաց զոմանս՝ զի հանցեն զնա յեկեղեցւոյն, այլ ոչ բնաւին յեպիսկոպոսարանէ անտի։ Եւ խորամանկութբ իմն պատճառս հնարեցին, որպ զի 'ի բաց կայցէ 'ի քահանայագործութէ անտի, և մնասցէ անդրէն 'ի հայրապետանոցին։ Եւ զայս արարին, վն զի՝ գուցէ նա ելանիցէ 'ի սահմանացն, և նոքա դարձեալ պատուհասին շարժմամբ, և կամ այլ ածասաստ բարկութեամբ։ Քանզի զայս խորհէին 'ի սիրտս իւրեանց, եթէ եկեսցէ բարկութի ինչ յանկարծ վն դորա 'ի վր մեր. վաղվաղակի 'ի ձեռն հաւանութե աղաչեսցէ զԱծ հաշտելոյն մեզ, և ինքն դարձցի անդրէն յեկեղեցին, այս թէ ոչ՝ արդեամբք կատարեսցուք, զոր խորհեցաքն առնել վն նր։ Արդ՝ կացեալ սբյն յեպիսկոպոսարանի անդ առանց հոգւոց եկեղեցւոյն, և անգործ 'ի քահանայական խորհրդածութեցն՝ իբրև ամիս երկուս. միայն առանձինն պարապեալ աղօթից, և ածայնոց գրոց։ Եկն եհաս աւուրք մեծի շաբաթուն, յորում յանձն էառ Քս Ած մեր՝ համբերութբ կատարել զխորհուրդ փրկութե՛՝ զլրումն

ան

ամ փրկագործ տնօրէնութեանցն: Եւ դարձեալ հրաման տայր թագաւորն 'ի ձեռն պատգամաւորի որումն՝ ելանել յեկեղեցւոյն: Իսկ նա պատասխանի առնէր ըստ պատշաճի խորամիմաստութեն. զոր իբրև լուաւ թագաւորն՝ զարհուրեցաւ յոյժ 'ի բանէ նր, և կոչեալ առ ինքն զանտիոքոս, և զակակիոս, և զայլս համախոհս նոցին՝ և ասէ ցնս: Տեսէք՝ արդ մի գուցէ ոչ ուղիղ խորհիք 'ի վր քահանայապետին դյ, և ածէք 'ի վր մեր զպատիժ պատուհասի զանիրաւ գործողաց ոմանց: Պատասխանի ետուն գերաչար անձինքն և ասեն. 'ի վր գլխոց մերոց եղիցին պատիժքն այն՝ ո՛վ թագաւոր, որ վն անկմանն յովհաննու է: Քանզի՝ զի՞նչ պատիժս կրել ասիցէ ոք վն նորա (ասեն) որ առանց կանոնաց 'ի ներքս վազելով էառ զաթոռ քահանայապետութե:

Զայս լուեալ սքց ուղղախոհաց եպիսկոպոսացն՝ կողմանցն յովհաննու, որք էին թւով քառասուն. մտեալ առաջի թագուհւոյն՝ 'ի Վկայարանի սքց առաքելոցն, և արտասուօք աղաչէին զնա, առաջի արկանելով 'ի մաղթելն իւրեանց՝ զգութ սքյ եկեղեցւոյն. և մանաւանդ վն այսր մեծի զատկի տօնիս (ասէին՝) պարտ քեզ լսել մեզ. նաև՝ վն այնոցիկ, որ հանդերձեալք են առնուլ յայսմ տօնի՝ զ վերստին ծննդն: Իսկ նա իբրև ոչ ինչ հայէր յաղաչանս նոցա: պատասխանի ետ մի ումն 'ի սքց քառասնիցն, որում անունն էր Պօղոս՝ իկրատիոյ եպիսկոպոս՝ և ասէ: Երկիր յայ ո՛վ Եւդոքսիա, և քեզ ողոր

մեայց

մեծաց, և որդեկաց քոց, և մի պղծեր զտօնս Այ հեղմամբ արեան: Եւ զայս ասացեալ՝ դարձան անդրէն քառասունքըն 'ի ժողովատեղին իւրեանց, և հսկէին զգիշերն ամ. կատարելով զսրբ տօնն սովորական օրհներգութբքն, և ընթերցմամբ ածաշունչ գրոց. այլև՝ զսրբ մկրտութիւնն՝ քահանայքն, և սարկաւագունքն կատարէին անխափան՝ հանդերձ իւրովք փառաբանութբք: Իսկ անտիոքոս, և ակակիոս, և սևերիանոս՝ հանդերձ կիւրիոսիւ, և զօրագլուխ ոմն՝ որ էր մագիստրոս իշխանութեամբ՝ եկին, զի խափանեսցեն զնս 'ի պաշտամանէն: Եւ նա՝ իսկ և իսկ առաքեալ անդ զոմն այր հելլենացի՝ լի սատանայական սըրտահակութբ և անմարդութբ, որում անունն էր ղուկիոս: Եւ տուեալ պատուէր նմա՝ զի խրատեսցէ զնոսա նախ դառնալ յեկեղեցին իւրեանց, և 'ի բաց կալ 'ի յովհաննէ. ապա թէ ոչ լուիցեն, հարկանել զնս բարկութեամբ, և խափանել զտօնս նոցա:

Արդ՝ առեալ Է ինքեան ղուկիոս՝ 'ի զինուորական կարգէն արս սրիկայս, յանդուգնս՝ իբրև չորք հազար, և երթեալ պահէր զժողովարանս նոցա մինչև ցպահս երկուս 'ի գիշերոյն: Եւ անկեալ 'ի վր ժողովրդեանն, զոր կոչէին յովհաննեանք՝ զբազումս 'ի ժողովրդոյն հարին 'ի սուր սուսերի, և զայլս փախստականս առնէին՝ զարս և զկանայս և զկուսանս թշնամանէին՝ կապուտ թողլով, և զկիսոց՝ զ հանդերձս հերձնուին: Իսկ զքահանայից, և զսարկաւագաց՝ զգագաթունս յանխնայ հարկանէին

բր-

բերոց, և ընդունէին զանազան ալեամբ․ և զմի խուղն՝ որով օծանէին զմկրտեալսն յափշտակեալ ՚ի ձեռաց նոցա՝ յերկիր հեղեալ, առաւթուր հարեալ կոխան առնէին։ Եւ այսպէս զբռնութիւն չարաչար ՚ի գործ արկեալ, զպատաս քահանայութեան, և զանօթս սրբութեանն յաւար առեալ՝ յափշտակէին, և զբաղումս ՚ի սպասաւորացն ըմբռնել ՚ի բանտ արկանէին։ Իսկ՝ որ յիշխանական կարգէն էին՝ որք պատուաւորք քաղաքին, զնոցա պատիւն և հայրենիսն ՚ի բաց բարձեալ, զայլս ՚ի տեղիս նոցա կարգէին։ Եւ այսպէս ազգի ազգի սպառնալեօք և արգելմամբք նեղէին զնա՝ առ ՚ի յուրանալ զհաղորդութիւն յովհաննու։ Այլ նոքա՝ որչափ զսպառնալիսն հանդերձ գործովք առաւել բազմացուցանէին, ևս քան զևս զօրագոյնս, և ջերմագոյնս ցուցանէին զհաւատս իւրեանց։ Եւ այնպէս ճշմարտիւ սեռն սէր՝ և հաստատուն հաւատս ունէին ՚ի Քրիստոս, մինչ զի ՚ի հատանելն զուարթանային, և ՚ի նուաղելն բազմանային, և ՚ի կեանս զմահն համարէին, զոր նոքա կորուստ կրէին։ Արդ զայսոսիկ ՚ի զատկին՝ որ է յարութեան փրկչին, ոսոխքն սորին յովհաննու պտղաբերեցին զչարիս։ Իսկ ՚ի կատարել սրբոյ պենտակոստէին, մտեալ առաջի թագաւորին առաջնորդքն չարեաց՝ յառաջ ասացեալ եպիսկոպոսքն և ասեն ցնա։ Դու ով թագաւոր՝ իշխանութիւն ունիս յայս ՚ի վերայ ամենեցուն, բայց միայն ՚ի կարգէ քահանայութեան, զի այսմ ոչ է հնարաւոր անկանել ընդ մարդկային իշխանութեամբ։ Արդ՝ մի լիցի արդեօք կարծել զնա՝ լինել քահանայագոյն

քան

քան զքահանայսն, և սրբազոյն քան զեպիսկոպոսունս, և օրինաւոր քան զօրէնսն։ Ոչ ապաքէն մեք յառաջագոյն վկայեցաք առաջի թագաւորութեանդ ձերում. եթէ 'ի վերայ գլխոց մերոց եղիցի վճիռն՝ որ յաղագս անկման յովհաննու։ Արդ՝ կասկածեմք, գուցէ աղդեօք խնայելով ի մի այր, զմեզ զամենեսեան պատառեսցես ի քէն։ Յայնժամ՝ թագաւորն իբրև զայսպիսի համարձակութիւն բանս լուաւ 'ի դաւաճողաց եպիսկոպոսացն, յղեաց առ մեծ հայրապետն յովհաննէս՝ և ասէ. որովհետև ոսոխք քո յանձինս իւրեանց ձգեցին զվտանգն, որ յաղագս պատուհասից աստուծոյ կասկածէաք վասն քո ել և գնա յեկեղեցւոյ այտի։ Զայս իբրև լուաւ սքանչելի այրն այն, լի եղև մեծաուրախութեամբ ընդ հալածանսն։ Եւ ասաց ցայնոսիկ՝ որք առ ընթեր կային. զի եթէ ոք մատչի զկնի իմ 'ի կոչմանէ ի ձեռնադրութենէ քահանայապետութեան աթոռոյս այսմիկ, իմաստութեամբ՝ և առանց մեղս իրիք հակառակութեան խոնարհեցուցէք նմա իբրև յովհաննու զգլուխս ձեր. քանզի չէ հնար առանց հովուի լինել այսմ հօտի եկեղեցւոյ. միանգամայն և վասն իմ աղօթս արարէք, քանզի ահաւասիկ ես ընթանամ 'ի ճանապարհս առ որ ձգեն զիս։ Զայս իբրև լուէին պարկեշտ կանայքն, յարտասուս հեղեալ լային դառնապէս. և 'ի սաստիկ գթոյն՝ անկեալ առ ոտս սրբոյն թաւալէին։ Իսկ նա հրաման տայր ոմանց յիմաստնոց երիցանցն, 'ի բաց տանել զնոսա, որպէս զի՝ մի ձայն արձակեալ խռովեցուսցեն զժողովուրդն։ Եւ ինքն եկեալ յարևելից կողմն, և անդ մատու-

ցա

ցանկէին նմա զէշն, յորում սովոր էր նստիլ։ Իսկ նա՝ ոչ ել անդ, այլ ելեալ առ դուրս եկեղեցւոյն արեւմտից կողմանցն, եւ ողջունեալ՝ զորս անդ էին ՚ի ժողովրդոցն, եւ զեպիսկոպոսունս· եւ գնաց հետիոտս առանց գրաստու՝ գաղտաբար ՚ի բազմութենէն, մինչեւ յեզր ծովուն։ Իսկ ապա յետ սակաւ ժամուց անցանելոյ, ազդ լինէր բազմութեանն արտասահմանութին սորին։

Եւ անդ էր տեսանել զողբումն եւ զաշխարումն· որ զօրէն մրրկի եւ խաւարի մածել զքաղաքաւն, եւ մեծաւ տարակուսանօք ըմբռնեալ, ոչ ինչ իրօք կարէին գտանել զլուծումն սգոյն· այլ եւս առաւել դառն ողբովք վշտացեալք լինէին։ Քանզի զրկեալք տեսանէին զինքեանս ՚ի լուսոյ ճառագայթից հոգւոյն սրբոյ, որ ծագէր նովաւ յաջս հոգւոյն նոցա· եւ ծարաւիս ՚ի յորդահոս վտակաց աղբերէն կենաց, զոր Քս խոստացաւ ՚ի ծածկել իմաստից բանաւորաց հաւատացելոցն ՚ի նա· որ եւս առաւել յորդեալ ելանէր ՚ի ներմանէ, եւ արբուցանէր զանդաստանս հոգւոց նոցա։ Եւ ոչ միայն այս, այլ եւ ըստ մարմնոյ աղքատաց, եւ անանկաց կերակրիչ եւ զգեցուցիչ էր, այրեաց՝ եւ որբոց վերակացու եւ տածիչ էր։ Նաեւ՝ ոչ թէ միայն քրիստոնեայքն ողբային, այլ եւ՝ հելլենացիք, եւ հրեայք, եւ հերձուածողք՝ մաղկատեալք լինէին, եւ ապաշաւանօք շարժէին զգլուխս իւրեանց· պարսաւելով զանմտութին թագաւորին, թէ յորքան բարեաց զրկեաց զինքն, եւ զիւրսն ամ։ Եւ զոր օրինակ՝ ծագումն արեգական հասարակաց է լոյս եւ

խըն

խնդութի, և ծածկելն խաւար և տրտմութի․ այսպէս և երանելին՝ յորժամ տեսեալ լինէր յաթոռ վարդապետութեան, ցնծութի էր ամենեցուն, և յորժամ անյայտ եղև ՚ի տեսողացն, սուգ և տրտմութի, և անմխիթար ողբք ։ Արդ՝ մինչ դեռ նոքա յայսպիսի շփոթման էին․ յանկարծակի առանց ուրուք մարդկեղէն պատճառի՝ հուր ցոլացեալ յաթոռոյն, յորում սովորակի նստէր երանելին՝ և պատմէր զբանն կենաց ։ Եւ հուրն ոչ իբրև զփայլակն արագ անցանէր, այլ ցմեծ ժամն ամենեցուն ակներև ըստ օրինակի վիշապի՝ երկայն և ստուար վերանայր, և ՚ի թիկանց եպիսկոպոսարանին՝ իբրև զկայծակունս հրոյ յերկիր թօթափեալ լինէր ։ Ապա յայնժամ հողմն ուժգին շնչեալ յեկեղեցւոյն, և առեալ զկայծակունսն՝ բազագոյն յեկեղեցւոյն ՚ի վր վերնատանցն՝ բոյն կամարաձև եղեալ, անցեալ զփողոց վաճառանոցին՝ կիզեալ ապականէր, ոչ ինչ վնասեալ ապարանիցն՝ որ մերձ էին յեկեղեցին ։ Եւ ապա անցեալ հրդեհէր զգաւիթն թագաւորական, ընդ յոքնազան և զգեղեցկակերպ կազմուածսն․ և այսպէս յերկար ապականէր ածասաստ բարկութին մինչև ցերեկ ժամն ։ Արդ զայս արար ած, ոչ զի մի սովորական հուր ոք կարծիցէ․ այլ ոչ յառաջագոյն շարժմամբ պատուհասեաց, նոյնպէս և այժմ ածառօք հրով․ զի հաւատարիմ լիցի ամենեցուն՝ թէ վն յանդգնութե թէոփիլոսի, եղծօքսեայ՝ վրէժխնդրութիւն եղև արդարոյն ։

Իսկ զինուորքն՝ առեալ զՃգնազգեաց քահանայապետն

քն

քն, տարեան յանապատս Հայոց, 'ի գաւառս այլազգեաց ոմանց՝ որոյ անունն էր տեղւոյն կուկուսոն։ Եւ էր անդ այր մի. որոյ անունն էր Ադելփիոս. որ էր եղեալ յառաջագոյն եպիսկոպոս արաբացւոց։ Սա 'ի հրեշտակէ այ̃ հրաման առեալ՝ ընդունել զնա 'ի տուն իւր. և այս լինէր 'ի տեսչութենէ այ̃, որ զայլոց ինքնակամ չարութիւնն՝ իւրով մարդասիրութբն առեալ յայլոց բարեաց պատճառս 'ի կիր վարկանէր։ Քանզի նոքա յանդըգնութեամբն իւրեանց՝ աքսորել կամեցան զնա, և ծածկել զլոյս վարդապետութե̃ ճառագայթից Հոգւոյն սբ̃յ՝ որ 'ի նմա ունակայեալն էր։ Իսկ նա անդ՝ ևս առաւել բորբոքեալ պայծառանայր, և զբազումս լուսաւորէր. քանզի՝ Հեթանոսք էին բնակիչք տեղւոյն այնորիկ։ Ուստի ոմանք պաշտէին զկուռս անմռունչս. և այլք՝ ըզ փայտս վարսաւորս անտառախիտ ծառոյն. և կէսք՝ արեգակնն երկրպագանէին։ Եւ այսպէս՝ պաշտէին զարարածս, և ոչ զարարիչն, որ է օրհնեալ յաւիտեանս. ըստ առաքելական բանին ( Հռոմ. I. 25։ ) Իսկ երանելին յովհաննէս՝ իբրև եհաս անդ, առնէր նըշանս և սքանչելիս՝ շնորհօքն այ̃, և ամենեքեան իբրև լսէին՝ եթէ ծառայ այ̃ բարձրելոյ է, գային առ նա։

Յայնժամ գային՝ բերէին առ նա այր մի անդամալոյծ՝ բարձեալ 'ի վր̃ մահճաց և աղաչէին զի բժշկեսցէ զնա։ Իսկ այրն այ̃ հարցանէր ցնոսա, եթէ քանի՝ ժամանակք են յորմէհետէ այդ եղև դմա, և կամ զո՞ր պաշտօն պաշտէ

տէ։ Նոքա պատասխանի ետուն, ութ ամ է արդ՝ յոր-մէ հետէ այդ դիպեցաւ դմա. այլ և ըստ կրօնից՝ արե-գականն Պաշտօնեայ է դա։ Եւ սուրբն ասէ ցնա մեղ-մով, իբրև ժպտելով իմն. բժշկեսցէ արդ քեզ արե-գակն, վասն զի ած քո է։ Եւ նա պատասխանի ետ, ոչ կարէ (ասէ) առանց իւրոյ ածյն առնել զայդ։ Եւ քանզի լուեալ է մեր՝ եթէ արեգակնս այս՝ այլ ած ունի, որ արարին իւր զդա։ Եւ սբն ասէ. եթէ այդպէս իմացեալ էք, և ընդէր ոչ թողուցուք զտկար ածն, և պաշտէք զզօրաւոր արարիչն նր։ Ասէ այրն. այլ ոչ իշխեմք առ-նել զայդ. քանզի արեգակնդ մեծ իմն և ահաւոր է. և մեր այսպէս լուեալ է զնմանէ՝ եթէ ոք ոչ լինիցի սբ և մաքուր յաղտոյ մեղաց՝ և մերձենայցէ ՚ի նա, վաղվաղակի կիզեալ վախճանեսցի։ Ասէ ցնա իմաստունն յովհաննէս, այդպիսի բանքդ ով այր դու բարբանջանք են, և խաբէ-ութիւն սատանայի. Վասն զի այսպիսի առասպելակա-նօք պատրէ ըզ մարդիկ ընթանալ ՚ի կորուստ անձանց իւրեանց։ Քանզի ճշմարիտն աստուած, Աստուած է արեգականն Արարիչ, և մեր ամենեցուն, և ամենայն երևելեաց և աներևութից բնութեանց. և զամենեսեան՝ որք հաւատով ընթանան առ նա, գթածաբար և յօժա-րութեամբ ընդունի, և ոչ զոք անարգէ, և կամ գարշի յումեքէ, և դարձուցանէ զերեսս՝ որք ճշմարիտ մտօք դիմեն առ նա վասն փրկութեան անձանց իւրեանց։ Այլ թէպէտ և մեղաւոր ոք իցէ՝ և դիմեսցի առ նա,

ըն

ընդունի 'ի ձեռն առաքելութե՛, և 'ի լաւագոյնան
փոփոխէ : Հաւատամ և դու 'ի նա, և արագապէս տես
ցես զառողջութի՝ զոր պարգևեսցէ քեզ անուն նորա :
Եւ ասէ այրն. հաւատամ ով Տ՟ր իմ յա՟մ սրտէ իմմէ
'ի ճշմարիտն ա՟ծ՝ յարարիչն երկնի, և երկրի, ըստ ա՟մի զոր
խօսեցար ընդ ծառայի քում, և յայսմ հետէ ոչ ևս պաշ-
տեմ այլ ա՟ծ բաց 'ի նմանէ : Յայնժամ երանելին յովհան-
նէս՝ կնքեալ զա՟մ անդամս ն՟ր նշանաւ ս՟բ խաչին և
ասէ : Տ՟ր իմ Յ՟ս Ք՟ս որ առողջացուցեր զանդամալոյծն
զայն՝ որ երեսուն և ութ ամ անկեալ դնէր առ 'ի պրո-
պատիկէ աւազանին սելովմայ, որ յաղագս մեղաց էր
ախտացեալ : և զմիւս ևս անդամալոյծն՝ զ՟ն սմին օրինակի,
'ի ձեռն հաւատոց մատուցանողացն բժշկեցեր, և ըզ
մեղսն թողեր, որք զձեղունս յարկի տանն քակեցին, և
իջուցին մահճօք առաջի քո : Դու Տ՟ր և այժմ բժշ-
կեա՛ զսա, զի ամենեքեան որք տեսցեն՝ զքեզ միայն ծա-
նիցեն ճշմարիտ ա՟ծ, և յանուն քո յուսասցին և զքեզ փա-
ռաւորեսցեն՝ հանդերձ Հարբ և ամենասուրբ Հո-
գւովդ : Եւ զայս ասացեալ՝ վաղվաղակի առաջի նոցա
բժշկեցաւ այրն 'ի չարաչար հիւանդութենէն յայնմանէ.

( որ է ըստ կարգի քառասներորդ սքանչելին : )

Իսկ իբրև տեսին ազգն այն՝ զանկարծահաս եղեալ սքան-
չելիսն, հաւատացին ամենեքեան միաբան յա՟ծ՝ յարարիչն
երկնի և երկրի, և մկրտեցան 'ի նմանէ անթիւ բազմու-
թիւնք 'ի Հայր և յՈրդի և 'ի Հոգին ս՟բ : Եւ ձեռնա-

դրե

դրեաց նոցա եօթն եպիսկոպոսս , և բազում երիցունս ,
և սարկաւագունս՝ առ 'ի բաւական լինել հովուել զան
թիւ բազմութիւն ժողովրդեանն, և սպասաւորել եկեղե
ցեացն՝ որ շինեցանն . և կատարել զմ̃ք զանարիւն պատա-
րագն՝ որ բաշխի միշտ 'ի փրկութ̃ի աշխարհի։ Եւ ապա մը
տեաւ անդ այր մի 'ի նոցանէ ըստ շնորհացն ա̃յ, որ գիտէր
զհելլենացի ճարտասանութ̃ի իմաստութ̃ե գպրութիւն ։
Եւ պատրաստեաց զնա թարգմանել 'ի լեզու նոցա զնոր
կտակարանս, զի 'ի միտ առցեն զպատուիրանս հրամանացն
ա̃ծաշունչ տառին ։ և զՍաղմոսարանն ես ետ թարգմա-
նել . զի առցեն ի բերան զհոգելից երգսն դաւթի՝ երգել
միշտ յեկեղեցիսն ։ և ապա փոքր 'ի շատէ և զայլս հին
կտակարանն ։ Որ և 'ի սակաւ աւուրս ուսաւէլ ևս ծաղ-
կեաց և պտղաբերեցաւ հաւատք փրկչին մերոյ Յ̃ի Ք̃ի,
'ի պատուիրանաց անտի, և միշտ գնայր և յառաջադէմք
լինէին 'ի բարիսն, և փառաւորէր ա̃ծ 'ի բարի գործսն նո-
ցայ։ Իսկ երանելին՝ յորժամ տեսանէր զայս, ցնծայր հոգով
ընդ փառաւորութիւնն ա̃յ ։ Եւ առաւել ևս կատարէր
նովաւ ա̃ծ բժշկութիւնս 'ի վ̃ր ախտաժետաց, և ուրա-
խանայր ազգն այն զուարթութ̃ի հոգւ որ 'ի վ̃ր գալստեան
առն ա̃յ։ Զի թէպէտ և վշտացաւ թագաւորական քա-
ղաքն է արտասահմանութ̃ի ճշմարիտ հովուին իւրեանց,
սակայն ուրախացաւ ժողովուրդ մի մեծ՝ է գիւտ ճըշ
մարիտ լուսոյն՝ 'ի ձեռն ն̃ր, որ լուսաւորէ զա̃մ մարդ՝ որ
գալոց է յաշխարհ . (յոհ . I . 9։ Իսկ զկնի աքսորանաց

սրյն

սրբոյն, զայնոսիկ՝ որք հաղորդք էին նորին. զերանելի քահա-
նայսն, և զեպիսկոպոսունսն՝ աստուածատեաց յանդուգն դաւա-
ճանօղքն, և զնոսա ևս յաքսորս առաքեցին, և բազումք 'ի
նոցանէ զանազան տանջանօք մեռան, զոր օրինակ և առա-
ջինքն՝ յանհաւատից վասն անուանն Քրիստոսի։ Եւ յիրաւի՝ և
սոքա զօրինաւոր նահատակացն պսակսն ընդունին. զի որպէս
և նոքա պսակաւորեալք լինին 'ի Քրիստոսէ, նոյնպէս և սոքա
վասն սիրոյ պատուիրանացն Քրիստոսի բազում տանջանս ընկալեալ,
և ոչ բաժանեցան 'ի հաղորդութենէ սրբոյն. վասնորոյ և
ընդ նմին իսկ պսակին 'ի Քրիստոսէ։ Եւ որպէս իրաւ ինձ իսկ
թուի ասել զայս. եթէ ամենայն ոք որ քաղցեալ՝ և ծարաւի իցէ
արդարութեան, և 'ի դիպուածէ 'ի մէջ մտանէ 'ի ձեռս
արանց անօրինաց և անողորմից, յայտնի եղիցի՝ թէ 'ի ձեռն
փորձոյն այնորիկ՝ խոստովանողացն պատուոյ, և երկ-
նային պսակացն, և փառացն արքայութեան արժանի եղիցի
այնպիսին. որպէս և աստ տեսանեմք։ Այլ զի՝ բազումս որպէս
վերագոյն ասացաք՝ 'ի հեռաւոր աշխարհս, և 'ի կղզիս
աքսորեցին. որ և՝ չարաչար տանջանարանք ճանապարհին՝
չարագոյն էր քան զսպանումն, և զմահ։ Այլ զի՝ 'ի վերայ
չորացելոց երիվարաց, և ջորեաց մերկոց՝ իբրև զանօթս
անշունչս պնդէին, և այնքան յերկար առնէին զճանապար-
հորդութիւն յայնպիսի տանջանարանս, մինչ զի՝ զերկուց
աւուրց ճանապարհ 'ի միում աւուր ձգէին։ Եւ յորժամ
իջուցանէին, նախատէին, ծաղր առնէին, սպառնային, և
բազումք չժամանէին 'ի սահմանեալ տեղիսն, այլ 'ի ճա-

նա

նապարհին վտանգեալք մեռանէին։ Եւ զկէսս՝ ոչ ՚ի հեռաւորս առաքէին, այլ անդէն ՚ի մօտաւոր բանտս եղեալ նեղէին. մինչ գրեթէ՝ լի իսկ լինել բանտից քաղաքին՝ եպիսկոպոսօք, և քահանայիւք։ Եւ զայլս՝ ՚ի ստորին վայրս արգելեալ. վասն առաւել չարութեան իւրեանց, գարշելի և ժահահոտ տեղօքն թշնամանէին։ Եւ կէսք՝ իւրովի իսկ նախ քան զըմբռնելն, ՚ի չարաչար դաւողացն փախըստական եղեալ՝ ՚ի յանապատ տեղիս, և յանձաւս, և ՚ի փապարս՝ զանձինս դադարեցուցանէին։ Քանզի՝ լաւ համարէին զճգնաւոր, և զխայնաւոր կեանս ողջունել, որով և յարագոհաճ ուրախութեան արժանասցեն, քան ընդ չարանախանձ դաւողան միաբանել, և առ ժամանակ մի վայելել զանցաւոր կեանս։ Արդ այս ամ վն խոստովանողացն ասացաւ, որք միաբանք, և հաղորդք եղեն ածագեաց հօրն մերում Յովհաննու, զոր սուղ ինչ ՚ի բազմէն պատմեցաք։

## Յաղագս անցիցն՝ որ եղեն ընդ արքեպիսկոպոսութեամբ տեառն Յովհաննու։

Իսկ ապա՝ այսուհետև այսպէս եղելոյ յետ սակաւ ինչ աւուրց արտասահմանութե երանելոյն Յովհաննու ոսկեբերանի. ձեռնադրի յաթոռ եպիսկոպոսութե կոստանդնուպօլսի՝ Արսակիոս, եղբայր նեքտառիոսի, որ յառաջ էր եպիսկոպոս քաղաքին զորոյ զկնի ընկալաւ զաթոռն Յովհաննէս։ Եւ էր Արսակիոս այս՝ վարուք

ան

անպիտան և իմաստութբ՟՝ և բարուորութբ՟ քան զձուկն ան-
միտ և քան զէշ անբան, և տեսլեամբ զազիր իբր զգորան
զի յոյժ ծերացեալ և անցեալ էր զաւուրբք, քանզի
ամաց աւելի էր քան զութսնիցն։ Եւ էր սա լեալ յառա-
ջագոյն երդմնահար, և երդմնասխալ. զի էր բան տուեալ
եղբօր իւրում Նեքտառիսի, և երդուեալ 'ի սբ՟ Աւետրնն
Քի՟, ոչ ընդունել երբեք ձեռնադրութի՟ եպիսկոպոսու-
թե՟ յորմէ հետէ նախատեցաւ նա, և 'ի բաց հրաժարեցու-
ցին 'ի նմանէ զեպիսկոպոսութիւնն տարսոնի։ Եւ թէ-
պէտ և այսպիսի էր. սակայն զկնի եղբօր իւրոյ մահուանն,
խնդրէր դիպօղ ժամանակ՝ զի ժառանգեսցէ զեպիսկոպո-
սութն՟ կոստանդնուպօլսի, որպ՟ և պատմութն՟ իսկ ցուցանէ։
Արդ՝ յորժամ Ձեռնադրեցաւ սա. Ամենայն քաղաքն
'ի բաց Դարձուցին զերեսս իւրեանց 'ի նմանէ. ոչ
թէ միայն վասն սիրոյն Յովհաննու, այլ վասն զի՝
յոյժ ատելի էր սակս առաւել անպիտանութեանն։
Իսկ կողմն յովհաննու՝ բնաւին 'ի բաց փախեան 'ի նորա
հաղորդութենէն, և գրեթէ՝ Քաղաքն ամ՟ անթիւ
բազմութբ՟ մարդկանց 'ի բաց կացին յեկեղեցւոյն՝ ուր
էր նա, և ժողովեցան բացագոյն յայլ եկեղեցիս։ Եւ յեկե-
ղեցւոջ անդ՝ ուր էր աթոռ հայրապետութե՟ խափանեալ
լինէին ամ՟ կարգ եկեղեցականքն. և ոչ ոք էր անդ ուն-
կընդիր, վասն զի ոչ գոյր անդ բան և իմաստութի՟, որ
պատմէր զպատգամն այ՟։ Իսկ իբրև տեսին զայս՝ ակակիոս,
և անտիոքոս, և սեւերիանոս, որք էին առաջնորդք դա-

ւա

հաճանողայն, երկեան յոյժ: Քանզի 'ի կասկածի եղեալ գուցէ արդեօք 'ի պատառել ժողովրդեանդ բարկացեալ խռովեսցի թագաւորն սրտմտութբ 'ի վր մեր, և վերստին վերա կոչեսցէ զ յովհաննէս յաթոռ հայրապետութեն: Ապա հնարեցին խորամանկութբ իւրեանց, և 'ի ձեռն կաշառանաց զոմանս հաւանեցուցին 'ի գլխաւորաց պալատէն՝ որք մերձաւորք էին թագաւորին, ոչ զի պատբաստեսցեն զթագաւորն՝ տալ հրաման ապառնալեաց ընդդմ քաղաքն, սաստիկ հարուածս ածել 'ի վր այնոցիկ, որ 'ի բաց կացեալ են 'ի հաղորդութէն արսակիոսի, և թէոփիլեանցն: Արդ՝ իբրև այսպիսի հրամանք 'ի վր եդան ողջախոհաց կողմանցն, ուրախանային դաւաճանողքն: Իսկ կողմն ճշմարտութե՝ դարձեալ 'ի տանջանս մատնէին 'ի ձեռն անողորմ իշխանաց, և բազումք բարեպաշտութբ վկայեցին վս ճշմարտութե, զխոստովանողական անուն ժառանգեցին, և պսակաւորք եղեն 'ի Քս: Եւ կէսք՝ 'ի չարաչար տանջանացն զարհուրեալք՝ գուցէ թուլասցին 'ի ճշմարտութէ, օգնական 'ի տկարութեց իւրեանց, զփախուստն առնէին, կատարելով զհրաման փրկչին՝ որ ասէ. եթէ հալածեսցեն զձեզ 'ի քաղաքէս յայսմանէ, փախիջիք 'ի միւսն. (Մատ. 10. 23: ) Եւ Արսակիոս կացեալ յԱթոռ Եպիսկոպոսութեան կոստանդնուպօլսի՝ Չորեք տասան ամիս, ոչ բարեկարգութիւն ինչ ցուցեալ, կատարեաց զկեանս իւր 'ի ժամանակս արկադէոսի թագաւորի: Եւ կոչեցաւ յաթոռ

եպիսկոպոսութեան զկնի նորա ատտիկոս, որ էր յազգէ Հայոց 'ի քաղաքէն սեբաստիոյ, ունելով յառաջագոյն զաստիճան քահանայութեան յեկեղեցւոջ անդ։

Յայնժամ սեւերիանոսքն ժողով առնէին յեփեսոս, և ըզ յառաջագոյն ձեռնադրեալսն 'ի սրբոյն յովհաննէ քակէին յաթոռոյն, և զապիրատսն՝ և զարտաքսեալսն 'ի նմանէ, և զայլս զանարժանս 'ի տեղիս կացուցանէին. և զայս առնէին սատանայական ներգործութեամբն, որ միշտ պատրաստէ առ 'ի ցրուել զհօտն Քրիստոսի, զոր գնեաց արեամբ իւրով, և մածեալ միացոյց սիրով։ Ապա զի՝ զոր երանելի ոսկեբերանն՝ հանդերձ եօթանասուն եպիսկոպոսօք, 'ի ձեռնպահոյ և աղօթից, և ըստ նմանութեան առաքելոցն վիճակաւ ընտրեալ էր, և ձեռնադրեալ՝ զնոսա և զամբիծսն, նոքա հակառակ առաքելական կանոնացն՝ սրովք, և բռնօք, և որբեցութեամբք վարէին. զնոսա հալածէին, և զանարժանսն յառաջ կոչէին։ Արդ՝ զերակլիդոս զեպիսկոպոսն եփեսոսի՝ որ ընտրեցաւն 'ի յովհաննէ, և յեօթանասնից եպիսկոպոսացն՝ որ անդր ժողովեցան. քանզի էր այր սուրբ և իմաստուն, և յանապատի կացեալ միայնաւոր ճգնութեամբ ամս բազումս, զսա ընկեցեալ յաթոռոյն, եդին 'ի բանդի՝ նեղելով զամս չորս։ Եւ փոխանակ նորա կացուցին յաթոռ երանելի աւետարանչին Յօհաննու, զտրիբուն ումն ներքինի, որում անունն էր Բեկտորիոս. որ լի էր ամենայն անառակութեամբ, յայտ յանդիման խայտառակեալ յամենայն անօրէնութիւնս։ Եւ դարձեալ՝ յորժամ վախճանեցաւ փլաբիանոս եպիսկոպոսն

ան

անտիոքայ, նոյն ոստիքն յովհաննու, ակակիոս, և անտիոքոս, և սևերիանոս, առեալ զՊորփիւրիոս ումն՝ որ էր ամօք հնացեալ, և չար ցանկութը̃ նա առաւել ապականեալ, տարան յանտիոք՝ ձեռնադրել փոխանակ փղաբիանոսի, առեալ 'ի նմանէ կաշառս բազումս: Եւ քանզի՝ յայտնապէս զայն ոչ իշխէին առնել, վ̃ն ոչ ընդունելոյ ժողովրդեանն զանարժանն. ապա գտին դիպօղ ժամանակ աջողակ իւրեանց յառաջարկութե̃, զի շփոթեսցեն զեկեղեցին անտիոքայ: Քանզի սովորութի̃ ունէր քաղաքն անտիոքացւոց 'ի հնոցն առաջին հեթանոսացն. զի ի̃ չորս չորս ամի ամենեքեան առհասարակ ելանէին արք և կանայք 'ի գեօղն՝ որ կոչի դաֆնի, և անդ դնէին թատերս, և ամբոխս, և խռովութիս դիւական, և ելանէին 'ի մարտս ոլոմպիականս: Իսկ նոցա թափուր գտեալ զքաղաքն 'ի բնակչաց, 'ի ներքս վազեն իբրև զգողս և զաւազակս, և գտեալ զարս ոմանս համախոհս իւրեանց 'ի կղերիկոսացն, ձեռնադրեն զնա: Ոչ եթէ վ̃ն բարեկարգութե̃ եկեղեցւոյն, այլ հակառակ սբ̃յն յովհաննու. որ և վ̃ն շատոյ երկիւղին, և ոչ զօրինաւոր ձեռնադրութեան կարգն կատարեցին 'ի վ̃ր նր̃. այլ առեալ զբովանդակ կաշառս իւրեանց, փախստական եղեն գաղտագողի 'ի տեղւոյն 'ի դժուարս լերանցն: Իսկ քաղաքացիքն իբրև գիտացին զեղեալ չարիսն, և զձեռնադրութիւն պորփիւրոսի, միահամուռ ամբոխ արարեալ, և հուր և խուռն 'ի ձեռս առեալ՝ կամեցան հրձիգ առնել զեպիս-

կո

կոպտաարանն հանդերձ նովաւ ։ Եւ նոր ծանուցեալ զնատե-
լութիւն՝ որ առ նա, և զամբոխ բարկութեան ժողովրդեանն,
եւ լինչս բազում քաղաքապետուին, և նովաւ ցածոյց
զամբոխն ։

Արդ՝ այս ամենայն խռովութիւն, որ սփռեալ տարածե-
ցաւ յամ եկեղեցիս Քի, և երբև զհօտր կիզեալ հրդե-
հեաց, զբարեպաշտութիւն կարգս, և զբազում համարձա-
կեաց 'ի չարիս, եղև 'ի յանկմանէն յովհաննու ։ Զի յոր
ժամ կառավարն հաստատուն կայցէ, որ պինդ ունի զե-
րասանակս ամէհի՝ խեռ՝ և խիստ երիվարացն, կառավա-
րութիւն բարւոք, և ըստ կարգի լինիցի ․ ապա թէ նա
անկանիցի, ամենայնն վեր 'ի վայր շփոթեալ կործանեսցի ։
Այսպէս՝ և մինչ դեռ երանելին հովուէր զեկեղեցին կոս-
տանդնուպոլսի, ոչ թէ միայն թագաւորական քաղաքին
առանց խռովութեան մնայր ․ այլ և ամ եկեղեցիք Քի 'ի
խոր խաղաղութեան վայելէին ․ իսկ և յանկմանն առ հասա-
րակ խռովեալ շփոթեցան ․ և ևս առաւել մերձաւոր եկե-
ղեցիքն կոստնդնուպոլսի, քանզի ոչ ներէին հաղորդ լինել
ատտիկոսի ժողովուրդք քաղաքին վն անօրէն գործոյն,
որ գործեցաւ 'ի վր յովհաննու ։ Յայնժամ եպսկոպոսքն
որ չարանախանձ էին ը յովհաննու, խորհուրդ առեալ
հանդերձ ատտիկոսիւ ․ պատրաստեցին զթագաւորն, և
գրեն թուղթ յերեսաց նր, և առաքեն ը ամ քաղաքս,
և ընդ դատաս ․ որ ունէր օրինակ զայս ։

Եթէ ոք յեպիսկոպոսաց ․ և կամ յերիցանց, և 'ի սարկա-

ւա

ճագաց, ոչ հնազանդեսցի՝ կամ հաղորդեսցի Ատտիկոսի, և Թէոփիլոսի, և Պորփիւրոսի, երից աթոռոց եպիսկոպապետաց, անկցի յաթոռոց՝ և յիւրաքանչիւր աստիճանաց, և արտասահման եղիցին ՚ի մետաղս: Իսկ եթէ ժողովրդական ոք իցէ, ինչք նր̅ յափշտակեալ եղիցի ՚ի նմանէն: և եթէ զինուոր, զինուորական պատիւն լուծցի: ապա եթէ իշխան ոք իցէ, յիշխանութենէն և ՚ի հայրենեացն զրկեալ եղիցի: Արդ՝ գրեցաւ այսպիսի նամակ, և կնքեցաւ թագաւորական մատանեաւն: Եւ բազումք այնուհետև ՚ի կարգէ եպիսկոպոսացն, որք ծառայք էին փարթամութե̅՝ և մամոնայի, զարհուրեալք յայսպիսի սպառնալեաց՝ հաղորդք եղեն չար քահանայապետացն, մանաւանդ թէ մարմնական սիրելութե̅ զհետ չոգան: Քանզի սիրեցին զփառս մարդկան առաւել քան զա̅յն, և զառժամանակեայ հեշտութիւս, և առանց նեղութե̅ կեանս՝ ընդ հանդերձելոցն փոխանակեցին. զոր Քս̅ ՚ի ձեռն հալածանացն և նեղութեցն խոստացաւ մեզ: Եւ կէսք խոստմամբք պատրեցան, և հաղորդք եղեն նոցա, որք յառաջագոյն ըստ մարմնոյ աղքատք էին, մանաւանդ թէ հոգւով: Իսկ՝ արի և քաջ նահատակքն, և զինչս և ըզգաւառս և զփառս մարդկան. մանաւանդ թէ զմարմինս ևս՝ անտես արարին վս̅ սիրոյն Քի̅, և նորին պատուիրանացն: Վս̅ զի լուան ՚ի Քէ̅՝ որ հրամայէ և զանձինս ևս ուրանալ, թող թէ զինչս, և ապա կարիցէ երթալ զհետ նր̅. ծանեան և զհոգելից բանս իմաստնոյն՝ որ ասէ.

տէին: Եթէ ոչ օգնեսցեն ինչք յաւուր բարկութեան, այլ արդարութիւն փրկէ 'ի մահուանէ. (Առակ. II. 4:) Եւ վասն այսորիկ ոմանք չարաչար տանջեալք լինէին. և կէսք՝ զամենայն ստացուածս իւրեանց 'ի բաց թողեալք, փախըստականք լինէին:

Յայսմ պատճառէ՝ գնացին ոմանք 'ի կոստանդնուպօլսէ 'ի հռովմ. և պատմեցին մեծի հայրապետին Ինովկենդիոսի՝, վասն երկրորդ անգամ աքսորելոյ երանելւոյն յովհաննու. և վասն չարեացն՝ զոր կրեցին եկեղեցիքն արևելից: Իսկ նա իբրև լուաւ՝ տրտմեցաւ յոյժ, քանզի մինչև ցայն ոչ ևս գիտէին զեղեալ իրսն: Ապա երթեալ պատմէր թագաւորին Ոնորիոսի, զամենայն զոր լուաւ յեկելոց արանցն: Եւ նորա խռովեալ յոյժ վասն անօրէն գործոյն. գրեաց թուղթ յանդիմանութեան առ եղբայր իւր Արկադէոս այսպէս:

Բաւական չէր և քեզ ո՛վ Եղբայր՝ առաջին յանցանքն, զոր գործեցեր արտաքոյ կանոնաց ընդ յովհաննու, աքսորել զայր արդար և զսուրբ, որ ինքն Աստուած վկայեաց արդարութեան նորա սաստիկ շարժմամբ, որով դղրդեաց զքաղաքդ ձեր: Արդ՝ դարձեալ հաճառայցեր թշնամեաց նորա, մանաւանդ թէ՝ ատելեացն Աստուծոյ, և ընդդիմացողաց ճշմարտութեան. քանզի՝ վասն անպատշաճ գործոց իւրեանց յանդիմանեալք 'ի նմանէ, 'ի հակառակս դարձան հրամանաց Աստուծոյ, և մատնեցին զայր ամբիծ և անարատ: Եւ դու չըշատացար միայն քակելով յաթոռոյն, այլև՝ աքսորեցեր ևս, և

և զարթուցեր զա՟ծ ՚ի վրէժխնդրութի՟ն թագաւորութեան մե-
րոյ, վ՟ն հեղման արեան առն արդարոյ, ոպ՟ և յառաջագոյն
եղև վրէժխնդրութի՟ն ՚ի կայենէ վ՟ն աբելի արդարոյ։ Եւ արդ՝
մի վստահասցիս եթէ պատասխանատուութի՟ն ունիցիս յա-
ւուր դատաստանի. ոպ՟ թէ՝ յանդորքնիայ, և ՚ի թէոփիլեանց
պատրել քո. ոպ՟՝ և ոչ արդեամբ կարաց պատասխանի տալ յա՟յ,
որ յօձէն՝ և յեւայէն խաբեցաւ։ Բայց արդ՝ յայսմ հետէ ա-
պաշխարհեա. զի թերևս ՚ի ձեռն արտասուաց հաշտեցուս-
ցուք զա՟ծ, զի մի զարթուսցէ զբարկութի՟ն իւր ՚ի վ՟ր մեր։ Եւ
այժմ հրամայէ քաղցր և հեզ թագաւորութիւնս մեր՝ դար-
ձուցանել զյոհաննէս ՚ի քաղաքդ. և ես առաքեցից յարև-
մտեացս ՚ի մերոյ իշխանութենս ութն եպիսկոպոսունս ըն-
տրեալս, և կղերիկոսս. զի քննութի՟ւն արասցեն ՚ի վ՟ր նր՟,
և դոյցէն՝ որ դատապարտեցին զնա։ Եւ եթէ գտանիցեն
ինչ պատճառս արժանի, որով և յերկրորդումդ դատապար-
տեցիք զդա՝ արտասահմանելով ՚ի հայրապետական աթո-
ռոյդ, և ես միաբանեցայց ը՟ քեզ աքսորել զնա։ Ապա ե-
թէ վ՟ն այլ իրիք պատճառանաց՝ յայդպիսի անօրէնութե՟
գործ յանդգնեցան մատնելով զնա քեզ, կամ վ՟ն սատա-
նայական նախանձու կամ վ՟ն յանդիմանութե՟ զանպատ-
շաճին։ ՚Ի վ՟ր այնպիսեացն զայս հաստատեմք. եթէ ոչ
միայն յեկեղեցւոյ արտաքսեսցին, այլ և ՚ի կենաց իւրեանց
բարձցին. զի այնպէս՝ բարեպաշտութե՟ թագաւորութիս
մեր ՚ի խաղաղութիւն վայելեսցէ, և կարգք եկեղեցւոյ
հաստատուն կացցեն։ Ողջ լեր ՚ի տէր Ք՟ս Յ՟ս։

Արդ

Արդ՝ իբրև լուաւ Թագուհին Եւդոքսիա զայսպիսի հրաման, զոր ետ Ոնորիոս Թագաւորն Հռովմայ՝ եղբօր իւր Արկադէոսի Թագաւորին. երթեալ պատրանօք հնազանդէր զայրն իւր, որպէս զի մի արագ անդրէն դարձուսցէ զՅովհաննէս յաքսորանաց անտի։ Այլ յապաղեալ ներբեացէ, մինչև եկեսցեն Հռովմայեցիքն. որպէս զի՝ մի (ասէ) ՚ի դարձուցանելն զնա՝ ամբոխեալ խռովեսցի քաղաքս. որ թէպէտ և պատճառաւոր գտանիցի, սակայն ոչ տան յաքսորանն անդրէն զնա դարձուցանել։ Արդ՝ իբրև զԹագաւորն այսպիսի հնարիւք յապաղէր ՚ի վերայ կողմանն յովհաննու՝ մինչև ՚ի գալն յարևմտեաց եպիսկոպոսացն։ ապա՝ և պատրաստեաց զայլ ոմանս ՚ի մերձաւորաց Թագաւորին, որք հրամանատարք էին Թագաւորութեան։ Եւ կոչեաց առ ինքն զմարինոս ոմն. որ էր կարգեալ ՚ի վերայ ամենայն ընչից նորա, և հրաման ետ նմա հանդերձ նոքօք զամենայն անցս ճանապարհացն, և զամենայն նաւահանգիստն պահել զգուշութեամբ։ Որպէս զի՝ մինչ գայցեն Հռովմայեցիքն ոչ տացեն նոցա թոյլ մտանել ՚ի քաղաքն և ոչ թուղթս մատուցանել առ Թագաւորն. այլև՝ եթէ զոք գտցեն՝ որ թուղթ ունիցի, ՚ի բաց հանել ՚ի նոցանէ, և զթղթաբերսն բազում գանիւք չարչարել, և անդրէն դարձուցանել։ Իսկ Մարինոսն՝ առեալ զայսպիսի հրամանն, վաղվաղակի առաքեաց բազում զինուորս հանդերձ որդւովքն իւրովք և պաշարեաց զամենայն անցս ճանապարհացն որպէս և հրամայեցաւ նմա։ Եւ զայս ամենայն դժուարանս դաւաճանու-

թե

թեան ոչ ծանեաւ Արկադէոս, այլ միայն առանձին 'ի յեւդոքսիայ գործեցաւ: Քանզի յայտնապէս գիտէր, եթէ յորժամ գայցեն հռովմայեցիքն, և քննութի արասցեն, արդարացեալ գտանի յովհաննէս, և ոսոխք նորա պատժեսցին. և դարձեալ նստցի յաթոռ հայրապետութե, և ինքն առանց ակնածութե յանդիմանեսցի 'ի նըմանէ իբրև զառաջինն. այս ինչ էր որ տրտմեցուցանէր զնա, և խափան առնէր վերադարձի առն այ: Եւ քանզի բաւականապէս պատմեցաւ 'ի մէնջ, որ ինչ յերկրորդ թըղթի անդ Ոնորիոսի՝ գրեցաւ առ եղբայր իւր Արկադէոս թագաւոր, և զդժրանին եւդոքսիա՝ արգելուլ ըզ գալն հռովմայեցւոցն 'ի քննութի և զվերակոչումն յովհաննու:

Յաղագս այլոց նշանաւոր իրաց, որք գործեցան յետ աքսորման ոսկերոյն յովհաննու:

Դարձցուք արդ 'ի կարգն՝ որ զկնի աքսորահմանութեն երկրորդ: Զի յորժամ աքսորեցին զերանելին, հանդերձ այլ ահաւասաստ բարկութեամբն զոր յառաջագոյն պատմեցաք, եկն և կարկուտ բազում, և յոյժ մեծամեծ 'ի կոստանդնուպօլիս, 'ի քսան և երեքն սեպտեմբերի ամսոյ: Եւ բազում վնասս գործեաց 'ի քաղաքին. և ս առաւել 'ի շէնս, և յաւանս, և յանդաստանս թագուհւոյն: Եւ զայս ասէին ճշմարտախոհքն, վրէժխնդրութի լինելոյ՝ յաղագս անիրաւի աքսորանացն առն

այ

արդարոյ։ Իսկ հերձուածողքն ասէին, թէ յիրաւի ար-
տորեցաւ, վ՟ս զի՝ զբազումս դարձոյց 'ի նաբատեանոսացն
չարափառութենէն, և խառնեաց յեկեղեցին ուղղափա-
ռաց. և ասէին նոքա այս վ՟նկ եղև։ Իսկ զկնի հրամա-
նաց թագաւորին, զոր գրեաց սաստիկ սպառնալեօք ընդ-
դէմ այնոցիկ, որք ոչ կամէին հաղորդել Արտիկոսի, և
Պորփիւրոսի, և Թէոփիլոսի։ Կիւրակոս ոմն եպիսկոպոս՝
ել գնաց 'ի Կոստանդնուպօլսէ 'ի Հռոմ. որ թէպէտ և
թուղթ ոչ տանէր անդ՝ յեպիսկոպոսացն, և 'ի ժառանգա
ւորաց յեկեղեցւոյն Կոստանդինուպօլսի. սակայն հա-
մարձակութ՟բ նոցին պատմէր Ինովկենդիոսի հայրապետի
զեղեալ սպառնալիսն 'ի թագաւորէն 'ի վ՟ր ողջախոհաց կող
մանցն։ Եկն և Գլխսոս՝ Բիւթանացւոց եպիսկոպոսն, և
եգիտ դիպող ժամ, և ետ զգիրն ցԻնովկենդիոս եպիսկո
պոսապետն Հռովմայ. որ էր գրեալ 'ի հնգետասան ե-
պիսկոպոսաց այնմ կողմանն, որք էին համախոհք Յովհաննու։
Եւ միւս ևս գիր՝ յանիսիոսէ երևելի կրօնաւորէ, որ էր
Թեսաղոնիկոյ եպիսկոպոս. քանզի զնոյն օրինակ և սոքա
էին գրեալ վ՟ս անօրէն գործոյն, զոր գործեցին առ Յով-
հաննէս, և վասն չարաչար սպառնալեաց թագաւորին,
որպէս և Կոստանդինուպօլսի եկեղեցին պատմեաց առանց
գրոյ՝ 'ի ձեռն Կիւրակոսի եպիսկոպոսի։ Եւ զկնի սակաւ
աւուրց եկն 'ի Հռոմ. Պաղադիոս եպիսկոպոս Հեղինոյ-
պօլսոյ քաղաքին. որ ևս առանց գրոյ ստուգութեամբ
պատմեաց զա՟մ սրբոյ հայրապետին։ Քանզի 'ի գիշերի
փախս

փախստական եղեալ էր վ͞ս երկիւղի իշխանացն, որք ըզ սպառնալիս թագաւորին ցուցանէին և եցոյց հայրապետին թուղթ մի 'ի հրամանաց թագաւորին, որ ունէր

օրինակ զայս:

Եթէ ոք թագուցէ 'ի տան իւրում, և կամ բնաւ ընդունիցի՝ յերիցանց, կամ 'ի սարկաւագաց, կամ յեպիսկոպոսաց՝ որք հաղորդք յովհաննու իցեն, տուն ն͞ր հանդերձ ընչիւքն, և ամ͞ հայրենիքն ն͞ր 'ի բաց բարձցի 'ի նմանէ: Եկն և միւս այլ ևս երէց ուղղուագացի, խուբեոս անուն ն͞ր և պատմեաց վասն վանորէիցն միջագետաց թէ որչափ չարչարանս կրեցին 'ի պորփիւրոսէ՝ վ͞ս ոչ հաղորդելոյն ընդ նմա: Իսկ վասն Ճգնաւորաց և կուսանաց զինչ պարտէ ասել. որք բազումք և անթիւք եկեալք 'ի հռոմ ցուցանէին մեզ հայրապետին Ինովկէնդեոսի՝ զբըլածեծ վէրսն, և զքանցումն կողիցն, և զուռացումն ծնօտից յապտակացն, և զանազան վէրսն՝ զոր կրեցին յայնմ ժամանակի 'ի հրամանէ թագաւորին, և յապստա͞մբրաց՝ յառաջ ատացեալ քահանայապետին: Իսկ հայրապետն ոչ ժուժէր ներել այսմ չարեաց. առաքեաց զամենեսեան առ թագաւորն Ոնորիոս, որպ͞ զի պատմեսցեն նմա զամ͞ իրսն ստուգութ͞ք: Եւ թագաւորն Ոնորիոս իբրև լուաւ զայս, շարժեալ եղև առ 'ի վրէժխնդրութ͞ի բարեպաշտութ͞ե: Եւ հրամայեաց ժողով լինել ամ͞ արևմտեաց եպիսկոպոսացն, որպ͞ զի երթիցեն 'ի կոստանդնուպօլիս, և անդ զարևելեն եպիսկոպոսունս ժողովեսցեն, և հանդերձ Արկադէ-

ոսիւ

ուխտ եղբարբն՝ դատաստան արասցեն, գրելոյն՝ և առելոցն որ ընդդէմ հակառակ Թէոփիլեանցն մատուցան նմա։ Իսկ իբրև ժողովեցան արևմտեան եպիսկոպոսքն, և կղերիկոսքն ՚ի մեծն Հռոմ՝ առ Ինովկենդիոս, ապա միաբան աղաչեցին զԹագաւորն Ոնորիոս որպէս զի հրաման տացէ եղբօր իւրում և Թագաւորին Արկադէոսի, ՚ի Թեսաղոնիկէն առնել զժողովն. զի դիւրաւ լիցի ՚ի միասին հաւաքումն արևելից կողմանցն՝ և արևմտից, երբ զի առանց պատճառաց ամենեքեան անդր հասցեն առ ՚ի կատարեալ լինել ժողովոյն։ Իսկ նա՝ բարւոք համարեցաւ զասացեալն ՚ի նոցանէ ։ Յայնժամ ընտրեաց ՚ի ժողովոյ անտի հինգ եպիսկոպոս, և երկու երեց, և սարկաւագ մի. և գրեաց թուղթ առ եղբայր իւր, և առաքեաց ՚ի ձեռն նոցա ՚ի կոստանդնուպօլիս. զի երկուս թուղթս յառաջագոյն առաքեալ էր, և այս երրորդ էր. քանզի էր պատճէն հրովարտակին՝. գրեալ այսպէս։

Եթէ ահաւասիկ այս երրորդ թուղթ է, զոր գրեցի առ հանդարտ և խաղաղարար Թագաւորութիւնդ քո, զի ուղղութեամբ խաղաղութիւն արասցես եկեղեցեացդ արևելից՝ ՚ի դաւաճանութենէդ, և շփոթմանէդ, որ ՚ի յանկմանդ յովհաննու՝ ձերոյին հայրապետին եղև։ Եւ որպէս ինձ թուի՝ ոչ յանձին կալայք վասն առաջին գրելոց իմոց, որոց պարտն էր քեզ քննութիւն առնել զիրացդ դաւաճանողացն, և զպատճառսն առ իս առաքել. որպէս զի՝ և ես քեզ հաղորդ լինէի ՚ի վերստին դարձուցանելն, կամ ՚ի աքսորելն։

Եւ

Եւ այժմ առաքեցի և զայս ևս թուղթս իմ ձեռն ընտրեալ եպիսկոպոսացդ, և քահանայիցդ այդոցիկ: Այլ զի կարի յոյժ հոգ ունիմ, և մեծ փոյթ է ինձ վասն եկեղեցւոյ խաղաղութեան, որով և խաղաղասցի թագաւորութիւս մեր. աղաչեմ զքեզ՝ զի և դու նոյնպէս հոգասցես՝ հոգ տանելով: Եւ արդ՝ հրաման տուր արևելեայց կողմանց եպիսկոպոսացդ, զի ամենեքեան առ հասարակ 'ի թեսաղոնիկն հասցեն. որպէս զի և մերքս, որք աստ ժողովեալ են արևմտեանքս, և որք այդր եկեսցեն 'ի միասին, և ամենեքեան առ հասարակ քննութիւն արասցեն ստուգութեան՝ առանց ամենայն չար նախանձու, և ակնառութեան: Եւ եթէ միաբան հաճանին, թէ յիրաւի արտաքսեցաւ Յովհաննէս. գրեսցես յիս, զի և ես 'ի բաց կացից 'ի նորա հաղորդութենէն: Ապա թէ վասն իրիք իւրեանց չարութեան յանդիմանեալ 'ի նմանէ, կամ առ նախանձու է հակառակութեան. և վասն այնորիկ 'ի բաց դարձուցին զքեզ 'ի հաղորդութենէ նորա, դոքին որոշեալ 'ի բաց արտաքսեսցին: Այլև՝ զայս աղաչեմ 'ի քէն, զի և զԹէոփիլոս աղէքսանդրացի՝ առանց ամենայն իրիք պատճառանաց, եթէ կամա և եթէ ակամայ 'ի ժողովն ածցես, որպէս զի՝ մի ինչ ոչ պատճառք, և կամ խափան քննութեան ժողովոյն լինիցի: Եւ այսպէս բազում և առատ ողորմութիւն և խաղաղութիւն Աստուծոյ պարգևեսցի թագաւորութեանս մերում: Ողջ լեր 'ի Տէր

Ինքնակալ թագաւոր սիրելի եղբայր Արկադիէ:

Գրեաց և Ենովկենդոս հայրապետն հռովմայ յամենայն

ար

արևելս՝ քարոզել անդ և յայտնի ծանուցանել զհաղորդու-
թիւն հռովմայեցւոց առ յովհաննէս: Եւ առաքեաց 'ի
ձեռն եպիսկոպոսի միում, որոյ անուն էր դեմետրիոս. որ և
պատասխանի ընկալաւ թուղթ մի 'ի կարիասայ եպիսկոպո-
սացն, յորում գրեալ էր հաղորդութիւն ունել ընդ յով-
հաննու: Եւ թուղթ մի յանտիոքացւոց եպիսկոպոսացն,
յոր գրեալ էր՝ բազում վիշտս ընդունել նոցա 'ի վր ձեռ-
նադրութե պորփիւրոսի. և եդեալ էր անդ 'ի գովութե
կարգս զբարեձևութիւն հռովմայեցւոց, և զխուրեանցն նմա
նապէս հաղորդութիւն ընդ յովհաննու:

Ապա՝ առեալ զթուղթ զթագաւորին Ոնորիոսի, և ըզ
հայրապետին Ինովկենդիոսի. և այլ միւս ևս թուղթ 'ի
ժողովոյն, Ճանապարհորդեցին 'ի բիւզանդիոյ: Գնացին
և զհետ յարևմտից եպիսկոպոսացն առաքելոց, կիւրակոս
և պողադիոս, և եղիւսիոս՝ որք եկեալ էին յառաջագոյն
բողոք բառնալ առ հռովմայեցիսն՝ վն թէոփիլեանցն,
որք զինեցան ընդդէմ բարեպաշտութե: Իսկ իբրև եկին
բազում Ճանապարհս, ապա մտեալ 'ի նաւ՝ հասին յելլադայ,
և կամեցին երթալ 'ի թեսաղոնիկն, և տալ զթուղթն հռով
մայ հայրապետին 'ի յանուխաս եպիսկոպոսն: Ապա՝ իբրև
հասին անդ, ըմբռնեցան 'ի հազարապետէ ումեմնէ
ամբարշտէ, որ էր կացեալ անդ յևդոքսիայ թագուհւոյն
վն սմին իրի: Եւ նա կալեալ զնս, ոչ ետ թոյլ մտանել 'ի թե
սաղոնիկն, այլ ետ ցհարիւրապետ մի տանել յայլ տեղիս:
Եւ հարիւրապետն առեալ ած զնս յերկուս նաւս, և յա

րու

րուցեալ բռնութ՟ե հողմոյ 'ի ծովուն՝ զերիս աւուրս ան սուաղ կացին, ապա անցին զեգունայ, և զպատենայ։ Եւ գնացին 'ի բերգոլոս գեօղ, որ է հեռի 'ի քաղաքէն իբրև տասն աւուր ճանապարհաւ. և անդ ետ զնս՟ 'ի ձեռն մատենոսի սպասաւորի եդոքսիայ. և նա դարձուցեալ զնս՟ 'ի Թրակիս, եդ 'ի բանտ, 'ի տեղւոջն՝ որ կոչի աթիւռա։ Արդ՝ զհռովմայեցիան՝ արգելին յայլ և յայլ տունս, ոչ ևս ուրոյն 'ի մարդկանէ։ Իսկ զկղերակոս եպսկպսն՝ հանդերձ այլովքն, որ ընդ նմա էին յարևելից կողմանցն, առանձինն եդեալ 'ի բանտ տանջեցին, խնդրելով 'ի նոցանէ զթուղթան։ Եւ նոքա ոչ տային՝ ասելով. եթէ առ թագաւորն եմք առաքեալ, և չէ՝ պարտ այլ ումեք առնուլ, և կամ մեզ տալ զթուղթ թագաւորի։ Ապա եկեալ պատրիկ ոմն, և այլք ոմանք արք փառաւորք՝ աղերսանօք պահանջէին, և նոքա՝ և այնմ ոչ հաւանեցան տալ զթուղթն։ Յետ որոյ՝ եկեալ այլ ոմն այր անօրէն և ամբարիշտ, և լի անմարդութեամբ և յանդգնութ՟ե, որում անունն էր Ուղերիանոս. ազգաւ կապադովկեցի, և կորեալ սրով զձեռն զմիոյ յեպիսկոպոսացն, էառ բռնութ՟ե զթուղթան, որ էր գրեալ 'ի թագաւորէն, և 'ի հայրապետէն։ Եւ փաղփաղակի 'ի կոստանդնուպօլիս հասուցանէին։ առին ևս 'ի նոցանէ ոսկի, և արծաթ՝ զոր ունէին 'ի պէտս ճանապարհին։ Իսկ ապա յետ աւուրց ինչ՝ եկեալ 'ի թագաւորական քաղաքէն առաքեալ ոմանք՝ բերելով ընդ ինքեանս երեք հազար դահեկանս, ոչ գիտեմ եթէ յո՞ւմմէ արդեօք տուեալ

եղև

եղև այն, յարկադրեօ՛սն Թագաւորէն, եթէ 'ի հայրապե-
տեն ատտիկոսէ, եթէ յևդոքսիայ: Եւ բերեալ զայն մա-
տուցին հայրապետացն եկելոց 'ի հռովմէ, և աղաչէին՝ զի
լուեսցեն վ͞ա դատաստանացն յովհաննու, և հաղորդեսցին
ընդ ատտիկոսի: Եւ նոքա ոչ հնազանդեցին առնել զայն,
այլ միայն խաղաղութե (ասէին) առաքեցէք անդ զմեզ՝
ուստի եկաք: Քանզի՝ կամակածէին 'ի դաւաճանութե
նոցա, և աղօթ ևս առնէին զի առանց փորձութե հասա-
նիցեն ևս 'ի հռովմ:

Յայնժամ տեսիլ երևեալ նոցա յ͞այ՝ զգուշացուցանէր զն͞ս,
յորոց կամակածէինն: Քանզի երևեցաւ երանելի առա-
քելոյն Պօղոս՝ արքայ սարկաւագին, որ էր ընդ ն͞ս, որում
անուն էր Եմիլիոս, որ էր աշակերտ լեալ պօղոսի առն հե-
զոյ և զգաստի, և ասէր այսպէս: Զգոյշ լերուք՝ թէ ոչ
շրջիցիք, մի՝ իբրև զանիմաստս, այլ իբրև զիմաստունս, զի
աւուրքս չարութե են. այլ և զեկուցանէր նոցա տեսիլն՝
զբազմօրինակ մեքենայս նոցա, զի մի 'ի ձեռն կաշառուց
մատնեսցեն զճշմարտութին: Իսկ ապա իբրև ոչ հաւանե-
ցան կաշառանօք լսել արևմտեն եպիսկոպոսքն՝ ոչ յաւայ
ին դաւօղքն: Առեալ անօրէն իշխանն ուղերխանս, ան
զն͞ս 'ի նաւս խարխալեալս՝ և փտեալս, խորամանկութե
հնարէր զնոսա 'ի կորուստ: Եւ նոցա նաւեալ յաթինուայ
քաղաքէ այսպիսի կորստական նաւուք, հազիւ կարացին
հասանել 'ի լամբսակոյ. և անդ զնաւսն փոխեցին, և չորս
ամսեան աւուրբք ծանրանաւեալք՝ հասին 'ի հռովմ: Եւ
ապա

պատմեցին Թագաւորին, և Հայրապետին զնմ վտանկս նեղութեանցն, զոր կրեցին 'ի ծովու և 'ի ցամաքի՝ 'ի տադրելոյ Թէոփիլեանցն, և յեղօքսիայ։ Իսկ վն կիւրակոսի, և պօղադիոսի՝ ոչ գիտացին Թէ զինչ եղեն. այլ՝ ոչ վասն յովհաննու՝ վասն որոյ առաքեալքն էին, վասն առաւել վտանկելոյն՝ որ եհաս 'ի վերայ նոցա։ Արդ՝ զայս ամ ասասցաք վն դաւաճանութե եղօքսիայ առ արևմտեանսն՝ առանց կամաց և գիտուն լինելոյ Թագաւորին

Արկադեոսի։

Իսկ երանելին յովհաննէս բնակէր 'ի կոկիսոն՝ 'ի տան ադելփիոսի՝ ամ մի, և ոչ դադարէր 'ի ձեռն Թղթոց հաստատել զաշակերտելսն իւր, որք էին 'ի կոստանդնուպօլիս, և յասիայ. նմանապէս և յայլ Քաղաքս, և գիւղս, և գաւառս, որք են յամ կողմանս. և հաստատէր զնս 'ի համբերութին քն, մխիթարելով և սփոփելով զայնոսիկ՝ որ 'ի նեղութիւնս էին, քաջութբ և արդարութբ և արիութբ ընդունել զտանջանս եկեալս 'ի վր։ Եւ մի՝ լքանել՝ անկանել և տրտմել. այլ՝ ուրախանալ վն զի 'ի ձեռն սակաւ նեղութեան՝ զյաւիտենական կեանսն ժառանգեմք։ Եւ այսպէս՝ ըստ երանելւոյն Պօղոսի, ոչ միայն յընդարձակութե ուսուցանէր. այլ և 'ի կապանս՝ Թղթովք հաստատէր։ Քանզի քսան և չորս Թուղթս գրեաց 'ի յաքսորանաց անտի, որ յայտնի են այնոցիկ, որք շխատասիրութբ ընթեռնուն զգիրս սբյն։

Իսկ վն մերձաւորացն՝ ուր բնակեալն էր, զորս և լուսա

ճորեաց վերստին ծննդեամբն՝ զինչ պարտ է ասել, թէ ո՟չ զհոգիս նոցա հանդերձ մարմնովքն կերակրէր : Զի ՚ի ժամանակին յայնմիկ՝ եհաս ՚ի վ՟ր նոցա սով սաստիկ, և նա սքանչելագործութ՟բն տ՟յ՝ զանթիւ բազմութիւս կերակրեաց : Յայնժամ չարանախանձքն, և անդր ևս յաչաղելով ընդ լուսաւոր կարգս վարդապետութե՟ սբ՟յն, փոխեցին զնա՝ յարախուս, և պէսպէս կրտտանս չարչարանաց ածէին ՚ի վ՟ր, զի կորուսցեն զկեանս նորա : Իսկ նա՝ և անդ ևս առաւել պայծառացեալ վայելչութ՟բ շնորհօքն տ՟յ՝ ըստ Տ՟ն ձայնին. Ոչ կարէ քաղաք թաքչել, որ ՚ի վ՟ր լերինն կայցէ. և ոչ ճրագ պայծառաշաւ լուցեալ, պատշաճ է դնել ընդ մահճօք, այլ ՚ի վ՟ր աշտանակի, զի ամենեքեան զլոյս տեսցեն. (մատ. 5. 14:) Այսպէս և շնորհք հոգւոյն՝ կենդանի բանի՟ն իւրով բարձրացոյց զերանելին յովհաննէս՝ իբրև զքաղաք մի մեծ ՚ի վ՟ր բարձր լերին, և իբրև զպայծառ ջահ ՚ի վ՟ր բարձր աշտանակի, զոր ոչ չարանախանձողաց բազմութիւք, և ոչ փորձութիւք սատանայականք՝ ծածկել, կամ շիջուցանել կարացին : Այլ զոր օրինակ. արեգակն չէ հնար թէ յումեքէ ծածկեսցի յամպոց, կամ ՚ի ստուերէ ՚ի մեքէ՝ յորժամ ՚ի վերին կամարն բարձրանայ, այլ ամենեցուն յայտնի, և ՚ի մօտոյ ցուցանէ զճառագայթս իւր : Այսպէս՝ և նա բարձրագոյն, և լուսաւոր ճառագայթաձև վարդապետութ՟բ իւրով՝ ըզհեռաւորս, և զմերձաւորս առ հասարակ լուսաւորէր : Քանզի՝ և այսպէս կատարեալ գովութի, առն իմաստնոյ

վար

վարդապետի, որ ոչ միայն յորժամ յանդորրութեան էր, և 'ի տանն նստէր, և յեւրում պատուին բարգաւաճեալ երևի-ցի՝ յանժամ զայլս օգտեցուցանիցէ. այլ և 'ի նեղութեան և յորժամ փորձութիւնքն շուրջ պաշարեալ ունիցին զինքն, և յամենայն ուր և իցէ՝ ամենեցուն բարեաց օրինակ զինքն պար-տէր ցուցանել, և զամենեսեան զնոյն յառաքինութիւն յորդո-րել: Այս և երանելին յովհաննէս՝ որ ոչ միայն մինչ էր յան-տիոք, և 'ի կոստանդնուպօլիս յեւրում պատուին. Թարգ-մանէր զաստուածային գիրս զդժուարիմացս, և ինքնախօս բա-նիւք յորդորականօք զամենեսեան շահեցուցանէր. այլև՝ յորժամ տարասահմանեալն եղև յաքսորան 'ի կուկուսոն, և յարաբիսոս՝ անխափան գործէր զայս:

Իսկ յորժամ լսէին զայս՝ որք ա̅ սևերիանոսին էին, և ա̅ պորփիւրեայն չար քահանայապետին, առաւել ևս բոր-բոքեցան նախանձու չարութեան: Քանզի գրեթէ՝ ամենայն կողմանքն այնոքիկ Հայաստանեայց, և անտի մինչև յան-տիոք, և 'ի կոստանդնուպօլիս՝ հռչակ հարկանէին զիմաս-տութիւն նորա և 'ի բերան առեալ զվարդապետութիւն՝ գովէին և փառաւոր յամենեցունց բերանոց լինէր նա. և նոքա իբրև 'ի սաստիկ հարուածոց տանջեալք լինէին 'ի բանէ նորա: Ո՜վ սքանչելեացս. նոքա որ ծական զօրութեամբ, և քահանայապետական, և եկեղեցական ճոխութեամբ, և իշխա-նական պետութեամբ հպարտացեալք էին, 'ի տկարէ միոյ մարմնոյ, և յաքսորելոյ առնէ՝ երկնչէին. և ոչ միայն այս, այլ և զարհուրեալք ևս լինէին 'ի նմանէ: Եւ յերա-

նե

նի իսկ, քանզի զօրութիւնն ա̃յ մնացեալ էր 'ի նմա, որ-
պէս և յերանելին պօղոս, զոր և ասէր իսկ ցնա. եթէ շատ
են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութեան
կատարի. ( 2. Կորն. 12. 9: ) Յայնժամ պատրաստեցին
դաւօղքն՝ ըզ զօրապետս, զի փոխեսցեն զնա անտի 'ի դի-
պիհոն, 'ի տեղի՝ որ կարի յոյժ անապատ էր, մերձ 'ի
ծովն մեծ պոնտոս, 'ի սահմանս հոռմոց, մօտ 'ի բարբա-
րոսն: Եւ յորժամ ածէին զնա անդ, և ոչ սակաւ ինչ
աւուրս ճանապարհ մնացեալ էր հասանիլ նմա 'ի տեղի աք-
սորանացն, եհաս նմա իջևան օթևանի, և նա յարուցեալ
ըստ սովորութե̃ն խորում հսկէր 'ի գիշերի՝ աղօթիւք,
և ողբ երգական պաղատանօք առ ա̃ծ: Յայնժամ եկին
մտին առ նա յայտնապէս՝ առաքեալքն Քի̃ Պետրոս, և
Յոհաննէս. ը̃ օրինակի այնմ՝ տեսլեանն, զոր ետես յա-
ռաջագոյն՝ մինչ էր նա յերկիրն անտիոքացւոց. և ասեն
ցնա այսպէս:

Ուրախ լեր հովիւ քաջ բանաւոր հօտին Քի̃, և նահա-
տակ բարի երկնաւոր Թագաւորին, որ օրինօք մարտեար,
և յաղթեցեր: Եւ առաքեցաք մեք առ քեզ 'ի հրամանա-
կաց Տեառնեն, և 'ի Թագաւորեն Յի̃ Քի̃ ա̃յն մերոյ՝
զօրացուցանել զքեզ, և մխիթարել 'ի վտանգս քո. քանզի
նմանօղ եղեր դու յովհաննու մկրտչին և կարապետին
Քի̃: Զի ո̃պ նա յանդիմանեաց զհերովդէս վ̃ա անօրէն
խառնակութե̃ն ը̃ հերովդիադայ կնոջ փիլիպպոսի եղբօր
իւրոյ. նոյնպէս և դու յանդիմանեցեր զԹագաւորս, և

․ զ

զթագուհիս՝ վ՟ անօրինելոյ յօրէնսն ա՟յ, և անցանելոյ զարդար իրաւամբք նորա։ Վ՟ այսր ա՟մ՝ քաջալերեա՛ և զօրացի՛ր, զի վարձք բազում են քեզ յարքայութ՟ն երկնից։ Այլ և աւ՟ետարանեմք քեզ ուրախութ՟ի մեծ. զի ահաւասիկ սակաւ՟ ինչ աւ՟ուրք անցանեն, և երթիցես առ Տէր՟ն քո՝ և ա՟ծ, որում անձկացեալն ես, և հանգիցես ընդ մեզ յարքայութ՟ն երկնից անվախճան յաւ՟իտենանս։ Վ՟ զի 'ի ձեռն ճգնութեան քոյ՝ և համբերութ՟ն, զսկզբնաչարն՝ և զհակառակամարտն՝ զբանսարկուն կոխեցեր, և զդևսն ն՟ր յամօթ արարեր՝ հանդերձ նոցին գործակցօքն։ Եւ՟ հանդերձեալ է աղօքսխա կերակուր լինել անքուն որդանցն. և խնդրէ, զքեզ իւր օգնական, և ոչ գտանէ, քանզի հասեալ 'ի վ՟ր ն՟ր բարկութ՟ի ա՟յ՝ 'ի ձեռն անբժշկելի հիւանդութ՟ե։ Եւ՟ զայս իբրև ասացին. ետուն նմա կերակուր իմն, և ասեն. ա՛ռ զայս՝ և կե՛ր, և այլ ոչ ևս պիտոյասցի քեզ մարմնաւ՟որ կերակուր՝ մինչև դիցես զհոգի քո 'ի ձեռս ա՟յ։ Եւ՟ էառ նա երկու երէց, և սարկաւագ մի՝ եկեալ զկնի ն՟ր 'ի կոստանդնուպօլսէ, որք և յար ընդ նմա շրջէին յա՟մ աքսորսն, և նմանօղք լինէին նորին առաքինութ՟ն։ Իբրև տեսին զս՟բ առաքեալսն յայտնի բաց աչօք, և լցա՟ն զաւ՟ետարա՟որ բանսն, քանզի է՟ր նմա իսկ հսկէին, ուրախացան՝ զի արժանի եղեն այնպիսի առն չարչարակից լինել, որ խօսակից է ա՟յ, և համապատիւ ս՟բց առաքելոցն։ Իսկ զինո՟րքն՝ որք տանէին զնա, առաւել ևս շատ տագնապի հասուցանէին 'ի վ՟ր ն՟ր. քանզի՝ և այնպիսի իսկ

հրա

հրաման տուեալ էին յեպարքոսէն, զի թէ և յառաւել ճե-
պոյ՝ 'ի ճանապարհին մեռանիցի (ասէ,) մեծի իշխանութե՟
արժանի լինիցին։ Եւ վ՟նկ՝ չարաչար նեղէին զերանելին,
և ընթացուցանէին 'ի ժամանակս հոսանուտ անձրևաց, և
յարեգակնակէզ տօթոյ։ Եւ այսպէս բազում ճգամբք յա-
ւուրս բազումս ճանապարհորդէին զդժրօղ ճանապարհն,
հազիւ հասին մերձ առ սահմանեալ տեղին։ Եւ սակայն՝
ոչ ինչ լքեալ անկանէր յուրմէ զուարթատեսիլ երեսացն,
թէպէտ և բազում անգամ վշտանայր. այլ այնպէս երև
էր իբրև զխնծոր զուարճացեալ 'ի վ՟ր բարձրաբերձ դա-
լարագեղ ծագի ճղաց ծառոյն։ Իսկ մարդասէրն ա՟ծ՝ ոչ
ետ թոյլ երթալ ծածկել այնպիսւոյ առն նշանաւորի, և
մեծ նահատակի՝ յայնպիսւում տեղւոջ անապատի բնակ-
չաց։ Միանգամայն և պարտ էր կատարել մարգարէութե՟
ս՟բոյն եպիփանու 'ի վ՟ր սորին երանելւոյ. ո՟պ և՝ որ այս
կատարեցաւ 'ի վ՟ր ն՟ր։ Զի ո՟պ նա ոչ ժամանեաց 'ի կիպ-
րոս՝ յաթոռ արք եպիսկոպոսութե՟ իւրոյ. սոյնպէս՝ և սա
ոչ ժամանեաց 'ի դիպիհոնն 'ի տեղի աքսորանաց իւրոց։
Արդ՝ մինչ գնային զճանապարհն, եկին հասին 'ի տեղի
մի, որ կոչի կոմանայ. և անդ արտաքոյ պարսպին օթև-
անս կալան 'ի վկայարանի ս՟բ՟յն բասիլիսկոսի։ Իսկ բասի-
լիսկոսս այս՝ որ էր լեալ եպիսկոպոս կոմանայ, և նիկոմի-
դայ քաղաքին, կատարեցաւ վկայութե՟ պսակաւորեալ 'ի
Ք՟ս, 'ի ժամանակս մաքսիմիանոսի բռնաւորի, որև նշխարք
նորին բերաւ անդէն 'ի կոմանայ. և անդ շինեալ վկայարան,

և

եղեւն զնա անդ մեծաւ պատուով։ Իսկ իբրեւ էր անդ երա նելին յովհաննէս յօթեւանի, եւ հսկէր զգիշերն ամ յա ղօթս առ ած, երեւեցաւ նմա սբն բասիլիսկոս, եւ ասէ։ Քաջալերեաց եղբայր, քանզի վաղիւն՝ի միասին լինելոց եմք առաջի այ։ Երեւեր եւ նոյն սբն բասիլիսկոս քահանային, որ սպասաւորէր վկայարանի նր, եւ ասէր։ Պատրաստեա տե ղի եղբօր մերում յովհաննու ոսկեբերանի, եւ տիեզերաց վարդապետի, եւ լուսաւորչի. քանզի վաղիւն գայ առ մեզ։ Յայնժամ գիտացեալ երանելւոյն զօր հանգստեան իւրոյ, սկսաւ աղաչել զգլխաւորսն զինուորեացն իբրեւ ժամս հինգ։ Իսկ նքա՝ անողորմ, եւ անմարդի բարս ունելով, ոչ ներեցին մին, այլ առեալ վարէին զնա իբրեւ ասպարէզս երեսուն։ Եւ յածային տեսչութեցն նախախնամեալ, մոլորեալ՝ ան դրէն դարձան՝ի նոյն տեղի. քանզի հասեալ էր ժամ հանգստեան սբյն, եւ անդ սահմանեցաւ յարարչէն կատա րել զընթացս իւր՝ ըստ յայտնութեն, զոր եցոյց նմա։

Յայնժամ առեալ նր զամ անօթս սպասուցն, որ զհետն բերէին վն պատշաճ գիտոյից, բաշխեաց աղքատաց, եւ մերկեաց յինքենէ զամ զգեստ իւր՝ զոր զգեցեալն էր, մինչեւ ցկօշիկս ոտիցն, եւ այլ պայծառագոյն զգեցաւ։ եւ ապա առեալ զհացն օրհնեաց, եբեկ, ճաշակեաց ինքն, եւ ետ քահանայիցն՝ որ զկնի նր եկեալն էին։ Եւ տացեալ զկատարումն աղօթիցն. եւ փառս տուեալ, եւ ասացեալ նոցա զամէնն։ Եւ ապա կնքեալ զամ անդամս իւր նշա նաւ սբ խաչին, Աւանդեաց զհոգին իւր՝ի ձեռս այ։

Որեւ

Որև՝ փոխման երանելոյն յարժանաւոր յաւուր հանդիսպե
ցաւ, յորում՝ կենարարն մեր 'ի խաչին բարձրացաւ վ՟ս փրկու
թ՟ե մարդկան․ 'ի սեպտեմբերի ամսեն, որ օր տասն և չորս
էր։ Որ և այս մեծ սքանչելիք էր հողեղինի՝ նմանօղ լինել
որդւոյն ա՟յ, և իշխանութ՟բ մերկնալ զհողանիւթեայ զգեստ
մարմնոյն, և զգենուլ զերկնային զլոյսն, և վերանալ առ
հայրն լուսոյ։ Նաև՝ այլ իմն սքանչելիք եղև յաւուր փոխ
ման սորա, վ՟ս զի՝ անթիւ բազմութ՟ե արանց, և կանանց՝ իբրև
'ի հրամանէ ա՟յ փաղփաղկի անդր հասանէին 'ի թաղումն
երանելոյն, որ յոյժ հեռաւորագոյնք էին տեղօք։ 'ի յա
սորւոց, և 'ի կիւլիկեցւոց, 'ի պոնտոսէ և 'ի հայաստանեց․
և այլք 'ի գաւառաց կրօնաւորաց, ձգնաւորաց և կուսանաց՝
արագ անդր հասանէին, ա՟ռ յառաջագոյն հրաւիրեալք յա՟յ,
պատուել զօր հանգստեան ս՟բյն։ Ե՟ւ այսպէս արժանաւոր
պատ՟իւ արարեալ մեծի քահանայպետին, եդին յարժանաւոր
տեղի՝ մերձ 'ի դիրս ս՟բյն Բասիլիսկոսի․ կատարելով զյի-
շատակ ն՟ր, ա՟մ յամէ մեծաւ փառաբանութ՟բ, և երկրպագութ՟բ։

Հեփեսին այլք երանելոյն, որ եղեն յետ վախճա
նի սրբոյն Յովհաննու ։

Արդ՝ պարտ և պատշաճ է, և զայլն ամ որ եղև զկնի կատարման երանելոյն՝ դնել՝ ի կարգի պատմութեան, զի յայտնի լիցի ընթերցողաց՝ և որ ինչ յետ նր հրաշագործեցաւ ։ Եւ վս զի քահանայքն՝ զոր յառաջագոյն ասացաք, որք եկեալ էին ը նմա ՚ի Կոստանդը նուպօլսէ, ոչ ևս դարձան անդրէն յետ փոխման նր ․ այլ ամբարձեալք ՚ի կոմանայ՝ գնացին ՚ի Հռովմ, և պատմեցին զամ Ենովկենդիոսի հայրապետին և Անորիոսի Թագաւորին ։ Եթէ ոմն դաւաճանութեբն և դոքսիայ կամէին գաղտ սպանանել զմեծ և զհռչակաւոր քահանայապետն ։ Եւ կամ ոմն սպանօղն զարհուրեալ ՚ի զօրութենէ այ, ցուցանէր զսուրն յայտնի ամենեցուն, և խոստովանէր զանդգնութի իւր ։ Եւ եթէ՝ ոմն զառաջին օրն, յորժամ արտասահմանեալն եղև, հրով տանջէր քաղաքն, և կարկտիւ ։ Պատմեցին և զտեսիլ առաքելոյն՝ զոր ետես, որք ծանուցին նմա զօր կատարմանն իւրոյ ։ Ասացին և զսքանչելիսն, զոր արար յաքսորսն ․ և եթէ՝ ՚ի ձեռն այնր հաւատացին կողմանքն այնոքիկ, որ յառաջ հեթանոսք էին ։ Զայս ևբրև լուաւ երանելն հայրապետն, տրտմութբ, և հեծմամբ լի եղև ․ վս զի հիանայր ը սքանչելիսն, և տրտմէր՝ թէ զորպիսի լուսաւորիչ, զքարոզ բանին Քմարտութե աքսորեցին յարևելից՝ եպիսկոպոսքն ։ Եւ ողբայր զկուրութի սրտից նոցա, ասելով

ըով. թէ զինչ պատասխանի տայցեն յաւուր արդար դատաստանին այ, յորժամ ած արարածական բնութիւս ահիւ և դողութբ կայցեն առաջի ահաւոր բեմին քի։ Եւ ապա հրամայեաց թագաւորն Ոնորիոս, գրել թուղթ առ եղբայր իւր Արկադէոս, ըստ պատշաճի իւրում իմաստութեան, և նորա առեալ գրեաց այսպէս։

Զայն արեան առն արդարոյ եղբօր մերում յովհաննու, բողոքէ առ ած ՚ի վր քո՝ ո՛վ թագաւոր, որպ հաբելի արդարոյ ՚ի վր եղբայրասպանին կայենի։ Որ ոչ թէ միայն համարձակեցար առաջին ամբարիշտ թագաւորացն, այլ և առաւելար. զի ՚ի ժամանակի խաղաղութե՝ հալածանս զարթուցեր յեկեղեցիս այ, և ՚ի քահանայս նորա։ Զի յորժամ հալածեցեր, և հաներ արտաքս զմեծ վարդապետն տիեզերաց, հալածեցեր, ընդ նմին զքս, որ նովաւ խօսէր։ Եւ ոչ այնքան ողբամ վնն, որ պարակից եղև նքց առաքելոցն առաջի այ, (թէպէտ և մեզ կարի անփարատելի է սուգս.) այլ զայնոսիկ լամք և կոծիմք, որք զրկեցան ՚ի նր լուսաւոր վարդապետութենէն։ Զի ոչ թէ կոստանդնուպօլիս միայն վայելէր ՚ի շնորհս հոգւոյն սրբոյ, որ բղխէր ՚ի նմանէ առատապէս, այլ ամ տիեզերք՝ յամ եկեղեցիս քրիստոնէից. ընդ սմին օրինակի և զողբսն տեսանեմք։ Նաև դուք՝ եթէ բաց էր աչք ձեր հոգւոյդ՝ և մտացըդ տեսանէիք արդեօք, թէ յորքան բարեաց անձանց անձին մատն եղեալ զրկեցիք, և որքան չարեաց մատնեցիք զձեզ. և հաւանեալ կնոջ միոյ անզգամի, որ սա-

տէն

տեն արագ արագ ընդունելոյ զառ հաճառաչեայն հան-
դերձեալ տանջանացն, արկիք զձեզ 'ի վիհս կորստեան :
Իսկ երանելի եղբայր մեր, Թէպէտ և առ ժամանակ մի հա
լածեալ 'ի ձէնջ՝ կատարեաց զընթացս իւր, սակայն ժա-
ռանգելոյ է զդրախտն փափկութե, և զ յաւիտենական
ուրախութի : Եւ՛ դա փոքր մի յետոյ՝ և աղջամղջին խա-
ւարաւն պարածածկելոյ, վս զի ինքնին կայեց զանձն իւր
է ծանրագոյն կապարանման մեղս, և ընկեց զինքն 'ի խորս
հրախառն խաւարին : Այ՝ ես որուպս և մեղաւորս ,
վստահացեալ յաթոռ մեծի առաքելոյն Պետրոսի յաճե-
լից և զայլս ևս 'ի վր ն՞ր առաջին մեղայն. և որոշեցից
զքեզ, և զնա՝ 'ի հաղորդութե անարատ մարմնոյ և արեանն
Տն քի մյ մերոյ : Եւ՛ ոչ միայն զձեզ այլ և զամ եպիսկպս ,
և զկղերիկոս եկեղեցւոյդ է քանիւ արարեալ որոշեմք ,
եթէ համարձակիցին անցանել զքանիւք մերովք և հաղոր-
դեցուցանել զձեզ 'ի սբ խորհրդոյն : Ապա բռնադատէ
եթէ ոք 'ի ձէնջ զնոսա, զիշխանութիւն 'ի գործ ար-
կեալ, և անցանէք զպատուիրանաւ իմով . գիտասջիք՝ զի
նոյն ինքն ամենազօրն ած՝ իւր սրբովքն ընդդէմ կայցէ ձեզ ,
ասէ՝ և յահեղ աւուր դատաստանի, յորժամ ոչ կարիցէք
օգտել ինչ 'ի Թագաւորութե՛դ ձերմէ : Իսկ զարմիկի-
ոս՝ զոր ածեալ նստուցիք յաթոռ յեպիսկոպոսութե փո-
խանակ երանելւոյն յովհաննու , որոշեմք զնա զկնի մա-
հուանն ոյ էր նա պատուեալ 'ի կենդանութե . զի ոչ
ողջախոհութե միայն նա է յեկեղեցի , այլ շնութեամբ
աղ

պղտեղելով զկոյսն սբ, եւ զճշմարիտ հաւատն ։ Զի ամ տունկ ըստ բանի Տն, որ ոչ է տնկեալ յերկնաւոր հօրէն, արմատաքի խլեսցի ․ ( մատ ․ 15 ․ 13 ։ ) Զսոյն օրինակ ․ որոշեմք և զԹէոփիլոս անլուծանելի նզովիւք վն զի յոյժ օտարացեալ է քրիստոնէութէ ։

Գրեաց և ինքն Ոնորիոս Թագաւորն առ եղբայր իւր և Թագակից Արկադէոս այսպէս ։ ոչ գիտեմ թէ՝ որ հակառակ զօրութն մոլորեցոյց զքեզ հնազանդիլ կնոջ մի անզգամի, և գործել զայդպիսի չարիս, զոր ոչ այլոք արարեալ էր ՚ի քրիստոնէից Թագաւորաց ։ Զի ոչ միայն զսբ եպիսկոպոսն արևելից, որք հաղորդք էին յովհաննու փախստական արարեալ յարևմուտս ․ այլև՝ զսպասաւորս եկեղեցւոյն հռովմայեցւոյ Առաքելական աթոռոյն զոր վն պատուի ձեր, և ժողովոյ հաստատութե, և առ ՚ի քննութիւն ստուգութեան առաքեցաք ։ Դուք ըմբռնեալ զնոսա ՚ի բանտ եդիք, և սովալլուկ նեղեցիք՝ փոխանակ զոր պարտ էր բարեմտութե ընդունել, և օտարասիրութե ժողովել, և Թագաւորական առատաձեռնութե պարգևս տալ ։ Այլ դուք և զիւրեանցն ևս զարծաթ՝ զոր ունէին ՚ի պէտս ճանապարհին, հանեցայք ՚ի բաց բառնալ և ետուք պատասխանի նոցա զի բողոքեսցեն առ ած վն ձեր ։ Եւ ոչ զմտաւ ածիք զբանս առակախօս իմաստնոյն, որ ասէ ․ Մի տայցես պատասխանի մարդոյ անիծանել զքեզ, քանզի հառաչանաց սրտի նորա լսէ այն, որ ստեղծըն զնա ։ ( առակ ․ 21 ․ 11 ։ ) Այլև՝ նորին կնոջ հնազանդեալ

դեալ քո արտաքսեցեր զաւուրբ եպիսկոպոսութեան որ լիք էին ամենայն իմաստութեամբ, և փոխանակ նոցա կացուցեր զյիմարսն և զլցեալսն անարժան գործովք, անտես արարեր և զառաքելական աթոռոյս պատիւն, որ և այս ոչ փոքր ինչ բերէ քեզ բամբասանս յԱյ և ՚ի մարդկանէ: Արդ՝ փութա այսուհետև յապաշխարութիւն, մի բանիւք միայն, այլև արդեամբք հաճատարմացուցանել զմեզ և զամենեսեան. այլև զԱծ ևս, զի մի զարթիցէ ՚ի վերայ քո վրէժխնդրութիւն Այ: Այլ զի և յորժամ ուղղութեամբ և իրաւամբք վարիցեմք զիշխանութիւս մեր յայնժամ աղօթք մեր քահանայապետիցն խոնարհեցուցանիցեն զԱծ ՚ի գութ և ՚ի քաղցրութիւն, պահել խաղաղութեամբ, և բարեպաշտութեամբ զինքնակալ թագաւորութիւս մեր:

Արդ՝ իբրև ընկալաւ զթուղթսն զայսոսիկ Արկադէոս թագաւոր, խռովեցաւ յոյժ, և անկեալ ՚ի տագնապ մեծ հրամայեաց խնդիր առնել ՚ի քաղաքին, թէ արդեօք գտանիցէ անդ յայնցանէ՝ որք դաւաճանեցին զՅովհաննէս: Եւ ըստ դիպուածի իրիք, գտին անդ՝ զԿինաս, և Թէոտիկնոս, և զԻսքիրիոս, որք էին քեռորդիք Թէոփիլոսի Աղեքսանդրացւոյ. գտին և զԱկակիոս Բերիացի, և զՍևերիանոս Գաբաղոնացի: Եւ իբրև ծանուցին թագաւորին վասն նոցա, հրամայեաց մեծաւ անարգութեամբ դնել զնոսա ՚ի բանտ, մինչև խորհեսցի վասն նոցա հատուցանել ըստ գործոց նոցա: Յայնժամ խնդիր առնէր և այնոցիկ, որք գործեցին զանիրաւութիւն՝ ընդ եպիսկոպոսութեան արևմտից, որք առաքեցանն

ցանին 'ի Հայրապետէն Հռովմայ՝ 'ի յԱռաքելական ա-
թոռոյն, որ թէպէտ և ոչ գիտէր, սակայն յայտնի եղև
նմա 'ի թղթոյ եղբօր իւրոյ։ Եւ իբրև ստուգեաց ե-
թէ 'ի ձեռն Մառինոսի մատակարարի թագուհւոյն,
և որդւոց իւրոյ՝ գործեցաւ այս անօրէնութիւնս. հրա-
մայեաց սրով հատանել զգլուխ նոցա, և կախել զփայ-
տէ. և զամենայն մերձաւորս ազգականս նոցա սոյնպէս հրամա-
յեաց առնել։ Իսկ զազգականս թագուհւոյն՝ և զմեր-
ձաւորս ծառայսն, հրամայեաց յընչիցս ունայնս առնել,
և զիշխանութիւնս 'ի բաց բառնալ. և զայլս՝ չարաչար տան-
ջանօք 'ի բաց եբարձ 'ի կենաց։ Իսկ զթագուհին և զորդ-
իսն՝ հրամայեաց 'ի սենեակ մի արկանել. և ոչ ումեք ա-
մենևին մտանել առ նա թողացուցանէր, բայց եթէ ըզ-
մի ոք յաղախնեայն նորա։ Եւ նա 'ի յարգելանի անդ վիրա-
ւորեցաւ 'ի սաստիկ տրտմութենէ, և 'ի նախատանաց, և
անկաւ յախտ հիւանդութեան թանձրից։ Եւ գրեաց թա-
գաւորն Արկադէոս, պատասխանի Հայրապետին Հռով-
մայ, օրինակ զայս։

Գիտեն տէր մարդիկ երկրի, որք զօրութիւն իմաստութեան
ունիցին՝ ո՞վ հայր սուրբ. եթէ զակամայ գործս ոչ տան-
ջեն Աստուածային օրէնքն։ Այս որոյ գրեմ զայս առ 'ի հաւա-
տարմութեան ձերում սրբութեանդ, վկայ ունելով անձին ի-
մոյ զմարդասէրն Աստուած, զգիտօղն ծածկելոց մտաց. զի ոչ
գիտեմ զանցսն որ անցին ընդ առաքեալ եպիսկոպոսունսն՝
յառաքելական աթոռոյդ։ Եւ յորժամ լուայ, փաղփաղա
կի

կի հասուցի վրէժխնդրութի՟ ՚ի վերայ այնոցիկ, որք յան-
դգնեցան գործել զայնպիսի անօրէնութե՟ գործ՝ առանց
կամաց իմոց: Զոր թէպէտ և ՚ի մարդկանէ թագուցին
առ ժամանակ մի, սակայն ա՟յ յայտնի էր. վ՟ այնորիկ ա՟ծ
հատոյց ՚ի վ՟ր նոցա զվրէժխնդրութիւն ՚ի ձեռն մեր՝ սաս-
տիկ տանջանօք: Իսկ զոր յիշատակեալ էիք վ՟ յովհաննու՝
եղելոյ եպիսկոպոս քաղաքիս մերոյ, և հովուի այսմ ե-
կեղեցւոյս, զոր ՚ի յաղաչանաց ոմանց աքսորեալ եղև ՚ի
մէնջ: Գիտեմ ո՞վ հայր պատուական, զի յայնց եպիսկո-
պոսաց եղև պատճառն, զորս թղթով ձերով նշանակե-
ցէք, և ոչ ՚ի մէնջ: Եւ՟ եթէ արտաքոյ առաքելական կա-
նոնացն, և նիկիայ սր՟ ժողովոյն ինչ արարին, նոքա որոշես-
ցին, և ընկալցին զդատապարտութի: Ա՟ զի՝ ես հնա-
զանդեցայ բանից նոցա իբրև եպիսկոպոսաց, զմտաւ ածեալ՝
եթէ չէ պարտ վ՟ միոյ առն պատառել զեկեղեցիս: Եւ՟
եթէ արժան իցէ որոշել յանարատ խորհրդոյն զն՟ պարտ՝
և արժանէ՛ որոշել, որք արտաքոյ կանոնաց գործեցին. մեր
զի՞նչ մեղ է ՚ի սատել քահանայիցն, և յարհամարհել զճըշ-
մարտութի: Այլ մեք զոր գտաք ՚ի նոցանէ, առաքեցաք
առ ձեր սրբութի՟դ, դոքին իսկ պատմեն ձեզ զա՟մ. և
եթէ ես պատճառ եմ այդպիսի իրաց, կամ խորհրդակից
դոցին, ասասցեն: Ապա եթէ ինքեանք արժանի են պատժոց
իբրև զըրպարտօղս, դատապարտեսցին ՚ի ձէնջ, վ՟ զի՝ այդ-
իսկ են կամք մերում թագաւորութես, զի այլք յուղ-
ղութի եկեսցեն: Եւ՟ արդ այսուհետև ընկալցի զաղա-
չանս

չանս մեր քոյին սրբութիդ, և մի անհաղորդ, և անդա-
սակից դատապարտեր զմեզ 'ի հօտէն Քի, և մի զրկեալք
լիցուք յանապական մարմնոյ և արեան կենարարին։ Զի
թէպէտ և թոյլ տուաք նոցա առնել երանելւոյն յովհան
նու այնպէս, սակայն առանց մտաց չարաց· այլ թէպէտ
և այնպէս, սակայն քաւութիւն խնդրեմք վնյ մեղաքն։
Եւ եթէ պատիժ պատուհասի հատուցանես 'ի վր մեր՝
առ 'ի զգաստութի անձանց մերոց և յայնմանէ չհրա-
ժարեմք, այլ յօժարութբ համբերեմք խրատու տեառն,
քան թէ որոշիմք 'ի նմանէ. զի զոր սիրէ տէր խրատէ,
(Եբր. 12. 6.) որպ երանելի առաքեալն երկրորդէ մեզ
զբանս իմաստնոյն։ Իսկ վն դստեր քո Եւդոքսիայ· գիտեա
հայր սբ, զի և նմա հատուցի ըստ սխալանաց իւրոց՝ ոչ
փոքր ինչ, այլ մեծագոյն անարգանօք, իբր զի յայնմ նա
խատանացն, և 'ի նեղութե անձին տրտմութե, անկեալ
դնի դառն հիւանդութբ։ Աղաչեմք զքեզ՝ զի մի ան-
մասն լիցի և նա 'ի սբ խորհրդոյն, զի մի եկեսցէ 'ի վր
նր վերստին վրէժխնդրութիւք· վն զի ած ոչ հարկանէ
զոք կրկնակի պատժօք։ Գրեաց և պատասխանի եղբօրն
իւրում Անորիոսի՝ ըս նոյն օրինակի, որպ և առ երանելին
Ենովկենդիոս։ Գրեաց և Թագուհին առ հայրապետն,
որպ և պատշաճ էր՝ կերպարանօք աղաչանաց՝ այնպէս։
Արդ՝ իբրև ընկալան երկոքեանն՝ զթուղթսն, Թագա-
ւորն՝ և հայրապետն, և ընթերցեալ ծանեան զմիտս բա-
նին սքանչացաւ Հայրապետն ընդ խոնարհութե Արկադէ
ոսի

ուսի, և գովեաց զզղջումն նր։ Այլ և՝ 'ի թղթաբերացն առաքել ևս գիտացին զեղեալ վրէժխնդրութին վս երանելւոյն յովհաննու, զոր հատոյց Արկադէոս թագաւոր 'ի վր այնոցիկ, որք մատնեցինն զնա։ Իսկ մեծն Ենովկենդիոս, զայնսիկ զզրպարտօղս նր՝ որ առաքեցան առ նա 'ի յԱրկադէոսէ, ոչ յանձնանէ թշնամանէր և նախատէր, այլ հասարակաբար զբանս 'ի կիր արկեալ՝ առաջի ամենեցուն յայտնի կացուցանէր զչարիսն, մինչզի ամենեցուն նոցա կարծել՝ եթէ նմա յայտնի է մեր ծածկեալ յանցանքն։ Եւ ապա իւրաքանչիւրոք 'ի միտս իւր եկեալ, և զխիղճմտաց իւրոց զմտաւածեալ խոստովանէին զմեղս իւրեանց, և 'ի բաց կային յայնցանէ։ Ոմանք վս երկիւղին այ, և կէսք վս երկիւղի մարդկան՝ յամօթոյ, և յեկեղեցւոյ 'ի բաց որոշելոյ։ Եւ այլք՝ ոչ յառաջադէմք լեալ 'ի յանդիմանութեց, այլ 'ի նոյնութեան կացեալք անզղջանալի, ած զի և յերկոցունց կողմանցն վերակացուեսցի առ նոսա բանք իմաստնոյն։ Ցանդիմանեա զիմաստունն՝ և սիրեսցէ զքեզ, զանմիտն՝ և յաւելցի ատել զքեզ. (Առակ. 9. 8։) Արդ այսոցիկ այսպէս եղելոյ. իբրև ետես հայրապետն զզղջումն Արկադէոսի թագաւորին. գրեաց վաղվաղակի առ Պրոկղոս եպիսկոպոսն կիզիկոյ, գալ 'ի կոստանդնուպօլիս, և տալ թագաւորացն յանարատ խորհրդոյն՝ մարմնոյ և արեն կենարարին. և հովուել զեկեղեցին մինչև վերստին քննութի արասցեն վս ատտիկոսի՝ թէ արժանի գոյի հաճատալ 'ի նա զեպիսկոպոսութի թագաւորական քաղաքին։

Իսկ

Իսկ պրոկղոս եպիսկոպոս, իբրև ընկալաւ զհրամանն մեծի հայրապետին, կացոյց յեկեղեցւոջն իւրում զհա-ւատարիմսն և զիմաստունսն 'ի կղերիկոսացն իւրոց, և ինքն եկն եւ 'ի կոստանդինուպօլիս. և կատարեալ անդ զա-նարիւն պատարագն, հաղորդեցոյց զնա՝ որպէս հրաման է-առ։ Եւ կացեալ անդ՝ առաջնորդէր ժողովրդեանն, և հովուէր զեկեղեցին, և փոքր 'ի շատէ սփոփէր զնա, և մխիթարէր. քանզի յոյժ անմխիթար ունէին զսուգն յաղագս զրկելոյ նոցա 'ի յորդառատ, և 'ի քաղցրաբուղխ վարդապետութենէն սրբոյն յովհաննու։ Եւ ասէր զնա այսպէս. այնպէս են բանք իմ եղբարք (որպէս երևի ինձ) առ մեծի վարդապետին իմոյ, իբրև աղբիւր մի առ ծովն մեծ, և որպէս փոքր առու մի առ բազմաջուր գետս։ Եւ ո՞վ էր կա-րող լինել նմանօղ նորա բարձրագոյն վարդապետութեան, բայց եթէ զգեղեցկազարդ մատեանս նորա փոխանակ նորա առնու-ցումք 'ի յառաջնորդութիւն մեզ։ Զի թէպէտ և եթող զմեզ մարմնով. սակայն հոգւովն միշտ խօսի ընդ մեզ 'ի ձեռն բազմազան, և աստուածաշունչ գրոց իւրոց. և արդ բաւական է այն մեզ 'ի մխիթարութիւն, եթէ աշխատասէր լինիցիմք առ ընթերցումն։ Զայս այսպէս ասէր պրոկղոս, և ինքն

Մնայր հրամանաց հայրապետին հռոմայ։

Իսկ Ենովկենդիոս գրեաց միւսանգամ 'ի թագաւորն Արկադիոս, և յեւդոքսիայ՝ այսպէս։ Ընկալայ զձեր փոյթն որ զըստ Աստուծոյ զտրտմութիւն ցուցիք, և զընդ բանիւ առնելն իմ յանձն կալայք. և այժմ 'ի ձեռն խոստովանութեան

առ

արժանաւորեալք սբ խորհրդոյն, քաւեալք եղէք: Եւ արդ՝ հրաման պատուիրանի տուք ամ ուրեք յամ եկեղեցիս քրիստոնէից, զի զմեծ և զերանելի անունն սբյն յովհաննու՝ գրով յիշատակեսցեն 'ի սուրբ խորհուրդն: Քանզի՝ և այս յիրաւի է. զի ուր նովաւ պայծառանայ եկեղեցիք 'ի ձեռն թարգմանութեան նորա յաստուածային պատուիրանս, արժան է արժանաւոր յիշատակի: Արժանի արարէք և զթէոփիլոս թղթոյ, զի պատրաստ լիցի գալ 'ի ժողովն, որ ըստ ածային պատուիրանաց եկեղեցւոյ սահմանեցաւ 'ի մէնջ լինել 'ի Թեսաղոնիկն, զի դիւրաւ հասցեն անդ արևելից եպիսկոպոսքդ, և մերքս արևմտեայքս: Եւ նմա պարտ է առանց ամ պատճառանաց անդր հասանել. զի վն սպանօղ դաւաճանութե, զոր առանց կանոնաց գործեաց ը երանելւոյն յովհաննու, պատասխանի արասցէ: Եւ ոչ միայն այս, այլ զոր անցոյց չարիս ը խիդորոս արժանագով օտարասէրն, և ը այլ ճգնաւոր սըն, քննութիւն արասցեն. վն զի պարտ էր նմ ունելով զաթոռ սբ Աւետարանչին, նմանիլ առաքինութեան նըմանա անդ գնալ ը պատուէրանի սբ առաքելոյն Պետրոսի՝ գլխաւորի առաքելոյն, և լինել օտարասէր և ածասէր, ըստ անուանն իւր թարգմանի: Արդ զգրեալդ իմ փութով կատարեսջիք՝ հոգ տարեալ վասն եկեղեցեաց Քի, և դուք

ողջ լերուք 'ի Քս՝ սիրելի որդեակք իմ:

Եւ յորժամ գրեաց զայս, կոչեաց զսևերիանոս, և զակակիոս՝ և ասէ ցնս: Դուք զսբ զայրն զայն, զհռչակաւոր

և

և զփականաւորն իմաստութք, և զերեքտասաներորդ առա-
քեալն՝ 'ի վայր արկիք յաթոռոյ։ Արդ բայէք զաջս մտաց ձերոց, և ծաներուք՝ թէ զի՞նչ գործեցիք. զի ոչ եթէ փոքր ինչ տանջանաց արժանաւորս յանդգնեցայք, որք նմանօղք եղէք չար գազանաց, և զայր արդար՝ որ ոչինչ էր ձեզ մեղուցեալ, խոպանում մատնեցիք։ Իսկ նոքա ըսեցին. քանզի ոչ ինչ ունէին տալ պատասխանի։ Իսկ նա դարձեալ ասէ ցնոսա. եթէ յայսմ հետէ լինիցիք որդիք զօրութե, յուսացեալ մեր 'ի զօրութի տն, և 'ի մարդասիրութի նորա։ Արդ առէք զթուղթս զայս, և տարայք տուք ցթագաւորն, զի գրեալ է մեր պատրաստել զթեօփիլոս 'ի ժողովն. այլ և դուք փութացուցէք զնա, զի մի՝ զահագին վճիռ սորայն 'ի յանձնիւր ընկալցի՝ եթէ ըստունկանիցէ։ Եւ զայս ասացեալ, արձակեաց զնս պատուով 'ի կոստանդնուպօլիս։

Իսկ թագաւորն արկադէոս՝ ընկալեալ զթուղթ հայրապետին ինովկենդիոսի, ուրախացաւ յոյժ, քանզի յոյժ փոյթ ունէր հնազանդութբ կատարել զհրամանս նորա։ Յայն ժամ առեալ գրեաց առ թէոփիլոս այսպէս։

Յամ կողմանս տիեզերաց խռովեցուցեր, և զքահանայս նր դառաճանեցեր, և դու գնայեր հասեր, և նստար ճոխութբ յիշխանութե քում։ Եւ արդ պատրաստեաց՝ զի եկեսցես հասցես վաղվաղակի, և հանդիպեսցես ժողովոյն 'ի թեսաղոնիկէ։ Քանզի ոչ գոյ քեզ փախչիլ ուրեք. վն զի յամ կողմանց գրաւեաց զքեզ յանդգնութե գործք

քո, քանզի սուդ պարտէ քեզ՝ քոյովքդ հանդերձ քննութիւն առնուլ 'ի ժողովոյն՝ վասն անիրաւ գործոյն, զոր գործեցեր արտաքոյ կանոնաց: Եւ արդ հնազանդեաց մերոց հրամանաց, և առանց պատճառանաց եկ, ապա եթէ ոչ՝ բռնութեամբ ածից, թէպէտ և 'ի վերջին շունչն առլուծանիլ մարմնոյդ իցես. քանզի հանդերձեալ է և Հայրապետն հռոմայ գալ հասանել 'ի յառաջ ասացեալ քաղաքն: Զայսպիսի հրաման իբրև ընկալաւ Թէոփիլոս, յամ կողմանց տարակուսեալ լինէր, և խելացնորեալ՝ անլոյս աղջամղջաւ նսեմացան միտք նորա: Ապա կոչեցեալ եպիսկոպոսս՝ հանդերձ կիւղաւ ազգականաւն իւրով. և առաքեաց զնոսա 'ի լեառնն նիտրիայասու՝ առ իսիդորոս, և առ այլս՝ որք յառաջագոյն հալածեալքն էին 'ի նմանէ, որպէս զի աղաչեսցեն, և պաղատանս մատուսցեն վասն նորա առ թագաւորն, և առ Հայրապետն: Եւ նոքա պատասխանի արարեալ ասեն ցսպասաւորսն. պատմեցէք նմա՝ ով հայր, եթէ մի՞ ինչ լքեալ լուծանիցիս տրտմութեամբ, զի դադարեաց խնդիր ժողովոյն, վասն զի երանելին Ինովկենդիոս կատարեաց ըզ ընթացս իւր, և փոխեցաւ յաստեացս 'ի հանդերձեալն. և արդ դու յայսմ հետէ անհոգ լեր յայդմ Թախանձանաց: Եւ զայս մարգարէացն վասն սրբոյ Հայրապետին՝ Ճգնաւորքն այնոքիկ. քանզի և այնպէս իսկ եղև, զի վախճանեցաւ մեծն Ինովկենդիոս, և Թէոփիլոս անհոգ մնայր 'ի ժողովոյն:

Եւ արդ պարտ է մեզ անդրէն դառնալ պատմութեամբ

'ի

'ի կարգ անդր, որ զկնի վախճանի երանելւոյն յովհաննու: Քանզի զկնի երանաւէտ մահուան նր՝ Ադելփիոս եպիսկոպոսն արաբիոյ, որ ընկալաւ զերանելին 'ի տան իւրում՝ յորժամ աքսորեցաւ նա անդ: Սա լուաւ զվախճան սրբոյն՝ յորժամ տանէին զնա յանբնակ աքսորսն, և տրտմեցաւ յոյժ վս անջատելոյ նորա 'ի նմանէ: Յայնժամ սկսաւ մտախորհ լինել՝ եթէ զիարդ այնպիսի այր՝ վարդապետ՝ և լուսաւորիչ տիեզերաց, որ բանիւն իւրով իբրև աղ համեմէր զամ եկեղեցիս, վախճանեցաւ արտաքոյ աթոռոյ իւրոյ 'ի տեղի աքսորանաց: Արդ մինչ դեռ նա զայս զմտաւ ածէր, եթէ ընդէ՞ր այնպէս ած թոյլ ետ լինել, և բազում արտասուօք ժտէր 'ի Տնէ զտեսչութիւն իրացն, թէ յո՞րում պատուի է նա: Եւ ահա́ յանկարծակի ետես այր մի ահաւոր տեսլեամբ, և կալեալ զաջոյ ձեռանէ նր, առեալ տարաւ զնա 'ի տեղի մի պայծառ յոյժ, զոր ոչ ոք կարէր պատմել զվայելչութիւն, և անդ ցուցանէր նմա զամ վարդապետս եկեղեցւոյ: Իսկ նա զգուշանայր՝ թերևս տեսցէ անդ զսիրելին իւր՝ զմեծն, և զհռչակաւոր անունն, և ոչ ետես: Եւ դարձեալ նոյն· այր ահաւորն յորժամ եցոյց նմա զամ հայրապետս ընդ իւրաքանչիւր անուամն՝ բայց 'ի յովհաննէ, առեալ զձեռանէ նր հանէր արտաքս· և նա իբրև գնայր տխուր երեսօք զհետ նր, վասն զի ոչ ետես զայն՝ որում փափաքէր: Ասէ ցնա այլ ոմն, որ կայր դռնապան 'ի վր դրանց այնմ լուսեղէն յարկացն· զի՞ է քեզ՝ զի՞ տրտմեալ ես այր դու· և նա ոչ ետ նմա պատասխանի վս

առա

առաւել տրտմութեան: Եւ նա դարձեալ ասէ ցնա. և ընդ էր ոչ պատմես ինձ վասն տրտմեալդ ես, վասն զի ոչ ոք է որ ասա մտանէ և տրտմի: Յայնժամ պատասխանի ետ եպիսկոպոսն Ադելփիոս՝ և ասէ. այս է տրտմութիւն իմ, վասն զի զցանկալին իմ զմեծ Պատրիարգն Կոստանդինուպօլսի՝ ոչ տեսանեմ ընդ վարդապետս եկեղեցեաց: Իսկ նա անդրէն պատասխանի ետ և ասէ ցնա. Ջապաշխարութեան վարդապետն ասեմ ըզ Յովհաննէս: Եւ նա ասէ այո՞: Եւ նա դարձեալ պատասխանի ետ և ասէ. տակաւին ՚ի մարմնի գոլով մարդոյ՝ ըզ նա անհնար է տեսանել. զի անդ է կարգեալ նա, ուր աթոռքն են Աստուածութեան, և պարակցութիւն սերովբէիցն: Եւ յայսմ բանից հաստատեալ Ադելփիոս, փառաւորեաց զԱստուած՝ որ յայտնեաց նմա զանքննելին ուրախութիւն, և զլուսեղէն յարկս հանգստեան սրբոցն, որք աստ նեղեալք չարչարին: Եւ յայնմ հետէ ոչ ևս մտախոհ լեալ տրտմէր, այլ ևս առաւել ուրախ էր յուսով հանգստեան արդարոցն:

Եւ արդ՝ չէ՞ արժան և զայնու զանց առնել, և կամ վարկպարազի ինչ պատմել. զոր ինչ անցք անցին ընդ այնոսիկ, որք զչարաչար դաւաճանութիւնս գործեցին՝ հակառակ Յովհաննու, զի մի վայրապար ինչ գործ թուեսցի բազմաց՝ թոյլ տալն այդ, և ներելն ՚ի վերայ այնոցիկ, որ անիրաւութեամբ չարչարեն զսուրբս նորա: Այլ զի՛ զնոսա պատկազգեստս ցուցանիցէ, որպէս և զերանելին յոբ. և ըզ չարսն՝ զի թերևս զղջասցին՝ և բազմաց աստէն հատուցանէ

նէ զչարիսն, զի հաւատարիմ արասցէ՝ թէ և անդ տանջելոց են՝ ոմն և սաստ։ Իսկ առ երանելի հայրն մեր յովհաննէս՝ տեսանեմք եղեալ զմատակարարութիւն այս, զի թէպէտ և առ ժամանակ մի թոյլ ետ դաւողացն՝ պատկաւոր զնա կամելով գործել. սակայն յետոյ զայնոսիկ՝ որք զհակառակսն գործեցին, և ոչ ապաշխարհեցին, չարաչար տանջանօք սատակեաց։ Զի բազում եպիսկոպոսք, և կղերիկոսք, և Ծականք՝ որք 'ի կողմանէն Թէոփիլոսեանցն էին, զանազան ախտիւք ելին յծէ։ Կէսք 'ի նոցանէ՝ ջերմ սաստիկ շարժեալ յոտվայնս նոցա, և իբրև հրով կատարեալ լինէին աղիքն, և այնպէս տոչորէին, և մեռանէին։ Եւ զգլխոց մարմինս՝ կիծ գազանադոյն ստիպէր, մինչ զի եղենգամբ՝ իբրև երկաթի քերչօք արեանուշտ առնէին, և այնպէս սատակէին։ Եւ ոմանք 'ի նոցանէ ջրգողեալք լինէին. և յանկարծակի պատառէին։ Եւ այլք՝ 'ի չերմ հողմոյ, և 'ի ցրտոյ՝ որ մտանէր 'ի դաստարակ ոսկերացն նոցա, և չորացուցանէր զձեռսն՝ որ գրէին յանիրաւ վկայութիւն վասն ամբիծ քահանայապետին։ Եւ մի ոմն 'ի նոցանէ՝ ահագին տապով տագնապէր, և այսպէս 'ի դժընդդակ ցաւոցն յերկարութենէ ժահահոտեալ լինէր, մինչ զի 'ի գարշութենէ որդունքն ծնանէին, և ոչ կարէր ոք ամենևին 'ի մօտ երթալ։ Եւ այլք՝ անկեալք յերկվարայն, ջարդեալք լինէին ոսկերք անդամոցն նոցա, և սրունքն ճեղքեալ՝ առ ժամայն վճարէին զկեանս աշխարհիս։ Եւ այլ ոմն ձեռօք կարկամեալ լինէր, և բերանն յայլ կողմն թիւրեալ

րեալ, և ոչ կարէր ամենևին առ կերակուրս զձեռնն 'ի ճաշակելեաց մերձեցուցանել։ Եւ մի ումն սրունքն նորա մինչև ցծունկն չորացեալ լինէր, և այնպէս՝ և այլ մարմին լուծեալ մեռանէր։ Եւ այլք՝ զլեզուսն կապեալ ունէին՝ և զատամունս կցեալ, և ոչ տային թոյլ լեզուին զբառ բնութեան խօսն կատարել։ Եւ այնպէս աստուածասաստ բարկութիւնն տարածեալ 'ի վերայ թշուառացելոյն զանբժշկելի ախտն, որպէս զի ճարտար բժիշկք սարսռեալ 'ի բաց փախչէին 'ի նոցանէ։

Իսկ Եւդոքսիա, նախ տեւատեւութեան ախտին տանջեալ՝ լինէր. և ապա սաստիկ ցաւովք ժահահոտեալ՝ որդնալից լինէր, և այնպէս մաշեցաւ մարմին նորա. և ոչ կարացին օգնել նմա գիտուն բժիշկք՝ թէպէտ և յամենայն ազգաց և անդր հաւաքեալ լինէին։ Քանզի բժիշկն բժշկաց եհար զնա սաստիկ ցաւովք. և այնպէս բղխէր 'ի նմանէ հոտ գարշութեան, մինչ զի ոչ կարէին բազում անուշահոտութիւքն արգելուլ զայն, թէպէտ և բազում անգամ արկանէին զնովաւ, այլ ամենեքեան փախչէին 'ի նմանէ։ Ապա 'ի զղջումն եկեալ, դարձուցանէր անդրէն՝ զոր ինչ յափշտակեալն էր յորդւոյն Թէոգնոստեայ, և զայլոց բազմաց, զոր ինչ յանիրաւի ագահեալն էր. սակայն ոչ ինչ օգտէր նմա, քանզի վրէժխնդրութիւն յԱստուծոյ էր նմա՝ վասն երանելոյն Յովհաննու։ Եւ հարցանէր ցբժիշկսն, թէ ընդէր ոչ կարէ ճարտար արուեստդ ձեր յաղթել հիւանդութեանս իմոյ և նոքա երկնչէին յայտնել նմա զանբժշ-

կելի

կելի ախտս. իսկ ինքն յոգւոյ եհան՝ և ասէ ցնա. Թէ ՚ի ձէնջ ծածկեալ է պատճառն, սակայն ես գիտեմ, և ասացից ձեզ. այս հիւանդութիւն՝ որ եկն ՚ի վր իմ, մասն Այ է, առ ՚ի վրէժխնդրութեն չարաչար գործոյն իմոյ, զոր արարի առ երանելի քահանայապետն Այ: Եւ եթէ նա ոչ աղաչեսցէ վն իմ զԱծ, զուր, և նանիր է արարեալ ձեր առ իս. և նր այսպիսի էր ախտն որպ ասացաք, և այսպէս վախճանէր:

Իսկ թագաւորն արկադէոս՝ կացեալ ժամանակս ինչ դուզնաքեայ զկնի կատարման երանելւոյն, վախճանեաց զկեանս իւր: Եւ թագաւորեաց զկնի նր թէոդոս որդի նր, որ փոքր անուանեցաւ: Յետ սակաւ աւուրց, և Թէոփիլոս աղեքսանդրացի անկաւ յախտ ինչ, զոր միզագրաւութեան գործն կոչեն, և այնպէս միզագրաւեալ չարաչար մեռանէր: Եւ յաւուր ոգեվարին՝ յամառեալ և ոչ ելանէր հոգին, և անտանելի ցաւօք տագնապէր, և ոչ ճարակ գտանէր, մինչև ասէր. տեսանեմ զտէրն իմ զՅովհաննէս, զի արգելու զհոգի իմ յելանելոյ. վն զի մեծ համարձակութի ունի առ Ած: Եւ ցմերձակայսն ասէր. խնդրեցէք զնա յօգնութի զի թողլ տացէ ինձ ելանել ՚ի մարմնոյս, զի վն բազում չարեացն զոր արարի ընդ նմա՝ դատապարտիմ, և ապա աւանդէր զհոգին՝ վճարելով ըզկեանս: Եւ յետ նր կալաւ զաթոռ եպիսկոպոսութե աղեքսանդրու՝ Կիւրեղ ազգականն նր: Եւ արդ. հասեալ մինչև ցայս վայր պատմութիս, շատ լիցի մեզ որ յաղագս վարուց երանելւոյն՝ և այլոցն, որ ընդ նմանէն գրեցաւ:

Յա

Յաղագս վերադարձման սուրբ մարմնոյն Յոհաննու Ոսկեբերանին 'ի Կոմանոյ 'ի Կոստանդինուպօլիս յաքսորոյ իւր։

Յայժմ հետէ պարտ և պատշաճ է՝ դուզնաքեայ յինչ գրել և յաղագս փոխադրութեն պատուական մարմնոյ նր։ Քանզի և գիտեմ իսկ 'ի սեռն սէրդ ձեր, զի յոյժ կամիք և փափաքիք լսել վն զի յոյժ սիրելի է բանասիրաց՝ լի բովանդակ աւարտել զպատմութիս եղելոյ, մանաւանդ որ յաղագս սբյն իցէ բան։ Եւ արդ յիշեցուցանեմք ձեզ. և քանզի բազում ժամանակս այրի մնացեալ լինէր եկեղեցի Քի 'ի սբ փեսայէ, և վն այնորիկ ամ ուրեք ցանկալ ցրուէին որդիք նր։ Իսկ երբեետես զայս ամ բաժանմունս՝ իմաստունն Պրոկղոս, ըզմտածէր. թէ չիք հնար այլ օրինակ միաւորել զբաժանեալսն՝ եթէ ոչ զայս արասցէ։ Յայնժամ զկնի երեսուն և երեք ամի փոխման երանելւոյն յովհաննու, առեալ գրեաց առ Թագաւորն Թէոդոս 'ի դէմս եկեղեցւոյն այսպէս։ Խնդրեա ով Թագաւոր զայն, որ զքեզ հրով Հոգւոյն սբյ և ջրով՝ 'ի սբյ, առաջանէն ընկալաւ 'ի գիրկս իւր, որպ երանելին Սիմէոնն զՔս 'ի տաճարին ըստ օրինացն։ Եւ արդ՝ գոչէ առ քեզ եկեղեցի. Զգեստ փառաց իմոց (ասէ) պատառեալ է. Բերան իմ փակեալ է. Գեղեցկութի իմ թխացեալ է։ Վն զի անուանեալ եղբարք իմ, որք են եղեալ որդիք մօր իմոյ, նախանձեցան ընդ պատիւ փառաց իմ, և մարտուցեալ

կող

կողոպտեցին զզարդ իմ. այսինքն զմեծն զայն՝ և զհրաշա
կաւոր անուն՝ Զբերանն ոսկի՝ զիմաստութն Հօտապետն
իմ՝ արտասահման արարեալ հալածական արարին ։ Եւ
վս այնորիկ՝ ես իբրև զծառ մի ձմերային՝ սառնամանօք
պաղեալ, և գօսացեալ կամ, ոչ ունելով զպտուղ շնոր-
թանց նր ։ Անպիտանացայ իբրև զոստ մի վարսաւոր և
պտղալից, որ յապաւեալ լինի 'ի նախանձոտաց ոմանց ։
Զմեծ զպարիսպն իմ, և զամուր՝ փլուցին, և զզէնն իմ յափշ
տակեցին. անհաւատից ազգ հեթանոսամիտ հերձուածողաց՝
յարուցեալ գան 'ի վր իմ 'ի պատերազմ ։ Եւ ես առանց
ամրութե, և առանց զինու, և իշխանի եմ, և վս այնորիկ
մարտնչել ոչ կարեմ ։ Եւ այժմ պարծին ասելով, լուեցաք
զլեզուն՝ որ պապանձեցուցանէր զմեզ, և փակեցաք զբե
րանն՝ և այլ ևս ոչ տեսուցանէ զընդդէմս մեր. ահա
յայսմ հետէ այլ ոչ ևս ընբերանեալ լինիմք 'ի նմանէ ։
Արդ ո՞վ Թագաւորն՝ մինչև ցե՞րբ Թշնամին նախատէ
զիս ։ Տուր ինձ զփոխանակն փեսային իմոյ Քի ։ Կացո
առաջի իմ մօր քոյ՝ զհոգևորական հայրն քո. զի Թէպէտ
և մարմնական մայրն քո ևդոքսիա՝ այսպէս անգութ և ան
գութ տուժեաց զիս. այլ դու մի նմանիր նորին նախան-
ձու չարութե ։ Այլ որբութե հոգւոյն մեր՝ որով ծը
նաւն վերստին, նմանօղ լեր հոգևոր հօրն քոյ, զգուտ և
զողորմութի, և զսէր, և զորբութի ստացեալ, առանց
որոց ոչ ոք տեսցէ զՏր ։ Ահաւասիկ ևդոքսիայ մայր
քո ըստ մարմնոյ մայր քո անցեալ գնաց. և ըստ հոգւոյս

մայրս

մայրս քո եկեղեցի, յորժամ և մշտնջենաւոր անուանէ ըզ քեզ ։ Արդ խոնարհեաց յաղաչանս իմ՝ լուսաւոր ծննդեամբն որդեակ իմ, և ուրախացո զիս տեսլեամբ, և սիրով հոգւոր հօրն քում յովհաննու. որպ և եսդ իսկ որդի զօրութե, և պտուղ աղօթից նր ։ Զայսպիսի մխիթարս գրեաց իմաստունն պրոկղոս ՚ի դլխաց եկեղեցւոյն առ հեզն Թեոդոս Թագաւոր. որպ զի հրաման տայցէ բերել ՚ի կոստանդնուպօլիս զպատուական և սբ մարմինն երանեալ ոսկեբերանին ։ Եւ նա վաղվաղակի հրամայեաց, փութապէս ածել անդ զնուիրեալն մարմին ։ Իսկ առաքեալքն ՚ի Թագաւորէն, հասեալք ՚ի կոմանայ, և ձեռն ՚ի գործ արկեալ առեալ բրիչ կամէին բանալ զգերեզման երանելւոյն ։ Եւ նա ոչ տայր թոյլ բանալ զգերեզմանն իւր. վն զի ոչ գծէր անդ երկաթ, նաև զօրութի իմն ահաւոր, Թէպէտ և բազում անգամ ջանացան, այլ այնպէս երևէր նոցա իբրև զանդամանդ, զոր ոչ կարէ ազդել ՚ի նմա երկաթ ։ Այլև սքանչելիք իմն սոսկալի աներևոյթ ըմբռնմամբ անգործ առնէր զձեռս նոցա՝ իբրև կապանօք իմն ։ Իսկ նք հանդերձ բնակչօք տեղւոյն՝ անկեալ ՚ի վր երեսաց իւրեանց, արտասուս յորժ հեղուին առաջի սբ գերեզմանի նր ։ Եւ սկսան խոստովանել առ միմեանս. ո՞չ ապաքէն և սիրտք մեր ճմլէին ՚ի մեզ, յորժամ անարժանապէս բանալ կամէաք զգերեզման երանելւոյն ։ Յայնժամ ազդ առնէին Թագաւորին ՚ի ձեռն թղթոյն՝ զեղեալ սքանչելին ։ Իբրև լուաւ զայս Թագաւորն, տարակուսեալ ՚ի միտս իւր, սկսաւ

հա

հառաչէր առ ած 'ի բոլոր սրտէ, զի մի զրկեսցի նա 'ի բաղձագին մարգարտէն։ Յայնժամ լցան իմաստութեամբ հոգւոյն Թագաւորին, և կոչեցեալ առ ինքն զեպիսկոպոսապետն հանդերձ կղերիկոսօքն, և բազում ժողովըրդովքն. և ասէ ցնս։ Ես այսպէս կարծեմ եղբարք, եթէ չնկ հրաժարեաց երանելի ոսկեբերանն գալ առ մեզ, վն զի ոչ խնդրուածովք հայցեցաք զգալուստ նր առ մեզ. այլ իշխանութբ առաքեցաք իբրև հրաման տալով։ Արդ՝ եկայք այսուհետև պաղատեսցուք առ նա, զի թերևս գըթացեալ հաճեսցի ընդ մեզ։ Եւ հաճոյ թուեցաւ բանք Թագաւորին առաջի հայրապետին, և բազմութեն, և համարեցան այ ազդել զայն 'ի սիրտ նր. ըստ այնմ թէ՝ սիրտ իշխանի 'ի ձեռս այ է. (Առակ. 12. 11։) Եւ վաղվաղակի առեալ Թագաւորն քարտէս, և գրեալ ձեռօք իւրովք այսպէս։ Մեծի՝ և սրբոյ՝ և տիեզերաց վարդապետի՝ երանեալ հօրն մերոյ Յովհաննու. Թէոդոս Թագաւոր հոգևոր ծննդեանն որդի քո, երկրպագանէ քեզ, և մեծաւ հառաչանօք ողջոյն տայ։ Յառաջագոյն անգիտացեալ մեր, և իբրև մեռեալ համարելով ըզ մարմին քո, առաքեցաք իշխանական հրամանաւ ածել ըզ քեզ, և յիրաւի ոչ արժանաւորեցաք։ Բայց այժմ իբրև առ Ճշմարիտ կենդանի, ես ինքնին ձեռօք իմովք գրեմ, և ժտելով հայցեմք զթողութիւն ինձ, և ամ ժողովրդեանս. ներեա ինձ որդւոյ քոյ, որ ոչ հասու եղէ խորին քոյ իմաստութեդ։ Եւ արդ ծանուցեալ աղաչեմ, և ոչ եթէ

հր

հրամայեմ, մի դարձայց երրորդ անգամ աղաչեցեալ տուր ինձ զօրութիւն քո, որ փախուցիմն ՚ի քեզ ։ Եւ խաղաղացո զամբոխեալ, և զխառնակեալ ժողովուրդս քո ։ Եւ մխիթարեա զվշտացեալ որդիքս քո, զորս վերստին հոգւով, և ջրով ծնար, և սնուցեր անարատ ստեամբք երկնաւոր վարդապետութեան, և այժմ ընծայեցեր ։ Զայս գրեաց մեծ թագաւորն, և առաքեաց վաղվաղակի ։

Իսկ առաքեալքն տարան և եդին ընդ թուղթն ՚ի վերայ գերեզմանին ։ Եւ առ ժամայն ինքնին բացեալ լինէր, և բուրեաց հոտ անոյշ իբրև զնարդեան ազնուի ։ Եւ բարձին զմարմին նորա՝ սաղմոսիւք, և օրհնութեամբ, և երգովք հոգևորովք ՚ի գերեզմանէ անտի ։ Որ էր ամենևին անպական մնացեալ. զի և հեր մի ոչ էր անկեալ ՚ի գլխոյ նոր՝ նաև տեսիլ մարմնոյն այնպէս զուարթ և վայելուչ երևէր՝ իբր թէ կենդանի էր ։ Եւ յորժամ պատեցին զնա պատուական հանդերձիւք՝ ըստ հրաման առին ՚ի թագաւորէն, և վերաբերեալ եդին յեկեղեցւոջն, և ընթացան ամենայն կղերիկոսք եկեղեցւոյն այնորիկ, և բազմութիւն քաղաքին երկիրպագանել նմա ։ Պատահեաց անդ այր մի կաղացեալ, որոյ ոտն իւր խեղեալ էր ՚ի հարուածոյ թշնամւոյ գազանէ ։ Եւ յարուցեալ և նա՝ եկն ընդ առաջ սրբոյն յերկրպագութիւն, և առեալ փոքր ինչ կտաւ ՚ի հին պատանացն սրբոյն, պատեաց ընդ ոտն իւր կաղացեալ, և վաղվաղակի պարզեցաւ կարկամեալ ոտն նորա. և այնպէս ողջացաւ իբրու թէ չէր երբէք վշտացեալ. և եղեալ յեկեղեցւոյն՝ շրջէր ամենայն

տմ ուրեք, և օրհնել զած: Որ է բառ նորգի Լիպառոննեսորդ-
ոտանչելի: Նաև այլ սքանչելիքն բազում, զոր արար. և
երգն օրհնութեց, զոր մատուցին անդ, գրեալ է յայլոց
իմաստնոց, որ զվերաբերումն մարմնոյ նորա 'ի Կոստանդի-
նուպօլիս պատմեցին նախ քան զմեզ:

Իսկ երբև տեսին արք տեղւոյն այնորիկ զյանկարծահաս
սքանչելիքն, յառաջ մատուցեալ իւրաքանչիւրոք 'ի նոցանէ՝
յափշտակէին 'ի պատանաց սբ մարմնոյ, և ընդունէին զիւրա-
քանչիւր ցաւոց առողջութի. և ամենեքեան փառաբանէին
Տն մատուցանէին որ առնէ սքանչելիս միայն 'ի ձեռն սբց
իւրոց: Եւ բերէին ամ իւրաքանչիւր կարի՝ հանդերձս ազ-
նիւս, և ծածկէին զնա: Իսկ երբև կամեցան հանել զնա
յեկեղեցւոյն, որք առաքեցան 'ի թագաւորէն՝ առ 'ի ձա-
նապարհել ըստ հրամայեցաւ նոցա, զալաղակ բարձեալ
բազմակոյտ ամբոխն, արք և կանայք, ոչ տային թոյլ տա-
նել զնա, և ձայնիւ մեծաւ ողբ առեալ գոչէին ասելով:
Եթէ զոր առաքեաց ած մեզ բժիշկ և փրկիչ, զի արդ
թոյլ տայցուք զայն բառնալ 'ի մէնջ. և անդ եղև աղաղակ
մեծ և պատերազմ: Եւ երբև տեսին արքն այնոքիկ զե-
ղեալ խռովութին քաղաքին, առեալ զհրամանս թագա-
ւորին ընթեռնուին առաջի նոցա. և նոքա զարհուրեալք
'ի սպառնալեացն, հազիւ ուրեմն հնազանդեցան: Իսկ նք
առեալ զպատուական մարմին երանելւոյն, և հանեալ 'ի
կոմանայ, ածին 'ի թագաւորական քաղաքն: Յայնժամ բազ-
մութիւք կրօնաւորաց, և կղերիկոսաց, և այլ ամբխի

բազ

բազմակոյտ ամբոխք՝ ընդ առաջ ընթացեալ նր, բազում և երևելիք սպասուք, և ազնիւ խնկօք, մեծ գոհութի այ մատուցանէին, և յայնմ աւուր բազում ախտաժէտք առին զբժշկութիւն: Իսկ նաւն՝ յոր եդեալ էին զսուրբ մարմինն, առեալ փաղփաղակի տանէր յանդէպ այգւոյ այրւոյն: Եւ Թադէոսն, և քահանայապետն, և ամ բազմութի ընդ առաջ ընթացեալ յայն նաւահանգիստ, ուր էր տաճար երանելի առաքելոյն Թովմայի. և անդ ընկալեալք զնա, զգիշերն ամ հանէին ի գլուխ յաղօթս այ: Եւ յորժամ այգ եղև, ամենքեան առ հասարակ, արք և կանայք, ծերք և տղայք, տեարք և ծառայք, բարձեալ ի ձեռս իւրեանց ջահըս, և այնպէս երկրպագելով համբուրէին զսբ մարմինն: Եւ ապա Թադէոսն՝ լծեալ կառս ոսկեկուռս, և ամբարձեալ եդին ի վր նր զգանձն ածային: Իսկ պրոկղոս մեծ քահանայպետն՝ լի հաւատով ելեալ ի կառսն, ընդունէր զհաստատութիւն եկեղեցւոյ: Եւ այսպէս մեծաւ փառօք մտին ի քաղաքն. և տարեալ մուծին զնա ի տաճար սբ առաքելոյն, և նստուցին յաթոռ քահանայապետութե:

Յայնժամ Թադէոսն անկեալ զլանջօք երանելւոյն, պաղատանս մատուցանէր առ նա ի դիմաց մօր իւրոյ և դոքսիայ, այսպէս ասելով: Հայր սբ, և վարդապետ, և լուսաւորիչ տիեզերաց, Թող զյանցանս իմ, զոր ակամայ ի վր իմ եկին հասին վս վշտակրութե այնոցիկ, որ հակառակ քո յանդգնեցան: Քանզի՝ թէ և առ նա վրէժխնդրութի քո լցէ ի հարկէ, արդեօք և ես լինիցիմ պատժա

ծառայելոյ մատակարարութեան մօր իմոյ։ Զի ըստ հնոց առա-
կացն՝ յագոխանալ հարցն ատամնառութեան, պէսպէս բար-
կութիւն որդեաց պահեսցի։ Զի թէպէտ և հրամանաւ
Աստուծոյ այս առակ ասացեալ եղև. սակայն ասաց մարգարէն
յերեսաց Աստուծոյ, ոչ լինել այսպէս. այլ որք ուտեն զագոխն՝
նոցին առցեն ատամունքն. (Եզեկ. 18. 2։) Բայց թէ
և այսպէս, սակայն կասկածեմ զուցէ ընդ նմա պատժեցիմ։
Նաև ոչ կարեմ այդպիսի քահանայապետի կոչել զիս նը-
մանօղ որդի, յորժամ ընդ դատապարտութեամբ իցեմ։ Այլ
եթէ ներեսցես յանցանաց նորա, և ես մաքրեցայց 'ի պարսա-
ւանաց կարծեաց։ Եւ վասն այնորիկ զիշխանութիւն թագա-
ւորութեան իմոյ սփռեալ տարածանեմ 'ի վերայ ծնկաց քոց,
և հնազանդեցուցանեմ 'ի պաղատանս. ընկալ զմեղանչա-
կանս 'ի քեզ, որ 'ի ձեռն իմ խօսի ընդ քեզ այսպէս։
Հայր մեր, և վարդապետ. զի թէպէտ և իշխանական բըռ-
նութեամբ տրտմեցուցի զքեզ բազում անօրէնութեամբ իմով.
բայց այժմ ատրջացեալ եմ 'ի գործս իմ, և ոչ ոք իցէ որ լու-
ցէ ձայնի իմոյ, և ողորմի ինձ, և ազատէ զիս 'ի դըրպարտու-
թենէ տանջանացս, որ ապականէ հանապազօր զմարմինս իմ.
եթէ ոչ դու ինքնին նախ խնամարհեսցիս, և ողորմեսցիս
'ի վերայ իմ։ Յիշեա ո՜վ տէր իմ՝ և զանոխակալութիւն քո,
զոր դու միշտ վարդապետէիր. որ ասէիր զքաջալերութ-
եանն՝ յորդորելով զմեղաւորս յապաշխարութիւն։ Մի՛ եկի՛ն
չէր՝ [illegible] անձանց, [illegible]
[illegible], [illegible]։ Եւ արդ ես ահաւասիկ առաջի քո ա-
րա

ըմբռնեմ զաղաչանս իմ, և խոստովանիմ զանօրէնութիւնս իմ։ Կարկառեա զձեռն քո և կանգնեա զիս, վասն զի այլ ոք ոչ կարէ բաւել բառնալ զիս ՚ի տանջանաց, քո տըրտում լինելով ՚ի վշտի իմ։ Զի ահաւասիկ և գերեզման իմ շարժի հանապազ վասն քո, և ոսկերք իմ փշրին, և ես զարհուրիմ յօրինակէս յայսմանէ. գուցէ և առաջի ահաւոր բեմին Քրիստոսի՝ ես առաւել սարսռեալ դողացայց հաստատութիւնք իմ։ Զբազում կեցուցեր քոյին քաղցր և հեզ վարդապետութեամբդ, մի՛ զիս միայն որոշեսցես ՚ի քո փրկութենէդ. և մի՛ թողուր զիս գոչել զկնի քո, այլ խնդրեա զվրէժ իմ յընդդիմամարտէն իմմէ սատանայէ։ Այլ զի նա պատրաստեաց ինձ զգայթակղութիւն մեղանչել քեզ, տուր յառաջագոյն պատրեաց զԵւայ մեղանչել Այ։ Մի բարկանար մինչև իսպառ ՚ի վերայ իմ. զի որ ոչն ես սատացեալ ՚ի այսմ ապականացու կենացս, մի՞թէ ստանայցես արդեօք ՚ի այդմ երանելի, և անապական կենացդ։ Յորժամ ես կենդանի էի, և զառժամանակեայ և զանցաւոր կեանս սիրէի, միշտ խրատէիր զիս պարտեալ լինել ՚ի յաւիտենական կեանսն, թէպէտ և ես ինձէն մատն եղէ անձին իմոյ, և չասակար երևեցայ առ քեզ։ Իսկ այժմ, յորժամ դու կենդանի ես առաջի Քրիստոսի, ո՞չ լինիցիս օգնական անձին իմոյ՝ փրկիլ ՚ի մշտնջենական ապականութենէն, և ընդունիլ զյաւիտենական կեանսն. զի ահաւասիկ անցեալ գնացին ամ̄ ապականելի փառքն իմ, և ոչ կարեն օգնել ինձ։ Դու այժմ օգնեա ինձ հայր սբ̄ Ճշմարիտ փառօք քո՝ նախ քան ըզ

պա

պատասխանատուութիւն, զոր պահանջէ յինէն արդար դա-
տաւորն քս վս քո, յահեղ և ՚ի սոսկալի դատաստանին։ Այլ
զի՝ դու եթէ ոչ ողորմեսցիս ինձ, և թողցես զյանցանս իմ,
ես ամենևին անպատասխանի գտանիցիմ։ Արդ զայս ամ
պաղատանս յերեսաց մօր իւրոյ մատոյց թագաւորն թէո-
դոս՝ մինչդեռ անկեալ կայր զլանջօք երանելւոյն։ Եւ ոչ
կամէր ամենևին ՚ի բաց մեկնել ՚ի նմանէ՝ մինչև յայտնութի
եղիցի նմա, եթէ լսելի եղև պաղատանք նր։ Նաև անուշա-
հոտութիւն՝ որ բուրէր ՚ի սբ մարմնոյն՝ իբրև յածատունկ
դրախտէն, հեշտացուցանէր զթագաւորն՝ յամել բազում
ժամանակս ՚ի վր լանջաց երանելւոյն Ոսկեբերանի։ Մինչ
զի ուրախանայր յարտասուելն, թեթևանայր ՚ի հառաչելն,
սփոփեալ լինէր ՚ի պաղատելն, զուարճանայր ՚ի համբու-
րելն. և այնպէս երևէր՝ որպ թէ ընդ նմին մեռեալ լինէր
կենդանութբն։ Բայց և զայն մեծ հանգիստ իւր համարե-
ցաւ՝ քան զթագաւորական ոսկիակուռ բազմականսն, քանզի
յոյժ զուարճանայր յորժամ տեսանէր զսբ մարմինն ամբողջ
մնացեալ։ Որ և ոչ անգամ գունատեալ էր, և կամ երեսքն
թարշամեալ՝ իբրև զակաւօրեայ հիւանդի։ Այլ զուարթ
դիմօք, գեղեցիկ տեսլեամբ, և յարմար անդամօք՝ ցուցա-
նիւր իբրև զհրեշտակ այ։ Եւ վս այնորիկ թագաւորն
անտես առնէր զիշխանութիւնն իւր՝ և զհանգիստն, և քան
զամ թագաւորական արքունիսն՝ զայն լաւագոյն իւր հա-
մարէր։ Որ և անդէն իսկ ՚ի ձեռն մեծ հաւատոյ նր, եգիտ
զթողութի ՚ի մեծէ Ոսկեբերանէն՝ Եւդոքսիա մայր նր.

քան

քանզի զերեսուն և զերեք ամ շարժէր գերեզմանն նր̅։ Իսկ յորժամ խոնարհեցոյց որդին նր̅ զգլուխ իւր 'ի վր̅ լանջաց սբ̅յն 'ի պաղատանս, ընդ կատարումն աղօթիցն՝ և դադարեաց շարժումն, և ամենեքեան փառաւորեցին զա̅ծ, և հաստատեցան 'ի սիրտս իւրեանց, թէ արդարև թողան մեղք և դոքսիոյ։ Յայնժամ և ձայն իբրև 'ի կենդանւոյ՝ լսելի եղև յերանելի մարմնոյն. Զամօրական զխաղաղութի̅ ա̅յ՝ առ հասարակ ա̅մ բազմութե̅ տալով։ Իսկ իբրև ժողովուրդն արձակեցաւ յիւրաքանչիւր տեղիս, մատուցին անդ այր մի, որոյ ոտք իւր երկոքեան, և ձեռքն կարկամեալ էին, և 'ի բազում ժամանակս էր՝ որ չէր կոխեալ յերկիր ոտիւք իւրովք, այլ՝ յայլոց բարձեալ լինէր։ Նա և ոչ շարժէին ձեռք նորա՝ առ 'ի բառնալ կերակուր, և մերձեցուցանել 'ի ծամելիսն, բայց եթէ յայլոց առեալ լինէր. քանզի ամենևին լուծեալ էին ոտք, և ձեռքն նր̅ յօդից, և սրունք ոտից նր̅, և դաստակք ձեռացն սրեալ էին իբրև զկոճս եղեգան։ Արդ զայնպիսի չարչարեալն անդամօք՝ առեալ լի հաւատովք, և արտասուալից պաղատանօք՝ մերձեցուցանէին 'ի սբ̅ մարմինն, և առժամայն բժշկեցաւ։ և սկսաւ փառաւորել զա̅ծ։ Եւ ամենեքեան՝ որք տեսին զսքանչելիսն, տային օրհնութի̅ ա̅յ. և ուր երթայր համբաւ սքանչելեացս, մեծ գոհութի̅ տ̅ն մատուցանէին, որ այնպէս մեծապայծառ փառաւորէ զփառաւորիչս իւր, և զատելիս նոցա յամօթ առնէ։ Սանչէլի Երկնապատաններորդ։ Զի թէպէտ և թոյլ տայ առ ժամանակ մի գործել նոցա ըստ չարութե̅ իւ-

րեանց

րեանց, սակայն այնու առաւել ևս պայծառագոյնս գործէ նոքօք յաղթութի։ Որպէս՝ և զերանելին Յոբ պսակաւոր գործէր, և զայն՝ որ մեծամեծս խրոխտայր 'ի վր նր, ծաղր և այպն կատականաց կացուցանէր՝ զիշխանն ամ դիւաց ըզ բանսարկուն։ Սոյնպէս և զողջախոհ իմաստունն Յովսէփ, որ թէպէտ և 'ի նախանձոտաց եղբարց իւրոց վաճառեալ եղև, սակայն զնր ծառայս նմա առնէր. զի և երկիրպագանէին նմա իբրև Տն, և թագաւորի, և աղերս մատուցանէին։ Նոյնպէս և ըզ մեծն Մովսէս՝ թագաւոր եգիպտացւոցն կացուցանէր, այլ և ած փարաւոնի ձեռնադրէր։ Ըստ նմին օրինակի, և զիմաստունն Դանիէլ՝ հանդերձ երից մանկամբքն, զգերեալսն և զծառայս առեալսն՝ իշխանս ամն բաբելացւոցն կացուցանէր։ Այսպէս և զերանելի Առաքեալսն, և զամենասուրբ Մարտիրոսն՝ յորժամ կարծէին չարին գործունեայքն, թէ յաղթեցաք 'ի ձեռն զանազան տանջանաց, և չարաչար մահուանցն, զոր ածէին 'ի վր նոցա. առ նմին և յաղթեալք գտանէին 'ի նոցին։ Քանզի 'ի ձեռն ածային սքանչելեացն, որ լինէր 'ի ձեռս նոցա, նոքին իսկ սպանողքն՝ երկիրպագանէին նոցա իբրև թագաւորաց և իշխանաց, և աղերս մատուցանէին նոցա։ Նոյն օրինակ՝ և առ Երանելեաւս այսուիկ՝ մեծ քահանայապետիւս կատարեաց ած։ Զի զայն՝ որ առ նախանձու՝ չարութե, և կամ վս անօրէն գործոց իւրեանց՝ ոչ կարէին տանել զ յանդիմանութի նր, և վնկ աքսորեցին զնա։ Զնր չարաչար տանջեաց, որ յուսաշագոյն պատմեսցուք. և զսա 'ի

ձեռն

Ձեռն այսպիսի նեղութեանց՝ եւ լուսաւորագոյնս գործեց-
աստ եւ 'ի հանդերձեալն :

Արդ՝ այս են վարք երանելի հօրն մերոյ Յովհաննու ոս-
կեբերանի, եւ տիեզերական վարդապետի, եւ ամ եկեղեցեաց
Քի լուսաւորչի : այս եւ կատարումն նորին, եւ անդրափո-
խումն, զոր փոքր 'ի շատէ պատմեցաւ 'ի մէնջ : Բայց
ոչ վերագոյն յիշատակեցաք. թէ ոչ եղև անդրափո-
խումն մարմնոյ նորա. եւ կամ ոչ բերաւ 'ի կոստանդնուպօլիս.
Եւ կամ, զիարդ եղև, կամ որպիսի այլ բաղում սքանչե-
լիքն. կամ թէ՝ ոչ նստուցին յաթոռ հայրապետութեան.
եւ կամ թէ՝ ուր եդին զնա. Եւ կամ թէ՝ զի արդ 'ի մի
հաւաքեալ պահեցան սորա կտակարանք նորա. եւ եթէ՝ [illegible] քանի
ամութեան թուոյ էցեն, որք շարադրեցանն : Բայց մեզ
պարտ եւ պատշաճ է այսուհետեւ կնքել զպատմութիւս մեր
աղօթիւք սբյն : զի այս ամ՝ յայլոց իմաստնոց, լի բովան-
դակ գրեցաւ, զոր նշանակեցաք : Եւ մեք լռումն արարաք
բանիս պատմութեան, շնորհօք սբ Հոգւոյն, 'ի նոյն ինքն
'ի Քս Յս 'ի տր մեր : Ընդ որում Հօր միանգամայն,
եւ Հոգւոյն սբյ՝ վայելէ փառք իշխանութեան, եւ պատիւ,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից : Ամէն :

Վ Ե Ր Ջ :

Ցանկ գլխոց, և նշանաւոր իրաց, որք պարունակին յայսմ Պատմագրութեան սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի: Յորում թիւքն՝ ցուցանեն զերեսս թղթոց, առ 'ի դիւրաւ գտանել զխնդրեցեալ նիւթն:


Առաջաբանութիւն արարողի պատմութեանս: երես 1:

Յաղագս ծնողաց, և մանկութեան սրբոյն յօհաննու: ... ... 5:

Յաղագս գնալոյ յԱթէնս և ուսման: ... ... ... ... 11:

Պատասխանի սրբոյն՝ առ Անթիմէ: ... ... ... ... ... 15:

Առաջին սքանչելիքն, զոր արար: ... ... ... ... ... ... 38:

Երկրորդ սքանչելիքն: ... ... ... ... ... ... ... ... 39:

Երրորդ սքանչելիքն: ... ... ... ... ... ... ... ... ... 45:

Չորրորդ սքանչելիքն: ... ... ... ... ... ... ... ... 46:

Հինգերորդ սքանչելիքն: ... ... ... ... ... ... ... ... 48:

Դարձումն սրբոյն առ Անտիոք: ... ... ... ... ... ... 53:

Յաղագս ժողովոյ եղբարց, և ընտրութեան առաջնորդաց 'ի Հոգւոյն սրբոյ: ... ... ... ... ... ... ... ... 56:

Մտանելն սրբոյն յԱնտիոք, և ձեռնադրիլն 'ի քահանայ: 60:

Վեցերորդ սքանչելիք: ... ... ... ... ... ... ... ... 65:

Եօթներորդ սքանչելիք: ... ... ... ... ... ... ... 67:

Հրաւիրիլ սրբոյն յօհաննու 'ի Կոստանդնուպօլիս, առ 'ի լինիլ Հայրապետ: ... ... ... ... ... ... ... 75:

Թուղթ արկադէոսի առ փլաբիանոս վասն սրբոյն յօհաննու: 76:

Մտանելն 'ի Կոստանդնուպօլիս, և ձեռնադրիլն 'ի Պատրիարգ: ... ... ... ... ... ... ... ... ... 81:

Ութերորդ սքանչելիք՝ ըստ կարգի։ . . . . . . . . . 89։
Խրատական թուղթ սրբոյն՝ առ Եւդոքսիայ թագուհին։ 111։
Վերստին թուղթ առ Եւդոքսիայ։ . . . . . . . . 115։
Յաղագս ընկճելոյն արիանոսաց, և մակեդոնեանց։ 119։
Իններորդ սքանչելիք։ . . . . . . . . . . . . . . 125։
Յաղագս այլոց իրաց, որ եղև 'ի ժամանակս սրբոյն։ . 129։
Վասն նախանձայոյզ գոլոյ սրբոյն՝ առ Աստուածային իրաւունս։ 138։
Յաղագս դաւաճանութեան հակառակորդացն, և մանաւանդ Թէոփիլոսի պատրիարգին։ . . . . . . . . . . . 146։
Յաղագս այլոց դաւաճանութեանց Թէոփիլոսի։ . 153։
Յափշտակելն Եւդոքսիոյ զայգի այրւոյն, և խրատ սրբոյն առ նա։ . . . . . . . . . . . . . . . . . 164։
Գալուստ Թէոփիլոսի 'ի Կոստանդնուպօլիս, և աքսորումն սրբոյն Յովհաննու։ . . . . . . . . . . . . 179։
Դարձումն յաքսորանաց սրբոյն Յովհաննու 'ի Կոստանդնուպօլիս յաթոռն իւր։ . . . . . . . . . . . . . . 192։
Տասներորդ սքանչելիք ըստ կարգի։ . . . . . . . . . 211։
Յաղագս անցիցն, որք եղեն զկնի արտասահմանութեան սրբոյն Յոհաննու։ . . . . . . . . . . . . . . 214։
Թուղթ Ոնորիոսի առ Արկադէոս։ . . . . . . . 221։
Յաղագս այլոց նշանաւոր իրաց, որք գործեցան յետ աքսորման սրբոյն Յովհաննու։ . . . . . . . . 224։
Վերստին թուղթ Ոնորիոսի առ Արկադէոս։ . 227։
Հետևեալն այլք իրակութիւնք, որք եղեն յետ վախճանի սրբոյն Յոհաննու։ . . . . . . . . . . . . . . 240։

Թուղթ

Թուղթ Ենովկենդիոս Հայրապետին առ Արկադէոս։ 241։

Այլ թուղթ Ոնորիոսի առ Արկադէոս եղբայր իւր։ 243։

Պատասխանի Արկադէոս Թագաւորին առ Հայրապետն Ենովկենդիոս։ . . . . . . . . . . . . . . . . 245։

Գրեալ Ենովկենդիոսի միւս անգամ առ յԱրկադէոս և յԵւդոքսիայ։ . . . . . . . . . . . . . . . . . . 249։

Թուղթ Արկադէոսի առ Թէոփիլոս։ . . . . . 251։

Յաղագս վերադարձման սրբ մարմնոյն յօհաննու ոսկեբերանին ՚ի կոմանոյ ՚ի կոստանդնուպօլիս յաթոռ իւր։ 258։

Մետասաներորդ սքանչելիք։ . . . . . . . . . . . . . . 263։

Երկոտասաներորդ սքանչելիք։ . . . . . . . . . . . . . 267։

Վասն սղալմանց տպենիս։

Արժանի վարկանեմ, զեկուցանել զբարեսէր ընթեր
ցողացդ մատենիս՝ զի յորժամ ձեռն արկի տպել
զպատուական՝ և սքանչելի վարս սբյն մեծի
յովհաննու ոսկեբերանին որ 'ի Թուին 1752 տպեցեալ էր՝
գիրքս այս 'ի մեծի տպարանին հարց մխիթարեանց․ զոր հա-
տատեալէ 'ի վենետիկ, գտայ անդ լի՝ և անթիւ սղալմունս
որոյ յիացումն՝ և զարմացումն երևեաց ինձ զի այնպիսի մեծ
և արժանաւոր գիտնօք, և բազմախուռն անձամբ ճոխացելով
հաստատեալ տպարանին․ զիարդ է՞ եղեալ այսքան զան-
ցառումն սրբագրութե, որ իրաւի բազում ժամս անմ-
ռունչ լեալ տեսանէի՝ առ երազ երևէր ինձ, և յորժամ մը
տառութե հասու եղէ՝ ոչ էր հինգ կամ տասն սղալանս
այլև բազում․ զի հաւաստի ասեմ որ ու համարոյ թղթոյ են
սղալմունք նորին։ Ես ու կարծեաց խմոցյեաննեալ՝ և թշուա
ռեցեալ տպարանէ տպեցեալ մատեանս ոչ երբէք լինին,
և լինելոցեն այսքան անհամար սղալմունս․ սակս որոյ պար-
տաւորեալ եղէ մինչև 'ի III թղթահամարն գրքոյս համե-
մատ հեղինակին սղալն եդի․ և ուղիղն դիմաց եդի, վասն
բարեսէր ընթերցողացդ դիւրութիւն լիցի, թարց այլինչ
մտածողութեց։ Յետ այնու մինչև ցաւարտ գրքոյս սղալ
մունս որոշելով ուղիղն եդի, և եթէ սղալմունք ինչ յաւէ
լի գրոցի առ՝ թէ տառից՝ և եթէ բառից՝ և բանից՝ ոչ է
յինէն սղալեցեալ այլ 'ի հեղինակէն։

Սոո

Ստորև ցուցանին սղալմունս հեղինակին թղթահամարաւ այսպէս։ հանճարեղ թղթահամարն Հեղինակին 18 յերես և 5 տող։ և թղթահամարն սորին 15 յերես 9 տող· ամենայնն այսպէս իմա։ Նախ հեղինակին թղթահամարն և տողն ցուցանէ· Յաւսկ յետոյ գրքոյս։

| | | | | |
|---|---|---|---|---|
| հանճարեղ | 18· | 5· | 15· | 9։ |
| ղաչըյ | 33· | 1։ | 27· | 25։ |
| մատակարարսն | 35· | 30։ | 30· | 12։ |
| գետնաշխատունս | 38· | 11։ | 32· | 14։ |
| յերկիւղ | 38· | 29։ | 32· | 25։ |
| խօսեայ | 42· | 7։ | 35· | 21։ |
| ՚ի տեառնէ | 42· | 9։ | 35· | 22։ |
| հաւատայցես | 48· | 19։ | 41· | 10։ |
| մկրտեցան | 60· | 19։ | 51· | 19։ |
| փարաւոնի | 65· | 4։ | 55· | 17։ |
| պատուականօք | 67· | 17։ | 57· | 22։ |
| ՚ի կոստանդնու | 93· | 18։ | 80· | 11։ |
| թագաւորին | 93· | 19։ | 80· | 12։ |
| ուսուցանէր | 107· | 17։ | 92· | 5։ |
| խորատակմանս | 107· | 23։ | 92· | 9։ |
| յարաժամ | 107· | 27։ | 92· | 12։ |
| տայցի | 107· | 31։ | 92· | 14։ |
| առաքինի | 108· | 12։ | 92· | 23։ |
| յորժամ | 109· | 22։ | 93· | 25։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| մտանել | 110. | 6: | 94. | 11: |
| երկրորդ | 110. | 7: | 94. | 11: |
| հարգիլ | 111. | 27: | 95. | 20: |
| տաղտկացան | 112. | 27: | 96. | 16: |
| բարեզարդութ̈ | 113. | 15: | 97. | 3: |
| զսահման | 114. | 29: | 98. | 8: |
| սերապիոն | 114. | 31: | 98. | 10: |
| ընդ | 116. | 13: | 99. | 15: |
| օրհնութեան | 122. | 27: | 104. | 23: |
| յիշեաց | 125. | 9: | 106. | 21: |
| յարաժամ | 130. | 28: | 111. | 16: |

Ստորև ցուցանին սղալանս Հեղինակին, բայց 'ի ներ գրքոյս ուղիղն էդի, և սղալմունսն 'ի վայր էդի թղթահամարաւն և տողիւն. Նախ հեղինակին երկրորդ գրքոյս առ 'ի վերծանութիւն ընթերցողաց։

| | | | | |
|---|---|---|---|---|
| զնդ | 120. | 29: | 103. | 8: |
| ենելոյն | 126. | 13: | 107. | 21: |
| յանիրաւութէ | 128. | 12: | 109. | 11: |
| երալոյն | 139. | 23: | 119. | 11: |
| Տանջելոնեանց | 140. | 1: | 119. | 13: |
| գտու | 147. | 31: | 126. | 6: |
| հատովք | 150. | 11: | 128. | 6: |
| ապաստամբեաց | 150. | 27: | 128. | 16: |
| եպիսկոպոսին | 152. | 14: | 130. | 2: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ամբաստանութ̄ի | 152. | 18: | 130. | 4: |
| տրտմութ̄ե | 154. | 18: | 131. | 21: |
| և ինք | 163. | 3: | 138. | 22: |
| թաթուհին | 167. | 8: | 142. | 9: |
| յիքենէ | 167. | 14: | 142. | 13: |
| ունայս | 184. | 1: | 156. | 4: |
| Ցուէշտարակէլն | 186. | 6: | 164. | 13: |
| մետաղըսն | 187. | 1: | 165. | 6: |
| եղեղեցւոյն | 187. | 28: | 165. | 25: |
| զպէաս | 187. | 29: | 165. | 25: |
| թագուհւոյն | 189. | 23: | 167. | 13: |
| եթէ | 190. | 26: | 168. | 11: |
| պատրաստեցեր | 191. | 22: | 169. | 3: |
| այգույն | 191. | 24: | 169. | 5: |
| օրհնութիւն | 196. | 27: | 173. | 10: |
| յայպխն | 202. | 8: | 177. | 21: |
| զարս | 202. | 22: | 178. | 4: |
| հաւանեցուցանէլ | 206. | 19: | 181. | 16: |
| խոլայոլքն | 207. | 1: | 181. | 24: |
| եռեսուն | 212. | 28: | 186. | 21: |
| հաստատարմաց | 220. | 28: | 193. | 12: |
| սրախութ̄ք | 221. | 9: | 193. | 20: |
| բանբասանս | 225. | 10: | 197. | 5: |
| զանբաստանութ̄ի | 226. | 30: | 198. | 14: |
| եկեկեսցէ | 227. | 5: | 198. | 17: |

ան

| | | | | |
|---|---|---|---|---|
| անտէր | 227 · | 12 ։ | 198 · | 22 ։ |
| յուղափառաց | 227 · | 27 ։ | 199 · | 7 ։ |
| Թագաւորին | 228 · | 28 ։ | 200 · | 4 ։ |
| վ՟յ որոյ | 244 · | 26 ։ | 213 · | 9 ։ |
| կառավարտկուին | 252 · | 2 ։ | 219 · | 10 ։ |
| ամէն | 253 · | 31 ։ | 221 · | 1 ։ |
| եղեղեցւոյ | 264 · | 14 ։ | 228 · | 3 ։ |
| անբարիշտ | 267 · | 17 ։ | 230 · | 16 ։ |
| մխիթաներելով | 269 · | 26 ։ | 232 · | 15 ։ |
| դանձան | 277 · | 2 ։ | 238 · | 14 ։ |
| օգտնել | 281 · | 31 ։ | 242 · | 21 ։ |
| ապօթք | 283 · | 28 ։ | 244 · | 10 ։ |
| յանխտ | 285 · | 11 ։ | 245 · | 16 ։ |
| դատապարտէր | 287 · | 4 ։ | 247 · | 2 ։ |
| Ենովկիդոս | 288 · | 1 ։ | 247 · | 21 ։ |
| խռովեցուցէր | 292 · | 25 ։ | 251 · | 20 ։ |
| մինչեւդեռ | 294 · | 23 ։ | 253 · | 10 ։ |
| և այպէս | 297 · | 19 ։ | 255 · | 19 ։ |
| պտղատեսցուք | 304 · | 13 ։ | 261 · | 9 ։ |
| օրհնութեամբ | 305 · | 22 ։ | 262 · | 11 ։ |
| 'ի կոման | 307 · | 17 ։ | 263 · | 23 ։ |
| հեշացուցանէր | 311 · | 24 ։ | 267 · | 10 ։ |
| համատօտաբար | 10 · | 27 ։ | դ · | 13 ։ |

Առոն

Սատանօր եղեալ կայ զսղալմունս՝ որք ՝ի վերն յիշեցայք թէ ՝ի հեղինակէ էր և ոչ ՝ի մեքենէ յանզգուշութե. բայց թէ ՝ի բառից, և բանից, և ՝ի հոլովառութէ նաև ՝ի խոնարհմանց բայից ներգործականաց եւնդրոյ եթէ երևես ցի ինչ, զայն ևս ոչէ գոյացեալ յինէն. վասն զի սատուգիւ ասեմ յարգելի ընթերցողացդ՝ զի ես միայն օրինակօղ էի և ոչ սրբագրօղ, Քանզի երևեաց ինձ ՝ի տեղիս տեղիս անվայելուչ բառս՝ և զբաղումս ՝ի թարմատար բառից, նա և անպատեհ կիրառութի կամ առման բայից ՝ի տեղի անդէմ բայից, և փոխանակ պատմականաց սեռականաւ ՝ի գործ ածեալ երևեաց ինձ, ոչ ուղղեցի այլ զոր ինչ եղեալ կայր՝ զնոյնս ՝ի գործ ածի։ բայց թուի ինձ զի վերատեսուչքն սոյն բարձրագոյն տպարանին այլ գրեանց էին պարապեալ՝ և թողեալ զայս ՝ի ձեռն այլոց, և միայն ասութեն նոցունց բաւականացեալ՝ և միամիտ եղեալ ՝ի միտս իւրեանց՝ թէ սատուգ և ուղիղ է, վասնորոյ ոչէ պատկան առաւել պախարակել՝ ըստ վերն ասից գուցէ զայլ ինչ՝ զբօսանս գրոց լեալ էին, և ոչ այնքան յետևմամբ մտախոյ լինէին Սրբագրութեան սորին թողլով զգործս ՝ի ձեռն այլ անձանց՝ եղև այսպիսի սղալմունս ։

Դարձեալ պատմեցից, զայլ ինչ զի ՝ի համարոյ թղթոյն, Եղև զայլ սղալմունս՝ վասն զի՝ սկսեալքը ՝ի համարոյ Առաջնոյն մինչև եկն Յարմարապէս 192 համարն թղթոյն,

Յուսկ

Յուսկ յետոյ՝ պարտէր ընել 193 եղեալ էր 185, Եւ անտի սկսեալ էր մինչև աւարտ գրքոյն․ Զայս ևս վերծանումն լոյս բարեսէր ընթերցող ամիրայից։ Եւ հայցեմ առ բարեսէր ընթերցող մատենիս՝ զի համար ձակօրէն գրուածս ներել մաղթեմ, և եթէ յիշման արժանի առնէք, լերուք և դուք արժանի յիշելոյ զձեզ ՚ի բարին։

Մարդս անսղալ՝ անհնարին
գոլ ասելն։
Զի անսղալ՝ Տէրն միայն
գտանելն։
Միտք մարդոյ՝ սղալութիւն
հաստատելն։
Զի մի փքացեալ՝ ՚ի միտս
իւր վրիպելն։

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ։

Եւ արդ. քանզի՝ զկնի տուչութե՜ արարչախնամ կամաց ան
հասին ա՜յ՝ 'ի լոյս ընծայեցման բարեախորժ՝ վայելչաբեր
և քաղցրաճաշակ սբ գրքոյս վիպասանութե՜ սքանչելի վարուց
ու՜ն ա՜յ սբյն Յոհաննու ոսկեբերան հայրապետին։ Ըմբռնէ
մեզ աստանօր 'ի վերջ Մատենիս սակաւուք իմն զառ̄թէ՝
և զհանգամանէ վերստին Տպագրութե՜ 'ի լոյս ածեցմանս յուշ
առնել ձեզ բանասէր եղբարցդ մերոց 'ի քս։ Քանզի՝ ա՜յ
զզգալի և զապականացու մարմինս մեր ( որ այսօր է, և վա-
ղի՜ն խորշակահար ցամաքի՝ և ոչընչանայ իսկ ) ո՛չ միով
և եթ կերակրով՝ այլ ա՜մ հարկաւոր պիտանացուօքն գոյն
գործեմք կերակրել՝ և դարմանել. և ը՜ն նմին նոյն զախտը
ժակս բնութե՜ մերոյ՝ զանազանիւք համեղաճաշակ իրօք։ Ըստ
այսմ ուրեմն՝ և մանաւանդ քան զայս, հոգին անապակին՝ որ
'ի սեռս համայնից էակաց, է գերագոյն՝ և նախապետական
էակ, թարց որոյ գործունէութի մարմնոյն դադարի 'ի շարժ
մանէ ըստ վկայութե Ներհունեայ. պարտիմք հանապազ
զնա հոգևորաւ՝ և անապականաւ՜ն կերակրով սնուցանել՝
և դարմանել։ Զի հայն զմարմինն՝ և բանն զհոգին կեցու
ցանէ ը՜ս Տն թէ՝ Բանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է
և կեանք, ուստի՝ վարդապետք սբյն Սիոնի, սիրողք և
փափագողքն ուղղոյն Ճշմարտութե. խոտողք և լքօղքն
զեսս ( այսէ զերկրաւոր փառս ) զբարւոք խոկմանս
իւրեանց ընծայելով յա՜ծ՝ և ենթադրելով զինքեանս յաս
տու

տուծում՝ մտին տիրապէս 'ի դպրութիւնս Վերնական յարկին, և հրահանգեալք անդէն զպէսպէս կրթութիւնս հոգևորական վարուց առ մեզ սեղանաւորեցին, առ 'ի բուծանումն բանեղէն հոգւոց մերոց, զի տէր նոցա զողորմութիւն՝ և ոչ զզոհ խնդրէր։ Յորոց սրբազնագունեցից՝ և սքանչելի արանց մի էր և սուրբ Վարդապետս այս, որոյ հաւատոյն մաքրութիւն, և վարուցն սրբութիւն կարէր զհրեղէնսն զարմացուցանել և ահաբեկս առնել։ Այսպիսին որով յետև 'ի մերումս խաթարեալ և նուաղեալ ժամանակիս զսքանչելի վարուցն պատմութիւն սրբոյ Վարդապետիս՝ որ իբր զղամբար Ջահափայլ կայր եդեալ ընդ գրուանաւ, և գրեթէ իսպառ նուազել և անհետ եղեալ 'ի յազնիւ ազգէ մերմէ, որ զկնի բազմախոյզ հետազօտութեան զ մի միայն հատորն հոգեշահ Գրքոյս կար եղև մեզ գտանել։ Իսկ վառեալքն 'ի սէր սորին՝ զյոգունս գտանէաք։ Հարկեցաք ուրեմն 'ի թախանձմանէ՝ և 'ի քաջալերեցմանէ բարի առիթ արանցս այսոցիկ Ազնուաց՝ (զորոց անուանսն դրոշմեալ եմք 'ի ներքոյ) զդժուարինսն 'ի դիւրինս առնելով յանկ աշխատանօք 'ի լոյս ընծայել. իբր՝ 'ի վերայ աշտանակի դնելով՝ զի վառեալքն 'ի սէր սորին՝ մի գուցէն վերջացեալ 'ի վայելչութենէն, զի ընդունելոյ հոգևոր ըղձին իւրեանց՝ կարասցեն ընդ նմին և զպտուղս շնորհաց 'ի շտեմարանս հոգւոց իւրեանց մթերել։ Ահաւասիկ 'ի վայելել ձեր զբարութիւնս սուրբ գրքոյս յիշման արժանի առնել՝ խնդրեմ արդեամբ և ծախիւք Օժանդակքն գործարանիս մերոյ հանդերձ կենդանեօք և հանգուցելովքն։

և

ւքն յոյսն մեր յիշեսցէ՛ զձեզ ընդ ձեօք հանդերձ, 'ի միւսանգամ գալստեան իւրոյ. որում փառք գոհութիւն

հանդերձ անզրաւ՛ յաւիտենից՝ ամէն։

Տէր Յովսէփ Ստեփաննոսեան։

Սարգիս Տէր Յովհաննէսեան։

Կարապետ Ծատուրեան։

Յովհաննէս Սարգիս և Կումպանի։

Կարապետ Մկրտիչ Մուրատ։

Ներսէս Յովհաննէս և Ստեփաննոս Ներսէսեան։

Թաթէոս Յովհաննէսեան։

Սիմէոն և Գէորգ Փանոս Բաղրամեան։

Յովսէփ Եմինեան։

Ստեփաննոս. Պետրոս. և Պօղոս Կարապետեան։

Մարգար Ջօրէրեան։

Սարգիս Յօվանեան։

Յարութիւն Յովսէփ Քամալեան։

Մելքում Մանուկեան։

Ծատուր Աճաքեան։

Սահակ Մօսէս Շմայօնեան։

Ղազար. և Յովհաննէս Սէթեան։

Խաչիկ Յարութիւնեան։

Կարապետ Խաչիկ Նիազեան։

Նիկողայոս Յարութիւնեան։

Զաքարիայ Յովհաննէս և Միքայէլ Զաքարիայ Շիրխօտեան որք են յորդորողք և պատճառք Տպեցման հոգեշահ սբ Գրքոյս զորոյ յիշատակն Օրհնութբ եղիցի։

022504